

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ալեքսանդր Մարգարյան

Ստուգաբանություններ

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2015

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.23
Մ 350

*Հրատարակության են երաժիշավորել
ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնը և հայ բանասիրության
ֆակուլտետի գիտական խորհուրդը*

ԽՄԲԱԳԻՐ՝

բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Յուրի Ավետիսյան**

ԳՐԱԽՈՍՆԵՐ՝

բան. գիտ. թեկն., դոցենտ **Մանուկ Ֆելեքյան**

բան. գիտ. թեկն., դոցենտ **Փառանձեն Մեյթիխանյան**

Ալեքսանդր Մարգարյան

Մ 350 Ստուգաբանություններ/Ա. Մարգարյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2015,
210 էջ:

Գրքում ամփոփված են տարբեր ժամանակներում Ալեքսանդր Մարգարյանի կատարած ստուգաբանական մեկնությունները: Դրանք մեծ մասամբ բարբառային բառերի և որոշ տեղանունների ստուգաբանական ճշգրտումներ են կամ տակավին չստուգաբանված բառերի բացատրություններ:

Գիրքը օգտակար կարող է լինել բանասերների, պատմաբանների և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են հայագիտությամբ կամ պարզապես սիրում են տեղեկացված լինել:

ՀՏԴ 811.19

ԳՄԴ 81.23

ISBN 978-5-8084-2008-3

© ԵՊՀ հրատ., 2015

© Ա. Մարգարյան, 2015

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Ալեքսանդր Մարգարյանը նոր ժամանակների այն լեզվաբաններից է, ովքեր որոշակի վաստակ ունեն հայ լեզվաբանության և առհասարակ հայագիտության մեջ: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը շատ լայն է՝ հայոց լեզվի բոլոր մակարդակները (հնչյունաբանություն, բառագիտություն, քերականություն), աշխարհաբարի ձևավորման հարցեր, բարբառագիտություն, բառարանագրություն և այլն:

Իր գիտական գործունեության ընթացքում Ա. Մարգարյանը կատարել է նաև ստուգաբանական հետազոտություններ, որոնք նրա կենդանության օրոք հրատարակվել են գիտական տարբեր հանդեսներում: Ստուգաբանական այդ մեկնությունները (կամ բառաքննական դիտողությունները, ինչպես ինքն է երբեմն դրանք անվանում) վերաբերում են առավելապես բարբառային բառերի և որոշ տեղանունների:

Ստուգաբանությունը թերևս ո՛չ միայն հայերենի ամենից հետմնացող գիտաճյուղերից է, քանի որ այն զարգացնելու համար հետազոտողից պահանջվում են ոչ միայն օտար լեզուների իմացություն և լեզվաբանական խորագույն գիտելիքներ, այլև ժողովուրդների պատմության, մշակույթի, հոգեբանության, աշխարհագրության և այլ ոլորտների վերաբերյալ հիմնավոր ու հաստատուն տեղեկություններ: Անհրաժեշտ են նաև լեզվական փաստերը, դրանց նախասկզբնական հնչյունական և կառուցվածքային տարրերը, քերականական հատկանիշները, լեզվի պատմական զարգացման ընթացքում կրած փոփոխությունները իրար համադրելու, մեկը մյուսով պայմանավորելու մտածական ու զգացական լուրջ կարողություններ: Առանձնակի դժվարություն է ներկայացնում բառերի նախնական իմաստների ծագման, զարգացման, կատարված փոփոխությունների բացահայտումը: Ստուգաբանությունը չի հավակնում անվերապահ և վերջնական ճշմարտություններ ասելու, բայց նշված գործոնների առկայությունը կատարված ստուգաբանական դիտարկումները մղում են որոշակի ճշգրտության:

Ա.Մարգարյանի ստուգաբանական մեկնությունները վկայում են հեղինակի հաստատուն և հմուտ կարողությունների մասին ու հիմնականում համոզիչ են: Հեղինակը ստուգաբանության համար հիմք

է ընդունում բառերի հնչյունական և իմաստային կապն ու հարաբերությունը: Դա, նրա կարծիքով, ստուգաբանության ամենակարևոր պայմանն է: Ստուգաբանությունը առավել ամբողջական ու հավաստի է դառնում, երբ համադրվում են ստուգաբանական հայտնի՝ արտաքին համեմատության և ներքին վերականգնման մեթոդները: Լեզվաբանը շատ իրողություններ հաստատում է Գորիսի բարբառի (դրա ուսումնասիրությամբ նա զբաղվել է երկար տարիներ) լեզվական տվյալների հիմքի վրա: Կատարված վերլուծությունների մեծ մասը, հենց իր՝ հեղինակի մեկնաբանությամբ, լիակատար ստուգաբանություններ չեն, քանի որ ուղղակիորեն երևան չեն հանում արմատների ծագումը: Դրանք մեծ մասամբ քննված են «իրենց բաղադրության և հայերենի պատմական զարգացման ընթացքում կրած ձևափոխությունների տեսակետից»:

Մարգարյանի ստուգաբանական մեկնություններում կարելի է առանձնացնել երեք հիմնական շերտ.

ա) **Բառերի ստուգաբանական ճշգրտումներ** (սրանք թվով ամենից շատ են). այս դեպքում հեղինակը, հիմք ընդունելով նախորդների, հիմնականում Հրաչյա Աճառյանի քննական դիտարկումները, ձեռքի տակ ունեցած նոր տվյալների հիմքի վրա կատարում է, այսպես կոչված, ստուգաբանական հաստատումներ՝ որոշ ճշգրտումներով ու հավելումներով: Այդ բառերի մի մասը տեղանուններ են, որոնք տակավին լիարժեք ստուգաբանական մեկնություն չեն ստացել: Այսպես, օրինակ՝ **Գորիս** բառի ստուգաբանական տարատեսակ մեկնաբանություններից լեզվաբանը առավել հավաստի է համարում այն, որ բառի ծագումը իրապես կապվում է 13-րդ դարի նշանավոր պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» գրքում հիշատակված **Գորայք** գյուղի անվան հետ և «այլ բան չէ, քան հենց դրա **Գորայս** հայցականի հնչյունափոխական արտահայտությունը»:

Ստուգաբան-լեզվաբանը նմանապես շատ ուշագրավ մեկնություն է տալիս **Ձանգեզուր** տեղանվան մասին: **Ձանգեզուր**-ը ավանդաբար ստուգաբանել են՝ կապելով հայկական **Ձագիկ** նահապետի **Ձագեձոր** կամ **Ձագկաձոր** («Ձագերի ձոր») անվան ձևափոխությունների կամ աղավաղումների հետ: Մեկ այլ մեկնաբանությամբ՝ **Ձանգեզուր**-ը ստեղծվել է հինավուրց մի վանքի վիթխարի զանգի ուժեղ ձայնի ստեղծած տպավորությամբ («Ձանգը զոր»): Երրորդ

մեկնաբանությունը առավելապես ժողովրդական կեղծ ստուգաբանություն է, իբրև թե թուրքերի ներխուժումից հետո զանգերը զուր՝ այսինքն՝ ուշացած են հնչել («Չանգն է զուր»)։ Մեկ այլ տեսակետով՝ տեղանունը կապվում է մ. թ. ա. 7-րդ դարում այդ բնակավայր ներխուժած **սկյուրների** (սակերի) անվան փոփոխված ձևի (**սակ-ձագ-Չագեժոր-Չանգեզուր**) հետ։ Ա. Մարգարյանը միանգամայն համոզիչ և հավաստի է համարում առաջին տարբերակը։ Ասվածը հավաստելու համար նա ոչ միայն բերում է պատմական հավելյալ տեղեկություններ, այլև փորձում է դա հիմնավորել ու բացատրել նաև բառի արտասանությունը թուրքերենի հնչյունական օրենքներին ենթարկվելու հանգամանքով, որի պատճառով **Չանգեզուր** ձևը չճանաչվելու չափ հեռացել է իր բուն՝ **Չագեժոր** ձևից։

Բառարանում ստուգաբանվող բառերից այս շերտին են պատկանում նաև հետևյալ բառերը՝ **սմբել** (քաշվել, ցամաքել, չորանալ), **կաթ(իլ)** (շիթ, կայլակ), **տեղեակ** (հմուտ, խելամուտ, գիտակ), **տրոփել** (բաբախել), **ապուպապ** (իրար հաջորդած կամ նախորդած պապերի սերունդ), **հենց** (այնպես, ուղղակի, իսկ և իսկ), **գրքույկ** (փոքր գիրք, փոքր գրքի նման տետրակ), **նան(ի)** (նայր, մայրիկ), **տերնդաս** (<**Տեր ընդ այս**. Տյառն ընդառաջի եկեղեցական տոնը), **տկլոր** (բոլորովին մերկ, մերկանդամ), **ծվածեղ** (ծու+ա+զեղ), **հզոր**, **հլու**, **հմուտ**, **հպարտ**, **խնածախ**, **Կոռնի ձոր**, **Քարահունջ** և այլն։

բ) **Տակավին չստուգաբանված բառերի ստուգաբանություններ**. դրանք հայերենի բարբառներում իմաստային և կառուցվածքային փոփոխությունների ճանապարհով առաջ եկած կամ մասամբ նաև գրական ծագում ունեցող բառեր են, որոնց երևան գալը «հիմնավորապես ապացուցված չէ» կամ անհայտ է մնում։ Օրինակ՝ **կուչ** (**կուչ** գալ-կծկվել, մարմինը հավաքված պահել) բառի մասին մեր հին բառարանները (Հին ու Նոր հայկագյան, Առձեռն), ինչպես նաև «Հայերեն արմատական բառարանը» լռում են։ Բառի իմաստային նշանակությունների և կիրառությունների մասին նշումներ կան որոշ բառարաններում (Յ. Աճառյան՝ «Գավառական բառարան», Ստ. Մալխասյանց՝ «Հայերեն բացատրական բառարան» և այլն)։ **Կուչ** ձևի ծագման մասին որևէ նշում չկա։ Իր ձեռքի տակ եղած փաստերի հիման վրա Մարգարյանը այս բառի ծագումը կապում է **զուճ** (ծունկ, ծնկի կոճ) ձևի հետ՝ համարելով գրաբարյան այդ բառի բարբառային տարբերակը։ Հեղինակը ամենից առաջ դա փորձում է հիմ-

նավորել դրանց միջև եղած իմաստային սերտ կապով ու հարաբերությամբ (**կուճ** բառի արտահայտած բոլոր իմաստները՝ *կծկում, ասփոփում, սեղմում* և այլն, կապվում են բացառապես **գուճ** բառի նշանակության հետ): **Գուճ**-ից **կուչ**-ի ծագումը, ըստ նրա, տեղի է ունեցել հնչյունական համապատասխան օրինաչափությամբ. բառասկզբի **գ > կ**, բառավերջի **ճ > չ** և բառամիջի **ու > ո** փոփոխությունները լեզվաբանը բացատրում է մի շարք բարբառներում ու խոսվածքներում առկա հնչյունափոխական իրողություններով՝ **գինի > կինի, փուժ > փեչ, հռնճ > հռնձ** և այլն: Փաստը հաստատվում է ոչ միայն բարբառային իրողություններով. **գուճ > կոճ** ձևափոխության բավական վաղ սկզբնավորման և զարգացման ընթացքի մասին լեզվաբանի վկայությամբ գեղեցիկ փաստեր են հաղորդում նաև գրաբարն ու միջին հայերենը. բերվում են համոզիչ օրինակներ հայ հին մատենագրությունից, Նահապետ Քուչակի հայրեններից և Նաղաշ Հովնաթանի բանաստեղծություններից: Այս փաստերը կասկած չեն թողնում համոզվելու համար, որ այդ երկու բառերը իսկապես ծագումնաբանորեն սերտորեն կապված են միմյանց հետ:

Այս բառերի թվին պետք է դասել նաև բարբառային բազմաթիվ բառեր՝ **հավուր** (մի քիչ՝ մի որոշ ժամանակ), **արշա ընկնել** (մեծանալ, հայտնվել), **դառեալ** (կատաղած), **զամբ** (ալյուրի բարակ փոշի, որ նստում է ջրաղացի քարերին), **հորովել** (գութաներգ, վար անելու ժամանակ երգվող երգ), **ահուզար** (մեծ երկյուղ, տառապանք, տվայտանք), **լոխ** (ամբողջ(ը), բոլոր(ը)), **ճոշ** (բամբասանք, չարախոսություն), **մշուշ** (մառախուղ, մեգ, բալ), **ուղերձ** (մի բան ուղի՝ ճանապարհ դնել, ուղարկել) և այլն:

գ) **Ստուգաբանված բառերի նոր ստուգաբանություններ** (դրանք մեծ թիվ չեն կազմում). առանձին բառերի վերաբերյալ եղած ստուգաբանական մեկնությունները համոզիչ և հիմնավորված չեն թվացել լեզվաբանին, և նա փորձել է հակադրվել եղած տեսակետներին՝ բերելով իմաստաբանական, բառակազմական և հնչյունաբանական նոր փաստարկներ՝ իր տեսակետը ապացուցելու համար: Օրինակ՝ Մարգարյանին չհիմնավորված և անընդունելի է թվացել **աշան** բառի (նշանակում է *կալի մեջ խճերը ցրել, սփռել*) ջահուկյանական ստուգաբանությունը, ըստ որի՝ բառը իր նշանակությամբ և ծագումով կապվում է **աշուն** բառի հետ (**աշան**-ի վերականգնված ենթադրյալ ձևը՝ *oskhn, գոթ. asans «հունձք»): Հինք ընդունելով

բառերի իմաստաբանական և հնչյունային կապն ու հարաբերությունը՝ նա գալիս է այն համոզման, որ **աշան**-ը ցույց է տալիս այնպիսի իրողություն (կա(լ)սել), որն իր նշանակությամբ կապվում է տարվա **ամռան** եղանակի հետ և հետևաբար **աշուն** բառի հետ չի առնչվում ու չի էլ կարող առնչվել: Բացի այդ, ինչպես գրում է Ա. Մարգարյանը, «**(հ)աշան** բառը սովորական ածանցավոր բառ է՝ կազմված **հաշ**-արմատից և **-ան** ածանցից: Այդ են հաստատում ամենից առաջ հայերենի նշանավոր բառարանները, ըստ որոնց էլ **հաշ**-ը գրաբարյան **հաշել** («հալումաշ անել, մաշել, հյուծել, տկարացնել») բայի արմատն է, որ գալով շատ վաղ ժամանակներից գործածվել է անգամ անկախաբար...»: Մարգարյանը նաև մեկնաբանում է դրանց միջև եղած իմաստային կապը. «Եթե **հաշան**-ը *կալի մեջ խրձերի ցրվածքն է*, որ առաջ է բերվում նրանց տարաբաժանմամբ ու ցրումով, ապա նշանակում է ամբողջի մասնատում և կոպիտ ձևով ասած՝ նաև **հաշում, մաշում, հյուծում, նիհարում** է տեղի ունենում. իսկ սա էլ, անշուշտ, ցույց է տալիս, որ **հաշ** արմատը, **-ան** վերջածանցով կազմելով **հաշան** բառը, տվյալ դեպքում ոչ թե բարոյական, այլ ֆիզիկական նշանակություն է արտահայտում»: Իմաստային այդ կապը հաստատելու համար Մարգարյանը այլևայլ բառարաններից բերում է նաև համոզիչ այլ օրինակներ:

Խնձորեսկ տեղանվան մեկնությունները, թե գյուղանունը նախապես անվանվել է **խորձոր** կամ **խորձորսկ** և հետագայում, հնչյունափոխության ենթարկվելով, ընդունել է ներկայիս ձևը, Մարգարյանը համարում է ոչ հավաստի և բառը համարում է չստուգաբանված: Լեզվաբանի համոզմամբ՝ բառն ի սկզբանե միայն **խնձորեսկ** ձևն է ունեցել՝ ըստ գրավոր աղբյուրների՝ **խնձորեսկ, Խնձորէքսն, Խնձորէք**: Որ բառը ծագում է **խնձորեսկ** նախածնից, որն էլ ածանցավոր բառ է՝ կազմված **խնձորի** (խնձոր+ի) ծառանունից **-ակ** փոքրացուցիչ-փաղաքշական ածանցից, լեզվաբանը դա պատճառաբանում և հաստատում է ինչպես իմաստապես ու արմատաբանորեն, այնպես էլ հնչյունաբանորեն:

Հեղինակի կողմից նոր մեկնությամբ ստուգաբանվում են նաև այլ բառեր՝ **պլպլալ, պսպղալ** (փայլփլել), **չկակել** (տաքանալուց շեկ գույն ստանալ, կարմրել), **աղի(ք)** (փորոտիք), **շաղախ** (ցեխ, շաղած հող, խառնուրդ, կաչուն զանգված՝ զանազան բաղադրությամբ), **լավ** (հորդ՝ տեղատարափ անձրև, հեղեղ) և այլն:

Ասեմք նաև, որ այս գրքում մենք պահպանել ենք նյութի շարադրության՝ հեղինակի առաջադրած կառուցվածքը և ներկայացվող բառաշերտերի հաջորդականությունը: Առանձին սրբագրումներ ենք կատարել կետադրության մեջ և որոշ ձևակերպումներում՝ դրանք հարմարեցնելով ժամանակակից գիտական լեզվի կանոններին ու տերմինաբանությանը:

Մի խոսքով՝ սա այն է, ինչ, մեր կարծիքով, կուզեր հրատարակված տեսնել վաստակաշատ գիտնականը:

20. 04. 2015

Յու. Ավետիսյան

ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Ստուգաբանություններ» խորագրով սույն գրքում ամփոփված են մեր՝ ավելի քան 100 բառի վերաբերող ստուգաբանությունները կամ ստուգաբանական մեկնությունները, որ հրապարակվել են 40 տարվա ընթացքում «Պատմա-բանասիրական հանդեսում» (ՊԲՀ), «Բանբեր Երևանի համալսարանի» (ԲԵՀ) ամսագրում և մի քանի այլ պարբերականներում («Սովետական մանկավարժ», «Զանգեզուր»):

Դրանք ընթերցողին են ներկայացվում առանց որևէ փոփոխության, և միայն յուրաքանչյուր հոդվածի վերաբերյալ տողատակում նշվում են նրա հրատարակության տեղն ու ժամանակը:

Ի մի բերելով մեծ մասամբ բարբառային բառերի և մասամբ որոշ տեղանունների վերաբերող մեր ստուգաբանությունները կամ ստուգաբանական մեկնությունները՝ մենք բնավ էլ այն կարծիքին չենք, որ բոլորն էլ բացարձակապես ճիշտ են ու ընդունելի: Եվ, այնուհանդերձ, ստուգաբանության համար, որ ներկայումս հայագիտության ամենահետ մնացող ճյուղն է մեզանում, կատարած աշխատանքը, անշուշտ, որոշակի կարևորություն ու հետաքրքրություն է ներկայացնում:

Ըստ այդմ էլ սույն գիրքը, որի վերջում այբբենական կարգով տրվում է ստուգաբանված կամ մեկնաբանված բառերի ցանկը, կարող է օգտակար լինել ոչ միայն հայագետ-լեզվաբանների, հայոց լեզվի ուսումնասիրությամբ զբաղվողների, այլև շարքային շատ ու շատ ընթերցողների համար:

1.12.2001

Ալեքսանդր Մարգարյան

ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ¹

Հայ լեզվաբանական գիտության զարգացման ու նրա ձեռք բերած նվաճումների եթե ոչ գերակշիռ, ապա մի պատկառելի մասը վերաբերում է հայերենի բառագանձի ուսումնասիրության բնագավառին: Հայոց լեզուն տքնաջան ու անդադրում հետազոտող գիտնականներն ու լեզվաբանները, բազմակողմանի քննությունների բովով անցկացնելով նրա բառային կազմը, ոչ միայն ի մի են բերել հայ բառարանային ոսկե ֆոնդը, այլև նույն հիմքի վրա քննել են հայերենի բառերի ծագման, առաջացման, բաղադրության ու փոփոխությունների հարցերը՝ այդպիսով հայ բառագիտությունը դնելով բարձր աստիճանի վրա. թե՛ Հին ու Նոր հայկազյան և Առձեռն բառարանները, թե՛ հնդեվրոպական լեզվաբանության կարկառուն դեմքերի (Հ. Հյուբշման, Ա. Մեյե և ուրիշներ) բառագիտական-ստուգաբանական հետազոտությունները, թե՛ Հր. Աճառյանի հայոց լեզվի ուսումնասիրության մեջ դարազլուխ կազմող աշխատությունները («Հայերեն գալառական բառարան», «Հայերեն արմատական բառարան» և այլն) և թե՛ Ստ. Մալխասեանցի «Հայերեն բացատրական բառարանը» ինքնին դրա փայլուն ապացույցն են ու հաստատումը: Սակայն ինչպես այդ, այնպես էլ չնշված բառարանային ու բառագիտական այլ աշխատությունների մեջ բացառիկ տեղ է բռնում հայ լեզվաբանության հսկայի՝ Հր. Աճառյանի բազմահատոր «Հայերեն արմատական բառարանը», որը և, ամփոփելով իր մեջ հայ լեզվաբանական մտքի բառագիտական նվաճումները, հանդիսանում է **հայերենի բառագանձի հանրագիտարանը**:

Որքան էլ խոշոր ու նշանակալից լինի կատարված աշխատանքը, այնուամենայնիվ բառաստուգաբանության բնագավառում լեզվաբանները դեռևս շատ անելիք ունեն:

Ահա այդ նկատառումով էլ փորձ ենք անում մեր ուժերի ներածի չափով կատարել մի քանի ստուգաբանական վերլուծություններ՝ չունենալով ամենևին այն հավակնությունը, թե դրանք բացարձակապես ճիշտ են և ենթակա չեն վիճարկման:

¹ «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1959, N 4, էջ 221-232:

1. ՍՍՔԵԼ

Ինչպես «Հայերեն արմատական բառարանում», այնպես էլ հայերենի այլ բառարաններում **սմբել** (քաշուիլ, ցամաքիլ, չորանալ) բառը դիտվում է իբրև չստուգաբանված բառ: Եվ միայն Նոր հայկազյան բառարանն է, որ **սմբեցուցանել** ձևի տակ տալիս է հետևյալ ուշագրավ մեկնությունը. «Բառ մնկ. որ է **սմբեցնել**. որպես թէ ցամաքեցուցանել. որպես և **սմբել**՝ է իբր ցամաքիլ. քաշուիլ»²: Հր. Աճառյանը, նշելով հանդերձ, որ **սմբիլ** ձև «գործածական է արդի գավառականներում», չի ընդունում³ ՆՀԲ-ի բացատրությունը, որը, սակայն, մեր կարծիքով միանգամայն ճիշտ է և իբրև այդպիսին էլ հաստատվում է մի շարք փաստերով:

Ցամաքիլ-ից սմբել ձևի առաջացման հիմնական ապացույցը նախ և առաջ նրանց իմաստային ընդհանրությունն է, որ արտահայտվում է **ցամաքել, չորանալ** նշանակությամբ: Բայց ընդհանրանալով հիմնական նշանակությամբ՝ այստեղ ևս երկու ձևերը չեն նույնանում և հանդես են գալիս իբրև հոմանիշներ. այդ մասին են վկայում, օրինակ, մեկի և մյուսի վերաբերյալ Ստ. Մալխասյանցի տված բացատրությունները. հմնտ. **ցամաքել**. - 1. ցամաք դառնալ, խոնավությունը կորցնել, 2. ջուրը պակասել, ջուրը չիոսել, 3. խոնավության պակասությունից թառամել, 4. նվազել, նվաղել, 5. գոսանալ, կուչ գալ⁴. **սմբել**. - 1. գոլորշին կամ ջուրը միջից քաշվելով՝ կուչ գալ, նստել, 2. թռչնել, ճլորել, 3. մարմնի ուռուցքի իջնելը՝ վերքը լավանալիս, 4. կերածը ստամոքսի վրա ծանրանալ, չկարողանալ մարսել, սրտին նստել, 5. կուչ գալ, նիհարել, փոքրանալ, 6. փոխ. երկյուղից ամոթից կուչ գալ, սքլել⁵:

Բայց այդ բացատրություններից երևում է, որ նրանք միմյանց նկատմամբ այնուամենայնիվ երևան են հանում իմաստային որոշ տարբերություններ, որոնք, սակայն, արդյունք են **սմբել** ձևի, իբրև առանձին բառային միավորի, արժեքավորման, որի հիման վրա էլ

² «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, էջ 724:

³ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Երևան, հ. 1-4, 1971-1979, հ. 4, էջ 234: Այսուհետև: Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան:

⁴ Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, հ. 1-4, 1944-1945, հ. 4, էջ 456: Այսուհետև: Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան:

⁵ Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան:

հենց նա սահմանազատվել է «ցամաքել» ձևից և ինքնուրույն բառային արժեք ստանալով էլ՝ տեղ նվաճել հայերենի բառագանձում: Բայց այստեղից էլ հետևում է, որ այն իր բառային ինքնուրույն արժեքն ստացել է կենդանի բարբառների քուրայում և այդ պատճառով հին մատենագրության մեջ ըստ էության կիրառություն չունի և իր գոյությունը զգալ է տալիս միայն մասնավոր դեպքերում:

Ցամաքել-ից սմքել ձևի առաջացման մյուս կարևոր ապացույցն էլ բաղաձայնից առաջ **ց-ի** **ս-ի** վերածվելու օրենքն է, որ զարմանալի կերպով գործում է գլխավորապես այն բարբառներում ու խոսվածքներում (Պոլիս, Ղարաբաղ, Գորիս և այլն), որոնք ունեն **սմքել** ձևը: Բայց պետք է նկատել, որ հայերենի այդ հատվածներում էլ միանգամից չէ, որ **ց-ն** վերածվել է **ս-ի** և տվել **սմքել**, այլ, ընդհակառակն, մինչ այդ հայերենի բարբառների մեծ մասին հատուկ ձայնավորների անկման կամ սղման օրենքով **ցամաքել-ը** դարձել է **ցամքիլ** (Պոլիս), **ցմաքիլ** (Ղարաբաղ, Գորիս), **ցըմաքել** (Մեղրի), **ցամքել** (Վան), **ցամքել** (Առտեալ), **ցմքիլ** (Ննիս., Մուշ, Ալաշկերտ), որոնց հիմքի վրա էլ տարբերակմամբ առաջ է եկել **սմքել**, **սմքիլ** ձևը, ինչպես՝ **սմքիլ** (Պոլիս), **սմկիլ** (Ղարաբաղ), **սմքել**, **սմկել** (Գորիս), **սմքիլ** (Կարին) և այլն: Հնչյունափոխության համար հմմտ. նաև **անցանիլ** > **անցնիլ** > **ասնիլ**. **երիցակին** > **երիցկին** > **երիսկին**. **ծոցաւոր** > **ծոցւոր** > **ծօսվոր**. **մուրացկան** > **մուրասկան**. **քացախել** > **քասխիլ** (Պոլիս), **հացահան** > **խասխան**. **լուացուիլ** > **լվասուել** (Վան), **զարմացք** > **զերմասկ**. **լուացք** > **լվասկ**. **ուռուցք** > **օռուսկ**. **լացկան** > **լէսկան** (Մեղրի) և այլն⁶:

Քանի որ բառամիջում, այն էլ մեծ մասամբ սղվող **ա-ին** նախորդող, **ց-ն** **ս** է տալիս, նշանակում է դա հավասարապես կարող էր տեղի ունենալ բառասկզբում, և հենց դրա տիպիկ օրինակն է **սմքել** (< **ցմքել** < **ցամքել** < **ցամաքել**) ձևը, որ բավական շատ գործածվելու շնորհիվ որոշ բարբառներում (հատկապես Արարատյանում) դարձել է չմքել («թառամել, չորանալ»)⁷, ինչպես՝ «Ստինքի **չմքած** մրոթը

⁶ Օրինակների համար տես՝ **Հր. Աճառյանի** «Քննություն Վանի բարբառի», «Քննություն պոլսահայ բարբառի», «Քննություն Առտեալի բարբառի» հետազոտությունները, ինչպես նաև **Էդ. Աղայանի** «Մեղրու բարբառը» ուսումնասիրությունը:

⁷ Տես **Հր. Աճառյան**, Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 882: Այսուհետև՝ **Հր. Աճառյան**, Հայերեն գաւառական բառարան:

ծամծմոտելով...» (Պռշ. «Շահեն»), «Դարտի ձեռքից **չմքած**, կիսամեռ տանն ընկած» (Պռշ. «Յունոն»)՝ և այլն:

Այսքանից էլ հետևում է, որ **սմքել** բառի ծագման մասին ՆՅԲ-ի տված մեկնությունը՝ ճիշտ է, և այն պետք է ընդունել:

2. ԿՈՒՉ

Հայ հին մատենագրությունը չունի **կուչ** ձևը, և այդ պատճառով էլ նրա մասին հին բառարանները (Հին ու Նոր հայկազյան, Առձեռն և այլն) ոչինչ չեն ասում. «Հայերեն արմատական բառարանը» ևս այս դեպքում լռում է, և միայն հայերենի գավառական բառարանները (Հր. Աճառեան - «Հայերեն գալառական բառարան», Ս. Ամատունի - «Հայոց բառ ու բան») ու Ստ. Մալխասեանցի «Հայերեն բացատրական բառարան» են, որ նշում են նրա կիրառություններն ու իմաստային նշանակությունները. այսպես՝ ըստ Հր. Աճառեանի գալառական բառարանի՝ **կուչ** նշանակում է «սեղմունն, ամփոփվիլը. կը գործածվի հետևյալ ոճերուն մեջ: - **Կուչ բերել առջևը** - Երև. խոնարհեցնել, հպատակեցնել, ընկճել սարսափով ևն: - **Կուչ գալ** - Երև. Ղզ., Ղրբ. Տփ. ամփոփվիլ, ծռել, հավաքվիլ, կծկվիլ: - **Կուչ գալ** - Ախց. կծկվիլ, մարմինը հավաքված պահել: **Կուչկուչոտուիլ** - Ղրբ. ամփոփվիլ, կծկվիլ: **Կուչկուչուիլ** - Երև. կնճռել, ծալք ծալք ըլլալ. մորթը կուչկուչել է: **Կուչ ու կուչ** Ղրբ. կկգած, կծկված. - անել գալ: **Կուչ ու հուպ** Տփ. 1. Կծկված, ամփոփված 2. ճնշված սեղմված ամոթահար սրտով. - **տուն դարձան: Կուչ ու ձիգ.** շողոքորթ շարժումներ. - **անել, գալ՝ քծնել: Կուչում անել** Ղրբ. Սլ. **Քչոռ անել** կամ **գալ** Ղրբ. քուչումել՝ պագել, կուչ գալ, կծկվել մատել: **Հավը կուչում է առել:** Կրակի առաջը **կուչում էին արել:** - Մասնիկին համար Հմմտ. ծակում»¹⁰. ըստ Ս. Ամատունու բառարանի՝ «**Կուչ գալ** Ար. **կուչուրել**, Ար. Վան **կչոռ** անել, Ղրբ. Նխ. կծկիլ, սեղմուիլ: Փեսէն կուչ էկավ

⁸ Օրինակները տրվում են ըստ Ս.Ամատունու «Հայոց բառ ու բանի», Վաղարշապատ, 1912, էջ 542:

⁹ Ս. Ամատունին Գաբրիել եպս. Այվազյանի՝ «Բառագնություն աշխարհիկ լեզուի» անտիպ աշխատությունից առնելով «Այս բառի (սմքիլ-Ա. Մ.) ուղիղը կերևի **սմքիլ** (այսինքն ցամաքիլ), ինչպես որ կասեն Հայաստանի մեջ տեղ-տեղ. Գ. եպ. բառ., 111» հիշատակությունը, նույնպես ընդունում է, որ **սմքել**-ը ծագում է **ցմքել** ձևից («Հայոց բառ ու բան», Վաղարշապատ, 1912, էջ 594):

¹⁰ **Հր. Աճառեան**, Հայերեն գալառական բառարան:

ալըրի ջուալի տակին. ... Կերտայ պատի տակ քօռ հավու պէս կը-կուճուրի. Էմ. ազգ. ժող. բ. 350, Կչոռ անել. կուչ գալ. Ջուռնա բ. 255, 46: **Կուչ ու ձիգ** անել Ար. կծկիլ ու ձգվիլ: Հագար տարի որ կուչ ու ձիգ անէք, ձեզ բաց չենք թողալ. Խաչ. Աբ. Երկ. 211»¹¹:

Նշելով այդ իմաստները, ինչպես Ս. Ամատունին, այնպես էլ հայ բառագանձի մեծ գիտակը՝ Հր. Աճառյանը, չեն տալիս **կուչ** ձևի ծագումը, մինչդեռ մեր ձեռքի տակ եղած փաստերն ու տվյալները ցույց են տալիս, որ **կուչ**-ը այլ բան չէ, քան գրաբարյան տակավին անստույգ **գուճ** («Կոճն և ծալքն ծընգաց. ծունկք. ծունր» ՆՀԲ, հ. 1, էջ 579, «Ծունկի կոճը, ծալքը», Արմ. բառ., հ. 2, էջ 300) բառի բարբառային տարբերակը, որը հայերենի զարգացման ընթացքում հաղթանակ է տարել բարբառների մի մասում և նրանց հիմքի վրա էլ հենց հաստատուն տեղ գրավել արևելահայ գրական լեզվում:

Արդ՝ ինչո՞վ է ապացուցվում **կուչ** (< **գուճ**) ձևի առաջացումը. ամենից առաջ **գուճ** ձևի նկատմամբ նրա ունեցած իմաստային սերտ կապով ու հարաբերությամբ: Եվ իրոք. **կուչ**-ի արտահայտած բոլոր՝ «կծկում, ամփոփում, սեղմում», «կծկվել, սեղմվել, ամփոփվել» և այլն, իմաստները կապվում են բացառապես **գուճ** բառի **ծունկ, ծնկի կոճ** նշանակության հետ: Դրա լավագույն ապացույցներից մեկն էլ այն է, որ ինչպես գրաբարում **գուճ**-ը, այնպես էլ հետագայում դրանից առաջ եկած **կուչ** ձևը չունեն անկախ գործածություն և **հանդես են գալիս միայն ոճերի մեջ**. հմմտ. **ի գուճս իջանել, ի գուճս հարկանել, ի գուճս կալ, ի գուճս անկանել, ի գուճս գալ**¹² **և կուչ ածել, կուչ կենալ, կուչ գալ, կուչ ընկնել, կուչ բերել**, այլև **կուչուձիգ անել, կուչ ու հուպ անել** և այլն: Այստեղից էլ հենց պարզ երևում է, որ վերջին՝ աշխարհաբարյան ձևերը (հարադիր բայերը) մեծ մասամբ նույն գրաբարյան ոճերի զարգացումն ու շարունակությունն են կազմում և, իբրև այդպիսին էլ, մի անգամ ևս հաստատում են **գուճ**-ից **կուչ**-ի ծագումը:

Իսկ դա էլ, պետք է ասել, տեղի է ունեցել հնչյունական համապատասխան օրինաչափությամբ, այսինքն՝ բառասկզբի **գ > կ**-ի, բառավերջի **ճ > չ**-ի, ինչպես նաև բառամիջի **ու > ո**-ի վերածվելու օրենքներով, որ առկա են մի շարք բարբառներում ու խոսվածքներում.

¹¹ «Հայոց բառ ու բան», Վաղարշապատ, 1912, էջ 367:

¹² Այդ ոճերի մասին տես ՆՀԲ, հ. 1, էջ 573, այլև՝ **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

հմնտ. օրինակ, **Գ** > **Կ**-ի համար՝ **գինի** > **կինի**, **գոգ** > **կօք**, **գործ** > **կօրծ**, **գոնե** > **կօյնա**, **գետ** > **կէտ**, **գինձ** > **կինձ** (Գորիս), **գոց** > **կոծ**, **գիշեր** > **կիշեր**, **գիտենալ** > **կիդնալ** (Վան), **գէշ** > **կէշ**, **գարի** > **կարի**, **գող** > **կյէող**, **կօղ**, **կէղ** (Համշեն), **ճ** > **չ**-ի համար՝ **փուճ** > **փօջ**, **փուճ** > **փէչ** (Գորիս, Մեղրի, Ղարաբաղ), **փուճ փէչ** (Ագուլիս), այլև՝ բառասկզբում՝ **ճախարակ** > **չխարակ**, բառամիջում՝ **կճեալ** > **քչէլ** (Գորիս, Ղարաբաղ) և այլն. բառամիջի **ու** > **օ(ո)**-ի համար՝ **ծուխ** > **ծօխ**, **հունձ** > **հօնձ**, **կուտ** > **կօտ**, **թուխ** > **թօխ** (Ղարաբաղ, Գորիս) և այլն¹³:

Գուճ > **կուչ** ձևափոխությունը, սակայն, բարբառային իրողություններով չէ սոսկ հաստատվում, այլ նրա մասին մեզ գեղեցիկ փաստեր են հաղորդում գրաբարն ու միջին հայերենը, երևան հանելով **գուճ** > **կուչ** ձևափոխության բավական վաղ սկզբնավորումն ու զարգացման ընթացքը. այսպես՝ հին մատենագրության մեջ **ընդգծիլ** («Ընդգծեալ ի ծունկս՝ երկիր պագաներ» ՆՅԲ, հ. 1, 766), **ընդգծել** (օրինակ՝ «Որոգայթ որսողին զինքն ընդձեաց», ՆՅԲ, հ. 1, էջ 781) ձևերի կողքին լայն գործածություն ունի նաև **ընկճել** (օրինակ՝ «Ցրուեա՛ զնոսա զօրութեամբ քով, և ընկճեա՛ զնոսա», «Որ վաղվաղէ ընդդեմ բանից, նախ նա ընկճի», ՆՅԲ, հ. 1, էջ 781) ձևը, որը և հիմք է տալիս **գուճ** > **կուչ** վաղ ձևափոխությունից բացի ընդհանրապես ընդունելու բառասկզբի **գ** ձայնեղ պայթականի՝ **կ** խուլ պայթականի վերածվելու գոյությունը ինչպես գրաբարում, այնպես էլ նրանից առաջ: Անշուշտ **գուճ** > **կուճ** > **կուչ** վաղ ձևափոխության լավագույն օրինակներ են նաև միջին հայերենի **կուճ** և **կուչ** ձևերը, որոնցից առաջինը մենք գտնում ենք Նահապետ Քուչակի մոտ. «Ինձի **կուճ**, ա՛մ, էր կանես, երկնուցն գեմ չես իջեր» (Նահապետ Քուչակ, 1957, էջ 152), իսկ երկրորդը՝ Նաղաշ Հովնաթանի մի բանաստեղծության մեջ («**կուչ** են էկած ինչպես հուրայ», Ն. Հովնաթան, Բանաստեղծություններ, 1952, էջ 123): Պարզ է, որ այդ օրինակներն էլ, ուրվագծելով **գուճ** > **կուճ** > **կուչ** ձևափոխության ընթացքը, ոչ մի կասկած չեն թողնում՝ համոզվելու համար, որ իսկապես **կուչ**-ը ծագում է **գուճ** ձևից:

¹³ **ՈԷ** < **օ(ո)** հնչյունափոխության մասին խոսում ենք՝ **կուչ**-ի **կօջ** կամ **կոչ** բարբառային ձևերը նկատի առնելով:

3. ԸՆԿԻՃԵԱԼ

Իր «Հայերեն արմատական բառարանում» **ընկիճեալ** ձևի մասին Յր. Աճառյանը խոսում է երկու տարբեր առիթով. մի դեպքում **գուճ** բառի տակ «ծնրադրած» նշանակությամբ այն դիտում է իբրև **գուճ**-ից ծագած բառածև¹⁴, իսկ մյուս դեպքում էլ¹⁵ համարում է անստույգ բառ ՆՅԲ-ի հիշատակած՝ «Կայր նմա ընկիճեալ ի ճանապարհին», «Դու ինձ ընկիճեալ կայցես ի ճանապարհին» օրինակներին ավելացնելով «ետես գիրեշտակն Տեառն ընկիճեալ նմա ի ճանապարհին» օրինակը:

Արդ՝ հարց է ծագում. անստույգ դիտվող այդ երկրորդ «ընկիճեալ» ձևը, որ ըստ ՆՅԲ-ի նշանակում է «Հակառակ կալ իբրև խոչ», «արգելք ըլլալ», չի՞ նույնանում առաջինին և նրա հետ հանդես գալիս իբրև **ընկճել** բայի անցյալ դերբայածևը:

Պետք է ասել, որ **կուչ** բառի մեր մեկնության ու նրա հիմքի վրա կարծում ենք, որ իրոք երկու դեպքերում էլ մենք գործ ունենք նույն **ընկճել** (ընգճել < ընդգճել) բայի անցյալ դերբայածևի հետ, որ ոչ միայն հատկանշվում է նրան հատուկ «ընթերցվածներով» (հմմտ. **ընդկիճեալ, ընկճեալ, ընգճեալ**), այլև իր այն նշանակություններով, որ տալիս է ՆՅԲ-ը, բնավ չի անջրպետվում նույն **ընկճել** (ծունկի գալ, ծունկ չոքել, ծնկի տակ առնել, ճնշել) բայից:

Եվ իսկապես. չի կարելի չընդունել, որ **ընկճել** բայի **ծնկի տակ առնել, ճնշել, հաղթահարել** և այլն, իմաստները բնականաբար կարող են նշանակել նաև **արգելք, խոչընդոտ լինել**. մանավանդ որ սուկ երեք անգամ հին մատենագրության մեջ գործածված «ընկիճեալ» ձևը ոչ թե առանձին, այլ **կալ** օժանդակ բայի հետ է, որ արտահայտում է այդ նշանակությունը: Եվ այնուհետև. հենց այն հանգամանքը, որ հենց իր՝ Յր. Աճառյանի հաստատմամբ «չոքեցնել, հաղթահարել, նկուն անել» սովորական նշանակություններից զատ **ընկճել** բայը մի օրինակում («Վայ է ինձ, գուսար իմ, ընկճեցեր ինձ, խոչընդակն եղեր ինձ», Արմ. բառ., հ. 2, էջ 1054) նշանակում է «խոչընդոտ լինել, արգելք դառնալ», որոշակիորեն ցույց է տալիս, որ դա **ընկճել** բայի մի երկրորդական իմաստն է, և հետևաբար այդ ի-

¹⁴ Տե՛ս Յ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան:

¹⁵ Նույն տեղում:

մաստով գործածված «ընկիճեալ» դերբայաձևը ոչ միայն չի սահմանազատվում մյուսից, այլև նրա հետ կազմում է մի միասնություն և բնականաբար էլ կապվում է նույն **գուճ** արմատին:

4. ԳԿԵԼ

Գուճ արմատից ծագած **գճիլ** («ի գուճս անկանիլ և ի վերայ ծնգաց նստել. ծուներ կրկնել՝ դնել. կճել, ճկել. չոքել», ՆՅԲ, հ. 1, էջ 563) բայը (հմմտ. Յոտին կանգնի **գճեալն**. Մաշտ.: Գճի և համբուրե զոտն սատանայի. Ոսկեփոր: ՆՅԲ, հ. 1, էջ 563), անցնելով զարգացման երկար ճանապարհ, կրել է որոշակի ձևափոխություններ: Եվ ահա դրանցից մեկն էլ **ճկել** (ծռել, վար խոնարհեցնել, թեքել և այլն) բայաձևն է, որի մասին գուցե հարկ չլիներ խոսելու, եթե «Հայերեն արմատական բառարանում» **գուճ** արմատի տակ բարբառներին վերաբերող բաժնում, որտեղ բերվում են միայն «Մշ. գ'ջել «կէս մեջքից ծռել», Խրբ. գ'ջգիլ «գճել, ծռեցնել»» ձևերը¹⁶, իր տեղն ունենար նաև նա: Դրան պետք է ավելացնել նաև այն, որ *Գավառական բառարանում ճկել* բառը նշանակված է աստղանիշով, որը և ասել է թե՛ նա մեկն է այն ձևերից, որոնք «գրաբարի մեջ գոյություն չունեցող բոլորովին նոր արմատ մը երևան կը հանեն»¹⁷:

Այնինչ լեզվական փաստերը ցույց են տալիս, որ **ճկել** բայաձևը իր հիմքերն ունի գրաբարում և առաջ է եկել **գուճ + ել > գճել > կճել** ընթացքով, նախ՝ բառասկզբի **գ > կ**-ի վերածվելու և ապա **կճ > ճկ** գրափոխության (մետաթեզիսի) օրենքների համապատասխան¹⁸: Վերջինիս համար հմմտ. **խստոր > սխտոր, ձգել > գճել > գցել, նման > մնան, նշանց > շնանց > շհանց** և այլն:

ճկել (< **կճել** < **գճել** < **գուճել**) ձևի առաջացումը, որ հիմնովին հաստատվում է հնչյունական օրենքներով ու **գճել** բառի նկատմամբ ունեցած իմաստային կապով ու հարաբերությամբ, տեղի է ունեցել կենդանի խոսակցական լեզվի (բարբառների) բովում. ըստ որում նա ոչ թե ուշ ժամանակի արտահայտություն է, այլ գալիս է հեռավոր անցյալի խորքերից և փոխադարձ կապի մեջ է գտնվել **գուճ > կուճ**

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Տե՛ս **Յ. Աճառեան**, Հայերեն գավառական բառարան:

¹⁸ Պետք է ասել, որ դեռևս տարիներ առաջ այդ նկատել է Մ. Աբեղյանը՝ ասելով. «հին **գճել** դարձել է ճկել» (Հայոց լեզվի տեսություն, էջ 99):

(> կույ) ձևափոխության հետ: Գալով հեռավոր անցյալից՝ **ձկել** ձևը, սակայն, ճիշտ միատեսակ ընթացք ու տարածում չի ստացել բոլոր բարբառներում: Եվ իրոք, որոշ բարբառներ (Մուշ, Խարբերդ) պահել են հին **զձել** ձևը¹⁹, որոշ բարբառներ կորցրել են այն, իսկ մի շարք բարբառներում էլ (Երևան, Խոյ, Նոր Նախիջևան, Պոլիս, Ղարաբաղ, Սվեդիա և այլն) լայն կիրառություն են ստացել **ձկել**-ն ու նրա հիմքի վրա առաջ եկած ձևերը, ինչպես, օրինակ՝ **ձկռձկռ անել** (Գորիս, Ղարաբաղ), **ձկռացնել** (Երևան, Ղազախ, Գորիս և այլն), **ձկռել** (Երևան, Գորիս, Ղարաբաղ և այլն), **ձկռած**, **ձկուն**, **ձկվել** և այլն, որոնց մի մասն էլ անցել է մեր գրական լեզվին՝ ազդանշելով լեզվի բառագանձի հարստացման գործում դրափոխության խաղացած դերն ու նշանակությունը:

5. ԿԱԹ(ԻԼ)

Կաթ («շիթ, կայլակ, կաթիլ») բառարմատի ծագման մասին հայտնվել են տարբեր կարծիքներ²⁰. դրանցից, սակայն, ոչ մեկն էլ ճիշտ չհամարելով՝ Հր. Աճառյանն այն դասում է չստուգաբանված արմարտների շարքը: Մինչդեռ լեզվական և մի քանի այլ իրողություններ թույլ են տալիս մեզ հայտնելու այն կարծիքը, որ այս դեպքում մենք պարզապես գործ ունենք բնածայնական ծագում ունեցող մի արմատի հետ:

Արդ՝ որն է դրա առաջին հիմքը. բնածայնական բառերը, ինչպես ապացուցված է լեզվաբանական գիտության կողմից, արդյունք են բնական երևույթների, առարկաների, կենդանիների և այլնի հետ կապվող ձայնի ընկալման, և այդ պատճառով էլ նրանց տրված անունը սովորաբար համապատասխանում է նույն ձայնի բնույթին. հմմտ. օրինակ՝ հայերեն՝ կկու, սանս. kōkīlā, kōka, լատ. cuculus, ֆրանս. coucou, անգլ. cuckoo, գերմ. Kuckuck, պրս. ڪ kykū, քրդ. kiku²¹. հյ. մլալ(ել), թրք. miau, քրդ. meu, meužin, պրսկ. mav, ֆրանս. miailer, ռուս. мякать, արաբ. mava²², հայերեն՝ խոխոջել, ռուս.

¹⁹ Ս. Բաղդասարյան – Թափալցյանի «Մշո բարբառը» (Երևան, 1958) աշխատանքում **զձել**-ի դիմաց տրված է **ճըզել** (տե՛ս էջ 250):

²⁰ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան:

²¹ Տե՛ս նույն տեղը:

²² Տե՛ս նույն տեղը:

журчаты... Այս տեսանկյունից էլ հենց նայելով **կաթ** արմատի ծագման հարցին, մենք տեսնում ենք, որ ինչպես **կկվի** համած ձայնը համապատասխանում է նրա անվանը, կատվի համածը ձայնը՝ նրա մլավելուն, գետի կամ առվակի ձայնն էլ՝ նրա կարկաչին, այնպես էլ ջրի ծորալու, շիթ առ շիթ ընկնելու ձայնն էլ համապատասխանում է **կաթ** անվանմանը, որը, սակայն, շատ ավելի պարզ երևում է կրկնավոր՝ **կաթ-կաթ, կաթկթել, կաթկութ** ձևերում: Ավելացնելով սրան այն, որ հայերենի ստուգաբանված 152 բնածայնական բառերի մեջ **կա(կ)** պարզ ձայնով կազմված բնածայնները զգալի տեղ են բռնում (հմմտ. **կական, կակաչել, կառանչել, կարկաչել, կկու, կոչել, կոչել, կրկջալ, կրճել** և այլն) և մինչև անգամ **կակաչ** («ջրերի կարկաչահոս տեղ», Հր. Աճառյան, Արմ. բառ., հ. 3, էջ 875) ձևը կապվում է հենց ջրի ձայնի հետ, ավելի ենք համոզվում **կաթ** արմատի բնածայնական լինելու մեջ: Եվ անշուշտ դրանով էլ հենց պայմանավորվում են այն ընդհանրությունները, որ երևան է հանում հյ. **կաթ** արմատը ցեղակից և ոչ ցեղակից շատ լեզուների համապատասխան տվյալների հետ, ինչպես, օրինակ՝ հյ. **կաթ, կաթիլ**, լատ. gutta, ֆր. gotte, արաբ. **գադդե**, սանս. gad («նզել, կաթել, կաթիլ», Արմ. բառ., հ. 3, էջ 845), ռուս. канля, ուկ. канля, բելոռ. канка, լեհ. kapla²³, այլև անգլ. drop («կաթ, կաթիլ»), drop drop («կաթ-կաթ»), քրդ. dlon («կաթիլ»), dlon-dlon («կաթիլ-կաթիլ»), dlon-dlonu («կաթկթում»)՝²⁴ և այլն:

Այս բոլորից բացի, սակայն, **կաթ** բառի բնածայնական ծագման վրա շատ ավելի որոշակի լույս են սփռում հայերենի բարբառները՝ իրենց **կաթ** (Ալաշ., Ախց., Գոր., Երև., Ղրբ., Շմ., Ջղ., Տփ., Մեղր.) **կօթ, կօթ-կօթ** (Անգլ), **գ՞թ** (Խրբ), **գօթ** (Հճ), **գութ** (Սվեդ.), այլև **կաթիլ** (Գոր., Մեղր.), **կաթիլ** (Կր., Մկ.), **կաթիլք** (Ախց.), **գաթիլ** (Սեբ., Սուչ.), **գաթիլք** (Հմշ., Ռ., Սեբ.) **գաթըլ գաթըլք** (Ձթ.), **գ՞թել** (Խրբ.) և այլ ձևերով: Ըստ որում այստեղ կարևորը հենց **կաթիլ** նշանակությամբ **կաթ** ձևի (այն էլ գերակշիռ չափով) անկախ գործածությունն է, քանի որ նա է, որ իր մեջ ավելի վառ է դրսևորում

²³ Սլավոնական լեզուների օրինակների մասին տես Ա. Գ. Պրեդբրաժենսկու «Этимологический словарь русского языка» աշխատությունը (Մոսկվա, 1958), որտեղ հեղինակը ասում է. «Судя по рус. мжм. кан! кан!, можно допустить звукоподражательное происхождение» (էջ 294):

²⁴ Քրդերենի օրինակների համար տես «Հայ-քրդերեն բառարան», Երևան, 1957, էջ 168:

բնածայնության նախնական իմաստը և երևան հանում դրա ծագման գաղտնիքը: Իսկ ինչ վերաբերում է **կաթիլ** ձևին, ապա պետք է ասել, որ **կաթ** արմատից և **իլ** ածանցից (հմմտ. տե՛ս – տեսիլ) բաղադրված բառ է²⁵, որտեղ, սակայն, կարծում ենք, **իլ**-ը նախապես ոչ թե ածանց, այլ բայական մասնիկ է եղել. այստեղից էլ ենթադրել կարելի է, որ **կաթիլ** ձևը դրսևորել է իր մեջ գործողության իմաստ և նշանակել է ջրի շիթի, կաթիլի ընկնելը, բայց հետագայում բառիմաստի զարգացման հետևանքով դա մթագնվել է, և երբեմնի բայը դարձել է գոյական:

6. ՏԵՂԵԱԿ

Տեղեակ («Յնուտ. խելամուտ, գիտակ. բանիբուն. ներիուն. հասու. ծանօթ. փորձ, տեղն ի տեղը գիտցող», ՆՅԲ, հ. 2, էջ 864) բառի ծագման և կազմության մասին բուլղորովին հարկ չէր լինի խոսելու, եթե «Չայերեն արմատական բառարանում», որը հայ լեզվաբանական գրականության գեղեցիկ պսակն է և հայ բառագանձի գաղտնիքները մեզ հաղորդող չգերազանցված աղբյուրը, նախ՝ ՆՅԲ-ի հակառակ այն չդիտվեր իբրև անստույգ²⁶ և ապա՝ անտեսված չլիներ Արմատական բառարանի հրատարակումից հետո մեծ հայագետի ու լեզվաբանի կատարած նոր ստուգաբանությունների, ճշտումների ու պարզաբանումների շարքում: Այս հանգամանքից էլ ահա մղված մենք գտնում ենք, որ **տեղեակ** (տեղյակ) բառը, որի համար Յր. Աճառյանը նշում է միայն «հմուտ, խելամուտ, գիտակ» նշանակությունները, ոչ թե անստույգ, այլ հնիս. sedlo ձևից ծագող **տեղի** արմատից և **ակ** ածանցից բաղադրված բառ է, որպիսի կազմությունը և, խորթ չլինելով հայերենին, որևէ մեկնություն չի պահանջում. հմմտ. **պատանի + ակ > պատանիակ > պատանեակ > պատանյակ, որդի + ակ > որդիակ > որդեակ > որդյակ, տեղի + ակ > տեղիակ > տեղեակ > տեղեակ + իկ > տեղեկիկ** և այլն: Ուրեմն՝ տվյալ դեպքում **տեղեակ** (< տեղի + ակ, «հմուտ, խելամուտ, գիտակ») բառի ծագման հարցը կարելի է պարզել միայն իմաստային կողմի վերլուծությամբ և այն ելակետից, թե իրոք **տեղի + ակ** բաղադրիչների

²⁵ Յնմտ. նաև **կաթ-կաթուկ, շշուկ, թմբուկ**, այլև՝ **կաթոց, խշշոց, վշշոց** և այլն:

²⁶ **Յր. Աճառյան**, Չայերեն արմատական բառարան:

գումարը կարող էր նշանակել **հմուտ, խելամուտ, գիտակ**, և արդյոք այդպիսի իմաստներ կարող էր առաջ բերել **ակ** ածանը՝ արմատի վրա դրվելով:

Նախ՝ այս վերջինի մասին. հայտնի է, որ **ակ** ածանցը սուկ նվազական, փաղաքշական կամ նվաստական նշանակությամբ չէ, որ հանդես է գալիս, այլև հաճախ արմատների վրա դրվելով՝ կազմում է տարբեր բառեր հատկանշային, գործողի, մի բան անողի նշանակությամբ²⁷, ինչպես՝ **ունակ, ընդունակ, բուժակ, գիտակ** և այլն: Ծիշտ այդ ձևով էլ ահա **ակ** ածանցը, դրվելով **տեղի** արմատի վրա, նրան տվել է **տեղն իմացող, տեղը գիտցող** իմաստը, որը և իր զարգացման ընթացքում վեր է ածվել «հմուտ, խելամուտ, գիտակ» նշանակության: Բայց, երկրորդ, անգամ այս դեպքում էլ **տեղեակ** բառի **տեղ** (տեղի) արմատը չի կորցրել իր արժեքն ու իրավունքը, այլ, հակառակը, շարունակում է այն նախնական դերը, որի հիմքի վրա առաջ է եկել մեզ հետաքրքրող նշանակությունը: Եվ հենց այդ փոխհարաբերության մեջ էլ պարզ երևում է, որ մի բանի **տեղյակ լինելը** հենց նրա տեղը գիտենալ, իմանալ և հետևաբար՝ **խելամուտ, հմուտ, գիտակ** լինել է նշանակում, և, հակառակը, եթե որևէ մեկին հայտնի չի խոսակցության առարկայի տեղը՝ իր բոլոր կողմերով, նշանակում է նա տվյալ դեպքում անտեղյակ է և հետևաբար՝ գիտակ, հմուտ ու խելամուտ չէ:

Նման պատկերացումները, անշուշտ, գալիս են հեռավոր անցյալի խորքերից և անխզելիորեն կապվում են **տեղի** (լինի որսի, բնակության, հակառակորդների, կրակի, անտառի, ջրի, պատասպարվելու և այլն) հետ և բնականաբար պայմանավորվում են այն մեծ դերով, որ խաղացել է նա մարդու կյանքում: Այս իմաստով հմնտ. նաև նույն **տեղ** արմատից և **ակ** ածանցից կազմված **տեղակ** («փոխաբեն», «փոխանակ») բառը, որ նույնպես լայն կիրառություն ունի խոսակցական լեզվում:

²⁷ Տե՛ս այդ մասին **Մ. Աբեղյան**, Դայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 244-245:

7. ՉԱՄԲ

Չամբ բառը՝ իր «Ջրաղացի քարերի շուրջը նստած այլուրի փոշի, որ հավաքում և շների համար հաց են թխում»²⁸, «այլուրի բարակ փոշի, որ կնստի ջրաղացին երկանաքարերուն և շուրջը»²⁹, «Ջրաղացքարի չորս կողմովը նստած այլուրի փոշին, որ հաց թխելով տալիս են շներին»³⁰ նշանակությամբ, անշուշտ, հայերենի հնագույն բառերից մեկն է, որ թեև չի ավանդված հին մատենագրությամբ մեջ, բայց պահվում է որոշ բառարաններում. հմմտ. **զամբ** (Երևան), **զոմբ** (Գորիս), **զէմբ** (Ղարաբաղ, Մեղրի) և այլն: Կարծում ենք, որ դա **ամպ** (< ամբ) արմատից և **զ**-նախդիրից կազմված մի բառ է, որ առաջ է եկել որոշ օրինակափ հիմքի վրա. հայտնի է, որ **զ** նախդիրը, դրվելով այլևայլ արմատների վրա, նրանց մեծ մասամբ տվել է իմաստային նոր երանգ ու նշանակություն. հմմտ. **զգալ** < **զ** + **գալ**, **զեռալ** < **զ** + **եռալ**, **զգոյշ** < **զ** + **գոյշ**, **սփռել** **զփռել** < **զ** + **փռել**, **զետեղել** < **զ** + **ետեղել**, **զարդ** < **զ** + **արդ**, **զամպ** < **զ** + **ամպ** (հմմտ. ամպ ու զամպ): Բայց հենց այս վերջին օրինակում էլ, եթե **զ**- նախդիրի հավելմամբ սաստկացել է **ամպ** բառի **իմաստը**, և **զամպ**-ը, արտահայտելով ամպի խտացած վիճակը, սկսել է նշանակել «լեռների վրա դիզված ձյունը»³¹ նշանակությունը. ապա **զամբ** ձևն էլ բառային ինքնուրույն արժեք է ստացել փոխաբերական նշանակության ամպի և ջրաղացի քարերին ու նրանց շուրջը նստած այլուրի փոշու միջև եղած նմանողության հիմքի վրա: Եվ հենց այն հանգամանքը, որ այլուրի փոշին, նստելով ջրաղացի քարերի, ձողերի վրա, ինքնին ստեղծում է ամպի կամ նրա սպիտակ քուլաների պատկերը, ենթադրել է տալիս, որ մարդիկ, այն նմանեցնելով ամպին, կազմել են **զամպ** բառը, որի մեջ էլ, պետք է ասել, ի տարբերություն **ամպ** և

²⁸ **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

²⁹ **Ջր. Աճառեան**, Հայերեն գաւառական բառարան:

³⁰ **Ս. Ամատունի**, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 185:

³¹ Տե՛ս մեր ««Զ» նախդիրի բառակազմական արժեքը» հոդվածը (Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1958, N 8, էջ 75). Ի դեպ հարկ ենք համարում նշել, որ այնտեղ «զ» նախդիրի բառակազմական արժեքի բացահայտման կապակցությամբ արված մեր բառաքննական դիտողությունների մի մասը կարիք է զգում վերանայման ու ճշտման:

զամպ ձևերի, անաղարտությամբ է պահպանվում հնագույն և ուղղագույն **ամբ** (< mbho) ձևը³²:

8. ՏՐՈՓԵԼ

Մի շարք փաստեր, որոնց կանցնենք քիչ հետո, ցույց են տալիս, որ հին մատենագրության մեջ գործածական **տրոփել**, **տրոփական**, **տրոփիւն**, **տրոփումն** բառերի **տրոփ** արմատը բնածայնական է, և հետևաբար այն ևս մտնում է հայերենի բնածայնական ծագում ունեցող արմատների շարքը: Դրա առաջին և հիմնական ապացույցը նույն արմատի բնածայնական իմաստ արտահայտելն է, որը և հաստատվում է բառարանների տված ճիշտ մեկնություններով. այսպես՝ ըստ ՆՅԲ-ի **տրոփել** (ունի նաև **տորոփել** տարբերակը) նշանակում է «ուժգին ի վերայ վազել, և ոստմամբ կոխտտել. կոխան առնել, դրփել. կայթել. դրնդել. թնդել. շառաչել»³³, **տրոփիւն** և **տրոփումն** նշանակում են «տրոփելն, ոտնածայն կոխտտման, կայթիւն, թնդիւն»³⁴, իսկ Արմատական բառարանում էլ **տրոփ** արմատի տակ կարդում ենք. «Սրտի թնդիւն, բաբախիւն». գործածական է միայն արդի գրականի մեջ. հների մեջ արմատ անգործածական, որից **տրոփել** «ոտքերով կոխտտել» Ոսկ. մտթ. և փիլիպ. **տրոփիւն** ոտքի կոխտտման կամ կայթելու ցատկոտելու ձայն, թնդիւն» Ոսկ. Մ. բ. 23, **տրոփական** ՅՅ կթ., **տրոփումն** նար հչ. **Թագատրոփ**, **Ծնարատրոփ** «երաժշտական խազ կամ եղանակ» Ոսկ. գրված է նաև **տրփալ** (աշխ. տրոփել) «սիրտը բաբախել» Յայսմ. մայ. 4 **տորոփել** Ոսկ. ա. տիմ. ը. **սրտատրոփ** կամ **սրտատորոփ** Շնորհ. **ոտնատրոփ** կամ **ոտնատորոփ** Սիսիան. Արծր»³⁵:

Այսպիսով՝ **տրոփ** արմատը իսկապես համապատասխանում է ոտքերի կոխտտման, ցատկոտելու ձայնի, թնդյունի բնության և պարզապես հանդիսանում է նրանց անունը: Մի այլ նշանակությամբ այն արտահայտում է նաև սրտի թնդյունը և բաբախյունը, որի մեջ, սակայն, որ կարևոր է, չի բացառվում դարձյալ **տրոփ** (կամ **տրոփտրոփ**) ձայնը:

³² Հմմտ. **Յր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

³³ «Նոր բառագիրք հայկազեան լեզուի», հ. 2, էջ 898:

³⁴ Նույն տեղում:

³⁵ **Յր. Աճառեան**, Հայերեն գալառական բառարան:

Մեր երկրորդ ապացույցն էլ այն է, որ ինչպես ոստքի զարնումից, այնպես էլ սրտի բաբախումից առաջացած ձայնին տրված **տրոփ, տրոփել, տրոփյուն, տրոփումն** և այլն ձևերը ոչ միայն չեն հակասում հայերենի բնածայնական բառերի կազմության ոգուն և մնում իբրև բացառություն, այլև, ընդհակառակը, հանդիսանում են նրանց դրսևորման արտահայտություններից մեկը և, ասենք, **սոփել, դոփիւն, դոփումն, ճողփիւն**, այլև **բամբիւն, թմբիւն, բմբիւն** և այլն, ձևերի հետ մի ընդհանուր խումբ են կազմում: Անշուշտ, այդ մասին է վկայում և «իւն» ածանցը, որը սովորաբար հանդես է գալիս բնածայնական արմատների հետ. հմմտ. **բաջիւն, գանգիւն, սսիւն, դրդնջիւն, դրդջիւն, խօշիւն, պոջիւն** և այլն³⁶:

Վերջապես այլ լեզուների ոչ քիչ համապատասխան ձևերը, հմմտ. հայերեն՝ **տրոփ, տրոփել**, ռուս. *смык-смык, смыкать*, ուկ. *смык, բելոռուս. смыкаць*, լեհ. *stuk, stukno* և այլն, ևս իրենց հերթին ցույց են տալիս, որ հայերեն **տրոփ** (տորոփ) արմատն իսկապես բնածայնական ծագում ունի:

9. ՉՈՒՆԸ

Չոուել («Աչքերը, մատները, բերանը լայն բանալ», Հր. Աճառյան, ՀԳԲ, էջ 887. «մատների, աչքերի, ոտքերի լայն բանալը», Ս. Ամատունի, Հ. բառ ու բան, էջ 545, «1. լայն բանալ, ձգտեցնել, 2. աչքերը զարմանքից կամ սարսափից լայն բանալ», Ս. Մալխասյանց, ՀԲԲ, հ. 4, էջ 31) բառը պրոֆ. Հր. Աճառյանի վկայությամբ գործածական է Երևանի, Ագուլիսի, Ղարաբաղի և Թբիլիսիի բարբառներում. անշուշտ, այն չի բացառված նաև այլևայլ խոսվածքներում և մինչև իսկ, կարելի է ասել, իր տեղն ունի գրական լեզվում և ազատորեն գործ է ածվում գրողների կողմից:

Արդ՝ հարց է ծագում. **չոուել**-ը, որ բացակայում է հին մատենագրության մեջ, հայերենի գրավոր չավանդված հնագույն բառերի՞ց մեկն է, թե՞ պարզապես հանդիսանում է որևէ հին ձևի այլափոխությունը. չղասվելով փոխառությունների շարքը՝ պարզ է՝ նա կարող է կան մեկը և կան մյուսը լինել: Եվ ահա մի շարք փաստեր ցույց են

³⁶ Բնածայնական բառերի մասին տես **Հր. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, հ. 1, էջ 114-116:

տալիս, որ տվյալ դեպքում այն ուղղակի ներկայացնում է հետագայում գործածությունից դուրս մղված գրաբարյան **աչառել** («ակն առնուլ, ակն ածել, պատկառել, շնորհս առնել ումեք. մարդահաճել», ՆՅԲ, հ. 1, էջ 266, «1. ակն ածել, պատկառել, 2. երեսպաշտություն անել», Ստ. Մալխասյանց, ՉԲԲ, հ. 1, էջ 199) բայի հապավված ձևը, որը առաջ է եկել **աչառել > չառել > չռել** ընթացքում:

Դա ամենից առաջ հաստատվում է բառասկզբի **ա** ձայնավորի անկման այն հայտնի օրենքով, որ գործուն է հայերենի մի շարք բարբառներում ու խոսվածքներում. այսպես հմմտ.

Գրաբար	Ազուլիս	Գորիս	Մեղրի
ածելի	ծէլի	ծիլի	ծիլէ
անալի	նալի	նալի	նալէ
աքացի	քացի	քացի	քացէ
ապաշխարող	բըշխարուղ	ըբըշխարուղ	բըշխարուղ և այլն ³⁷ :

Եվ անուհետև, դրան ավելանում է բառասկզբի բաղաձայնին հաջորդող **ա** ձայնավորի անկման կամ սղման օրենքը, որի վերաբերյալ, ճիշտ է, կարելի է բերել շատ օրինակներ, ինչպես՝ **չարչարել > չրչրել** (Ղարաբաղ, Գորիս), **չալակել > շլակիլ, փափկիլ > փըփկիլ, կապտիլ > կպըտիլ** (Ազուլիս) և այլն, բայց դրա հարկը բոլորովին էլ չի զգացվում, որովհետև առաջին խմբի որոշ ձևերի մեջ էլ նկատելի է նույն **ա**-ի անկման (կամ սղման) երևույթը, որը և հիմք է տալիս ասելու, որ **աչառել**-ից օրինաչափորեն առաջ եկած **չառել** ձևի մեջ ևս երկրորդ **ա**-ն կարող էր ընկնել, և դա հենց այդպես էլ տեղի է ունեցել:

Աչառել բայից **աչառել > չառել > չռել** (չըռել) ընթացքով **չռել** ձևի առաջացման մյուս էական ապացույցը այս դեպքում ևս իմաստային այն սերտ կապն ու հարաբերությունն է, որ գոյություն ունի նրանց միջև: Այսպես՝ հայտնի է, որ **չռել** բայի հիմնական նշանակությունն է՝ **աչքերը լայն բացած ու սևեռուն նայել, երկար ժամանակ հայացքը չհեռացնել նույն կետից**. իսկ այդ ամբողջն էլ կարող է արվել թե՛ «մարդահաճելու», «երեսպաշտություն անելու», թե՛ «ակն առնելու, ակն ածելու», թե՛ «պատկառելու» և թե՛ այլ նկատառում-

³⁷ Ազուլիսի բարբառի օրինակների համար տես **Յր. Աճառյանի** «Քննություն Ազուլիսի բարբառի» աշխատությունը, իսկ Մեղրու բարբառի օրինակների համար՝ **Էդ. Աղայանի** «Մեղրու բարբառը»:

ներով: Եվ քանի որ դա այդպես է, և հենց «չեղ» բառի մեջ որոշակիորեն դրսևորվում է «ակն առնելու», «ակն ածելու» իմաստը, նշանակում է այն իսկապես **աչառել** բայի հապավված ձևն է, որը և, կրկնակի փոփոխության ենթարկվելով, ոչ միայն բավականին հեռացել է իր նախավոր ձևից, այլև բառիմաստի զարգացման քուրայում տվել է տարբերակումներ՝ արտահայտելով միաժամանակ «մատերի, ոտքերի լայն բանալը» երկրորդական նշանակությունը:

Դեռ ավելի՛ն. որոշ դեպքերում նա արտահայտում է բացասական իմաստ (օրինակ՝ Տես ինչպես է աչքերը **չեղ** մեզ վրա), որը և, կարծեք թե, ինչ-որ կապ է նշմարում **չառ** (Դրբ. «անասուններու հիվանդություն մ'է, որով կը ճաթի և կը սատկի», Զր. Աճառյան, ԶԳԲ, էջ 877) բառի հետ, որ սովորաբա գործածվում է անեծքների մեջ, ինչպես՝ **չառը** օնի քեզ, **չառը** տանի քեզ, **չառը** կալել է նրան և այլն:

10. ՇԿԱԿԵԼ

Շկակել ձևի մասին, որը առաջին անգամ տեղ է գտել «Չայերենն գալառական բառարանում», Զր. Աճառեանը հետևյալ հիշատակությունն է անում. «**Շկակել** Դրբ., արագ վազել. Շկակած գնաց»³⁸: Նույն բացատրությունը գտնում ենք նաև Ստ. Մալխասեանցի «Չայերեն բացատրական բառարանում», որտեղ միայն հավելման կարգով **շկակել**-ը դիտվում է իբրև ներգործական սեռի բայ³⁹:

Բայց **շկակել** ձևի վերաբերյալ երկու խոշոր հայագետների տված մեկնությունները ենթակա են ճշտման, ամենից առաջ Ղարաբաղի բարբառի և մեր մայրենի խոսվածքում (Գորիս) գործածական «շկակած» (իմա՝ «կաս-կարմիր կտրած», «տաքացած», «փութով» և այլն) ձևը ցույց է տալիս, որ **շկակել**-ը (լեզվաբանները դա կազմել են հարակատարի ձևի հիման վրա) բնավ երևան չի հանում գրաբարի մեջ գոյություն չունեցող մի նոր արմատ, այլ պարզապես սերում է **շէկ** արմատից կազմված **շիկանալ** («Շեկ գույն ստանալ տաքանալուց, կարմրել, կրակ կտրել») բայի հարակատար դերբայներից. և ահա թե ինչպես. բարբառում շեշտավանկից առաջ ձայնավորի փոփոխության օրենքով **շիկանալ** անորոշ դերբայաձևը դարձել է

³⁸ Նույն տեղում, էջ 832:

³⁹ Տե՛ս Ստ. Մալխասեանց, Չայերեն բացատրական բառարան:

չկանալ (հմմտ. մեծանալ > մծանալ, կայծանալ > կէծանալ սևա-
 նալ> սվանալ և այլն), իսկ դրա **չկացած** հարակատար դերբայա-
 ձևի մեջ էլ (հմմտ. մծանալ-մծացած, կծանալ-կծացած, սվանալ-
 սվացած և այլն) **կ**-ն ազդելով **ց**-ի վրա՝ առաջընթաց լիակատար
 առնմանմամբ առաջ է բերել **չկակած** ձևը, որ իհարկե ոչ թե արագ
 վազելու, այլ հենց «շիկացած, կրակ կտրած» իմաստն է արտահայ-
 տում, ինչպես, օրինակ՝ **չկակած** նի մտավ, **չկակած** վագ տվեց,
չկակած փախավ և այլն: Նկատելի է, սակայն, որ բարբառում դրա
 կողքին գործածական է նաև բուն **չկացած** ձևը, որի և մյուսի գոյու-
 թյունն էլ այլ բան չէ, քան բառաձևի և իմաստային տարբերակման
 արդյունք ու հետևանք: Եվ իրո՞ք. **չկացած** ձևը արտահայտում է
 ֆիզիկական մարմինների, առարկաների, բնական երևույթների
 (կրակի, արևի, հողի և այլն) շիկացած լինելը (օրինակ՝ կեսօրին
 արևը **չկացած** էր, կրակը **չկացած** է), իսկ **չկակած**-ն էլ նույնն ար-
 տահայտում է մարդու (առանձին դեպքերում էլ կենդանիների ու
 անձնավորված առարկաների) վերաբերյալ, այն էլ, պարզ է, փոխա-
 բերական նշանակությամբ: Այսքանից էլ միաժամանակ հետևում է,
 որ ենթադրյալ «չկակել» ձևը չի կարող ներգործական սեռի բայ լինել:

11. ՊԼՊԼԱԼ, ՊՍՊՂԱԼ

Հայերենի մի շարք բարբառներում (Մուշ, Պուլիս, Վան, Թբիլիսի,
 Երևան, Ղարաբաղ և այլն) գործածվող **պլպլալ** («1. աղոտ փայլել
 2. ցուլալ, փայլել, փայլվալ», ՀԲԳ, էջ 914) բառը Հր. Աճառյանը **են-
 թադրաբար** ծագած է համարում հնիս. **bhel** արմատից, ավելացնե-
 լով դրան, թե «որովհետև հնիս. **bh** չի տալիս հյ. **պ**, ուստի **կարելի է
 ենթադրել** (ընդգծումն իմն է - Ա. Մ.) հնիս. **bōl** ձայնադարձը, որ ճիշտ
 պիտի տար հայերեն կրկնությամբ **պլպլալ**»⁴⁰:

Այդ ենթադրության հակառակ, սակայն, հանդգնում ենք կարծել,
 որ **պլպլալ**-ը ոչ թե հին մատենագրության մեջ պատահմամբ չմտած
 ձևերից է, այլ ուղղակի հանդիսանում է հնիս. **spheh**, **phel** («փայ-
 լիլ»)–ից⁴¹ ծագող հայերեն **փայլ** («պայծառ վառիլը, շողալը, պայ-
 ծառություն», Արմ. բառ., հ. 6, էջ 1134) արմատից կրկնությամբ ա-

⁴⁰ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 1, էջ 121-122:

⁴¹ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան:

ռաջ եկած **փլփլալ** (< փայլփլել < փայլփայլել) ձևի մի տարբերակը: Այստեղ իմաստային կողմը նույնը լինելով որևէ մեկնություն չի պահանջում. բայց չէ՞ որ այդ դեպքում էլ չկա մի բարբառ, որտեղ **փ-ն ալ** տված լինի. հետևապես ինչպես է **փլփլալ-ից** առաջ եկել **ալալալ** ձևը. մեզ թվում է, որ դա տեղի է ունեցել նախ՝ տարնամության և ապա՝ առնամության օրենքով, որը և ասել է թե՛ բարբառում գործածական **փլփլալ** ձևի մեջ բառասկզբի **փ-ի** ազդեցությամբ բառամիջի **փ-ն** դարձել է **ալ** (հմմտ. փլփլալ > փլալալ) և այնուհետև դրա ազդեցությամբ մյուս **փ-ն** էլ վեր է ածվել **ալ-ի**, որով էլ հենց պայմանավորված առաջ է եկել **ալալալ** ձևը:

Փայլփայլել > փայլփլել > փայլփլալ > փլփլալ > փլալալ > ալալալ ձևափոխության իսկությունն էլ հաստատում են բարբառները, որոնցում էլ **փլփլալ-ից** առաջ եկած ձևերը ներկայացնում են հարցի էությունը պարզորոշ դարձնող մի հետաքրքիր պատկեր. այսպես՝ կան բարբառներ, որոնք «անաղարտ» են պահում նախնական ձևը, հմմտ., օրինակ, **փէլփէլօլ**, **փէլփէլոլ** (Ձեյթուն), **փլփլալ** (Ախալցխա)⁴², **փիլփիլալ** (Մեղրի)⁴³, կան բարբառներ (Երևան, Վան, Մուշ և այլն), որոնք գիտեն երկու՝ **փլփլալ**, **ալալալ** ձևերը, և վերջապես՝ որոշ բարբառներ (Ղարաբաղ, Թբիլիսի) ունեն միայն **ալալալ**. սա էլ հենց նշանակում է, որ առաջին դեպքում բացառվել է տարնամման և առնմանման օրենքը, երկրորդ դեպքում ստանալով իր ընթացքը՝ չի մերժել, սակայն, նախնական ձևը, իսկ երկրորդ դեպքում էլ նա, ընդհակառակը, իր լիակատար հաղթանակն է տարել և ապահովել միայն **ալալալ** ձևի իրավունքը:

Այս բոլորից էլ հետևում է, որ **փայլ** արմատից կազմված կրկնավորները ինչպես ձևի, այնպես էլ իմաստի տեսակետից հայերենի պատմական զարգացման ընթացքում կրել են զգալի տեղաշարժեր, որոնց հետ էլ կապվում են նաև **ալալալի** («բոցափայլ»), **ալալան** («փայլփլուն»), **ալալացնել** («վառել, բորբոքել»), **ալալուն** («շողշողուն, փայլուն»), **ալալուք** («ճրագի առկայծումը») և այլն, բառերը⁴⁴, որ գործածվում են մի շարք բարբառներում:

⁴² Նույն տեղում, էջ 1134:

⁴³ Տե՛ս **Էդ. Աղայան**, Մեղրու բարբառը, էջ 289:

⁴⁴ Դրանց մասին տե՛ս **Յր. Աճառեան**, Հայերեն գաղափարական բառարան:

Նման տեղաշարժերից չէին կարող զերծ մնալ և զերծ չեն մնացել նաև **փայլ** արմատի մյուս տարբերակներով՝ **փաղ**, **փող**, արտահայտված կրկնավորները⁴⁵ (իմա՝ **փաղփաղիլ** «փայլել, ցոլցլալ», **փաղփաղուն** «փայլուն», **փաղփաղեալ** «փայլելով», **փաղփաղող** «փայլուն», **փողփողել** փայլփլել, շողշողալ), և մեր կարծիքով՝ **պսպղան** («փայլել, փայլփլալ»), **պսպղան** («փայլուն»), **պսպղացնել** («փայլեցնել»), **պսպղին տալ** («ցոլալ, փայլել»), **պսպղոց** («փայլ, շողշողուն»), **պսպղուն**, **պսպղտուն**, **պղպստուն** («փայլուն, փայլփլուն»), **պսպսալ** («փայլփլել»), **պսպռտալ** («փայլիլ, մաքրութենեն փայլել»), այլև **պսալ** («փայլել, փայլփլալ») և այլն բառերը⁴⁶ հենց նրանց հետագա ձևափոխություններն են, որ դարձյալ առաջ են եկել տարնմանման ու առնմանման օրենքով. մի օրենք, որ այդ դեպքում ոչ միայն «փ»-երի, այլև տարբեր վանկերում գտնվող **ղ**-երի հիմքերն է խարխլել:

Եվ իրոք, ինչպես որոշ բարբառներում (Վան, Ագուլիս և այլն) բառի մեջ երկու **ղ** գտնվելու դեպքում նրանցից առաջինը դառնում է **ն** (օրինակ՝ աղեղ > անեղ), **ռ** (օրինակ՝ բաղեղն > պառեղ) կամ **վ** (օրինակ՝ խաղող > խավող)⁴⁷, այնպես էլ մեր հիշատակած ձևերի մեջ առաջին **ղ**-ն տեղի է տվել երկրորդի ազդեցությանը և փոխարինվել **ս**-ով: Եվ մինչև անգամ որոշ բարբառներում էլ այդ **ս**-ն է ազդել երկրորդ **ղ**-ի վրա և նմանեցնելով իրեն՝ առաջ բերել **պսպսալ** (դրանից նաև **պսալ**) ձևը. այստեղ էլ արժե հիշել և այն, որ Գորիսի խոսվածքը **պսպղալ**-ի դիմաց ունի **փղսպղղալ**, որի մեջ էլ, սակայն, բառասկզբի **փ**-ն արդյոք տարնմանման հնագո՞ւյն, թե՞ նոր արտահայտություն է՝ դժվար է ճիշտը որոշել:

Իբրև ամփոփում այս ամբողջ շարադրանքի՝ մնում է ասել, որ մեր կատարած վերլուծությունները մեծ մասամբ լիակատար ստուգաբանություններ չեն և հետևաբար ուղղակիորեն արմատների ծագումը չէ, որ երևան են հանում: Բացի բնաձայնական դիտված **կաթիլ** և **տրոփել** բառերից, մյուսները քննված են իրենց բաղադրության և

⁴⁵ Տե՛ս **Յր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

⁴⁶ Հմմտ. **Յր. Աճառյան**, Հայերեն գալառական բառարան:

⁴⁷ Օրինակները բերվում են **Յր. Աճառյանի** «Քննություն Վանի բարբառի» աշխատությունից (Երևան, 1953, էջ 71):

հայերենի պատմական զարգացման ընթացքում կրած ձևափոխությունների տեսակետից: Եվ ըստ այդմ էլ հենց նրանք, կարելի է ասել, բաժանվում են երկու խմբի. մի խմբի մեջ են մտնում **սմբել, կուչ, ձկել, «շկակել»**, **պլպլալ, պսպղալ** բառերը, որոնք, ավանդված չլինելով հին մատենագրության մեջ, ներկայացնում են համապատասխան հին ձևերի այլափոխությունը կամ տարբերակը, իսկ մյուս խմբի մեջ էլ մտնում են **տեղեակ, ընկիճեալ** և **զամբ** բառերը, որոնք բացի վերջինից, գործածական լինելով գրաբարում, կազմում են արմատի ու ածանցի միասնություն. ըստ որում, եթե այս դեպքում էլ որոշ ձևեր (ընկիճեալ) իրենց ծագմամբ դարձյալ մնում են անստույգ, ապա մի քանիսն էլ (տեղեակ, զամբ), կապվելով արմատական ձևերին (տեղի, ամբ), դասվում են ստուգաբանված բառերի շարքը: Չնայած այդ ամենին՝ երկու դեպքում էլ նման մեկնությունները (եթե, իհարկե, նրանք ճիշտ են) չեն կարող և արժեքավոր չլինել հայերենի բառազանձի, նրա բազմադարյան պատմության ու բարբառագիտության համար՝ նրանց վերաբերող առանձին աղոտ հարցերը լուսաբանելու տեսակետից:

ԲԱՐԲԱՆԱՅԻՆ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ⁴⁸

Բարբառներում կան բազմաթիվ բառեր, որոնք, հնչյունական մեծ փոփոխությունների ենթարկված լինելով, բավականաչափ հեռացել ու տարբերվում են իրենց նախավոր ձևերից, հմնտ. **քա՛վօր** || **քա՛վէր** < **կնքաւոր**, **ղօ՛րփէր** < **հօրեղբայր**, **ա՛քէր** < **հօրաքոյր**, **հա՛ս՛ի** < **հարսն**, **տօպ** < **պուտ**, **շո՛ւռըթկան** < **ջորրդան** || **ջորդան**, **օ՛շափ** < **յուշապ** || **վիշապ**, **քաշկ** < **քաջք**, **տուկուն** || **տէկուն** < **տիկին**, **տըղօ՛րմա** < **տէր ողորմեա** և այլն⁴⁹:

Իրենց սկզբնական ձևերի համեմատությամբ նման բառերը կարող են իմաստապես նույնը լինել, կարող են պահել նախկին նշանակություններից մեկը կամ մի քանիսը, կարող են հնի հետ ունենալ նաև մի այլ իմաստ և կամ հներից զրկվելով՝ արտահայտել բոլորովին նոր նշանակություն: Այսպես՝ հենց բերված օրինակների մեջ իմաստապես իրարից չեն տարբերվում (կամ գրեթե չեն տարբերվում) **ղօ՛րփէր** - **հօրեղբայր** /= հորեղբայր՝ հոր եղբայրը/, **ա՛քէր** - **հօրաքոյր** /= հորաքույր՝ հոր քույրը/, **շո՛ւռըթկան** - **ջորրդան** || **ջորդան** /= ջրորդան՝ փայտից կամ մետաղից պատրաստված խողովակ, որով անձրևի ջուրը հոսում է տան կտուրից/, **քաշկ** - **քաջք** /= առասպելական ոգի/ բարբառային ու նախավոր զուգահեռ ձևերը: Մինչդեռ, ասենք, **քա՛վօր** || **քա՛վէր**-ը պահում է < **կնքաւոր** /> **կնքավոր**/ բառի միայն «կնքահայր» նշանակությունը, **հա՛ս՛ի**-ն նշանակում է «մեծ հարս» և «հորեղբոր կին», **տօպ** /< **պուտ**/-ը նշանակում է և՛ **պուտ** բույսը, և՛ 1. կաթիլ, մի կաթիլ. 2. փոքր ինչ, մի փոքր, **օ՛շափ** /< **յուշապ** || **վիշապ**/-ը նշանակում է և **վիշապ** կենդանին և՛ շատակեր, որկրամուլ, **տո՛ւկուն**, **տէ՛կուն**-ը ոչ թե **տիկին**, այլ՝ **տիկնիկ** (кыкла), **տըղօ՛րմա**-ն ոչ թե՛ տէր ողորմեա, այլ համրիչ է նշանակում և այլն:

Հայերենի բարբառներում այդպիսի կերպարանափոխությունների ու իմաստային տարբերակումների ճանապարհով առաջ եկած շատ բառերի ծագումը, դժբախտաբար, կա՛մ դեռևս հիմնավորապես չի ապացուցված, կա՛մ բոլորովին մութ է մնում: Այդ նկատի առնելով՝

⁴⁸ «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1972, N 2, էջ 236-242:

⁴⁹ Այս և հաջորդ բարբառային օրինակները բերվում են հիմնականում Գորիսի, մասամբ և Ղարաբաղի բարբառներից:

սույն աշխատանքում փորձ ենք անում մեկնաբանելու նման բնույթ ունեցող մի քանի բառեր, որոնք լայնորեն գործածվում են Գորիսի ու Ղարաբաղի բարբառներում և գերազանցապես հատուկ են դրանց:

1. ՀԱՎՈՒՐ

Բառիս գոյությունը առաջին անգամ նկատել է Հր. Աճառյանը և իր «Հայերեն գալառական բառարան»-ում ներկայացրել «**Հաւուր, հովուր** Ղրբ. մի քիչ ժամանակ, **մի՛ն-սպասէ**» ձևով իբրև առանձին բառահոդված⁵⁰: Հր. Աճառյանին հետևելով՝ այդպես է վարվել նաև Ստ. Մալխասյանցը. «+ **Հաւուր. մկ.** Մի կարճ ժամանակ, փոքր-ինչ: **Մի՛ն հաւուր սպասիր**»⁵¹: Երկու երախտավոր հայագետ-լեզվաբանները այսպիսով բավարարվել են այդ բառի սոսկ իմաստի բացատրությամբ և նրա՝ ինչից ծագած լինելու մասին մեզ ոչինչ չեն հաղորդում:

Արդ՝ հարկ է ամենից առաջ նշել, որ **հաւուր** /= հովուր/ բառը հատուկ է նաև Գորիսի բարբառին և ինչպես **այդտեղ**, այնպես էլ Ղարաբաղի բարբառում չունի անկախ և ոչ մի գործածություն. այն, իբրև կանոն, միշտ ու պարտադիր հանդես է գալիս **մի** || **մի՛ն** || **մըն** || **մը** բառի հետ, և **երկուսն էլ միասին** նշանակում են՝ 1. մի քիչ՝ որոշ ժամանակ, մի քիչ, փոքր ինչ. 2. դիցուք, ասենք թե: Ըստ ինքյան պարզ է, որ **մի** || **մի՛ն** || **մըն** || **մը հավուր** (հովուր) բառը առաջին դեպքում՝ մակբայի, երկրորդ դեպքում էլ եղանակավորիչ բառի նշանակություն է արտահայտում: Հմմտ. **Մըն հավուր** կաց, մրհէկ կըկ'ա՛ր /= մի քիչ սպասիր, հիմա կգա/, **Մըն հավուր** տիռանը ման յէք /= մի քիչ դրսում զբոսնիր/, **Մըն հավուր** յէկալ ա, յէս հի՞նչ կարամ անէմ /= դիցուք եկել է, ես ի՞նչ կարող եմ անել/, **Մըն հավուր** մարթին թա՛րիփ ա անում, հո՞ւ չի **գ'ճղոճում** էն հուկ ա /= դիցուք մարդուն գովում է, ով չգիտի՝ նա ով է/ և այլն:

Այնուհետև պետք է ասել, որ իր արտահայտած, հատկապես առաջին նշանակությամբ, **մի** || **մի՛ն** || **մըն** || **մը հավուր** (հովուր) բառը ծագումնաբանորեն և իմաստաբանորեն կապվում է **ժամանակ ցույց տվող ՕՐ** (< աւր) բառի հետ և, ինչպես կտեսնենք ստո-

⁵⁰ Հր. Աճառեան, Հայերեն գալառական բառարան:

⁵¹ Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան:

րև, ուղղակի հանդիսանում է դրա գրաբարյան նախդրիվ տրականի (հմմտ. օր - աւուր - յաւուր < ի + աւուր) ձևը, որ հարազատորեն պահպանվել է հիշյալ երկու բարբառներում:

Դա հաստատվում է արտաքին՝ հնչյունական և ներքին՝ իմաստային կողմերի այն **որոշակի ընդհանրություններով**, որ երևան են հանում գրաբարյան **յաւուր** (հմմտ. նաև՝ **յաւուր միումի-ի միում աւուր**) և բարբառային **հավուր** || **հօվուր** (մի || մին || մըն || մը հավուր) ձևերը միմյանց նկատմամբ: Երկու բարբառներում էլ **յ > հ** հնչյունափոխությունը միանգամայն օրինաչափական երևույթ է, հմմտ. **յոպոպ > հո՛ւպոպ, յուլիս > հուլիս, յօժար > հօ՛ժար, յէսան > հէ՛սան, յիմար > հի՛մար** || **հի՛մմար**, այդպես նաև՝ **յաւուր > հավուր** || **հօվուր** և այլն:

Հավասարապես պարզ ու որոշ է գրաբարյան **յաւուր** և բարբառային **հավուր**|| **հօվուր** ձևերի միջև եղած նաև իմաստային կապը. **օր** բառը գրաբարում իր հիմնական **տիվ՝ ցերեկ** և **գիշեր միասին** իմաստից բացի արտահայտել է մի այլ՝ ընդհանրապես ժամանակ նշանակությունը⁵²: Հայտնի է և, որ այն գրաբարում հաճախաբար գործ է ածվել **մի** թվականի հետ (հմմտ. օր մի-աւուր միոջ-ավուր միում-յօրէ միոջէ-աւուրբ միով-յաւուր միում և մի օր-միոյ աւուր-միում աւուր-մի միոջէ օրէ-միով աւուրբ-ի միում աւուր) և Նոր հայկազյան բառարանի հաստատմամբ՝ նույնիսկ **օր մի** ձևով նշանակել հենց **յաւուր միում** (= մի օրում)⁵³:

Հավուր || **հօվուր** բառի հետ **մի** (|| **մին** || **մըն** || **մը**)-ի պարտադիր գործածությունը այդպիսով ո՛չ թե պատահական, այլ պատմական իրողություն է և իր հաստատուն հիմքերն ունի գրաբարում: Վաղ շրջանից սկսած՝ նույն **մի** թվականը, գործածվելով **օր** բառի նախդրիվ տրականի (կամ ներգոյականի) հետ, հետզհետե սահմանափակել-նեղացրել է նրա արտահայտած ժամանակային իմաստը և հասցրել դա **մի կարճ ժամանակ, փոքր-ինչ, մի քիչ** նշանակության: Սրա հիման վրա երկու ձևերը միասին ձեռք են բերել մի այլ խոսքի մասի՝ մակբայի արժեք, որն էլ իր հերթին գործածվում է նույնիսկ թեք՝ բացառական հոլովածևով, ինչպես **մըն**

⁵² Այդ մասին տես «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, էջ 1031:

⁵³ Տես նույն տեղում:

հուվորյան յետը (= մի որոշ ժամանակ հետո), **մըն հուվորան տե-
նը** (= մի քիչ ժամանակից դեմը՝ այնուհետև) և այլն:

Բնորոշ է և այն, որ մակբայական կիրառությամբ պայմանավոր-
ված՝ Գորիսի բարբառում **մի || մին || մըն || մը հավուր** (հովուր)-ը,
ավելի հեռանալով **օր** բառի նախդրիվ տրականի կամ ներգոյականի
արտահայտած երբեմնի նշանակությունից, դարձել է նաև եղանա-
կավորիչ բառ: Այսպիսով, պարզ է, որ **մի || մին || մըն || մը հավուր**
(|| հովուր) բարդության **հավուր** (հովուր) բաղադրիչը սերում է **օր**
բառի գրաբարյան նախդրիվ տրականից և իրոք մեկն է այն քարա-
ցած հուլովածներից (հմմտ. ծեռաց < ձեռաց, խելուք || խելունք < խե-
լաք և այլն), որոնք գրաբարի ժամանակներից պահպանվում են
բարբառներում:

2. ԱՐՇԱ ԸՆԿՆԵԼ

Սույն հարադրավոր բայը առաջին անգամ տեղ է գտել Տ.
Նավասարդյանի կազմած բառգրքում՝ «**արշայ ընկնել**-յայտնուել»
սեղմ նկարագրությամբ⁵⁴: Այնուհետև այն համեմատաբար լայն ծա-
վալով ներկայացվել է Հր. Աճառեանի «Հայերեն գավառական բառա-
րանում». «**Արշայ ընկնել** Ղրբ. 1. Մեծնալ (տարիքով կամ դրամով),
նշանավոր դառնալ, 2. Երև. լույս ընկնել, հայտնվել, ինքզինքը
հայտնել թե ինքը ով է»⁵⁵:

Հիշյալ և մյուս այն բառարանները, որոնք ունեն **արշա ընկնել**
բառը⁵⁶, դրա առաջին բաղադրիչի՝ **արշա** հարադրի ծագումը չեն
բացատրում: Բացի այդ, բոլոր բառարանները **արշա** ձևը ներկա-
յացնում են սոսկ **ընկնել** բայի հետ և հարադրական բարդության
այլ դեպքեր չեն նշում: Այնինչ իրականում **արշա** հարադիր բառը,
գործածական լինելով Ղարաբաղի, Գորիսի, Երևանի բարբառներում,
հարադրական բարդություն է կազմում նաև **գալ, գցել, բերել, ածել**
բայերի հետ: Այսպես՝ Գորիսի բարբառում սովորական են ոչ միայն

⁵⁴ Տ. Նավասարդեանց, Բառգիրք Արարատեան բարբառի, Թիֆլիս, 1903, էջ 16:

⁵⁵ Տե՛ս նշվ. աշխատությունը, էջ 153:

⁵⁶ Ստ. Մալխասեանցի «Հայերեն բացատրական բառարանում» դա, օրինակ, ներ-
կայացված է այսպես. «+**Արշա ընկնել**. 1. Լույս ընկնել, երևան գալ, հայտնվել: **Սա
որտեղից արշա ընկավ**: 2. Երևելի դառնալ, աչքի ընկնել, առաջ գալ հարստու-
թյամբ տարիքով» (տե՛ս հ. 1, էջ 277):

ինչպես՝ «**Լուս աշխարք || ախշարք քիցօղլոտ շօն տաննա՛**» (= Լույս աշխարհ գցողդ շուն դառնա), **Տո՛ւ** մեղավեր չես, քե/զ/ **աշխարք || ախշարք պիր օղըն** ա մեղավեր (= Դու մեղավոր չես, քեզ աշխարհ բերողն է մեղավոր) և այլն:

Այսբանից ինքնին հետևում է, որ Գորիսի, Ղարաբաղի բարբառներում **աշխարհ/ք/** բառը եթե անկախաբար գործածվելիս համեմատաբար կայուն է մնացել և հանդես է գալիս **աշխարք || ախշարք**, այլև՝ **աշխարք/ || ախշարք** ձևերով⁵⁷, ապա հարադրական բարդությունների կամ երկու բառերի կապակցության շղթայի մեջ այն ուժգնորեն ենթարկվել է հնչյունների անկման ու դրափոխության օրենքներին և **աշխարհ/ք/ > աշխարք || ախշարք > աշարք || աքշարք > աքշա || աքշա՛** ընթացքով առաջ բերել նույն այդ վերջին ձևը. հմմտ. նաև՝ **ճանապարհ > ճընհապա || ճընապար > ճըհապա || ճընապա, Արշակ > Արշակ՛ > Աշի || Աշի** և այլն:

Այդ բոլորն էլ միասին վերցրած մի անգամ ևս վկայում են, որ **աքշա՛ || աքշա** ձևը իրոք ծագում է **աշխարհք** բառից և առաջ է եկել հարադրական բարդությունների ընձեռնամբ ու այդ պատճառով էլ կյանք ունի միայն նրանց մեջ:

3. ԳՈՒՐԱՆ || ԳՈՒՎԱՐԱՆ || ԳՎԱՐԱՆ

Գուարան || ճուվարան || ճըվարան (կթոց, դալար ճյուղերից հյուսված մեծ կողով) բառը գործ է ածվում միայն Ղարաբաղի, Գորիսի բարբառներում, հետևաբար ծնունդ է առել այդտեղ և առ այսօր էլ մնում է զուտ դրանց սեփականությունը:

Յր. Աճառյանը, այդ բառի գոյությունը ևս առաջինը նկատելով, այն համարել է այնպիսի բառերից մեկը, որոնք «գրաբարի մեջ գոյություն չունեցող բոլորովին նոր արմատ մը երևան կհանեն»⁵⁸: Նախ՝ հենց ձևաբանական կառուցվածքից ելնելով, պետք է ասել, որ **ճուարան || ճուվարան || ճըվարան** բառը ոչ թե մի ամբողջ արմատական, այլ պարզապես ածանցավոր բառ է՝ կազմված **ճու || ճուվ || ճըվ** արմատից կամ հիմնական ձևույթից և **արան** ածանցից

⁵⁷ Վերջին երկուսը գործածական են Ղարաբաղի բարբառում: Այդ մասին տես **Կ. Դավթյան**, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966, էջ 313:

⁵⁸ Յր. Աճառյան, Յայերեն գալառական բառարան:

կամ բառակազմական ձևույթից: Ղարաբաղի ու Գորիսի բարբառները, ճիշտ է, ունեն **արան**-ով վերջացող սակավաթիվ բառեր, ինչպես՝ **աղօթարան** || **աղութարան** || **ըղութարան** || **ուղութարան** < **աղօթարան**, **հանգիստարան** || **հինգիստարան** || **հինգիստարան** < **հանգստարան**, **ճրրըբարան** < **ճրագարան**, այլև՝ **շուբարան**⁵⁹(= **շուք**՝ հով տեղ), բայց նրանց բոլորի մեջ էլ ամխտիր այն ածանց է և տեղ է ցույց տալիս: Իր ձևաբանական կառուցվածքով լիովին նման լինելով նշված բառերին՝ **ճուարան** || **ճուվարան** || **ճըվարան** բառը, կարծում ենք, չի շեղվում դրանցից և բացառություն կազմում:

Բայց սա, իհարկե, չի նշանակում, թե այդ բառը ամբողջապես նույնական է **արան** ածանցով կազմված մյուս բառերին և դրանց պես իր բաղադրիչներով պարզ է ու հասկանալի. ամենևին: Ի տարբերություն առաջինների՝ որոնք առանց դժվարություն հարուցելու ակներև են դարձնում իրենց կազմությունը և հավասարապես տեղի նշանակություն են արտահայտում, **ճուարան** || **ճուվարան** || **ճըվարան** բառի մեջ մի կողմից պարզ չէ, թե **ճու** || **ճուվ** || **ճըվ** արմատը ինչ է, և մյուս կողմից էլ **արան** ածանցը ոչ թե տեղ, այլ նրա հետ գործիք է ցույց տալիս: Այս երկու (հատկապես՝ առաջին) հանգամանքը բավականաչափ մթազնում են **ճուարան** || **ճուվարան** || **ճըվարան** բառի կազմությունը: Եվ եթե դա իրոք բաղադրյալ բառ է, ապա հարկավոր է պարզել նախ՝ **ճու** || **ճուվ** || **ճըվ** արմատի նշանակությունը և ապա՝ այն, թե նրա հետ **արան** ածանցը գործածվելով՝ նախապես ինչ է նշանակել: Գորիսում ու Ղարաբաղում **ճուարան** || **ճուվարան** || **ճըվարան**-ը օգտագործվել է իբրև թխսի ճտերը՝ **ճավերը** (հմմտ. **հավ ու ճավ**, **հավ-ճավ**, **հավ ու ճիվ**, **հավ-ճիվ**) պահելու, այնտեղ դրանք պատասպարելու տեղ⁶⁰: Ըստ այդմ էլ հասկանալի է, որ դալար ճյուղերից հյուսված կողովը հանդիսացել է **ճավերը** || **ճիվերը** (հավի ճտերը կամ ընտանի թռչուններն ընդհանրապես) պահելու տեղ, և հենց այդ հիման վրա էլ հիշյալ բարբառներում առաջ է եկել **ճուարան** || **ճուվարան** || **ճըվարան** բառը, որ նախապես հենց այդ նշանակությունն է արտահայտել: Հետագայում, սակայն, երբ դալար ճյուղերից հյուսված կթոցը օգտագործվել է այլ պետքերի (մեջը մի բան լցնելու ու տեղափոխելու) համար,

⁵⁹ Ի տարբերություն նախորդների՝ դա չունի իր համապատասխան ձևը գրաբարում:

⁶⁰ Այդ սովորությունը առ այսօր էլ շարունակում է պահպանվել գյուղերում:

ճուարան || **ճուվարան** || **ճըվարան** բառը իր նախկին իմաստից զրկվել ու ձեռք է բերել մի նոր՝ գործիքի նշանակություն, ինչպես, օրինակ՝ Սըն ճուվարան թօթ ա ինք կալալ (= Մի ճվարան թուք է գնել), Բ'ինամ մըն **ճուվարան** տա՛րմա՛ն պեր (= Գնա մի ճվարան դարման բեր), **ճուվարանը** ըստե՞ղ ես տիրալ (ճվարանը որտե՞ղ ես դրել), ճըվուրանավը թըրեքը կ՛ո՛ւմա՛ն տո՛ւս տօ (= ճվարանով թրիքը գոմից հանիր) և այլն: Հասկանալի է, որ տվյալ դեպքում տեղի է ունեցել սովորական ֆունկցիոնալ իմաստափոխություն, որով էլ պայմանավորված՝ բառը և՛ հեռացել է իր նախկին նշանակությունից, և՛ մթագնել իր բաղադրյալ կազմությունը: Վերջապես նշենք, որ հնչյունաբանական տեսակետից ևս արդարացվում է **ճավ + արան** || **ճիվ + արան** > **ճըվարան** > **ճուվարան** > **ճուարան** ձևի առաջացումը, որովհետև նման պարագաներում հաճախ **ա** || **ի**-ն վեր է ածվում **ը**-ի, իսկ վերջին էլ **ու** ձայնավորի⁶¹, հմմտ. **քըշօթուն** || **քուշօթուն** (< քաշություն), **մըրթըվարի** || **մուրթըվարի** (< մարդավարի), այլև՝ **լիվօթ ո՛ւն** || **լո՛ւվօթո՛ւն** (< լավություն), **պիցրօթո՛ւն** || **պո՛ւցրօթո՛ւն** (< բարձրություն) և այլն: Այսքանից հետևում է, որ **ճուարան** || **ճուվարան** || **ճըվարա** (< ճավարան) բառը իրոք ոչ թե մի ամբողջ արմատական, այլ պարզ ածանցավոր բառ է:

4. ԴՈՒԵԱԼ (|| ՏՆՈՒՆԼ || ՏՆՈՒՄԾ)

Մեծանուն հայագետ Հր. Աճառյանը Հակոբ Սրճեցու թարգմանական ճառերից մեկում գործածված **դառեալ** «կծված, խայթված» բառը դասել է հայերենի չստուգաբանված արմատների շարքը⁶²: Այնուհետև, որ մեզ ավելի է հետաքրքրում, այդ նորագյուտ բառին նա իմաստով նույնական է համարել որոշ բարբառներում գործածական **դառած** (կատաղած) բառը՝ ասելով ուղղակիորեն. «Նույն է Ղրբ. Երև. **դառած** «կատաղած» (արջ, շուն և այլն), որ սակայն **դառալ** բայի նոր իմաստն է ներկայացնում»⁶³:

⁶¹ Նկատենք, որ **ը**-ի՝ **ու**-ի վերածման հետևանքով դրա ու հաջորդ **ա** ձայնավորի միջև **վ**-ն թույլ է արտասանվել և շատ դեպքերում էլ վերացել է:

⁶² Տե՛ս **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

⁶³ Նույն տեղում:

Այսպիսով, մեծ հայագետը բացառում է մեկի և մյուսի միջև եղած կապն ու ընդհանրությունը և առաջինը վերջինի վաղ շրջանի դրսևորումը չի համարում:

Այնինչ Հակոբ Սրճեցու թարգմանական ճառի⁶⁴ համապատասխան «եղեալ զնա իր կոթողս քարանց, քարոզէր բանակին երբայեցւոց, եթէ եկայք ապրեցարուք սովաւ ի թիւնավոր օծից. դառեալքդ ու խածեալքդ՝ բժշկվեցէ՞ք զվէրս ձեր»⁶⁵ վկայությունը պարզորոշ ցույց է տալիս, որ **դառեալքդ** ու **խածեալքդ** այդտեղ միատեսակ քերականական ձևեր են, և մեկը եթէ **խածանել**, ապա մյուս **դառնալ** (< դարծեալ) բայի անցյալ դերբայն է, որ տվյալ դեպքում, սակայն, գրաբարից մասամբ խոտորվելով **դարծեալ**-ի փոխարեն արտահայտվել է **դառեալ** ձևով:

Դա, իհարկե, ոչ թե ինչ-որ արտակարգ, այլ պարզապես ժողովրդախոսակցական լեզվից գրաբարին փոխանցված կամ ավելի ճիշտ՝ հիշյալ գրավոր աղբյուրում շեղումով գործածված այնպիսի ձև է, որը միաժամանակ **դառնալ** բայի անցյալ դերբայի **կատաղած** իմաստի հնագույն ծագման մասին է վկայում: Հայտնի է, որ որոշ բարբառներում (Երևան, Ղարաբաղ, Գորիս) **դառնալ** բայի վաղակատար (հմմտ. դարծեալ > տաճաճի || տեճաճի) և հարակատար (տաճաճի || տեճաճի < դառած < դարծած) դերբայածները **դարծել** և **դարծած** մշանակություններից բացի համապատասխանաբար արտահայտում են նաև **կատաղել** և **կատաղած** իմաստները, ինչպես, օրինակ՝ Մեր շօնը **տաճաճի աճ** (= Մեր շունը կատաղել է), **Տաճաճի** շօն ա **տաճաճի** (= Կատաղած շուն է դարծել), Քօլումը մըն **տաճաճի** արչ կա (= Անտառում մի կատաղած արջ կա), Արչը **տաճաճի աճ** մընին կըծալ (= Արջը կատաղել է, մեկին կծել) և այլն:

Այդ երկու դերբայներից մեկը՝ վաղակատարը, իմաստից զատ՝ նաև ծագումնաբանորեն, իսկ մյուսը՝ հարակատարը, միայն իմաստապես են համընկնում **դառնալ** բայի **դարծեալ** (< դառեալ) դերբայածնին, որը, մասնագետների հաստատմամբ՝ «ըստ իմաստի հա-

⁶⁴ Մեզ, դժբախտաբար, չի հաջողվել պարզել այդ ճառի (ստույգ խորագիրն է՝ «Ճառ յաղագս իին խորհրդոյ և օրինակաց Տեառն ներոյ, որ ի մարգարեսն և ի նահապետսն զուշակեցաւ») թարգմանության ժամանակը:

⁶⁵ Տես **Հր. Աճառյան**, «Հայերեն արմատական բառարան» և «Գիրք և ճառ հոգեշահ արարեալ յուղղափառ և յաստուածաբան վարդապետաց եկեղեցվոյ», Կ. Պոլիս, 1722, էջ 375: Վկայությունը բերվում է վերջինիս համապատասխան:

րակատար-վաղակատար դերբայ է, որովհետև այն՝ ամենաընդհանուր ձևով հարաբերակցվելով անցյալ ժամանակի հետ՝ դերբայական մեկ ձևի մեջ արտահայտում է գործողություն կամ եղելության հարակատար և վաղակատար վիճակները»⁶⁶:

Հայերենի պատմական զարգացման ընթացքում էլ, ինչպես հայտնի է, նույն այդ դերբայը մի դեպքում **եա > ե** հնչյունափոխությամբ դարձել է վաղակատար՝ պահելով դրա նշանակությունը (դարձեալ > դարձել), իսկ մյուս դեպքում կորցրել է հարակատարի նշանակությունը՝ փոխարինվելով հարակատար դերբայով (դարձեալ > դարձած): Հակոբ Սրճեցու ճառի գրաբար թարգմանության մեջ գործածված **դառեալ** (< դարձեալ) դերբայածևն էլ, պետք է ասել, այն ձևն է, որը վաղակատարի ու հարակատարի նշանակությունները տակավին համատեղում է իր մեջ և բնականաբար արտահայտում է թե՛ **դարձել**, թե՛ **դարձած** իմաստները: Իր ունեցած այդ երկու իմաստներով, հասկանալի է, **դառեալ** (< դարձեալ) դերբայածևը բարբառներում գործածվող **տամալ** || **տեռալ** - **տամաձ** վաղակատար ու հարակատար դերբայների համարժեքն է և դրանց պես էլ **դարձել** ու **դարձած** սովորական նշանակություններից բացի միասնաբար արտահայտել է նաև **կատաղել** և **կատաղած** իմաստները⁶⁷:

Այս բոլորն էլ հիմք են տալիս ասելու, որ Հր. Աճառյանի նկատած **դառեալ** նորագյուտ բառը ոչ թե մի ինքնուրույն, ստուգաբանության ենթակա արմատ է, այլ ուղղակի հանդիսանում է **դառնալ** բայի **դարձեալ** անցյալ դերբայածևի կիսագրաբարյան-կիսաբարբառային մի յուրահատուկ արտահայտությունը և կապվելով բնականաբար **դարձ** արմատի հետ⁶⁸, դրա՝ մի վիճակից մի ուրիշ վիճակի անցնելը կամ փոխվելը իմաստով առավել որոշակի է դարձնում նաև իր **կատաղել**, **կատաղած** նշանակությունների հնագույն ծագումը:

Ի՞նչ փաստեր ունենք սրա համար, և ինչո՞ւ կամ ինչպե՞ս կարող էր **դառնալ** բայը՝ հատկապես իր վաղակատար ու հարակատար դերբայածևերով (հմմտ. **դարձեալ** || **դառեալ** > **տամալ**, **տամաձ**) երկրորդաբար արտահայտել նաև **կատաղել** (է) և **կատաղած** նշանակությունները: Դեռևս գրաբարում նույն այդ՝ **դառնալ** բայը նշա-

⁶⁶ Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 166:

⁶⁷ Այդ մասին տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան:

⁶⁸ Դարձ արմատը ունի հնդեվրոպական ծագում (տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան):

նակել է ոչ միայն **ես գալ, ես կենալ**, այլև «փոխվել, ուրիշ բան լինել»⁶⁹: Աշխարհաբարում այն ունի ավելի շատ նշանակություններ, որոնցից մեկն էլ է «+7. Փոխել բնությունը՝ հատկությունը (կենդանիների). կատաղել: Շունը **դարձել է: Դառած** գայլը կծել է նրան»⁷⁰:

Միանգամայն պարզ է, որ **դառնալ** բայի վաղակատար և հարակատար դերբայածները իրենց **կատաղել** (ե) և **կատաղած** նշանակությունները ձեռք են բերել՝ արտահայտելով հենց կենդանիների բնության՝ հատկության մեջ կատարված փոփոխությունները. երբ **կատաղած** (= **դառած** || **դարձած**) կենդանին կծում է մեկին, դա վարակվելով կատաղության (lyssa, hydrophobia, rabies canina) հարուցիչով (վիրուսով)՝ իր բնականոն վիճակից անմիջապես փոխվում է բոլորովին մի այլ վիճակի, այսինքն՝ ինքը ևս կատաղում է կամ դառնում է վարակողի պես **կատաղած** (= դառած): Որ **դառնալ** բայը իրոք կարող էր նաև այդպիսի իմաստներ արտահայտել, հաստատվում է և այն բանով, որ մի շարք բարբառներում (Մուշ, Խոյ, Կարին և այլն) **դարձ** արմատը հարազատորեն պահող որոշ բառեր նույնպես նախկին վիճակի, դրության, կերպարանքի փոփոխություն են ցույց տալիս: Այսպես **դարձվոր** || **դարձվորակ** նշանակում է **կերպարանքը դարձած՝ փոխված = այլակերպված, այլանդակված** ևն, **դարձվորել** նշանակում է **դարձվոր դառնալ = այլանդակվել, վերքերով ապականվել** ևն⁷¹: Ուշագրավ է և այն, որ այդ **դարձվորել** բայը այլափոխվել, այլակերպվել, այլանդակվել նշանակությամբ զործ է ածվում անեծքի մեջ՝ **կատաղել** (> կատղել) բայի հետ միասին՝ **դարձվորիս**, կատղիս չղերն ընկնիս⁷²:

Սրանք իրենց հերթին ևս հաստատում են արդեն նախապես ասվածի ճշտությունը. Հակոբ Սրճեցու ճառի թարգմանության մեջ Հր. Աճառյանի նկատած **դառեալ** բառը ոչ թե իսկապես անկախ ու անստույգ արմատ է, այլ **դառնալ** < * **դարձեալ** բայի անցյալ դերբայի մի յուրահատուկ ձև է, որի **կծված, խածված** նշանակությամբ էլ կատաղության հիվանդության սկիզբն է նշվում:

⁶⁹ Այդ մասին տես «Նոր բառ գիրք հայկազեան լեզուի», հ. 1, Վենետիկ, 1836, էջ 596, «Առձեռն բառարան Հայկազեան լեզուի», Վենետիկ, 1865, էջ 233:

⁷⁰ **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

⁷¹ Այդ մասին տես **Ս. Ամատունի**, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 161, այլև **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

⁷² Տես **Ս. Ամատունու** նշված աշխ., էջ 161:

5. ՍԵԼՊԱՅՈՒՍԻԼՊԱՅՈՒՍԻԼՊԱՅՈՒՍԵԼՊԱՅՈՒՍ

Սույն բառը, որ դժբախտաբար մինչև այսօր տեղ չի գտել ոչ մի բառարանում, գործածվում է Գորիսի բարբառում ցորենի լավ տեսակի համար և նշանակում է ընտիր, մաքուր ու խոշոր, ազնվագույն, ինչպես՝ Դո՞ւվ ա սիլպահա՞նտ ցորեն տեսալ, Տէս հինչ արտէր էն է՞, չիմ սիլպահա՞նտ էն, Սիլպըհա՞նտը մէկ ալ չըխարը **ՌՐՊՐ** նըղէտ խառնո՞ւն իլ, Սըլպա՞հա՞նտ ցորնան լավ հա՞ց տո՞ւս կիկյա՞ և այլն:

Արդ՝ ինչի՞ց է ծագում կամ ինչպիսի՞ կազմություն ունի բարբառային մասնավոր գործածություն ունեցող այդ բառը, ինչպես տեսանք, հանդես է գալիս մի քանի՝ **սըլպա՞հա՞նտ** || **սիլպա՞հա՞նտ** || **սիլիհա՞նտ** || **սըլպիհա՞նտ** ևն ձևերով:

Պետք է ասել, որ դա բաղադրյալ՝ հայերեն **սուրբ** (մաքուր, հստակ, անարատ) և **հատ** (հատիկ, հունդ) բառերից կազմված իսկական բարդություն է և, իբրև այդպիսին, սերում է, անշուշտ, նախավոր **սրբահատ** (< **սուրբ** + **ա** + **հատ**) ձևից, որը և բարբառում կրել է դրան հատուկ հնչյունական ձևափոխություններ. այն **բ** > **փ** > **պ** հնչյունափոխական ճանապարհով դարձել է սրպահատ (< **սրփահատ** < **սրպահատ**), իսկ դա էլ օրինաչափորեն **ր** ձայնորդը փոխարինելով **լ** ձայնավորով՝ առաջ է բերել **սըլպա՞հա՞նտ** < **սլպահատ** ձևը. հմնտ. **ուրախանալ** > **ուրխնալ** > **ուլխանալ**, **քարաթոթոշ** > **քըրըթանթրուշ** > **քըլըթանթրուշ**, **խանձրահամ** > **խընձըրահամ**, **խանձրահոտ** > **խընձըրմավէտ** > **խընձըլմավէտ**, **հրեշտակ** > **հիլիշտիրամլ** և այլն:

Նկատելի է նաև, որ նախավոր **սրբահատ** > **սլպահատ** ձևում ձայնավորների կրած համապատասխան հնչյունափոխություններից գատ (հմնտ. օրինակ՝ **սուրբ-սըրփէլ** || **սիրփէլ** < **սրբէլ**, **սըրփիչ** || **սիրփիչ** < **սրբիչ** և այլն) գործել է նաև նրանց ներդաշնակության օրենքը, որով էլ պայմանավորված առաջ են եկել նշված, իրարից այս կամ այն չափով տարբերվող, **սըլպահա՞նտ** || **սիլպա՞հա՞նտ** || **սիլիհա՞նտ** || **սըլպիհա՞նտ** և այլն ձևերը: Իսկ դրանք բոլորն էլ, պարզ է, բարբառային այլատեսակություններ են հենց **սրբահատ** բառի, որ այդ ձևով գրականության մեջ օգտագործվելու դեպքում կարող է հեշտորեն բարձրանալ գրական աստիճանի և դառնալ նաև գրական լեզվի սեփականությունը:

ԲԱՈՎՔՆՆՈՒԹՅՈՒՆ⁷³

Հայերենի բառակազմական միջոցներից մեկը բառաբարդումն է, որը և իր տեսակներն ունի: Բառաբարդման մի առանձին տեսակ է նաև **կրկնությունը** (повтор, удвоение, повторение, редупликация), որ ծնունդ է առել հեռավոր անցյալում, միշտ գործել և այսօր էլ շարունակում է գործել հայոց լեզվում: Բազմաթիվ փաստեր հիմնավորապես ցույց են տալիս, որ դեռ վաղ ժամանակներից սկսած նույն բառի կամ արմատի կրկնությամբ հայերենում կազմվել են իրոք ինչպես ոչ համադրական (несочетмуческун), այնպես էլ համադրական (сочетмуческун) շատ կրկնավոր բարդություններ:

Դրանք, ամբողջությամբ վերցված, անշուշտ, միատեսակ պատկեր չեն ներկայացնում և ոչ էլ, ասենք, բաղադրիչների միջև ճիշտ միանման կապեր ու հարաբերություններ դրսևորում:

Կան կրկնավոր թե՛ ոչ համադրական (օրինակ՝ **ազգի ազգի, անդամ անդամ, արագ արագ, բարկ բարկ, գէշ գէշ, գունակ գունակ, գունդ գունդ, եղիցի եղիցի, երբէք երբէք, ընտիր ընտիր** և այլն)⁷⁴ և թե՛ համադրական (օրինակ՝ **բարբառ** < բառ + բառ, **գունդագունդ** < գունդ + ա + գունդ, **դողդողալ** < դող + դող + ալ, **թրթիռ** < թիռ + թիռ, **խողխողել** < խող + խող + ել, **մեծամեծ** < մեծ + ա + մեծ, **չարչարանք** < չար + չար + անք, **վազվազել** < վազ + վազ + ել և այլն) բարդություններ, որոնք անմիջապես մատնում են իրենց կազմությունը, ակներև դարձնում ինչ բառի կամ արմատի կրկնությամբ կազմված լինելը: Բայց դրան հակառակ՝ կան նաև կրկնավոր բարդություններ, որոնց բաղադրիչները ժամանակի ընթացքում այնքան են միաձուլվել, որ անգամ անճանաչելի են դարձել: Հասկանալի է, որ գիտության համար կարևորություն ու հետաքրքրություն է ներկայացնում հենց այդպիսի բառերի (կրկնավոր բարդությունների) ստուգաբանությունը, որպիսի բնագավառում հայ լեզվաբանական միտքը անվիճելիորեն զգալի նվաճումներ է ձեռք բերել: Այսպես՝ Աճառյանի հաստատմամբ նույն բառի կամ արմատի կրկնությամբ են ստեղծվել **արիավիր** < **արիալիր** (< *արիալարի), **արիա-**

⁷³ «Բաներ երևանի համալսարանի», 1981, N 1, էջ 180-187:

⁷⁴ Այստեղ բերվում են միայն հայերենի վաղ շրջանում գրաբարում գործածված օրինակներ:

մարի (< արի + ա + մարի), **բողբոջ** (< բող + բոջ), **դադար** (< դար + դար), **դանդաղ** (< դաղ + դաղ), **դողդոջ** (< դող + դոջ), **երեր** (< եր + եր), **թաթախ** (< թախ + թախ), **թաթավ** < **թաթալ** (< թալ + թալ), **թրթուր** (< թուր + թուր «թիթեռնիկի որդը»), **ծածան** (< ծան + ծան), **ծիծաղ** (< ծաղ + ծաղ), **կակազ** (< կազ + կազ), **կասկած** (< կած + կած < կարծ + կարծ), **կսկիծ** (< կիծ + կիծ), **պաղպաջ** (< պաղ + պաղ «փայլ»), **պապանձ** (< *պանձ + պանձ), **սարսափ** (< սափ + սափ), **սարսուռ** (< սառ + սառ), **փաղաղ** (< փաղ + փաղ), **քրքիր** (< քիր + քիր), **օրոր** < **օրօր** (< օր + օր) և շատ ու շատ այլ բառեր⁷⁵, որոնք, սակայն, սովորական լեզվական զգացողությամբ կարող են իբրև պարզ բառեր ըմբռնվել: Բայց սա, իհարկե, չի նշանակում, թե իրենց կազմությունը «մթագնած» բոլոր կրկնավոր բարդությունները բացահայտված են արդեն, և այլևս ստուգաբանման կարոտ բառեր չկան. ամենևին էլ ոչ: Հետախուզումները որոշակիորեն ցույց են տալիս, որ հայերենում և մանավանդ բարբառներում կան (և չեն կարող չլինել) արմատի կրկնությամբ կամված բառեր, որոնք տակավին մութ ու չստուգաբանված են մնում: Սույն հոդվածում քննության են առնվում նման ծագում ունեցող մի խումբ բառեր:

1. ԱՅՈՒԶԱՐ

Ահուզար բառը «Մշ. (=Մուշ) մեծ երկյուղ: Գողը **ահ ու զահի** (այստեղ և այլուր օրինակի ընդգծումը իմն է - Ա. Մ.) մեջ էր: **Ահուզարը** սիրտս բռնեց» նկարագրով առաջին անգամ տեղ է գտել Ս. Ամատունու «Հայոց բառ ու բան»-ում⁷⁶: Այդտեղից այն փոխանցվել է Ստ. Մալխասեանցի «Հայերեն բացատրական բառարանը» ստանալով լրացուցիչ իմաստային բացատրություններ: Հմմտ. «**ԱՅՈՒԶԱՐ**, գ. Ահ ու դող, մեծ տագնապ, աղետ: Սիրտս **ահուզարը** - բռնեց: Գյուղը **ահուզահի** մեջ էր»⁷⁷:

Ահուզար բառը այնուհետև արձանագրված ենք տեսնում Հայկական ՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հրատարակած «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»

⁷⁵ Դրանց ստուգաբանությունը տես **Հր. Աճառյանի** «Հայերեն արմատական բառարանի» համապատասխան տեղերում:

⁷⁶ **Ս. Ամատունի**, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 16:

⁷⁷ **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

նում», որտեղ՝ ա) այն բարբառային նշումով ներկայացվում է երկու առանձին «1. Տառապանք, տվայտանք, վիշտ... 2. Պատճառած սարսափը, բռնությունը, նեղությունը» նշանակություններով, և բ) յուրաքանչյուրի համար բերվում է վավերական օրինակ, առնված՝ մեկը ժողովրդական երգից («Իմ սիրածը ինձ տվեք, չքաշեմ **ահու-զարդ**»), մյուսը՝ արևմտահայ գրող Ռ. Ջարդարյանից («Այդ ան-զգամին **ահուզարեն** կուլային հարսներ, մայրեր ու նշանածներ»)՝⁷⁸:

Այս արձանագրումներից էլ պարզ երևում է, որ **ահուզար**-ը բարբառային բնույթի բառ է և գործածական է **Մշո**, գուցե նաև «կը» ճյուղին պատկանող այլ բարբառներում: Արդ՝ ի՞նչ ծագում կան կազմություն ունի այդ բառը, որը բոլոր դեպքերում «մեծ երկյուղ, սարսափ, ահ ու դող» հիմնական նշանակությունն է արտահայտում:

Ահուզար բառը, ինչպես հենց արտաքին հնչյունական տեսքից է երևում, կազմված է **ահ** < ***արհ** («վախ, սարսափ») բառից և այլ բան չէ, քան նրա յուրահատուկ կրկնությունը. **ահ** (<**արհ**) բառը ու շաղկապով միացել է իր հայցականի **զ** նախդրով ձևի հետ (հմմտ. եռ ու զեռ > **եռուզեռ**, ամպ ու զամպ > **ամպուզամպ**, արդ ու զարդ > **արդուզարդ** ևն), որը և սոսկ «մասնակի» հնչյունական փոփոխություն է կրել. նա կա՛ն ուղղակի կորցրել է **հ** վերջնահնչյունը՝ **ահ + ու + զարհ** > **ահուզար** (***արհ**-ից կազմված լինելու դեպքում), կա՛ն այն պարզապես փոխարինել **ր** ձայնորդով՝ **ահ + ու + զահ** > **ահուզար** (հմմտ. նաև **արհաւիր** < արհաւարհ, **զարհուրիլ** < զարհ + ուրհ + իլ ևն)⁷⁹: Եվ այսպիսով միանգամայն պարզ է, որ **ահուզար** բառը առաջ է եկել իրոք **ահ** (< արհ) արմատի կրկնությամբ և նախապես բաղիյունական բարդություն է եղել, որը, սակայն, հետագայում բաղադրիչների միացմամբ կցական բարդություն է դարձել: Վերջապես՝ **Մշո** բարբառում գործածվելու հանգամանքը, որը հարազատորեն պահում-պահպանում է հայցականի **զ** նախդիրը, ևս հաստատում է, որ **ահուզար** բառը իրոք **ահ** (< արհ) արմատի կրկնությամբ կազմված բաղադրյալ բառ է:

⁷⁸ Տե՛ս «ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 1, Երևան, 1969, էջ 31:

⁷⁹ Այդ մասին տե՛ս **Յր. Աճառյան**, **Յայերեն արմատական բառարան**:

2. ԱՊՈՒՊԱՊ

Ապուլպապ բառը «պապի պապը» իմաստային բացատրությամբ առաջին անգամ տեղ է գտել «ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում»⁸⁰. աղբյուր է ծառայել Ղազարոս Աղայանից վկայաբերված «Պետք է փնտրես նրա հոր մեջ, մոր մեջ, ապուլպապի, տատի, ապուտատի և այլն» օրինակը⁸¹: Այդ բառը, ինչպես հայտնի է, շատ սովորական, ժողովրդախոսակցական լեզվում մանավանդ լայնորեն գործածվող բառ է, որ գրավոր խոսքում պատահում է երկու՝ **ապուլպապ** և **ապ ու պապ** ձևով: Հմմտ. «- էի, Ռուշանի Քարափն էլ հո **Ապուլպապիդ** սահմանը չէր» (Ն. Ջարյան), «- Այն..., որ **ապուլպապն** է ավանդել Մի բառի մեջ պատիվ բանդել» (Յ. Շիրազ), «Հիմա թոռնիկս է իր քունը առնում էր **ապուլպապի** ձեռքերով տնկած Այդ բարդիների կանաչ շուքի տակ » (Ա. Սենալ) ... և «- Էսպես է բանը էս հողի, **Ապ ու պապից** մնացած» (Գ. Սարյան), «Անխափան պահել-պահպանել էր **ապ ու պապից** եկած, իրեն հասած ազատ Մամիկոնյան Տարոնը» (Վ. Խեչումյան), «Ու կվերծանեն Պատմությունն իրենց **ապ ու պապերի**» (Մ. Մարգարյան)....:

Ապուլպապ || **ապ ու պապ** բառը, որ ո՛չ թե «պապի պապ», այլ «իրար հաջորդած կան նախորդած շատ պապերի» պապ+պապ+պապ... իմաստն է արտահայտում, ճիշտ է, բաղադրյալ բառ է, բայց բնավ պարզ չէ, թե ամբողջապես ինչ տարրերից է կազմված: Կարելի է նախ կարծել, թե այն ձևով ու նշանակությամբ հարելով հունարենից փոխառյալ **ապուլպապ** (ἀποπαππος «Երրորդ պապ. պապի պապ») բառին⁸² ծագում է հենց դրանից, որի գոյությունն էլ, ի դեպ, առաջին անգամ Նոր հայկազյան բառարանն է նշում հավելվածում⁸³: Կան կարելի է կարծել, որ **ապուլպապ** || **ապ ու պապ**

⁸⁰ «ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», էջ 168 և հմմտ. **Է. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 100:

⁸¹ Դա մեջ է բերված որոշ աղճատումով. «ապուլպապ»-ից առաջ չկա «պապի» ձևը, իսկ «ապուտատի»-ն էլ փոխարինված է «ապուտատի» շինծու ձևով:

⁸² Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», 2-րդ հատ. Վենետիկ, 1837, էջ 1045, Առձեռն բառարան հայկազեան լեզուի, 2-րդ տպ., Վենետիկ, 1865, էջ 106, **Յր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, **Ստ. Մախասետանց**, Հայերեն բացատրական բառարան, **Է. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, էջ 98:

⁸³ Ահա և ամբողջ բառահոդվածը. «ԱՊՈՊԱՊ և ԱՊՈՍԱՍ. Գ. Յարմարեալ անուանք ըստ յն. և լտ. **աբօբաբաս, աբօմամի. ապավուս, ապավիա** Որպես և Ապել թոռնն, Ապել թոռնեայն *Մեծ ընտանին և մեծ ընտանիայն նախահօրն և նախամօրն.

բառը առաջ է եկել ուղղակիորեն «պապի պապ» նշանակող պապու պապ՝ հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունից, որից և սոսկ դուրս է ընկել «պ» սկզբնահնչյունը: Բայց իրապես չեն հաստատվում ո՛չ մեկը ո՛չ էլ մյուսը. հունարեն **ապոպապ** բառը հայերենին է անցել իբրև գրական փոխառություն, միջնադարյան գրավոր աղբյուրներում գործածվել է մեկ-երկու անգամ, և, հասկանալի է, չէր կարող ոչ **ո > ու** (ապոպապ > ապուպապ) հնչյունափոխությանը ենթարկվել և ո՛չ էլ ծավալվել ու ժողովրդական բնույթ ստանալ: Նմանապես՝ **ապուպապ || ապ ու պապ** բառը չէր կարող **պապու պապ**՝ հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունից ծագել, որովհետև դա ոչ միայն փաստական վկայություններ չունի, այլև կայուն լինելով՝ չէր կարող նաև հնչյունափոխվել և իմաստափոխվել: Նշանակում է նա բոլորովին այլ ծագում ունի և, ինչպես տարանջատ բաղադրիներով գործածվող **ապ ու պապ (> ապուպապ)** ձևն է ցույց տալիս, առաջ է եկել **պապ** բառի կրկնությամբ. ըստ որում կրկնակները իրար միացել են **ու** շաղկապով և կազմել բաղիյունական բարդություն, որը, ժողովրդի բերանում հաճախ գործածվելով, կորցրել է առաջին բաղադրիչի **պ** սկզբնահնչյունը: Հմմտ. **պապ ու պապ - ապ ու պապ, փառոք ու փառոք** (փառոք - փառոք) - **առոք ու փառոք** (առոք - փառոք), **շարան ու շարան** (շարան - շարան) > **արան ու շարան** (արան - շարան), այլև՝ **բան - ման** և **բան ու ման, ծակ - ծուկ** և **ծակ ու ծուկ, ձեն - ձուն** և **ձեն ու ձուն, շուռ - մուռ** և **շուռ ու մուռ, սուտ - մուտ** և **սուտ ու մուտ, քիչ - քիչ** և **քիչ ու քիչ** և այլն:

Պապ արմատի կրկնությամբ **ապուպապ||ապ ու պապ** բառի առաջացումը հաստատվում է նաև իմաստաբանորեն. այն, ինչպես նշել ենք, ոչ թե անմիջականորեն «պապի պապ», այլ «իրար հաջորդած կամ նախորդած պապերի սերունդ» է նշանակում և տրամաբանորեն կարող էր արտահայտվել և իրո՞ք արտահայտվել է ու շաղկապով միահյուսված **պապ** բառի կրկնությամբ:

այսինքն որ ՚ի պապեն և ՚ի մամեն եղբայր է. որ է արտաքինն եղբայր. և արտաքին քոյր (որ են անսովոր բառք հանդերձ բացատրութեամբքն)» (Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, էջ 1045):

3. ԱՏՈՒՏԱՏ

Ատուտատ բառը բառարանային անձնագիր է ստացել նորագույն ժամանակներում՝ «Տատի տատ» իմաստային բացատրությանը գրառվելով նույնպես առաջին անգամ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում»⁸⁴: Աղբյուր է ծառայել Ղ. Աղայանից առնված դարձյալ այն նախադասությունը⁸⁵ («Սրա պատճառը... պետք է փնտրես նրա հոր մեջ, մոր մեջ, պապի, ապուպապի, տատի, **ատուտատի** և այլն...»), **Ղ. Աղայան**, Երկերի ժողովածու, հ. 1, Եր., 1962, էջ 87), որտեղ **ապուպապ** բառն է գործածված. ըստ որում պետք էասել, որ դրանք փոխադարձաբար լույս են սրվում միմյանց ծագման վրա. մի դեպքում եթե **ու** շաղկապով կապակցվող **պապ** բառն է կրկնվել և **պ**-ի անկումով առաջ բերել **ապ ու պապ** || **ապուպապ** (պապ ու պապ) բարդությունը, ապա մյուս դեպքում **տատ** բառն է կրկնվել՝ ամբողջ կապակցության մեջ կորցնելով նույնպես առաջին բաղադրիչի առաջին՝ **տ** հնչյունը: Եվ այսպիսով՝ **ատուտատ** համադրական կցական բարդությունը ստեղծվել է իսկապես **տատ** բառի կրկնությամբ և նույնպես ո՛չ թե անմիջականորեն «տատի տատ», այլ «իրար հաջորդած կամ նախորդած տատերի սերունդ» իմաստն է արտահայտում:

4. ԾԱԾԱՌ

Ձուտ բարբառային բառ է: Գործածվում է Ղարաբաղի ու Գորիսի բարբառներում իբրև մանկական բառ՝ նորելուկ երեխային ոտքի կոչելու նշանակությամբ: Այդ (**ծածառ** || **ծա՛ծա՛ռ**) բառը, որ ավելի շատ **անել** բայի հետ իբրև հարադիր է գործածվում (**ծածառ անել** = կանգնել), առաջին անգամ անվանի հայագետ Յր. Աճառյանի ուշադրությանն է արժանացել՝ արձանագրվելով նախ «Հայերեն գաւառական» («**Ծածառ** մնկ. Ղրբ. կանգնել ոտքի վրա: **Ծածառ անել**,

⁸⁴ Տե՛ս նույն բառարանը, էջ 206:

⁸⁵ Դա այս դեպքում բերված է արդեն այնպես, ինչպես ինքը՝ Ղ. Աղայանն է գործածել: Ի դեպ, հարկ է նշել, որ օրինակի աղճատման պատճառով «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» իբրև գլխաբառ է ներկայացվել **ապուտատ** («տատի տատ»)-ը (տե՛ս հ. 1, էջ 168), թեև ընդհանրապես հայոց լեզվում նման բառ գոյություն չունի:

ծա՛ծառ՝ կանգնե՛լ»⁸⁶ և ապա՝ «Արմատական» («Ղրբ. մնկ. **ծա՛ծառ**, «ոտի վրա կանգնել»») բառարանում⁸⁷: Այդտեղ էլ Հր. Աճառյանը իրավացիորեն դա համարում է **ծառ** բառի բարբառային մի արտահայտությունը՝ չբացատրելով, սակայն, ո՛չ առաջացումը և ո՛չ էլ բաղադրությունը. ուստի մնում է փակագծերը բացելով՝ ուղղակի ասել, որ **ծածառ** (|| **ծա՛ծա՛ռ**) բառը նույնպես կրկնավոր բարդություն է և առաջ է եկել **ծառ** բառի կրկնությամբ, որը սկզբում կորցրել է **ռ** վերջնահնչյունը՝ **ծառ + ծառ > ծառծառ > ծածառ (ծա՛ծա՛ռ)**: Հմմտ. դար + դար > **դարդար**, կարծ + կարծ > կած + կած > **կասկած**, թախ + թախ > **թաթախ**, պանձ + պանձ > **պապանձ** և այլն: **Ծառ** բառի կրկնությամբ **ծածառ** (|| **ծա՛ծա՛ռ**) բարդության առաջացումը շատ պարզ է նաև իմաստաբանական տեսակետից: Ինչպես **ծառ** բառով կազմված որոշ բայերով հատկապես (օրինակ՝ **ծառանալ**, **ծառս լինել**), այնպես էլ նրա կրկնությամբ՝ «ծառի պես բարձրանալու», «ետևի երկու ոտքի վրա կանգնելու» իմաստն է արտահայտվել:

Դա կատարվել է մանության շնորհիվ և ըստ այդմ էլ չորեքթաթ վիճակից կանգնելու առաջին փորձերն անող երեխային քաջալերելու համար կազմվել են **ծածառ (ծա՛ծա՛ռ)** և **ծածառ (ծա՛ծա՛ռ) անել** բառերը⁸⁸, որ իրենց մեջ, անշուշտ, գործողության կրկնության կամ հաճախականության իմաստ են պարունակում:

5. ՄՇՈՒՇ

Մշուշ («նառախուղ, մեգ, բալ») բառը բացակայում է դասական գրաբարում և համեմատաբար ուշ ժամանակից է ավանդված մեզ: Նորայր Բյուզանդացու բնութագրմամբ՝ միջին հայերեն բառ է՝ «մշուշ լինել աչաց»⁸⁹:

Առաջին անգամ հանդիպում է Երեմիա Մեղրեցու բառարանում՝ «Մշուշ-մութն, կամ մռայլ» համառոտ նկարագրով⁹⁰: Այնուհետև արձանագրվել է Նոր հայկազյան բառարանի Հավելվածում

⁸⁶ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն գաւառական բառարան:

⁸⁷ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան:

⁸⁸ **Ծածառ անել** ձևի մասին տե՛ս մեր «Գորիսի բարբառը», Երևան, 1975, էջ 404:

⁸⁹ **Նորայր Բյուզանդացի**, Բառգիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն, Կոստանդնուպոլիս, 1884, էջ 1247:

⁹⁰ Տե՛ս «Բառգիրք հայոց», Երևան, 1975, էջ 219:

(«Մշուշ». Տ. Մռայլ, բալ) և ներկայացվել իբրև «ռամկական (իմա՝ բառարանային)» բառ⁹¹: Եվ իսկապես. **մշուշ** բառը, որ հայերենի - չստուգաբանված արմատներից մեկն է դեռ⁹², ծնունդ է առել ու կերպարանափոխվել, անշուշտ, ժողովրդախոսակցական լեզվի որևէ հատվածում և ժամանակի ընթացքում այդտեղից բարձրանալով՝ ոչ միայն ծավալվել ու ընդլայնվել իմաստապես, հմմտ. «Մշուշ, Ար. Նխ. Մառախուղ, մեզ»⁹³, «ՄՇՈՒՇ ՎՆ. մառախուղ, տաքութենեն թանձրացած մեզ. 2. Արևին շամանդաղը»⁹⁴, «ՄՇՈՒՇ, գ. 1. Մառախուղ, մեզ...: 2. ած. Մշուշով պատած...: 3. ած. մկ. Խառն, մութ, ոչ պայծառ»⁹⁵, «ՄՇՈՒՇ, ի, գ. 1. Մառախուղ, մեզ: 2. Խավար, մութ»⁹⁶, այլև լիակատար գրական արժեք է ստացել և դարձել, եթե կարելի է ասել, բավական գեղեցիկ բանաստեղծական բառ. օրինակ՝ «Մշուշը ծածկեց դաշտերը անձիր» (**Ավ. Խահակյան**, Բանաստեղծություններ, հ. 1, Եր., 1950, էջ 211), «ճակատիս մռայլ՝ մշուշը ցրիր, Եվ գուրգուրիր ինձ, ես շատ եմ լացել» (Ն.տ., էջ 162). «Միայն հողմն է տխուր շառաչում, Անթափանց **մեզ-մշուշ** է միայն» (**Վ. Տերյան**, Երկերի ժողովածու, հ. 1, Եր., 1960, էջ 32), «Դու այնտեղ էիր, այն աղմկահեր կյանքի **մշուշում**» (Ն. տ., էջ 22). «Ով քաղաքից էր հեռացել – նա թողել էր **մշուշը** ծեր,- **Մշուշը**, որ կյանքի վրա մխաշաղախ ամպ էր դարձել» (**Ե. Չարենց**, Ընտիր երկեր, Եր., 1955, էջ 17), «Լոկ **մշուշը** իրիկնային թանձրանում էր հետզհետե - Ու **մշուշում** կորչում էին ծխնելույզները երկաթե» (Ն.տ., էջ 18) և այլն, և այլն:

Լայն տարածում գտնելով՝ **մշուշ** բառը միաժամանակ հիմք է ծառայել մի շարք բաղադրյալ բառերի կազմության համար, ինչպես՝ **մշուշաբեր**, **մշուշալից**, **մշուշամած**, **մշուշաշին**, **մշուշապատ**, **մշուշե**, **մշուշել**, **մշուշոտ** և այլն: Արդ՝ որտեղի՞ց է գալիս վաղ անցյալում չավանդված, բայց հետագայում լայն կիրառություն ստացած այդ՝ **մշուշ** բառը: Առանց վարանելու կարելի է ասել, որ դա ծագումնաբանորեն աղերսակցվում ու հանգում է **մուժ** բառին, որ դարձյալ

⁹¹ Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, էջ 1065:

⁹² Տե՛ս **Յր. Ածառյան**, Հայերեն արմատական բառարան:

⁹³ **Ս. Ամատունի**, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 485:

⁹⁴ **Յր. Ածառեան**, Հայերեն գալառական բառարան:

⁹⁵ **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

⁹⁶ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 3, Երևան, 1974, էջ 552 և այլն:

բարբառում է ծնունդ առել և նույնպես «մշուշ, մառախուղ, մեգ» է նշանակում: Հմմտ. «**Մուծ/իկ** Խրբ. մշուշ, մառախուղ», «+ **Մուծիկ**, գ. Մծիկ, մշուշ, մառախուղ», «ՄՈՒԺ, ի. գ. Մառախուղ, մեգ», «ՄՈՒԺ, ի, գ., Մառախուղ, մեգ, մշուշ»⁹⁷: Եվ այսպիսով՝ ինչպես ծննդաբանորեն, այնպես էլ իմաստաբանորեն **մշուշ** ու **մուծ** բառերը (հմմտ. նաև **մշուշապատ** և **մուծապատ**, **մշուշապատել** և **մուծապատել**) լիովին համընկնում են և ոչնչով չեն տարբերվում իրարից: Ուրեմն այս դեպքում ևս մնում է պարզել, թե **հնչյունաբանորեն** ինչպես է որ **մուծ** բառից⁹⁸ առաջ է եկել **մշուշ** բառը: Պետք է ասել, որ դա ևս առաջ է եկել արմատի պարզ կրկնությամբ՝ **մուծ + մուծ > մուծմուծ > մուծուծ > մծուծ > մծուշ** || **մշուծ > մշուշ** ընթացքով, և այնտեղ էլ եթե առաջին բաղադրիչը **ու>ը** սովորական հնչյունափոխությունն է կրել (հմմտ. թուր + թուր > **թուրթուր** > **թրթուր**, այլև՝ գիռ + գիռ > **գիռգիռ** > **գռգիռ**, թիռ + թիռ > **թիռթիռ** > **թրթիռ** և այլն), ապա երկրորդ բաղադրիչը կորցրել է **մ** սկզբնահնչյունը (հմմտ. փաթ + փաթ > **փաթաթ**, փաղ + փաղ > **փաղաղ** և այլն), որից հետո կամ գուցե դրա հետ միաժամանակ գործել են տարնմանության (մշուծ || մծուշ > մշուշ) օրենքները և այդ ճանապարհով էլ իրոք առաջ է եկել **մշուշ** բառը: Դրա մի այլ լավագույն ապացույցը տալիս է Նոր Նախ-իջևանի բարբառը **մծուծ** (< մուծ + մուծ) բառով⁹⁹, որը և իր «մտազբաղ, շփոթված, շշմած» («Գլուխս մծուծ է») իմաստով ամենևին հեռու չէ **մշուշ** բառի ինչպես հիմնական, այնպես էլ մանավանդ երկրորդական իմաստներից:

⁹⁷ Այդ մասին համապատասխանաբար տես **Հր. Աճառեան**, Հայերեն գաւառական բառարան, **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 3, էջ 571, **Է. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, էջ 1037:

⁹⁸ **Մուծ** բառը, որից բացի բառարանները նշում են նաև **մծիկ** («մշուշ»), **մուծիկ** («մշուշ, մառախուղ»), **մըծ** («մեգ, մառախուղ»), **մծել** («մառախուղ բռնել, մառախուղով ծածկվել») բառերը (տես, օրինակ, **Հր. Աճառեան**, Հայերեն գավառական բառարան, **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան), ամենայն հավանականությամբ առաջ է եկել **մուծ** («մթություն, խավար») արմատից **թ > ժ** անսովոր հնչյունափոխությամբ:

⁹⁹ Տես **Հր. Աճառեան**, Հայերեն գաւառական բառարան, հմմտ. **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

6. ՇԱՂԱԽ

Հնագույն բառ է և գործածվել է, անշուշտ, ոչ միայն գրաբարում, այլև նախագրաբարյան շրջանում: Բառարաններում ներկայացվում է «Ցեխ, ցիխ. որպես թե կալ շաղեալ»¹⁰⁰, «Ցեխ, շաղած հող և կիր»¹⁰¹, «Խառնուրդ մի քանի նյութերի, որ շաղվում են (իմա՛ շաղախում են - Ա. Մ.) ջրով և ստանում մի՛ կաչուն թաց զանգված, որը գործ են ածում որմադրության մեջ՝ քարը քարի, աղյուսը աղյուսի հետ կապելու»¹⁰² հիմնական և «փուշ՝ կաչուն»¹⁰³, «Կաչուն զանգված զանազան բաղադրությամբ, որով իրար են կպցնում (կապում են) կոտրված հախճապակյա և մնան իրերի կտորները»¹⁰⁴, «պիղծ. մալակոնած. պլշտըկած», «պիղծ, կեղտոտ», «ած. շաղախված, ցեխոտ, պիղծ, անմաքուր» երկրորդական նշանակություններով¹⁰⁵: Այդ՝ **շաղախ** բառը, որ, իրոք բաղադրյալ բառ է, Հր. Աճառյանի կարծիքով «Ծագում է շաղ «թրջել, թացություն» արմատից, որից **շաղել** «շաղախել»։ այս երկուսը (**շաղել**-ը և **շաղախել**-ը - Ա. Մ.),- շարունակում է Աճառյանը,- երբեմն իրար հետ այնքան են միանում, որ անկարելի է լինում զանազանել. հմմտ. հներից՝ «Սոխիր հնոցի քացախով **շաղախեալ** արկին ընդ քիթս նորա (ճառընտ.) միջին հյ. **շաղղել** (իմա՛ շաղաղել) «շաղուել» (իմա շաղախել - Ա. Մ.) Վստկ. 157, որ հայտնի չէ թե **շաղել** բայի՞ց է կազմված - **աղ** մասնիկով, թե **շաղախել** բայից՝ **խ** > **ղ** ձայնափոխությամբ»¹⁰⁶: Հր. Աճառյանն այդպիսով, սակայն, ոչ միայն **շաղախ** բառի ամբողջական կազմությունը չի բացատրում, այլև վաղուց ավանդված **շաղել**, **շաղախել** և միջին հայերենում գործածական **շաղղել** (= շաղաղել) բայերի միջև ծագումնաբանական կապ չի տեսնում: Այնինչ դրանք իմաստապես խիստ մերձակից բառեր են և սերում են ոչ թե **շաղ** «թրջել, թացութիւն», այլ **շաղ** «կապ, զոդ, կցում, կապակցություն»¹⁰⁷ արմատից,

¹⁰⁰ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, էջ 462:

¹⁰¹ «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», 2-րդ տպ., էջ 629, **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

¹⁰² **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

¹⁰³ «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», էջ 629:

¹⁰⁴ **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

¹⁰⁵ Տե՛ս դրանք նշվ. բառարաններում **շաղախ** բառի տակ:

¹⁰⁶ Տե՛ս **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

¹⁰⁷ Այդ մասին տե՛ս **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

որի կրկնությամբ էլ հենց առաջ է եկել **շաղախ** < **շաղաղ** (< **շաղ** + **շաղ**) բառը:

Դա բոլոր դեպքերում այնպիսի նյութերի (հող, կիր, ալյուր և այլն) զանգված կամ խառնուրդ է նշանակում, որը ստեղծում է նրանց կապակցման՝ միահյուսման կամ իրար հետ զոդելու՝ շաղկապելու միջոցով: Հմմտ. **Շաղել** «Շաղապատել, պատել. ոլորել. գալարել. կաշկանդել», «պլլել, փաթթել», «1. Պատատել, պատել, փաթաթել: 2. Կաշկանդել, կապկպել: 3. Ոլորել, գալարել: 4. Շաղվել՝ սորուն նյութը (ալյուր, հող և այլն) ջրի կամ այլ հեղուկի խառնելով ճմլել, տրորել, միմչև միավորվեն ու միապաղաղ զանգված գոյանա», **Շաղախել** «Ցեխի մեջ թաթախել, մալականել, պըշտըկել, ցեխտել, աղտոտել», «1. Շաղախ քսել. ծեփել: 2. Մի քան քսելով ապականել, լոպոկել: 3. Շաղվել (իմա՝ միահյուսել - Ա. Մ.): 4. նման. Կեղտոտ գործերով ապականել, պղծել» և **Շաղղել**, որ բառարաններում ներկայացվում է «Տ. **Շաղել**» հղումով, և հետևաբար՝ ճիշտ նույն իմաստներն է արտահայտում¹⁰⁸: Ուրեմն և՛ նման նշանակության համար հաստատուն հիմք կարող էր ծառայել «կապ, զոդ, կցում, կապակցություն» իմաստը, որ, ի դեպ, ավել կամ նվազ չափով պահպանվում է նաև երկրորդական նշանակությունների մեջ: **Շաղ** արմատի կրկնությամբ **շաղախ** բառի առաջացումը պարզորոշ է, սակայն, ոչ միայն իմաստային, այլև հնչյունափոխական տեսակետից. նրա մեջ փոփոխության է ենթարկվել միայն երկրորդ բաղադրիչը, որ և մի դեպքում պարզապես կորցրել է շ սկզբնահնչյունը (իմտ. **փաթ + փաթ > փաթաթ, դայլ + դայլ > դայլալ, հայթ + հայթ + էլ > հայթայթել** և այլն), իսկ մյուս դեպքում տարնմանության շատ սովորական օրենքով **ղ** վերջնահնչյունը խլացել ու **խ** է դարձել:

Այդ՝ **ղ > խ** (շաղաղ > շաղախ) հնչյունափոխությունը, որը տեղի է ունեցել վաղ անցյալում, ամենևին, սակայն, ընդհանուր բնույթ չի կրել: Միջին հայերենը հին **շաղախել** բայի դիմաց իրոք ունի **շաղղել** (= շաղաղել), որ անտարակույս բարդության ավելի հին վիճակն է ներկայացնում, օրինակ. «Առ ալոյր ու մորմենոյ տերև չոր՝ լեսած ու խառնէ ընդ գարի փոխինդ, ու **շաղղէ** ջրով, ու շինէ խուրսեր...»

¹⁰⁸ Համապատասխանաբար տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», էջ 462. «Առ-ծեռն բառարան հայկազեան լեզուի», էջ 629, **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան. «Առծեռն բառարան հայկազեան լեզուի», էջ 629, **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

(Բժշկարան ձիոյ..., Եր., 1980, էջ 112), «Առ քաւշի ճրագու ու սագու ճրագու, բւեկի խեժ ու հոռոն ձէթ և անպակ գինի, զայն չակքն, որ գիրենք **շաղղէ** ու հալէ ընդ իրար» (էջ 130), «Եւ առ գղթոր մի ու լեսէ, որ **շաղղէ**, լեսէ զղեղերն ու մաղէ ու **շաղղէ** պալասանի ձիթով ու դիր ի յաչքն» (ն. տ., էջ 145), «Առ գարէ ալոյր ու **շաղղէ** ի քացախն ու շփէ ի գրաստուն մարմինն» (ն. տ., էջ 152) և այլն¹⁰⁹: Այդպէս **ղ**-ն անփոփոխ է մնացել նաև Երևանի (**շա՛ղաղ** «ալյուրի, ցեխի շաղախ»), Ջուղայի, Վանի (**շաղաղել** «շաղել»), Սալմաստի (**շաղղղել** «ցեխ կամ խմոր շաղել»), Ազուլիսի (**շղա՛ղիլ** «խմորը շաղել»), Թբիլիսիի (**շաղղղիլ** «խմորը շաղել»), բայց նաև՝ **շաղխիլ** «ցեխը շաղախել»), Շամախիի (**շղաղիլ** «ապականել, բնական պետքը հոգալ») բարբառներում¹¹⁰: Վերջապէս նշենք, որ կա **շաղախ** բառի կրկնավոր ծագումը հաստատող մի այլ՝ ավելի գեղեցիկ փաստ. իմաստաբանորեն ու հնչյունաբանորեն նրան մերձակից ու նման է **փաղաղ** (հմմտ. **փաղաղ** - շաղախ<շաղաղ) բառը, որ, ինչպէս հայտնի է, առաջ է եկել **փաղ** («կից, հար, միացած») արմատի կրկնութեամբ և նախապէս՝ «շաղաղուած ալիւր», իսկ մի շարք բարբառներում (Արարատյան, Ղարաբաղի, Գորիսի և այլն) «հունցած խմորի շաղախ» իմաստն է արտահայտում¹¹¹. հմմտ. նաև **փաղաղել** (< փաղ + փաղ + ել «ալյուրը շաղախել, խմոր դարձնել») և **շաղախել** <շաղաղել: Այսքանից էլ պարզ երևում է, որ **շաղախ**-ը ո՛չ թե ածանցավոր, այլ իսկապէս **շաղ** («կապ, զոդ, կցում, կապակցութիւն») արմատի կրկնութեամբ կազմված քարացած բարդութիւն է:

¹⁰⁹ Օրինակները բերում ենք «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ (ԺԳ դար)» աշխատութիւնից (Երևան, 1980), որտեղ «Եւ առ մեղր և եփէ, որ թանձրանայ, ու խառնէ յինք սակամունի (Իմա՛ խոտ, որից բուժական հյութ կամ խեժ է ստացվում - Ա. Մ.) դրան մէկ, ամբոյր **շաղղոյ** դրան երեք, ու շինէ զինք գէթ հաւկուիթ մի ու դիր է գրաստուն որովայնն (էջ 155) նախադասութեան **շաղղոյ**-ն նույնպէս սերում **շաղաղ** բառից (հավանաբար կազմված է **շաղաղ+ածոյ** բաղադրիչներից. հմմտ. **բրածոյ, կոփածոյ, ձուլածոյ** և այլն) և բնավ չի կապվում **շաղաղ** «շողացող, պսպղուն» բառի հետ, ինչպէս իրատարակողն է կարծում (տե՛ս էջ 224):

¹¹⁰ Տե՛ս **Յր. Աճառյան**, Չայերեն արմատական բառարան: Ի դեպ, ուշագրավ է, որ Ատանայի բարբառում **շաղախ**-ը վերստին տարնմանութեան ենթարկվելով՝ **շավախ** («խմորի համար ջրով զանգված ալյուր») է դարձել, իսկ Մշո բարբառում էլ **շաղ** արմատական բառը հենց ինքնին «շաղախ» է նշանակում (տե՛ս նույն տեղում):

¹¹¹ Այդ բոլորի մասին տե՛ս **Յր. Աճառյան**, Չայերեն արմատական բառարան:

7. ՊԱՊԱՐ

Պապար բառը գործածվում է որոշ (Երևանի, Ղարաբաղի, Գորիսի, Շամախիի և այլն) բարբառներում իբրև մանկական բառ՝ «պար, պարպար, Երեխայի խաղալը» նշանակությամբ: Առաջին անգամ արձանագրվել է Զր. Աճառեանի «Հայերեն գալառական բառարանում», ներկայացվել է նաև հարադրյալ՝ **պապար-պապար** (|| պապալ) **անել** («պարել, խաղալ») ձևերով¹¹²: **Պապար** բառը, որ Ղարաբաղի խոսվածքներում **ր > լ** հնչյունափոխությամբ **պապալ** է դարձել (հմմտ. **Արշավիր > Արշավիլ > Շավիլ > Շավել, սորոր > սուլուլ** և այլն) առանձնապես բարդ ծագում ու կազմություն չունի. առաջ է եկել **պար** արմատի պարզությամբ՝ **պար + պար > պարպար > պապար**, որտեղ և սոսկ **ր** ձայնորդի անկում է տեղի ունեցել (հմմտ. ծան + ծան > **ծանծան**, կազ + կազ > **կակազ**, բախ + բախ > **բաբախ**, ծառ + ծառ > **ծածառ** և այլն): Իմաստային տեսակետից ևս նա զգալի փոփոխության չի ենթարկվել. **պար** արմատի կրկնությամբ **պարի** կամ **պարելու** բազմակիություն է արտահայտվել:

Երեխային ձեռքերի վրա խաղացնելու կամ պար ածելու համար հարկ է եղել հաճախակի կրկնել **պար** բառը. այդ հիման վրա էլ առաջ է եկել **պապար**-ը, որից իմաստի սաստկացմամբ իր հերթին կազմվել է **պապար-պապար** ոչ համադրական կրկնավոր բարդությունը, իսկ դրանից՝ **պապար-պապար անել** («1. Ուրախությունից պար գալ՝ թռչկոտել: 2. Երերալ, շարժվել») հարադրավոր բայը¹¹³ (հմմտ. **պապար** և **պապար-պապար, պապար անել** և **պապար-պապար անել**):

8. ՔՈԼՈԼ

Քոլոլ («Շների գզգզվելը՝ գզվրտոցը») բառը պատկանում է բացառապես «ուլ» ճյուղի բարբառախմբին և գործածական է հիմնականում Ղարաբաղի, Գորիսի, Երևանի (Արարատյան) բարբառներում¹¹⁴: Մեծ մասամբ **կենալ, տալ** բայերի հետ իբրև հարադիր է

¹¹² Տե՛ս Զր. Աճառեան, Հայերեն գալառական բառարան: Հմմտ. Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան:

¹¹³ Տե՛ս մեր «Գորիսի բարբառը», էջ 458:

¹¹⁴ Տե՛ս Զր. Աճառեան, Հայերեն գալառական բառարան, այլև՝ մեր «Գորիսի բարբառը», էջ 500:

գործածվում (օրինակ՝ Շըները ուրուր նըիտ էն կեցալ), կամ թե չէ՝ **ել** մասնիկ ստանալով՝ կազմում է **քոլոլել** բայը, որ «1. Գզգզել, գզվըրտել (շան): 2. Մազերը փետտել, գզգզել: 3. Չարաչար ծեծել: 4. Քլմստորել, գզգզելով իրար գետին գլորել» իմաստներն է արտահայտում¹¹⁵:

Տակավին գրական աստիճանի չբարձրացած այդ՝ **ոլոլ** բառը ևս բաղադրյալ բառ է և առաջ է եկել նույնպես արմատի՝ **քոլ**-ի կրկնությանը՝ **քոլ + քոլ > *քոլքոլ > քոլոլ**, որտեղ պարզապես երկրորդ բաղադրիչի **ք** սկզբնահնչյունի կորուստ է տեղի ունեցել (հմմտ. **փաթ + փաթ > փաթաթ, փաղ + փաղ > փաղաղ** և այլն): Դա ամենից առաջ ու լավագույնս հաստատվում է ոչ կրկնյալ ձևի՝ **քոլ**-ի գոյությանը կամ ինքնությանը, որ, օրինակ, Գորիսի բարբառում **կենալ** բայի հետ հարադրվելով (**քոլ կենալ**)՝ **քոլոլ կենալ** բայի պես ճիշտ նույն (շների) «քոլոլվել, գզվրտվել է նշանակում»¹¹⁶: Այդ ինքնորոշ **քոլ** բառն էլ, անշուշտ, սերում է, դարձյալ «ուն» ճյուղի մի խումբ բարբառներում գործածվող **քոլ** («1. Վայրի թուփ, մացառ: 2. Անտառ: 3. Վարդի թփի արմատը: 4. Բույսերի տրցակ: 5. նման. Թուխայի խավը, վրայի մազերը») հանրահայտ բառից, որն իր իմաստներով¹¹⁷ այնպիսի իրեր կամ առարկաներ է ցույց տալիս, որոնք, կարելի է ասել, աչքի են ընկնում իրոք իրենց մասերի խիստ անհամաչափ, ցաքուցրիվ տեսքով՝ գզգզվածությամբ կամ գզգզանքով: Եվ այդ հիման վրա էլ հենց շների գզվրտոցը նմանեցվել է **քոլ**-ի և ըստ այդմ՝ կազմվել **քոլոլ** (<քոլ+քոլ), ինչպես նաև **քոլոլել, քոլոլվել, քոլ կենալ, քոլոլ կենալ** բառերը (դրանց հետ հմմտ. **քոլ տալ** «ծառի արմատից երկրորդական ճյուղեր արձակել», **քոլք** «1. Գործածված կտորի վրայի մազնուր: 2. Գզածի մազնուրը. սանդերքի վրա մնացած կեղտոտ բուրդ», **քոլքոլոտ** «Քոլքոտ՝ քոլքեր ունեցող», **քոլքոլոտվել** «Քոլքեր ձևանալ, խավը անհարթ դառնալ, հարթությունը կորցնել»)՝¹¹⁸:

¹¹⁵ Դրանց մասին տես, օրինակ, **Յր. Աճառեան**, Հայերեն գաւառական բառարան, **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

¹¹⁶ Տես մեր «Գորիսի բարբառը», էջ 501:

¹¹⁷ Դրանց մասին տես **Յր. Աճառեան**, Հայերեն գաւառական բառարան, **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

¹¹⁸ Համեմատված բառերի համար տես **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան: **Է. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, էջ 1574:

1. ԱՂԻ(Ք)

Աղի(ք) «փորոտիք» բառի ծագման մասին հայտնվել են մի քանի կարծիքներ («Հյունք. **ալիք** բառից: ՋԲ **աղիկամի** մեկնում է «ըստ աղու կամի, որ է ըստ հաճույս»): Թիրաքյան, Ար. բառ. 18 **աղիկամի** = պիլ. *ahu-kāmē* «ինքնիշխան»¹²⁰, որոնք Հր. Աճառյանը իրավացիորեն մերժել և «Արմատական բառարանում» այն դեռևս չստուգաբանված արմատ է դիտել:

Դրանից հետո ոչ ոք, դժբախտաբար, **աղի(ք)** բառը ստուգաբանելու փորձ չի արել, և ցարդ պարզ չէ նրա ծագումը: Մինչդեռ պետք է ասել, որ շատ սովորական գործածություն ունեցող այդ՝ **աղի(ք)** բառն ուղղակիորեն կապվում է **աղալ** («1. Տորենի, գարու, եգիպտացորենի ևն հատիկները երկանաքարերով փոշիատեսակ մանրացնել, այլուր դարձնել: 2. Առհասարակ մանրացնել, փոշի դարձնել: 3. Մանր ջարդել հատիկները: 4. *Նման*. Պտույտ տալ: 5. *Փոխ*. - Ուտելով սպառել») ¹²¹ բայի հ.-ե. *al* (ասիական *ar*) = հայ **ալ>աղ** արմատի հետ («հմնտ. հն. *άλέω* «աղալ», *άλε΄της* «երկան», *άλετών* «ջաղացք», *άλευρον* «այլուր...») ¹²² և առաջ է եկել հենց դրանից՝ **-ի** մասնիկի հավելմամբ:

Դա նախ հաստատվում է այն բանով, որ նրանք՝ **աղի(ք)** բառը և նախածն դիտվող **աղ** արմատն ու **-ի(ք)** ածանցը միասին (աղ + իք > աղիք) իրենց հնչյունական կազմով լրիվ նույնական են և չեն տարբերվում իրարից: Երկրորդ, ինչպես Հր. Աճառյանն է նկատել, **աղի** բառը ածանցների ու արմատների հետ բաղադրվում է ոչ միայն **աղե**, հետևաբար՝ **աղէ** (օրինակ՝ **աղեկեզ** || **աղէկեզ**, **աղեխարշ** ||

¹¹⁹ «Բանբեր Երևանի համալսարանի», 1985, N 3, էջ 92-102:

¹²⁰ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, ու *ahu-kāmē*-ն *aha-kāmē* է դարձել, այլև բուն սկզբնաղբյուրները՝ **Յ. քի. Հիւնքեարալէյնտեան**, Ստուգաբանական բառարան, Պոլիս, 1894, էջ 317: **Հ. Մ. Ջախջախեան**, Բառգիրք հայ-իտալերեն, Վենետիկ, 1837, էջ 26: **Յ. Թիրաքեան**, Աիրիահայ բառարան, Վիեննա, 1914-20, էջ 18:

¹²¹ Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան և հմնտ. «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. 1-ին, Վենետիկ, 1836, էջ 32, **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

¹²² Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, այլև՝ **J. Pokorny** *Indogermanisches etymologisches Wörterbuch*, I, Bern-München, 1959, էջ 28-29:

աղէխարշ, աղեցաւ || աղեցաւ), աղի (օրինակ՝ աղիկամի, նեղաղի, նախաղի), այլև՝ աղ (օրինակ՝ աղախարշանք, աղախարշունն, գարաղութին, աղապատանք) ձևով¹²³, որ դրա ինքնուրույն արմատ լինելն է հաստատում:

Եվ վերջապես՝ երրորդ, հայտնի է, որ հայերենում «-ի, ավելի -իք ածանցով» ոչ միայն գոյականներից ու ածականներից, այլև «բայարմատներից կազմվում են գոյականներ զանազան նշանակություններով (ընդգծումն իմն է - Ա. Մ.), ինչպես՝ հարսանիք, ընթրիք. ընտանի, ընտանիք. մատանի, մատանիք. աղորի, աղորիք, գործի, գործիք»¹²⁴:

Այսքանը և մանավանդ վերջին **աղորի** (< աղօրի) - **աղորիք** (< աղօրիք), **գործի-գործիք** օրինակները ցույց են տալիս, որ **աղալ** բայի **աղ** արմատից՝ **-ի(ք)** ածանցով ևս կարող էր նման գոյական կազմվել: Դա հաստատվում է նաև իմաստաբանորեն. **աղ** արմատը **-ի(ք)** ածանցին միանալով՝ «ընդերք, մաշկեղէն խողովակ երկայն ոլորեալ ի փոր կենդանեաց՝ ընդունարան յաւելուածոյ կերակրոց՝ կից ընդ քաղրթի»¹²⁵ հիմնական իմաստն է արտահայտել, անշուշտ, իր՝ աղալու, մանրելու, տարրալուծելու ընդհանուր նշանակության հիման վրա, դրսևորելով այն մարսողական դերը, որ կատարում են աղի(ք)ները մարդու կամ կենդանու մարմնի մեջ: Ասել է թե՛ հայերենում աղիքների ֆիզիոլոգիական-կենսաբանական դերով է որոշվել նրանց անվանումը, որի մի լավագույն ապացույցն էլ դարձյալ նույն **աղ** արմատից և **-որ** (<օր)+ի(ք) ածանցներից կազմված **աղորի(ք)** <**աղօրի(ք)** բառն է¹²⁶, որ ոչ միայն «որևէ բան աղացող. աղացք», այլև կազմախոսական՝ «սեղանատամներ, որոնք ծառայում են կերակուրը մանրելու» իմաստն¹²⁷ է արտահայտում:

Աղ արմատից **-ի(ք)** ածանցով կազմելով **աղի(ք)** բառը, հայերենը տարազատվել է հնդեվրոպական ցեղակից լեզուներից և ընդհանուր ծագումնաբանական կապ պահպանել նրանց հետ մի այլ դեպքում: Անցյալում հատկապես «աղիք, փորոտիք» նշանակությամբ նա գործածել է նաև **ընդերք** || **ընտերք** բառը, որի **ընդեր** արմատը

¹²³ Տե՛ս **Յր. Աճառյան**, Գայերեն արմատական բառարան:

¹²⁴ **Մ. Աբեղյան**, Գայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 256-257:

¹²⁵ Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 1-ին, էջ 40:

¹²⁶ Տե՛ս **Յր. Աճառյան**, Գայերեն արմատական բառարան:

¹²⁷ Տե՛ս **Ստ. Մալխասեանց**, Գայերեն բացատրական բառարան:

հնդեվրոպաբանների իսկ հաստատմամբ ծագում է «հնդ. entero ձևից. մյուս ժառանգներից հմմտ. սանս. ...antra կամ āntra, հն. έντερο, օսկ. entrari, հւլ. ątroba, սերբ. ūtroba, հիւլ. iðrar (< innrar <inðrar), որոնք բոլոր նշանակում են «ընդերք, աղիք, փորոտիք»», և հւլ. jętro, ռուս. ядро, լեհ. watroba «լարդ»¹²⁸:

Հնդեվրոպական այդ «մեջ» և tero բաղադրիչներից կազմված բառը նախապես նշանակել է «որևէ բանի բուն ներսը, մեջը» և հետո է, որ ֆունկցիոնալ իմաստափոխությամբ մարմնի մասի անվանում է դարձել՝ գործածվելով մի շարք լեզուներում¹²⁹ և ի թիվս դրանց՝ նաև հայերենում: Բայց նկատելի է, որ այդտեղ **աղ+ի(ք) > աղի(ք)** բառի ստեղծմամբ **ընդերք** բառի «աղիք, փորոտիք» իմաստը աստիճանաբար ետ է մղվել ու մթագնել, և դրան հակառակ՝ իշխող ու ընդհանրական է դարձել նրա «հնչ որ կայ ի ներքս», «որևէ բանի բուն ներսը, մեջը» իմաստը¹³⁰: Այնպես որ այսօր «աղիք, փորոտիք» նշանակությամբ հայերենում գործածվում է **աղի(ք)** բառը, որ միաժամանակ հետաքրքրական իմաստափոխությունների է ենթարկվել:

Իր բուն իմաստից բացի այն նշանակում է նաև «Գութ, ողորմություն», «Սիրելի զավակ, գթով լի», «Նվագարանի լար», «Նարգելեի երկար խողովակը»¹³¹, որոնք և առաջ են եկել փոխաբերությամբ, մանադրությամբ կամ մի այլ հիմունքով¹³²:

¹²⁸ **Ջր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան և հմմտ. **Յ. Pokorny** Indogermanisches etymologisches Wörterbuch, էջ 313:

¹²⁹ Ի դեպ, մշեմբ, որ սլավոնական լեզուներում բոլորովին այլ կերպ է արտահայտվում **աղիք** բառը: Ռուսերենի кышка բառը ստուգաբան Մ. Ֆասմերը, համեմատելով ուկր. кышка, լեհ. kiszka «աղիք. երշիկ», պոլաբ. kóisa «երիկամ» բառերի հետ, ենթադրաբար ծագումնաբանական կապ է տեսնում նաև նրա ու հին. հնդկ. kōsthas «ներսի պարունակություններ, աղիքներ» բառի միջև (տես **Մ. Փասմեր**, Этимологический словарь русского языка, т. II, М., 1967, էջ 242):

¹³⁰ Այդ մասին տես «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. 1-ին, էջ 771, **Ջր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան և հմմտ. **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան, «ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հատ. 2-րդ, Երևան, 1972, էջ 96:

¹³¹ Տես «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 1, էջ 39, 40, **Ջր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

¹³² **Աղիք** բառը բազմիմաստ է նաև այլ լեզուներում: Հունարենում, օրինակ, é ντερον նշանակում է. "1. кишка..., փրեւուշ. pl. кишки, кишечник... 2. чрево, матка... 3. внутренность, сердцеви́на, ядро... 4. червь" (տես **Древнегреческо-русский словарь**, том I, М., 1958, էջ 551), σπλάγγχον-ը "փրեւուշ. pl. 1) anat. Внутренность, 2) материнская утроба, чрево, 3) перен. сердце, душа (ն. տ. m. II, էջ 1495)", χորδῆ-ն "1) кишка... 2) струна... 3) колбаса" (ն. տ. էջ 1779): Լատիներեն-

2. ԼԱՎ

Լավ «հորդ՝ տեղատարափ անձրև, հեղեղ» բառը, որ լայն տարածում չունի և գործածվում է մի քանի բարբառներում (Ղարաբաղ, Գորիս, Շուկավեր)¹³³, նույնպես դեռևս չի ստուգաբանված և պարզ չէ, թե իրոք ո՞րտեղից կամ ի՞նչից է ծագում: Բառարանագիրները իրենց բառարաններում բավարարվել են սոսկ նրա իմաստը բացատրելով և միաժամանակ որևէ բնագրային կամ ոչ բնագրային օրինակ բերելով¹³⁴:

Լավ բառի ծագման վրա առաջինն ուշադրություն է դարձրել ակադեմիկոս Գ. Ջահուկյանը և այն «գրաբարում չվկայված», բայց «հայերենի հիմնական շերտի միջով» եկած և «հայերենի ընդհանուր օրինաչափություններին» ենթարկված արմատ համարելով՝ նշել «**Լավ** (*pləu-) «հեղեղ» (ՇԼ.) - հուն. πλώω «լողալ», հ. իսլ. flōa, հ. անգլ. flōwan «գերլցվել, լցվել-թափվել», հ. վ. գերմ. fluot, գերմ. Flut «նակընթացություն, հոսանք, հեղեղ», այլև հա. **լուանալ** և այլն (հ. ե. pleu, plōu - «թափվել, հոսել. լողալ. թափել, լցնել. թռչել»)»¹³⁵:

Զբացառելով նման ծագման հնարավորությունը՝ մենք, սակայն, ավելի շատ հակված ենք կարծելու, որ քիչ բարբառներում գործածական այդ **լավ** («հորդառատ անձրև, հեղեղ») բառը ուղղակի ծա-

նում *intestinum* նշանակում է՝ «кушка, кишечник, внутренности» (տե՛ս Латинско-русский словарь, М., 1949, էջ 475), *viscus* նշանակում է «1) мясо, 2) внутренности, 3. чрево, утроба, лоно, 4) плод чрева, родное дитя; (самое) близкое существо, 5) самая середина, нутро, глубь, глубина, 6) достояние, состояние, имущество, средства, 7) мужские яички» (ն. տ. էջ 939), անգլերենում *gut* նշանակում է «1. anat. кушка; пищеварительный канал. 2. pl. разг. - груб. 1) кушки, внутренности... 2) брюхо, пузо... 3) струна или леса (из кишок животных или из фибруна шелкопряда); 2) мед. кетгут. 4 разг. содержание; существенная часть (чего-л.)... 5. pl. разг. 1) мужество (տե՛ս Большой англо-русский словарь, New English-Russian dictionary, т. I, М., 1972, էջ 619-620) և այլն:

¹³³ Տե՛ս **Ս. Ամատունի**, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 242, **Հր. Աճառեան**, Հայերեն գաւառական բառարան, այլև՝ մեր «Գորիսի բարբառը», Երևան, 1975, էջ 396:

¹³⁴ Ս. Ամատունին վկայաբերել է Գ. Բարխուդարյանցի «Չոբանն ու նշանածը» գրքում (Թիֆլիս, 1896, էջ 47) գործածված՝ «*Կծակին... հետան մին էլ տեսար գիրթ սկսեց **լավը** (ամենահորդառատ և մեծաշիթ). ամնա հո՛ւնց **լավ**, հո՛ւնց **լավ**, հու որ ջրհեղեղը տեսալ չի, գեայ տեսնայ», Հր. Աճառյանը տվել է «լավ ու թռ է» օրինակը, Ստ. Մալխասյանը դրան ավելացրել է «Սկսեց **լավը**, կարծես ջրհեղեղ լիներ» նախադասությունը (տե՛ս «Հայերեն բացատրական բառարան», հ. 2-րդ, էջ 185), իսկ հետագա բառարաններում **լավ** բառն ընդհանրապես տեղ չի գտել:

¹³⁵ **Գ. Ջահուկյան**, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 289:

գում է պարսկերեն seilab||sīlab («հոսող ջուր՝ հեղեղ, ուղի») > **սելավ** || **սելաֆ** բառից¹³⁶ և նրա հապավված մասն է հանդիսանում:

Ինչպես փաստերն են ցույց տալիս, պարսկերենից փոխառյալ **սելավ** (< seilab, sīlab) բառը որոշ բարբառներում ճյուղավորվել և գործածվում է ոչ միայն իր անփոփոխ (օրինակ՝ «**Սելավն** եկավ, կալատեղս քանդեց, մինչև հիմա էլ խանգարված է մնացել», Ա. Բակունց)¹³⁷, այլև հապավված՝ **սել**¹³⁸ (օրինակ՝ «Սէլը յէկալ ա չիմ տարալ» «Չեղեղը եկել է ամբողջը տարել») և **լավ** (օրինակ՝ «Լավը նի յա՛ կարալ, կըտրում չի» «Չորդ անձրևը սկսել է, չի դադարում») ձևերով: Ըստ որում՝ հապավված ձևերից առաջինը՝ **սել**-ը, եթե իմաստով լրիվ համընկնում է իր սկզբնաձևին՝ **սելավ**-ին, և դրապես՝ «հեղեղ, հորդահոս գետ», ապա երկրորդը՝ **լավ**-ը, իմաստային տարբերակման ենթարկվելով, առավելապես «հորդառատ, տեղատարափ անձրև» է նշանակում:

3. ՅԵՆՑ

Յենց < **հենց** («1. Այնպես, էնենց, այն կերպով: 2. Ուղիղ, ուղղակի, իսկ և իսկ, ճշմարիտ: 3. Միայն, լոկ: 4. Ժամանակ ցույց տվող բառերի առաջ դրվելով՝ ցույց է տալիս անմիջականություն, իսկ և իսկ: 5. Անձնական դերանուններից առաջ դրվելով՝ ուժգնություն է տալիս, շեշտում է. նույնիսկ»)՝¹³⁹ բազմիմաստ բառը առաջին անգամ արձանագրվել է 1912 թվականին՝ Ս. Ամատունու «Չայոց բառ ու բանուն»՝ «**Յենց** Ար. Նխ Իսկ և Այնպես: *Պարոնութիւնն էլ հենց ի նոսա յանձնեցաք. Արձան. Խութայ վանից. **Ս. եպ. ճան.** Ա. 202: * Յենց հերու էր, յորժամ մարդասիրական ճենարան մեր. Ազգ. լրագ. 1849թ. 210: * Յենց արա՛, որ ոչ շամփուրն էրվի, ոչ խորոված. * Յենց դարտ

¹³⁶ Տե՛ս, օրինակ, Персидско-русский словарь, т. II, М., 1970, էջ 80 և հմմտ. **Ստ. Մալխասեանց**, Չայերեն բացատրական բառարան: Պարսկերեն seilab||sīlab բառն էլ, ինչպես մեզ սիրով հաղորդեց արևելագետ Օ. Ս. Եգանյանը, sayl «հոսող»+āb «ջուր» բաղադրիչներից կազմված բարդ բառ է:

¹³⁷ Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 4-րդ, Երևան, 1980, էջ 284:

¹³⁸ Դա այդ ձևով գործածվում է նաև թուրքերենում և կարող է նաև այդտեղից անցած լինել բարբառներին (տե՛ս, օրինակ, **Պ. Չ. Կարապետյան**, Մեծ բառարան օսմաներենե հայերեն, Կ. Պոլիս, 1912, էջ 450):

¹³⁹ Տե՛ս **Ստ. Մալխասեանց**, Չայերեն բացատրական բառարան, **եղ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 857:

տամ, որ դարտդ մոռանաս. **Առած. Քնար, Յայկ. 10**» իմաստային բացատրությամբ և բնագրային օրինակներով¹⁴⁰:

Յենց (< հենց)-ը այնուհետև տեղ է գտել Յր. Աճառեանի «Յայերեն գաւառական բառարանում» և համարվել ոչ միայն Արարատյան (Երևանի), այլև Ղարաբաղի, Թբիլիսիի բարբառներում, Լոռու, Սից-րիհիսարի խոսվածքներում գործածվող բառ¹⁴¹: Այն գավառական բարբառային բառ է դիտել նաև Ստ. Մալխասյանը¹⁴²: Այսպիսով **հենց** (< հենց)-ը նախապես իրոք բարբառային բառ է եղել և ուշ ժամանակներում է, որ գրական արժեք է ստացել¹⁴³, ինչպես, օրինակ՝ «Ու **հենց** շողաց ցոլքն արևի, Անտես, անհետ չըքացան» (Յ. Թումանյան, «Անուշ»), «-... Դու ինձ չես սիրում, չես սիրում ինձ պես, Յենց ես եմ մենակ լալիս ու տանջվում» (Ա. տ.), «Ես բոլորովին չի վախենում **հենց** այն պատճառով, Որ թռչունները միշտ երգում էին» (Ավ. Իսահակյան, Բանաստեղծություններ, 1-ին հատոր, Երևան, 1950, էջ 309), «Այցելում եմ նրանք **հենց** այդ պահին հանկարծ» (Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հ. 1-ին, Երևան, 1972, էջ 5) և այլն:

Պետք է ասել, որ լայնաբար գործածվող այդ բառը, որի ծագման վերաբերյալ, ինչպես կարողացանք վերջերս հայտնաբերել, առաջինը Գ. Այվազովսկին է կարծիք հայտնել¹⁴⁴, պարզապես մի մաշված-քարացած բարդություն է, որը առաջ է եկել միջին հայերենում՝ այնտեղ շատ գործածվող **հայնցեղ** (< հ + այն + ցեղ «պես, կերպ, տեսակ») բաղադրյալ բառից: Յմնտ., օրինակ, «Երբ ժամանակ մարդոյն ծռռի, երես ի վայր նա գըլորի, Երթայ դիպնի **հանցեղ** (ծն.

¹⁴⁰ Ս. Ամատունի, Յայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 396:

¹⁴¹ Տե՛ս Յր. Աճառեան, Յայերեն գաւառական բառարան:

¹⁴² Ստ. Մալխասեանց, Յայերեն բացատրական բառարան:

¹⁴³ Մեր օրերում կազմված բառարաններում էլ այն միանգամայն իրավացիորեն իբրև զուտ գրական բառ է ներկայացվում (տես, օրինակ, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 3-րդ, էջ 336, **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, էջ 857):

¹⁴⁴ Սհա այդ կարծիքը, որ նա հայտնել է դեռևս 1869 թ.: իր «Բարբառագիտութիւն աշխարհիկ լեզուի» անտիպ աշխատության մեջ. «**Յանց, հենց.** - Յայաստանցւոց բարբառներուն մէջ կգործածուի **այնպէս** բառին նշանակութեամբը. տճ. **էօրլէ:** Յետաքրքրելի է, թէ ուսկից է այս անսովոր մակբային ծագումը. մեզի կերևի թէ նոյն իսկ **այնպէս** խօսքին աւրուածն է, իբր **այնս**, որոյ վրայ **հ** տառին աւելնալը կան լինելը **հայնս** կան **հենս** զարմանք չէ: Յիւսիսաբնակ հայերը կասեն նաև **էնէնց, էսէնց, էիէնց** ևն, որ **հէնց** բառէն ձևացած են: Շատ կարելի է, որ Պարսից կան Տաճկաց **հինուչ** կան **հինիչ** բառը լինի մեր լեզուին մէջ մտած» (ՅՍՍՅ պետական մատենադարան, ձեռ. N 2878, էջ 80):

այնցեղ, հայնցեղ) դարի, Որ մինչ ի մահն ոչ վըճարի» (էջ 26), «Պիտէր ինձ **հանցեղ** (ծն. **հանց**) իմաստ, որ զայսոր ճարակն իմասնի» (էջ 44), «Ֆրիկն **հանցեղ** (ծն. **հանց, յանց, հայնց**) պարզ է խօսել, որ ամենայն մարդ իմանայ» (էջ 47), «**Յանցեղ** (ծն. **այնցեղ**) պատերազմ ունի» (էջ 61), «**Յանցեղ** (ծն. **հայնցեղ**) Դու շընորիք առնուս, Ով հայի ի քեզ ծիծըղայ» (էջ 80)..., «Ես հող ու մոխիր էի, Ի՞նչ գիտէի, թե **հանց** (ծն. **այնց**) լինենայր» (էջ 184)¹⁴⁵, «**Յանցեղ** (ծն. **Անցեղ**) նետով զիս խոցեցիր, Որ այլ չունիմ բժշկարար» (էջ 159)¹⁴⁶, «**Յանցեղ** էար և հալածեց, Չանասելի զաւրքն որ եկան, **Յանց**, որ Շապուհն խրոխտական Դարափուլ մտեալ և ապրեցան» (էջ 94), «**Յանցեղ** գան և խոց ետ մեզ» (էջ 115)¹⁴⁷, «**Յանցեղ** մեծ ջարդուն եղավ, որ արուն տարաւ զլաշ» (էջ 59), «**Յանցեղ** երերուն պահեմ, մինչ որ գայ լոյսն առաւօտուն» (էջ 124)¹⁴⁸ և այլն:

Այս և նման շատ օրինակներ ցույց են տալիս, որ միջին հայերենում **այնցեղ, յայնցեղ, հանցեղ, անցեղ, հնցեղ** («Յնցեղ են ի քո դիմաց, զինչ կակազն ի դէմ ատենու», Ն. Քուչակ, 122) և **այնց, յայնց, հայնց, հանց** ձևերը հավասարապես նույն **այնպես** (= այնցեղ) իմաստն են արտահայտում և գործածվում ազատորեն միմյանց փոխարեն: Իմաստաբանորեն ընդհանրանալով՝ նրանք իրենց հնչյունական կազմով ևս առանձնապես չեն տարբերվում իրարից. **այնց-ը, յայնց || հայնց-ը և հանց-ը այնցեղ-ի, հանցեղ-ի և հանցեղ-ի** հապավված ձևերն են և, անշուշտ, առաջ են եկել նրանց վերջին՝ **-եղ** հնչյունամասի անկումով, հմմտ. **ի՞նչ ցեղ > ի՞նչ էիս > ինչիս || ինչի** («ինչպես»)¹⁴⁹:

Բայց սա, իհարկե, դեռ բոլորը չէ. **այ > ա** սովորական հնչյունափոխությամբ¹⁵⁰ (հմմտ. **այլ > ալ, այս > աս, վայր > վար, մայր > մար, ձայն > ձան** և այլն) **հայնցեղ-ը և հայնց-ը** դարձել են **հանցեղ, հանց**, որոնք, ի դեպ, ավելի շատ են սովորական միջին հայերենում: Այստեղ էլ նշենք, որ եթե **հայնց** (< հայնցեղ)-ից՝ **այ > ա**

¹⁴⁵ Տե՛ս **Ֆրիկ**, Բանաստեղծություններ, Երևան, 1941 և հմմտ. **Տիրայր**, Ֆրիկ-Դիվան, Նյու Յորք, 1952:

¹⁴⁶ **Յ. Թլկուրանցի**, Տաղեր, Երևան, 1960:

¹⁴⁷ **Յ. Սեբաստացի**, Բանաստեղծություններ, Երևան, 1964:

¹⁴⁸ **Ն. Քուչակ**, Չայրենի կարգավ, Երևան, 1957:

¹⁴⁹ Տե՛ս **Յր. Աճառյան**, Չայերեն արմատական բառարան:

¹⁵⁰ Տե՛ս, օրինակ, **Յր. Աճառյան**, Չայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 242:

փոփոխությամբ իրոք **հանց**, ապա **այ** > է փոփոխությամբ էլ (հմմտ. **այլ** > էլ, **այս** > էս, **վայր** > վեր, **մայր** > մեր, **ծայն** > ձէն ևն) առաջ է եկել **հէնց** ձևը, որ լավագույնս արտացոլված ենք տեսնում դեռևս Յ. Թլկուրանցու լեզվում.

Սերն հանէ զմարդն ի խելաց,
Որ այլ իսկի չըկայ խաբար,
Իմաստութիւնըն խափանի
Եւ **հէնց** դառնայ քան զդիւահար¹⁵¹:

Այսպիսով՝ **հէնց** բառը իսկապես ծագում է միջին հայերենի **հայնց** (< հայնցել < h + այն + ցել)-ից և դրա հնչյունափոխված մի ձևն է, որ և հասկանալի պատճառներով գործածվում է արևելահայ աշխարհաբարում ու արևելահայ գրական լեզվում:

4. ՊՈՊՈՉ

Պոպոզ բարբառային բառը «Ար. Նխ կնգուղ. Վարդապետի գտակ: Պոպոզ, նաև Սրածայր: *Ձոնփ. Գտակ արեղայի՝ վեղարով կամ առանց վեղարի. ՅՅԲ:

*Կարմրագագաթ պոպոզ մորթե գդակները գլխըներին. Խաչ. Աբ. Երկ., 15

*Պոպոզ (վեղարածև) գտակները գլխներին. Պռշ, Կռծղկ: 30 * Սի մին պօպօզ գտակ էր. Պռշ. Սօս, 186» նկարագրությամբ առաջին անգամ տեղ է գտել Ս. Ամատունու «Յայոց բառ ու բանում»¹⁵²:

Պոպոզ բառին այնուհետև անդրադարձել է Յր. Աճառյանը և «գրաբարի մեջ գոյություն չունեցող բոլորովին նոր արմատ» համարելով՝ տվել նրա հետևյալ՝ «***Պոպոզ** Երև. սրածայր: 2. Չն. ծծկ. վարդապետ (վեղարին սրածայր ըլլալեն շինված). 3. Պլ. շրթունքները կլորիկ մը ամփոփած (ինչպես ու ձայնը արտասանելու ժամանակ)» բնութագիրը¹⁵³:

Այսպիսով՝ բառարանագիրները նախ միանգամայն իրավացիորեն **պոպոզ**-ը բարբառային բառ են դիտել և ապա՝ զրեթե միատեսակ բացատրել նրա իմաստները: Յետագայում այսքանին առանձ-

¹⁵¹ Յ. Թլկուրանցի, Տաղեր, էջ 162: Ի դեպ, նույն բանաստեղծության մի այլ տարբերակում **հէնց**-ի փոխարեն **հանց** է գործածված (տես նշված էջը):

¹⁵² Ս. Ամատունի, Յայոց բառ ու բան, էջ 194:

¹⁵³ Յր. Աճառեան, Յայերէն գաւառական բառարան:

նապես նոր բան չի հավելվել¹⁵⁴, և միաժամանակ որևէ փորձ չի արվել պարզելու **պոպոզ** բառի ծագումը, որ, ի դեպ, ոչ միայն Արարատյան, այլև ուրիշ (Ղարաբաղ, Գորիս, Պոլիս, Թբիլիսի, Վան...) բարբառներում է գործածական:

Տեսնենք, թե ինչից է ծագում այդ՝ հիմնականում «սրածայր, սուր ծայրով վերջացող» (օրինակ՝ «Գընացի մարդի, Ունեցա որդի, Գըղակը **պոպոզ**, Անունը Կիկոս», Զ. Թումանյան, «Կիկոսի մահը») և «Սրածայր գդակ՝ գլխարկ» իմաստներով գործածվող **պոպոզ** բառը, որից նաև բաղադրյալ բառեր են կազմվել, ինչպես **պոպոզան** («Մեծկակ ու սրածայր»), **պոպոզավոր** («1. Սուր ծայր ունեցող: 2. Սրածայր գլխարկ կրող. 3. Փխբ. վեղարակիր»), **պոպոզիկ** («Գլխի վրա ցցված մի բան») և այլն¹⁵⁵:

Պետք է ասել, որ այն առաջ է եկել նույնպես դեռևս չստուգաբանված և նույնպես բարբառներին հատուկ **պոզ** («1. Եղջուր, կոտոշ: 2. Նման. Արորի առատամի հետևը գտնվող երկու եղջուրածև փայտի կտորներ: 3. Զասակն առած աքաղաղի կամ հավի ոտքերի հետևի կողմից բուսած եղունգը: 4. Մարդու մատների ոսկորների վրա դուրս ցցված ավելորդ բուսած ոսկոր: 5. Խողովակային ծորակ ինքնաեռի, աղբյուրի, ջածիկի ևն, որտեղից ջուրը հոսում է դուրս. կրան») ¹⁵⁶ բառից՝ նրա իսկ պարզ կրկնությամբ՝ ***պոզ + պոզ* > պոպոզ > պոպոզ**:

Դա լավագույնս հաստատվում է ինչպես հնչյունաբանորեն, այնպես էլ իմաստաբանորեն: Նույն արմատի կրկնությամբ կազմված մի շարք բառերի պես (հմմտ., օրինակ, ***ծան + ծան > ծածան, *կազ + կազ > կակազ, *բախ + բախ > բաբախ, *կան + կան > կական** ևն), ***պոզ + պոզ* > պոպոզ** ձևում ևս առաջին բաղադրիչի վերջին բաղաձայն հնչյունը դուրս է ընկել՝ առաջ բերելով **պոպոզ** բառը, որի և **պոզ** բառի միջև եղած իմաստային կապը նույնպես խիստ որոշ է ու զգալի:

¹⁵⁴ Տե՛ս **Ստ. Մալխասեանց**, Զայերեն բացատրական բառարան, հմմտ. **եդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, 1976, էջ 1225:

¹⁵⁵ Դրանց մասին տե՛ս վերոհիշյալ բառարանները:

¹⁵⁶ Իմաստների համար տե՛ս **Ստ. Մալխասեանց**, Զայերեն բացատրական բառարան և հմմտ. «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 4-րդ, էջ 210, **եդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, էջ 1222:

Երկու բառերն էլ իրենց թե՛ հիմնական և թե՛ երկրորդական նշանակություններով կապվում են «սրածայրություն» գաղափարի հետ և հավասարապես «սրածայր, սուր ծայրով վերջացող, դուրս ցցված (որևէ բան)» իմաստն արտահայտում: Ըստ որում բոլոր դեպքերում հիմնակետ է ծառայել **պոզ** («եղջյուր, կոտոշ»)–ը իբրև կենդանիների գանգի ոսկրյա ուռուցք, որ իրոք սուր ծայր ունի և որի նմանությամբ այդ հատկանիշն արտահայտող այլ բառեր ու իմաստներ են առաջ եկել:

Նշենք նաև, որ **պոզ** բառը իր հնչյունական ու իմաստային կողմերով մերձենում ու հարում է պարսկ. پوز («շուրջանակ բերանոյ. եւ մերթ պարզապէս՝ բերան կենդանեաց»)՝¹⁵⁷ և քրդ. poz «քիթ» բառերին և ամենայն հավանականությամբ պարսկերենից վաղ շրջանում փոխառված բառ է, որը, սակայն, իբրև առանձին արմատ չի ավանդվել գրաբարում:

5. ՍՆԴՈՒ

Սնդու բառը, որ առաջին անգամ «**Սնտու** – ծակ կամ խողովակ թոնրի ի ստորէ որպէս ծխահանք» նկարագրով ներկայացվել է Նոր հայկազյան բառարանի Հավելվածում¹⁵⁸, դեռևս չի ստուգաբանված: Ակադեմիկոս Գ. Ջահուկյանն է միայն փորձել բացահայտել **սնդու** բառի ծագումը, դասելով «հ.-ե. s, sʿ - հայ. ս. շ.» հնչյունական համապատասխանությամբ հատկանշվող այն արմատների շարքը¹⁵⁹, «որոնք շեղվում են հայերենի ընդհանուր օրինաչափություններից և ենթադրում են օտար ենթաշերտ կամ որևէ հնդեվրոպական լեզվից հին փոխառություն, որի աղբյուրը չի պահպանվել կամ դեռևս հայտնի չէ...»¹⁶⁰:

Պետք է ասել, որ գրաբարում չավանդված և գերազանցապես մի խումբ՝ Երևանի, Ղարաբաղի, Շապին-Գարահիսարի, Սեբաստիայի, այլև՝ Գորիսի բարբառներում¹⁶¹ գործածական այդ բառը երկու՝ **սուն**

¹⁵⁷ Տե՛ս **Գևորգ Դպիր**, Բառարան պարսկերեն..., Կ. Պոլիս, 1826, էջ 636, **Յր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

¹⁵⁸ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատ. 2-րդ, էջ 1066:

¹⁵⁹ **Գ. Ջահուկյան**, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 325:

¹⁶⁰ Նույն տեղում, էջ 317:

¹⁶¹ Տե՛ս **Ս. Ամատունի**, Հայոց բառ ու բան, էջ 594, **Յր. Աճառեան**, Հայերեն գալառական բառարան, էջ 976, այլև՝ մեր «Գորիսի բարբառը», էջ 471:

|| սին («սնունդ. պահել, սնուցել, մեծացնելը») և տու («տվող») արմատներից¹⁶² կազմված բարդ բառ է, հմմտ. **ծեռնտու, մատնտու, ստնտու, կաթնտու || կաթնատու, լուսատու, կենսատու, խրատատու || խրատտու, հարկատու, յուղատու, բերքատու, պատասխանատու** և այլն:

Դա հաստատվում է նախ՝ **սնդու** բառի սկզբնական **սնտու** (< **սն** < **սուն** || **սին** + **տու**) ձևով, որ իր բաղադրիչների նշանակության համապատասխան **սուն** || **սին**՝ սնունդ, սնուցում տվող կամ **սննդատու** իմաստն է արտահայտել. «Գետնի երեսից հողի տակով դեպի թոնիրը» տանող «խողովակաձև անցքը» բոլոր դեպքերում օդի մատակարարումով կրակին «սուն||սին», սնունդ կամ սնուցում տվող աղբյուր է ծառայել, և այդ հիման վրա կարող էր հեշտորեն **սուն** || **սին** և **տու** արմատներից կազմվել և իրոք կազմվել **սնտու** բառը, որ իբրև նախավոր ձև է ըմբռնվել ու ներկայացվել դեռևս Հին հայկազյան բառարանի «Բառգիրք յաշխարհաբարէ ի գրաբառն նոյնանշան բառից յամադրմամբ» բաժնում. «Սնտու. սօլուխլուխ: || սնտու. սնդու. շնչահան թոնրի»¹⁶³: Նման կազմությունը հավաստող մի այլ ու լավագույն ապացույցն էլ այլ բարբառներում (Ախալցխա, Ակն, Բաբերդ, Կարին) **սնդու** (< **սնտու**)-ի փոխարեն գործածվող **սնվածք** (< **սնուածք**) || **սնվածք** (< **սնուացք**) բառն է¹⁶⁴, որ նույնպես կապվում է **սուն** || **սին** արմատի հետ և դրա ու **-վածք** (< **ուածք**) || **-վացք** (< **ուացք**) ածանցի¹⁶⁵ միջոցով նույնպես «սնունդ տվող, սնուցող» իմաստն է արտահայտում:

Կազմվելով **սունսին** և **տու** արմատների բաղադրությամբ՝ **սնտու** բառը **-ն** ձայնորդին հաջորդող **տ** խուլ պայթականի՝ ձայնեղ **դ**-ի վերածվելու օրենքով (հմմտ., օրինակ, **ընտրել** > **հընդրել**, **սանտր** > **սանդր**, **փալանտուզ** > **փալանդուզ**, **մատն** > **մանտը** > **մանդը** ևն) դարձել է **սնդու**, որը և գործածվում է այսօր, ինչպես՝

¹⁶² Տե՛ս **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

¹⁶³ Տե՛ս **Մ. Սեբաստացի**, Բառգիրք հայկազեան լեզուի, հատ. 2-րդ, Վենետիկ, 1769, էջ 584:

¹⁶⁴ Տե՛ս **Ս. Ամատունի**, Հայոց բառ ու բան, էջ 14, 594, **Հր. Աճառեան**, Հայերեն գաւառական բառարան:

¹⁶⁵ **-վածք** || **վացք** ածանցի սկզբնական ձևը, հասկանալի է, եղել է **-ուածք** (հմմտ. գործուածք > գործվածք, շինուածք > շինվածք ևն), որի և **սնտու** (> **սնդու**) բառերի **ու**-երը միանալով տվել են մի **ու** (>վ):

«Բոց էր բարձրանում խոր թոնրից, գվվում էր օդը **սնդուի** խողովակների մեջ» (Ա. Բակունց)¹⁶⁶:

Միաժամանակ պետք է ասել, որ ժողովրդախոսակցական լեզվում **սնտու** > **սնդու** բառը զգալապես մթագնել է գործողության իմաստը և գոյականի նշանակությամբ մի ամբողջական արմատ ըմբռնվելով՝ հիմք ծառայել այլ բաղադրությունների համար, ինչպես **սնդուկալ** || **սնդկալ** || **սնդուակալ**, **սնդուակալիչք** || **սնդուեկալիչ**, **սնդուակալ**, **սնդուկուկու**, հմմտ. նաև **սնկուալ**, **սնկուածկալ**, **սնկուակալիչ**, **սնուակալ**, **սնուածկալ**, **սնուակալիչ**, **սնկուարք**¹⁶⁷, որոնք և մեծ մասամբ անսովոր հնչյունափոխության ենթարկված ձևեր են: Ավելացնենք, որ մեզ հանդիպած հնագույն բաղադրյալ բառը 17-րդ դարում վարդապետ Ջաքարե Վաղարշապատցու կտակում գործածված **սընտուկալ** (< սնտու + կալ) բառն է¹⁶⁸, որը իր հերթին ևս ցույց է տալիս, որ **սնդու** բառը իրոք ծագում է **սուն** || **սին** + **տու** արմատներից:

6. ՏԱՐԱԿՈՒՅՍ

Տարակույս<**տարակոյս** («Յայսկոյս յայնկոյս տատանումն մտաց և սրտի. երկբայութիւն. հոգ. տառապանք, տագնապ, դժուարին իրք և անել անցք»)¹⁶⁹ բառը դեռևս վաղ անցյալում մեկնաբանվել է իբրև **տար** «հեռի» և **կոյս** «կողմ» բառերից կազմված բարդություն¹⁷⁰:

Դա այդպես են ընկալել ու պատկերել նաև Նոր հայկազյան բառարանի հեղինակները՝ մի քանի օրինակների առիթով նշելով, որ նրանում շատ պարզ «տեսանի բուն ստուգաբանութիւն ձայնիս, իբր հեռի կոյս, օտար կողմն»¹⁷¹:

Չնայած դրան և այն բանին, որ սովորական լեզվական զգացողությամբ **տարակոյս**-ը իրոք **տար** + **ա** + **կոյս** բաղադրիչներից

¹⁶⁶ Օրինակը բերվում է ըստ «ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» (տես 4-րդ հատ., էջ 314):

¹⁶⁷ Տես. **Ս. Ամատունի**, Չայոց բառ ու բան, էջ 594, **Յր. Ածառեան**, Չայերեն գալառական բառարան, այլև՝ **Ստ. Մալխասեանց**, Չայերեն բացատրական բառարան:

¹⁶⁸ Տես **Ս. Խանգաղյանի** «Չայրենապատում» գրքում կատարված մեջբերումը (գիրք Ա, Երևան, 1981, էջ 581-582):

¹⁶⁹ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. 2-րդ, էջ 853:

¹⁷⁰ Տես **Յր. Ածառյան**, Չայերեն արմատական բառարան:

¹⁷¹ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. 2-րդ, էջ 853:

կազմված բառ է ընթանվում, Հր. Աճառյանը այդ չի ընդունել և առանց վարանելու **տարակոյս** բառը հայերենի տակավին չստուգաբանված արմատների շարքն է դասել¹⁷²:

Մեծ հայագետ-լեզվաբանը այդպես է վարվել, անշուշտ, ոչ պատահականորեն: Մինչև այսօր էլ հայագիտության մեջ այն կարծիքն է իշխում, թե իբր **տար** նախածանցը ևս «հին հունաբանների» ստեղծագործությունն է¹⁷³ և ավելի առաջ գոյություն ունենալ չէր կարող: Դա, սակայն, թյուր կարծիք է և հերքվում է հենց լեզվի իրական փաստերով: Դասական գրաբարում կամ մի շարք բառեր, ինչպես՝ **տարաշխարհիկ, տարադէմ, տարադիմիկ, տարակաց...**, **տարազիր, տարածամ, տարապայման, տարապարտ, տարապարհակ** և այլն, որոնցում **տար**-ը ոչ միայն «հեռու», այլև «զատ, բացի, դուրս, արտաքոյ, չ, ապ» նշանակությամբ է գործածվում¹⁷⁴: Այստեղից էլ հետևում է, որ **տար**-ը¹⁷⁵ ոչ թե «հետոսկեդարյան շրջանում» է իր «երկրորդ գործածությունը ավելի ընդարձակելով ու տարածելով» նախամասնիկ դարձել՝ «համապատասխան հն. ծօ կամ παρα մասնիկներին», այլ իբրև այդպիսին կերպավորվել է ավելի առաջ՝ վաղ շրջանի դասական գրաբարում: Ուրմեն և՛ **տարակոյս**-ը այդտեղ գործածված, իրոք **տար+ա+կոյս** բաղադրիչներից կազմված հնագույն բառ է, որ նախ՝ ֆիզիկական և ապա՝ նաև բարոյական այլազան (հմմտ. «1. ճանապարհի բաժանում այս և այն կողմ՝ տարբեր կողմեր: 2. Նման. Մտքում այս կամ այն կողմ տատանվելը, երկմտություն, վարանք, տատանում: 3. Միտքը մի բանի վրա գնալը, երկբայություն, կասկած: 4. Մութ կամ դժվար բան, որ մտատանջություն է պատճառում և կարիք ունի լուծման

¹⁷² Տե՛ս **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

¹⁷³ Տե՛ս **Հ. Մանանդյան**, Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928, էջ 111-114, **Հր. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, էջ 144 և նաև՝ **Ա. Մուրադյան**, Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Երևան, 1971, էջ 148:

¹⁷⁴ Տե՛ս **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան և հմմտ. **Ա. Մուրադյան**, նշվ. աշխ.-ը, էջ 148:

¹⁷⁵ Պետք է ասել, որ ինչպես ուրիշներն են նկատել, վաղ շրջանում **ածել** («ընդհանրապես մի բան շարժման մեջ դնել, տեղից տեղ տանել») բայի **ած** արմատից **տար**-նախածանցով է կազմվել նաև **տարած** բառը (հմմտ. **տարածք, տարածաբար, տարածական, տարածել, տարածոց, տարածութիւն, տարածումն, տարածուն** ևն), որ Հր. Աճառյանը, սակայն, ասուր. tarasu «փռել, մեկնել, տարածել» բառի հետ է կապում (տե՛ս **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան):

բացատրության: Թ 5. Այս ու այն կողմն ընկնելը, հոգս, մտատանջություն, տագնապ: Թ 6. Կարոտություն, նեղություն, աղքատություն: Թ 7. Թշվառություն, աղետ: Թ 8. Տարակուսող, վարանոտ») իմաստներ¹⁷⁶ է արտահայտել:

7. ՈՒՂԵՐԶ

Ուղերձ բառը, որ նախապես «ընծա, նվեր» է նշանակել, նույնպես դեռ չի ստուգաբանված: Նոր հայկազյան բառարանի մեկնությանը այն ծագում է **աղերսել**-ից, որ «կարող էր ստուգաբանել՝ **ուղի հերձել** կամ **հանդերձել** առ խնդրելին»¹⁷⁷, Ն. Մառի կարծիքով կապվում է հայ. **իղծ** և վրաց. **մղղելի** «քահանայ» բառերի հետ¹⁷⁸, իսկ Ստ. Մալխասյանցի ենթադրությամբ էլ սերում է «գուցե ***Ուղերթ**-ից, նվեր, պաշար, որ տալիս են մեկին ճանապարհ ձգելիս»¹⁷⁹:

Հակառակ դրանց, որոնցից և ոչ մեկն էլ, իհարկե, համոզիչ ու հիմնավոր չէ, պետք է ուղղակի ասել, որ **ուղերձ**-ը **ուղի** («ճանապարհ, ճամփա») և **արծ** (= բրբ. **արց**՝ «1. Հյուսվածքի կամ գործվածքի սկսվածքը: 2. Հյուսվածքի սկսվածքի ծայրերի թելերը, հյուսվածքից դուրս մնացած: 3. Չամբյուղի տակի բոլորակ հյուսվածքը»)՝¹⁸⁰ բառերի միացմամբ կազմված բարդ բառ է, որի իսկությունը լիապես հաստատվում է թե՛ հնչյունաբանորեն՝ հնչյունական կազմով, և թե՛ իմաստաբանորեն՝ արտահայտած նշանակությամբ:

ի + ա > ե հանրահայտ հնչյունափոխությամբ **ուղի** (< հ.-ե. սլ) բառի **ի** ձայնավորը ***արծ** (= բրբ. **արց**) բառի **ա**-ին միանալով՝ տվել է **ե** և առաջ բերել **ուղի + արծ > ուղերձ** ձևը, հմմտ. **ալի + ա + տր > ալետր** (> ալևոր), **բարի + ա + պաշտ > բարեպաշտ**, **տարի + ական > տարեկան**, **ոսկի + արարիչ > ոսկերիչ**, **տի + այր > տեյր > տեր** (տեր), **զի + արդ > զերդ** || **զերթ**, **մի + ակ > մեկ** || **մեկ, ուղի**

¹⁷⁶ Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան:

¹⁷⁷ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», 2-րդ հատ., էջ 544:

¹⁷⁸ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան և սկզբնաղբյուրը՝ **Н. Я. Марр**, Известия Академии наук, Петербург, 1914, էջ 363:

¹⁷⁹ Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, **Գ. Ջահուկյան**, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 293:

¹⁸⁰ Տե՛ս և հմմտ. **Ս. Ամատունի**, Հայոց բառ ու բան, էջ 74, **Հր. Աճառեան**, Հայերեն գաւառական բառարան, **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան, **Գ. Ջահուկյան**, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 293:

+ ա + կից > ուղեկից, ուղի + ա + դարձ > ուղեդարձ, վաղի + ամ - + ի > վաղեմի և այլն:

Այսպիսով՝ նման հնչյունափոխությունը միանգամայն օրինաչափական է և որևէ կասկած, հիարկե, չի հարուցում. ուստի լուսաբանության առավելապես կարոտ է մնում այն, թե ինչպես է որ **ուղի** և ***արձ** բառերը միանալով ու բարդություն կազմելով՝ «ընծա, նվեր» են նշանակել:

Ուղերձ բառը, որ, անշուշտ, իմաստապես ևս փոխվել է ժամանակի ընթացքում, այսօրվա իր նշանակություններում¹⁸¹ անգամ պահում է մի բան ուղի՝ ճանապարհ դնելու, ուղարկելու, հղելու կամ առաքելու իմաստը: Իսկ դա ինքնին վկայում է, որ **ուղերձ** (< ուղի + *արձ) բառը, կոպիտ ասած, նշանակել է **ուղու արձ**, այսինքն՝ ուղարկվող՝ առաքվող ինչ-որ նվեր կամ ընծա (հմմտ. **ուղեգիր, ուղեբաժին, ուղեգորգ, ուղեթուղթ, ուղեձող, ուղեպարկ, ուղետոմս, ուղերթ** և այլն), որ հավանաբար սկսվել ու շրջափակվել է հյուսվածքով և, անշուշտ, մի գեղեցիկ կերտվածք՝ պատկեր է հանդիսացել: Եթե դա այդպես է, ապա նշանակում է, որ անցյալում ***արձ** (բրբ. **արց**) բառը կարող էր ևս «հյուսվածքի սկզիբ՝ սկսվածք» իմաստն արտահայտել և, ինչպես ժամանակին Յր. Աճառյանն է նշել, համապատասխան գալ հունարենի *α'ρχε'ա* «սկսել» բառին¹⁸²:

Դարերի խորքից եկող և հնդեվրոպական ծագում ունեցող այդ ***արձ** (>**արց**) բառը¹⁸³, դժբախտաբար, անկախորեն չի ավանդվել գրաբարում, և դա իր հերթին նույնպես մթագնել, մշուշել է նրա դեմքը ոչ միայն **ուղերձ**, այլև **արծագանք, արծան, արուարծ, արուարծան, արուարծական, արուարծային** բաղադրյալ բառերում¹⁸⁴, որոնց մեջ նա անփոփոխ է մնացել և թերևս, իբրև ինքնուրույն արմատ, ավելի է զգալի:

¹⁸¹ Տե՛ս և հմմտ. **Ստ. Մալխասեանց**, Չայերեն բացատրական բառարան, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հատ. 4-րդ, էջ 389:

¹⁸² **Յր. Աճառեան**, Չայերեն գաւառական բառարան:

¹⁸³ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Չայ բարբառագիտության ներածություն, էջ 293:

¹⁸⁴ Տե՛ս **Յր. Աճառյան**, Չայերեն արմատական բառարան: Ի դեպ, պետք է ասել, որ այդ՝ մի ամբողջական ու դեռևս չստուգաբանված արմատ դիտված **արծան** բառը նույնպես բաղադրյալ **արծ-**ից և **ան** ածանցից կազմված բառ է:

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ¹⁸⁵

Հայերեն բառերի նախավոր ձևերը, ինչպես հայտնի է, բարբառներում ու խոսվածքներում ընդհանրապես կերպարանափոխվում են. ըստ որում, չկա որևէ բառ, որ բոլորի մեջ պահպանվի նույնությամբ կամ առանց հնչյունական ձևափոխության: Բառերի նախավոր ձևերի կրած բարբառային կերպարանափոխությունները, սակայն, ճիշտ միատեսակ բնույթ չեն ունենում. կան բազմաթիվ բառեր, որոնց կերպարանափոխված ձևերը, չիեռանալով նախավոր ձևերից, ծագումնաբանական սերտ կապով կապված են մնում դրանց հետ և անմիջապես էլ մատնում են իրենց ծագումը, հմնտ. **Բան** > **բան** (Ննխ. Պլ. Տփ.), **բ'ան** (Ալշ. Ախց. Ակն. Երև. Խրբ. Կր. Մշ. Ջղ. Սեբ. Սուչ), **բա'ն** (Ոզմ.), **բէն** (Մղր.), **պան** (Գոր., Մկ. Մրդ. Շմ. Սլմ. Վն.), **պէն** (Ղրբ.), **փան** (Ռ.), **փուն** (Տիգ.), **փա** (Ասլ.), **բ'օն**, **բ'ոն** (Ձթ.), **բ'օն** (Յճ.), **պօն** (Հմշ.), **բիւն** (Ազլ.)¹⁸⁶, **Սիրտ** > **սիրտ** (Ախց. Երև. Կր. Մրդ. Ջղ. Տփ.), **սիրդ** (Ալշ. Խրբ. Մշ. Ննխ. Պլ. Ռ. Սեբ. Սվեդ. Տիգ.), **սիրդ**, **սիր** (Ասլ.), **սիռտ** (Վն.), **սի'րդ** (Սչ.), **սերտ** (Գոր.), **սըերտ**, **սըռտ** (Ղրբ.), **սէռտ** (Մկ.), **սըրտ** (Հրվ. Շմ.), **սիյդ** (Յճ.), **սըյդ**, **սըրդ** (Ձթ.), **սառտ** (Ազլ.), **սիտ** (Սլմ.), **սիդ** (Հմշ.)¹⁸⁷ և այլն:

Բայց կան նաև բառեր, որոնք բարբառներում ու խոսվածքներում շատ մեծ, հաճախ նույնիսկ անճանաչելի փոփոխության են ենթարկվում և մի կողմից՝ այդպիսի կերպարանափոխության, մյուս կողմից՝ իմաստային տարբերակման հիման վրա ձեռք բերում ինքնուրույն բառույթային արժեք: Նման դեպքերում դրանց ու համապատասխան նախավոր ձևերի ծագումնաբանական կապը սովորաբար կան գոնե արտաքուստ մթազմած է լինում: Հայերենի բարբառներում ու խոսվածքներում այդ ճանապարհով առաջ են եկել բավական թվով բառեր, որոնց մի մասի ծագումը հայ լեզվաբանական գրականության մեջ կա՛մ տակավին չի պարզաբանվել, կա՛մ սխալ է մեկնաբանվել: Սույն հոդվածում էլ ահա փորձ ենք անում տալ հենց այդպիսի որոշ բառերի ծագման մեկնությունը:

¹⁸⁵ «Պատմա-բանասիրական հանդես», 1971, N 3, էջ 210-222, 1973, N 4, էջ 127-136, 1975, N 2, էջ 183-191, 1977, N 3, էջ 157-164, 1980, N 2, էջ 98-104, 1998, N 1-2, էջ 221-226:

¹⁸⁶ Տե՛ս **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

¹⁸⁷ Տե՛ս նույն տեղում:

1. ՄՐՑՆԵԼ, ՄՐՅՐԱՆ

Մրցնել || **մըրցընել** (= «փակել, ծածկել, կողպել»)։ թեև շատ սովորական բառ է Գորիսի բարբառում ու դրան մերձակից խոսվածքներում, բայց մինչև այսօր տեղ չի գտել ոչ մի (այդ թվում և որևէ գավառական) բառարանում։ Արդ՝ ինչի՞ց է ծագում **մրցնել** բայը, «ել» դերբայական մասնիկով կազմված փոխառյալ, թե՞ բուն հայկական բառ է։ Իր արտաքին՝ հնչյունական կազմով այն ունի հայաբնույթ բառերին հատուկ կառուցվածք և, անշուշտ, ո՛չ թե փոխառյալ ինչոր ձևից կազմված, այլ զուտ հայկական բառ է։ Պետք է ասել, որ իբրև այդպիսին, **մրցնել** բայն այլ բան չէ, քան **ամրացուցանել** (> ամրացնել) պատճառական բայի բարբառային մի արտահայտությունը, որ առաջ է եկել **ամրացուցանել** > **ամրացուցընել** > **ամրացցընել** > (**ամրացնել**) **ամըրցընել** > **մըրցընել** > **մրցնել** ընթացքով։ Պատճառական բայերի մեջ հնչյունների այդօրինակ անկումը հանրահայտ ու սովորական երևույթ է, հմմտ. **արմատացուցանել** - **արմատացնել**, **առաջացուցանել** - **առաջացնել**, **բազմացուցանել** - **բազմացնել**, **բարձրացուցանել** - **բարձրացնել**, **գիրացուցանել** - **գիրացնել**, այլև՝ **ամրացուցանել** - **ամրացնել** և այլն։ Վերջին օրինակը շատ պարզորոշ ցույց է տալիս, որ եթե արևելահայ աշխարհաբարը **ամրացուցանել** > **ամրացնել** ձևի առաջացման ժամանակ բավարարվել է **ու**, **ա** ձայնավորների և կրկնակ **ց**-երից մեկի անկումով, ապա Գորիսի բարբառը և այն խոսվածքները, որ **մրցնել** ունեն, նրանցից առաջ են անցել՝ սղելով նաև բառասկզբի ու բառամիջի **ա**-երը։ Դա լավագույնս հաստատվում է Նոր հայկազյան և Առձեռն բառարաններում նույն **ամրացուցանեն** բայի աշխարհաբարյան բացատրությունների շարքում տրված **ամըրցընել** ձևով¹⁸⁸, որ միայն բառասկզբի **ա**-ով է տարբերվում **մըրցընել** > **մրցնել** բառից։ Բայց այս դեպքում էլ եթե նկատի ունենանք, որ այդ բառը կամ բառաձևն ունեցող բարբառները կարող են հապավել նաև բառասկզբի **ա** ձայնավորը, ինչպես՝ **աղաչանք** > **ղա՛չանք**, **ածելի** > **ծի՛լի**, **ապսպարել** > **փըսպա՛րել**, **աղօթել** > **ղօ՛թել** և այլն, ապա միանգամայն պարզ կլինի հնչյունաբանորեն

¹⁸⁸ Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. 1, Վեներտիկ, 1836, էջ 76։ «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», Վեներտիկ, 1865, էջ 31։

ամրացուցանել բայից **մրցնել** ձևի առաջացման հնարավորությունն ու իսկությունը:

Հավասարապես նույնը պետք է ասել և **ամրացնել** (< ամրացուցանել) և **մրցնել** բայերի իմաստային կողմի մասին: **Մրցնել** բայի գործածությունները, ինչպես՝ «**Տիւռնը մրցողրալ էմ**» (= «Դուռը փակել էմ՝ ամրացրել էմ»), «**Քիլիդը մրցողրու**» (= «Կողպեքը կողպիր»), «**Դիրվաճան խէ՞ չէս մրցընում**» (= «Դարպասը ինչո՞ւ է չէս կողպում»), ցույց են տալիս, որ այն իմաստաբանորեն աղերսվում է **ամրացուցանել** (> ամրացնել) բայի «ամրոցընել», «ապահովցընել» իմաստներին¹⁸⁹ և ըստ էության արտահայտում է նույնպես մի բան ամրացնելու՝ ապահով դարձնելու նշանակությունը. որևէ բան կողպեքով թե մի այլ հարմարանքով կողպել-փակելը ինքնին այն ամրացնել՝ ապահով դարձնել, և, ընդհակառակը, մի բան ամրացնել-պնդացնել, այն կողպել՝ փակել է նշանակում, որ իրագործվում է առաջին գործողության միջոցով ու հետևանքով: Այսպիսով, **ամրացուցանել** (> ամրացնել) բայը բարբառում հնչյունական ձևափոխություն կրելուց զատ նաև իմաստային տարբերակման է ենթարկվել և իմաստի նեղացման ճանապարհով ստացել «փակել, կողպել» նշանակությունը: Այդ հիման վրա **մրցնել** բայածևը ըմբռնվել-գիտակցվել է իբրև **ամրացուցանել** (> ամրացնել) բայից անկախ ու ինքնուրույն բառույթային միավոր: Բնորոշ է և այն, որ այդ բայը իր անցյալ կատարյալի հիմքով (**մրցր-ի, -իր, -եց, -ինք, -իք, -ին**) բաղադրվել է **ան** ածանցի հետ և տվել **մրցրան**||**մրցողրան** («փականք, կողպեք») գոյական բառը, որը ի դեպ, կազմությամբ լիովին համընկնում է Գորիսի բարբառի որոշ գյուղական խոսվածքներում նույն եղանակով կազմված **կըրցըրան** («ճրագ, ընդհանրապես կրակ առաջ բերող բան») բառին¹⁹⁰:

¹⁸⁹ Տե՛ս նույն տեղում:

¹⁹⁰ Այդ բառը և համապատասխան **կըրցընել** < **կըցնել** պատճառական բայը ևս տեղ չեն գտել որևէ բառարանում. ծագման և նշանակության համար հմնտ. **նի կենալ** («1. Վառվել, բռնկվել: 2. Սաստիկ բարկանալ») և **նի կըցընել**>**նի կըրցընել** («1. Վառել: 2. Սաստիկ բարկացնել, զայրացնել»):

2. ԽՈՒՄԱԿ ԵՎ ԽՈՒՄԱԿ

Խոխա և **խոխա** բառը շատ սովորական ու տարածված բառ է Գորիսի և Ղարաբաղի բարբառներում: Նշանակում է «1. Երեխա, ծնողի չհասունացած որդի, զավակ» և «2. տղայամիտ, մանկամիտ, անմիտ, անփորձ», հմնտ. «Քանի՞ խոխա օնես» (= «Քանի՞ երեխա ունես»), «խոխօրցըտ հո՞ւնց էս պահում» (= «Երեխաներիդ ինչպե՞ս ես պահում»), «Քու մար մըն խոխա յա պիրալ» (= «Քո մայրը մի երեխա է ծնել») և «Տո՛ւ հալան խոխա յես, պան չես գյո՛ւղո՛ւմ» [= «Դու դեռ երեխա (= անմիտ, անփորձ) ես, բան չգիտես»], «խոխա-խոխա խօսում իլ» («Բա այդպիսի՞ անմիտ գործ կբռնեն») և այլն: Հր. Աճառյանը առաջինը ուշադրություն դարձնելով **խոխա** և **խոխա** բառի ծագմանը, դա համարել է փոխառություն և, բխեցնելով թուրքական խախա (xaxa=«տխմար, անմիտ») բառից¹⁹¹, ծագումնաբանական ոչ մի կապ չի տեսել նրա ուշ **երախայ** և **երեխայ** բառի միջև և, բնականաբար, նաև Արմատական բառարանում չի ներկայացրել իբրև վերջինիս բարբառային տարբերակներից մեկը: Այնինչ իրականում **խոխա** և **խոխա** բառը թե՛ իր ներքին՝ իմաստային և թե՛ իր արտաքին՝ հնչյունական կողմերով սերտորեն մերձենում է **երախայ** և **երեխայ** բառին, հենց սկզբից էլ ասենք, պարզապես դրա բարբառային մի այլատեսակն է: **երախայ** և **երեխայ** բառը, ինչպես հայերենի մեծարժեք բառարաններն են հավաստում¹⁹², արտահայտել է «1. Անկունք, քրիստոնեական մկրտություն դեռ չստացած, չմկրտված», «2. Նորածին կամ դեռ անխոս մանկիկ» և «3. Տղայամիտ, անմիտ» նշանակությունները¹⁹³, որոնցից էլ Հր. Աճառյանը հիմնականը առաջինն է համարում և միաժամանակ հաստատում, թե «երբ սովորություն դարձավ մկրտությունը կատարել մանուկ ժամանակ, **երախայ** բառն էլ ստացավ «մանկիկ» նշանակությունը, որից էլ հառաջացավ վերջապես «տղայամիտ»» նշանակությունը¹⁹⁴:

¹⁹¹ Տե՛ս Հր. Աճառյան, Թուրքերեն փոխառելի բառեր հայերենի մեջ, Մոսկվա-Վարշապատ, 1902, էջ 159-160:

¹⁹² Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. 1, էջ 666: «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», էջ 265: Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան:

¹⁹³ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան:

¹⁹⁴ Տե՛ս նույն տեղում:

Բացի առաջինից, որ ընդհանրապես մեռած է աշխարհաբարուն, մյուս նշանակություններով **երախայ||երեխայ** (> երախա||երեխա) բառը և դրա բարբառային ձևերը՝ **յերախա** (Ոգմ.), **երեխա** (Ալշ. Մշ. ՏՖ.), **արախա** (ՆՁղ. Յրվ. Շմ.), **ըրե'խա** (Երև.), **յարախա** (Ձղ.), **ըրա'խա** (Ղրբ.), **րա'խա** (Գոր.), **ըրխօ** (Ազլ.), **էլէխօ** (Յճ.)¹⁹⁵, ամբողջապես նույնական են: Բայց իր իմաստներով դրանց հետ նույնական է նաև **խոխա** || **խօխա** բառը, որ **ըրա'խա**, **րա'խա** ձևերին զուգընթաց, իբրև ավելի լայն գործածություն ունեցող ձև, հանդես է գալիս Գորիսի և Ղարաբաղի բարբառներում: Այդ բոլորի միջև դրսևորվող իմաստային ընդհանրությունն ու նույնությունն ակնբերևաբար ցույց են տալիս, որ **խոխա** || **խօխա** բառի հիմնական նշանակությունը **եղել է և է** «երեխա, մանկիկ» իմաստը, և հետևաբար, այն ոչ թե թուրքական **խախա** (xaxa «տխմար, անմիտ») այլ բուն հայերեն **երախայ||երեխայ** բառի հետ է կապվում ու սերում նրանից:

Արդ՝ ինչպիսի՞ հնչյունական ձևափոխությունների է ենթարկվել նախավոր **երախայ** || **երեխայ** բառը և **ըրա'խա**-ի կամ **րա'խա**-ի կողքին առաջ բերել դրանց համեմատությամբ շատ ավելի գործածական **խոխա** || **խօխա** ձևը: Պետք է ասել, որ դա **երախայ||երեխայ** բառի ավելի բարդ ու շատ ավելի հեռուն գնացած հընչյունական ձևափոխությունն է և, անշուշտ, առաջ է եկել **երախայ** || **երեխայ** > **ըրախա** || **ըրեխա** > **հըրախա** || **հրեխա** > **հըրօխա** > **հօխա** > **խօխա** (խոխա) ընթացքով. **ե** > **ը** ձայնափոխության և բառասկզբի **հ**-ի համար հմմտ. **երախ** > **ըռէխ**, **ըռռէխ** (Գոր.), երամակ > ըրամանգ || ըրամակ (Գոր.), **երանի** > **ըներակ**, հներակ (Ղրբ.), **երեսուն** > **ըրեսուն** (Ղրբ.) - ըրեսուն (Գոր.), **երևիլ** > **ըրեվալ** || յըրօվալ (Գոր.) - ըրվալ (Ղրբ.), **ընկեր** > հընգեր || հիմգեր (Գոր.) հընգեր (Ղրբ.), **ընտրել** - հընդըրել (Գոր.) - հընդրել (Ղրբ.), ամաչել - հըմանչել (Գոր. Ղրբ.) և այլն:

Այսբանից դժվար չէ նկատել, որ **երախայ** || **երեխայ** > **խոխա** || **խօխա** ձևափոխությունների շղթայի մեջ միջին օղակ են կազմում **ըրախա** || **ըրեխա** > **հըրախա** || **հրեխա** հավաստի ձևերը, որոնք **ր**-ին հաջորդող ձայնավորի (հավանաբար՝ **է**-ի, հմմտ. երեւիլ - յըրօ-

¹⁹⁵ Տե՛ս նույն տեղում:

վալ) փոփոխությամբ դարձել են հըրոխա, որտեղ մի կողմից հնչյունի (ըր-ի) անկում՝ **հըրոխա > հոխա**¹⁹⁶, մյուս կողմից ետընթաց լիակատար առնմանում (հոխա > խոխա) է տեղի ունեցել, և այդպիսով էլ ծնունդ է առել **խոխա || խոխա** ձևը: Դա յուրովի հաստատվում է նաև այն ձևաբանական իրողությունների ընդհանրությամբ, որ երևան են հանում **երախայ || երեխայ** և **խոխա || խոխա** բառերը իրար նկատմամբ՝ հոգնակի կազմության և հոլովման ժամանակ, հմմտ. **ըրախա || ըրխեք** և **խոխա - խոխեք** (հմմտ. նաև **տըղա - տըղեք**), **ըրխօցը** և **խոխօցը || խօրցը, ըրխօցան** և **խըխօրցան || խօրցան** և այլն¹⁹⁷: Այսքանն էլ, կարծում ենք, բավարար հիմք է տալիս ընդունելու, որ **խոխա || խոխա** ձևը իրոք տակավին անստույգ հայերեն **երախայ || երեխայ** բառի բարբառային արտահայտությունն է և ծագումնաբանական ոչ մի կապ չունի թուրքական **խախա** (xaxa)-ի հետ:

3. ԱՌՈՒ

Իր «Հայոց լեզվի պատմության» առաջին հատորում մեծանուն հայագետ Հր. Աճառյանը, խոսելով «այնպիսի բնիկ հայ բառերի» մասին, «որոնք պատահմամբ չեն մտել հին գրականության մեջ, հետո մոռացության մատնվել ընդհանուր հայ լեզվի կողմից պահվել միայն մի գավառի անկյունում», մի փոքրիկ բառացանկում հիշատակում է նաև «Առռէ Դրք. «հույժ, շատ»» բառը¹⁹⁸: Նա միաժամանակ մի կողմից նկատում է, որ դրա «հին ձևը պիտի լինի **ա՛ռռի**, ուր անշուշտ **ռ** կրկնված է սաստկության համար», մյուս կողմից էլ ենթադրյալ **առի** պարզ ձևը համեմատում է հուն. *ari, eri*, վեդ. *ari* սաստկություն ցույց տվող նախասանիկների հետ¹⁹⁹: Սույն բացատրությունն ամբողջապես չմերժելով հանդերձ՝ մենք, սակայն, ավելի շատ հակամետ ենք կարծելու, որ **առռի** բառը, որ հենց նույն **ա՛ռ-**

¹⁹⁶ Ի դեպ, կան բարբառախոսներ, որոնք այսօր էլ **խոխա**-ն **հոխա** են արտասանում (օրինակ՝ «Ա՛ հոխա, խելունք կա»):

¹⁹⁷ Գորիսի և Ղարաբաղի բարբառներում **խոխա - խոխա, ըրախա - ըրախա** ձևերից բացի գործածվում է նաև **խոխա - ըրախա** (= երեխաներ) կրկնավոր բարդությունը, որը իր հերթին նույնպես ազդանշում է նրանց միջև եղած ծագումնաբանական կապը:

¹⁹⁸ **Հր. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, հ. 1, Երևան, 1940, էջ 119:

¹⁹⁹ Տե՛ս նույն տեղում:

նի ձևով գործածական է Գորիսի, **ա՛ռռէ** ձևով՝ Ղարաբաղի **ա՛ռռէ** ձևով՝ Մեղրու բարբառներում, ծագում կամ սերում է **առնուլ** (> **առնել**) բայի **ա՛ռ** հրամայականից: Ի՞նչ ապացույցներ ունենք դրա համար. նախ պետք է ասել, որ համապատասխան բարբառներում գործածվող **ա՛ռռի** || **ա՛ռռէ** || **ա՛ռռէ** բառը ո՛չ ածական է և ո՛չ էլ մակբայ²⁰⁰, այլ զուտ եղանակավորիչ բառ է և նշանակում է «Յենց, իսկը, իբրև թե, կարծես թե, ի հեճուկս, դե»²⁰¹, օրինակ՝ «Ա՛ռռի տո՛ւ էլ մարթ էս տա՛մա՛լ, մե՛զ հավան չէս կենում» (= «Իբրև թե դու էլ մարդ ես դարձել, մեզ չես հավանում»), «Ա՛ռռի լափ լա՛վ ա՛» (= «Յենց չափազանց լավ է»), «Ա՛ռռի վեր ըտըհենց ա, ըսելու վե՛մ» (= «Իսկը որ այդպես է, ասելու եմ»), «Ա՛ռռի չիմամ մե՛ծն էմ յեր կալալ» (= «Ի հեճուկս՝ բոլորից մեծն եմ վերցրել»), «Ա՛ռռի լիհա՛ մե՛զ կըլխե՛մ ա տիմո՛ւմ» («Կարծես թե մեզ գլխին է դնում») և այլն:

Հիշյալ նշանակություններն ունեցող **ա՛ռռի** || **ա՛ռռէ** || **ա՛ռռէ** բառից բացի Գորիսի, Ղարաբաղի բարբառներում կա նաև **առռէ՛** ձևը, որ սովորաբար գործածվում է իբրև մեկին անիծելու, հանդիմանելու, գրող չափելու արտահայտություն, ինչպես՝ «**Առռէ՛** ա՛ խօխա, լա՛վ օր վօշ տեսնաս» (= «Գրողը քեզ տանի այ երեխա, լավ օր չտեսնես»), «**Առռէ՛** վեր ինձ ըսում չես» (= «Գրողը քեզ տանի, որ ինձ չես լսում»), «**Առռէ՛** լիվժթո՛ւնըս աշկերտ օնի» (= «Առռե՛ լավությունս աչքերդ բռնի») և այլն²⁰²: Դա գործածելիս խոսողը, պարտադիր կերպով մատները չռելով, ձեռքի ավիղ պարզում է դիմացինի երեսին և հաճախ էլ իմաստի սաստկացման նպատակով կրկնում նույն բառը, ինչպես՝ «**Առռէ՛- ա՛ռռ**, ընըթաթախ տա՛մնա՛ն տո՛ւ» (= արյունաթաթախ դառնաս դու), «**Առռէ՛- ա՛ռռ** մահրըմադբուն մընաս տո՛ւ» և այլն: Նույնպիսի նշանակությամբ ու կիրառությամբ Գորիսի բարբառում գործածական են նաև կայե՛ և կայե՛- կա (հմմտ. «Կայե՛ ա՛ խօխա, լա՛վ օրվօշ տեսնաս» - «Կայե՛- կա՛ ա՛ խօխա լա՛վ օր վօշ

²⁰⁰ Տես, օրինակ, **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան, որտեղ գլխատառը ներկայացված է այսպես՝ «ԱՌՌԻ, ած. բոլորովին, ամենա, էն... (գերադրական աստիճան կազմող բառ և մասնիկ)»: Հմմտ. **Հր. Աճառեան**, Հայերեն գաւառական բառարան:

²⁰¹ **Առռի** բառը բնավ չունի այն իմաստները, ինչ Հր. Աճառյանն ու Ստ. Մալխասյանցն են նշում:

²⁰² Գորիսի բարբառով բերված այս և ընդհանրապես բոլոր օրինակներում պահպանված են Քարաշեն գյուղի խոսվածքի առանձնահատկությունները:

տեսնաս»), քելէ՛ և քելէ՛- քել (հմմտ. «Քելէ՛ ա՛ աշկի կ'իրծօղ» - «Քելէ՛- քել, ա՛ աշկի կ'իրծօղ») արտահայտությունները, որոնցից մեկը սերուն է գրաբարյան **ուևիմ** անկանոն բայի եզակի հրամայականից, իսկ մյուսը՝ **քիլ** («Ձեռքի բթամատի և ցուցամատի ծայրերի միջև եղած լայն բացվածքը») գոյական բառից: Դրանք բոլորը, կապվելով հին սնոտիապաշտական մտածողության հետ, չարը մեկին ուղղելու-վերագրելու բառեր են և ոչ պատահականորեն արտահայտվում են հրամայական եղանակով: Եվ այնուհետև հրամայականի այդ յուրահատուկ ձևերից հատկապես **ա՛ռռ**-ը կամ **ա՛ռռէ**-ն գործ են ածվում նաև մի այլ՝ հորդորական, մեկին ջգրացնելու, մի բան ցույց տալու, բայց չտալու, մեկի նկատմամբ իր առավելությունը կամ հաղթանակը շեշտելու նշանակությամբ, «**Ա՛ռռ**, ալ հի՞նչա՛մ սերտորդ օգում», «Դէ **ա՛ռռ**, ըտըհէնց էմ անում է՛» և այլն: **Առնուլ** (> առնել) բայի հրամայականը, որ ուշագրավ փաստ է, հորդորական նշանակությամբ գործածվել է դեռևս գրաբարում. «**Առ, առէք, ած, բեր** և նման հրամայականները,- իբրև **հորդորական միջարկություն** (ընդգծումն իմն է - Ա. Մ.) կավելացվեն խոսքին սկիզբը: Առ արա՛ զոր ասենքս քեզ»²⁰³: Կարծում ենք, որ **առնուլ** (> առնել) բայի հրամայականի հենց այդպիսի կիրառությունն էլ ժամանակի ընթացքում առաջ է բերել բարբառային **ա՛ռռի** || **առռէ** || **ա՛ռռէ** բառը, որ տվյալ դեպքում իմաստապես նրանից տարբերվում է նշանակության սաստկությամբ: Եվ ոչ միայն այդ. վերջին պահանջով ու թելադրանքով երբեմնի հրամայականը ենթարկվել է միաժամանակ հնչյունական ձևափոխության. մի կողմից կրկնվել է **առ**-ի **ռ** հնչյունը, մյուս կողմից՝ **առ + ռ** > **առռ**-ը միահյուսվել է «է՛» միջարկությանը և առաջ բերել **ա՛ռռէ** (Դրբ.), **ա՛ռռէ** (Մեղրի) և **ա՛ռռի** (Գորիս) ձևերը: Եվ եթե դա այդպես է, ապա նշանակում է **առռի**-ն ոչ թե հին գրականության մեջ չմտած ու սոսկ «զավառի անկյունում» պահված, այլ հնդեվրոպական ծագում ունեցող²⁰⁴ **առնուլ** (> առնել) բայի եզակի հրամայականի բարբառային արտահայտությունն է, որը գրականության մեջ տեղ չի գտել զուտ գրական աստիճանի չբարձրանալու պատճառով:

²⁰³ **Վրթ. Չալըխեան**, Քերականութիւն հայկազեան լեզուի, Վիեննա, 1888, էջ 370:

²⁰⁴ Այդ մասին տես **Յր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

4. ՃՈՇ || ՃՈՇՔ ← → ՃՕՇԿ || ՃՕԺԿ

ճոշ || **ճօշք** ← **ճօշ** || **ճօշք** («բամբասանք, չարախոսություն») բառը, որի ծագումն առ այսօր անհայտ է²⁰⁵, գրավոր ավանդված է նախ Կեղծ Շապուհ Բագրատունու Պատմության մեջ («Լսել եմ թե Դերենիկտ, որ իմ փեսայ է գբուլիմար քոյրն ձեր սիրեր, չամաչէ՞ք դուք գայդ տալ առնել: Ամենայն հաւատի **ճաւշք էք**», էջ 67)²⁰⁶ և ապա միջին հայերենում, ինչպես՝ «ես զիմ աստուծոյ ստեղծածն իմ սիրել, **՛ւ ի ճոշք են առեր**» «Ձայս մէկս այլ կամիմ սիրել, թե հաւսար ի **ճօշք են առել**»²⁰⁷, «Կիմն որ դալատի մեղօք կամ **ընկնի և ճոշլի** բամբաս»²⁰⁸: Միջին հայերենը ունի նաև նույն արմատից կազմված **ճօշալ** (= «բամբասել, չարախոսել») բայը, օրինակ՝ «Ամէն ալանի հային, ես՝ գաղտուկ, ու դեռ **կու ճօշան**»²⁰⁹: Այդ երկու՝ **ճօշ** || **ճոշ** և **ճօշալ** || **ճոշալ** բառերը պահպանվել են հայերենի որոշ բարբառներում. այսպես՝ **ճօշք** թբիլիսիի բարբառում նշանակում է «բամբասանք», Մշո բարբառում՝ «1. վեճ, կռիվ, 2. խոսելու և բամբասելու նյութ»²¹⁰, իսկ **ճօշալ** || **ճոշալ** («բամբասել, չարախոսել») բայի համար մի շարք բարբառներ (Մուշ, Վան, Թբիլիսի, Սեբաստիա) ունեն **ճօշել** կամ **ճօշալ** բայաձևերը²¹¹: Ավելացնենք, որ **ճօշք** բառը պահում է նաև Գորիսի բարբառը՝ **ճօշկ** և **ճօժկ** ձևերով, որոնք նույնպես **բամբասանք** են նշանակում և սովորաբար գործածվում են **անել** բայի հետ իբրև բայական բարդության հարադիր, ինչպես՝ «Կընանիքը մէզ անա ճօժկըն էն անում» («Կանայք մեզանից բամբասում են»), «Լըսալ էն, վէր ինձ անա ճօշկըն էս ըրալ» («Լսել եմ, որ ինձնից բամբասել էս») և այլն:

Արդ՝ ինչի՞ց է ծագում այդ **ճօշ(ք)** || **ճոշ(ք)** > **ճօշկ** || **ճոշկ** բառը: Դա անվիճելիորեն առաջ է եկել կենդանի-խոսակցական լեզվի բո-

²⁰⁵ Տե՛ս նույն տեղում:

²⁰⁶ Այդ բառի գործածության և նշանակության բացատրության մասին տե՛ս Զր. Աճառեան, Գայերէն նոր բառեր իին մատենագրութեան մէջ, Վենետիկ, 1922, էջ 59-60:

²⁰⁷ Տե՛ս Մ. Աբեղյան, Գուսանական ժողովրդական խաղեր, Երևան, 1940, էջ 186 և 86:

²⁰⁸ Այդ օրինակը առնված է Ն. Բյուզանդացու միջին հայերենի տակավին անտիպ բառարանից:

²⁰⁹ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 109:

²¹⁰ Տե՛ս Զր. Աճառեան, Գայերէն գաւառական բառարան:

²¹¹ Տե՛ս Զր. Աճառյան, Գայերեն արմատական բառարան:

վում և, կարծում ենք, ծագումնաբանորեն կապվում է **ճօճել** բայի **ճօճ** («Շարժում, ճոճում») արմատի հետ, որը, իբրև ինքնուրույն բառ, գործածվել է գրաբարում: **ճօշ(ք) > ճոշ(ք)** հնչյունական ձևափոխության հավաստի ապացույցը տալիս է հենց միջին հայերենը, որտեղ **ճօճ** տալ («երերալ») բայը գործածված է նաև **ճօշ տալ** ձևով, ինչպես՝ «Մարմինդ քո ճոխ բուսեր չինար, **ճօշ կու տայ** քան զուռ դալար»²¹²: Իսկ սա ինքնին ցույց է տալիս, որ **ճօճ** բառում պարզապես սովորական տարնամություն է կատարվել, բառասկզբի **ճ**-ն ազդել է մյուս՝ բառավերջի **ճ**-ի վրա և հեռացնելով իրենից՝ դարձրել **շ**, որն էլ իր հերթին որոշ բարբառներում (Ղարաբաղ, Գորիս) փոխարինվել է համապատասխան **ժ** ձայնեղ հնչյունով: Ուրեմն՝ այս դեպքում կարևոր է և մնում է պարզել միայն, թե արդյոք կարո՞ղ էր **ճօշք** || **ճօժկ** («բամբասանք») բառը իմաստապես կապվել գրաբարյան **ճօճ(ք)** բառի հետ և սերել նրանից. հայտնի է, որ **ճօշ(ք)**-ը «շարժում, ճոճում» իմաստից բացի դեռևս գրաբարում նշանակել է նաև «կախօրրան, ճուղթի»։ Այս վերջին նշանակությամբ հատկապես այն գործածվում է մի շարք բարբառներում, հմնտ. **ճօճ** (Երև. Տփ.), **ճօճք** (Ախց., Երև.), **ճօճկ** (Ջղ.), **ճօշք** (Ննիս.), **ճօժկ** (Ղրբ.)²¹³, այլև **ճօշկ**, **ճօժկ** (Գոր.) «խուխեն ճօժկըն էն կապալ», «Ծառան ճօշկը քիցի, խուխեն նի կապի» և այլն: **ճօճ(ք)||ճոճք**-ը այսպիսով թե՛ իր «շարժում, ճոճում» և թե՛ «կախօրրան» նշանակություններով մի բան տարուբերելու, մեկ՝ դեպի մի կողմ, մեկ՝ դեպի մյուս կողմ տանել-բերելու գործողություն է ցույց տալիս: Ժողովրդական պատկերավոր մտածողությամբ էլ ահա շարժման այդպիսի գործողությունը դիտվել է իբրև բամբասելու գործողության (հմնտ. բան «ասում են» + բաս «ասում ես» = բամբասել, ասե «ասի» + կօսե «կասի» = ասեկօսե) նման մի բան. ուստի և **ճօճք** (> ճօշք > ճօշկ > ճօժկ)-ի մեջ ընկնել, նշանակել է բամբասանքի առարկա դառնալ, **ճօճք** (ճօշք > ճօշկ + ճօժկ)-ի մեջ առնել (ի ճօշք առնուլ), նշանակել է՝ բամբասել, վատաբանել կամ չարախոսել մեկին: Եվ հենց դրանով պետք է բացատրել, որ **ճօճք>ճօշք**-ը դեռևս միջին հայերենում գործածվել է **ընկնել** (անկանել), **առնուլ** (>առնել) բայերի հետ՝ արտահայտելով

²¹² Տե՛ս **Կ. Կոստանյանց**, Հովհաննես Թլկուրացին և յուր տաղերը, Թիֆլիս, 1892, էջ 25:

²¹³ Տե՛ս **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

տեղի նշանակությունը նրանց համար: Այդ տեսակետից շատ գեղեցիկ օրինակ է «Կինն որ դալատի մեղօք կամ **ընկնի ի ճօշ ' և ի բամբաս**» նախադասությունը, որտեղ **ճօշ** և **բամբաս** բառերը **ընկնել** բայի հետ հավասարապես գործածվել են իբրև հոմանիշներ. պատահական չպետք է համարել և այն, որ դրանցից նույն **անք** ածանցով կազմվել են **ճօշանք** (|| ճոշանք) և **բամբասանք** բառերը, որոնք դարձյալ միատեսակ նշանակություն են արտահայտում: Այսքանն էլ, կարծում ենք, հաստատում են **ճօշ** || **ճօշք** || **ճօժկ-ի՝ ճօժ(ք)-ից** իմաստային տարբերակմամբ ծագած լինելու իսկությունը և միաժամանակ ցույց տալիս, որ **բամբասանք** նշանակությունը զուտ փոխաբերական նշանակությունն է, որով և պայմանավորված՝ մի ձևից առաջ են եկել իրարից «բավական հեռացած» երկու առանձին ու տարբեր բառեր:

5. ՇԱԼՔ

Շալք («գոլորշի, շոգի») բարբառային բառ է, որ հիշատակված ենք տեսնում Ս. Ամատունու «Չայոց բառ ու բանում»²¹⁴, Յր. Աճառեանի «Չայերեն գալառական բառարանում»²¹⁵, Ստ. Մալխասեանցի «Չայերեն բացատրական բառարանում»²¹⁶ և որոշ բարբառների ուսումնասիրությունների բառացանկերում²¹⁷: Ս. Ամատունին այդ բառը հատուկ է համարում Ղարաբաղի բարբառին և Գանձակի, Լոռու խոսվածքներին, իսկ Յր. Աճառյանը՝ սոսկ Ղարաբաղի բարբառին. նորագույն տվյալները, սակայն, ցույց են տալիս, որ **շալք** բառը գործածական է ոչ միայն նշված, այլև Գորիսի, Մեղրու, Կարճանի, Կաքավաբերդի բարբառներում կամ խոսվածքներում, որոնց բոլորի մեջ էլ արտահայտում է նույն՝ «շոգի, գոլորշի» նշանակությունը:

Արդ՝ ի՞նչ ծագում ունի, այնուամենայնիվ, ոչ մեղ ոլորտներ ընդգրկող **շալք** բառը. կառուցվածքը ամենից առաջ ազդանշուն է, որ դա բաղադրյալ կամ պարզ ածանցավոր, այսինքն՝ **շալ** արմատից և **ք** ածանցից կազմված բառ է, հմմտ. **ծալ - ծալք, լայն > լեն - լենք**,

²¹⁴ Տե՛ս Ս. Ամատունի, Չայոց բառ ու բան, Կաղարչապատ, 1912, էջ 508-509:

²¹⁵ Տե՛ս Յր. Աճառյան, Չայերեն գալառական բառարան:

²¹⁶ Տե՛ս Ստ. Մալխասեանց, Չայերեն բացատրական բառարան:

²¹⁷ Տե՛ս, օրինակ, Յ. Մուրադյան, Կարճանի բարբառը, Երևան, 1960, էջ 225 և Կաքավաբերդի բարբառը, Երևան, 1967, էջ 200:

դիր > տիր - տիրք, յօն || յօնք - օնք, պատան - պատանք, ցիլ - ցկվք և այլն²¹⁸: Եվ ահա **շալ** արմատից և **ք** ածանցից (իմա՝ երբեմնի հոգնակիակերտ մասնիկից) կազմված այդ **շալք** բառը **իմաստապես խիստ մերձակից** է արդեն գրաբարում ավանդված **շաղ** բառին, որ արտահայտում է «Ցող, խոնավություն, շիթ. կաթիլ» նշանակությունները²¹⁹: Եվ կամ՝ ըստ Ստ. Մալխասեանցի «Հայերեն բացատրական բառարանի», **շաղ նշանակում է՝** առաջին՝ «Ջրի ամենամանր կաթիլներ, որոնք գոյանում են պաղած բույսերի և այլ առարկաների վրա՝ գոլորշիի խտանալուց, և որոնք աշնան ցրտերին երևում են եղյամի ձևով»²²⁰, և երկրորդ՝ **ցող**, այսինքն՝ «օդի գոլորշի, որ հեղուկանալով՝ ջրի մանր կաթիլների նման նստում է առավոտները այնպիսի առարկաների վրա, որոնք գիշերը, բաց երկնքի տակ և պայծառ եղանակին, ավելի են պաղում քան շրջապատող օդը, որի պատճառով նրանց շոշափող օդի գոլորշին էլ պաղելով ջրի է փոխարկվում. շաղ»²²¹: Այսպիսով, անժխտելի է **Շաղ** և **Շալք** բառերի արտահայտած իմաստների ընդհանրությունն ու սերտ կապը. եթե **շաղ**-ը գոլորշիից առաջացած ջրի սառը կաթիլներն են, որ սովորաբար վաղ առավոտյան նստում են խոտերի, արտերի, ծառերի, ծաղիկների և այլնի վրա, ապա **շալք**-ն էլ պարզապես դեռևս ջրի կաթիլների չփոխարկված կամ չսառեցված գոլորշին է. օրինակ՝ Գորիսի բարբառում՝ «**Լամվ քրթնընքալ ա, շարքը նե սըտան յեր ամ ինհում**» [= «Լավ քրտնել է, **շալքը** (= գոլորշին) վրայից բարձրանում է»], «**Արեվը տհուս ամ յեկալ, տափան շալքը պիցրամհում ամ**» [= «Արևը դուրս է եկել, գետնից **շալքը** (= «գոլորշին») բարձրանում է »] և այլն:

Իմաստային այդպիսի սերտ կապ ու ընդհանրություն ունենալով՝ **շաղ** և **շալք** (< շալ + ք) բառերն իրարից առանձնապես չեն տարբերվում նաև իրենց արտաքին՝ հնչյունական կառուցվածքով. նույն արմատը պարզապես մի դեպքում վերջանում է **ղ**-ով, իսկ մյուս դեպքում՝ **լ**-ով: Դա էլ, անշուշտ, հայերենի երկու **լ**-երի (նուրբ և հաստ

²¹⁸ Նկատելի է, որ Գորիսի բարբառում ածանցի վերածված երբեմնի **ք** հոգնակիակերտ մասնիկը, բառավերջում ձայնորդին հաջորդելով, սովորաբար **ք** է մնում, իսկ մնացած դեպքերում սովորաբար տալիս է **կ**, օրինակ՝ **փօխկ, խօսկ, մէտքը** և այլն:

²¹⁹ Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. 2, Վենետիկ, 1836, էջ 460, այլև՝ **Ֆր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

²²⁰ Տե՛ս **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

²²¹ Տե՛ս նույն տեղում:

կամ թանձր)²²² տարբեր արտահայտություններ են, որոնք և հաստատում են **շաղ** և **շալք** (< շալ + ք) բառերի ծագումնաբանական կապը, հմմտ. **այլ** - **աղաւաղել**, **նշոյլ** - **նշողել**, **փայլ** - **փաղփաղիլ**, **թոյլ** - **թողուլ**, **ջիլ** - **ջիղ**, **տիլ** (> բրբ. տէլ) - **տիղմ**, **ծիլ** - **ծեղ**, **այլև՝ շեղ** - **շիլ**, **աղ** - **անալի** և այլն: Այսբանից էլ հետևում է, որ **շալք**-ը ինչ-ինչ պատճառներով հին գրավոր աղբյուրներում չավանդված հնագույն բառ է, որը, հնչյունաբանորեն ու իմաստաբանորեն կապվելով **շաղ** արմատի հետ, թերևս հնարավորություն կընձեռի ուսումնասիրողներին պարզելու և դրա ծագումը, որը, ինչպես Աճառյանն է վկայում, դեռ անհայտ է²²³:

6. ՊԵԿ (< ԲԱԿ)

Բեկանել բայի՝ գրաբարում ինքնուրույնաբար գործածվող **բեկ** արմատի ստուգաբանությունը տալիս Հր. Աճառյանը Ղարաբաղի բարբառի **պեկ** բառը «1. փոս. 2. ավերված՝ փլած, ավերակ տեղ» նշանակություններով համարել է նրա բարբառային արտահայտությունը²²⁴: Դա նույնությամբ ու առանց վերապահության Արմատական բառարանից փոխ է առել Ստ. Մալխասյանցը, **ԲԵԿ** գլխաբառի տակ երկու մեռած իմաստներից («1. Կոտրած, ջարդած, խորտակված: 2. Փոխ. Կոտրված, ընկճված, խոնարհած, զղջացած») հետո նշելով «+ 3. գ. Փոս: 4. Ավերված տեղ, ավերակ» նշանակությունները²²⁵:

Իրականում, սակայն, Ղրբ. **պեկ** բառը, որ նշանակում է զուտ «Ավերված, քարուքանդ եղած տեղ» կամ «այն տունը, շինությունը, որ ավերակի է վերածվել», ծագումնաբանական ոչ մի կապ չունի **բեկանել** բայի **բեկ** արմատի հետ. այն ոչ թե դրա, այլ պարզապես «հարավային կովկասյան լեզուներից փոխառյալ» **բակ** («Տան շուրջը եղած գավիթը», «Ոչխարների փարախ») բառի²²⁶ բարբառային ձևերից մեկն է, որը, ի տարբերություն այլ բարբառների **բ'ակ** (Ախց.

²²² Այդ մասին տե՛ս Հր. Աճառյան, Հայկականք Զ, 36. Երբ Լ դարձավ Ղ (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1948, N 5):

²²³ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան:

²²⁴ Տե՛ս նույն տեղը:

²²⁵ Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան:

²²⁶ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան:

Կր.), **բագ** (ՊԼՏփ.), **բ'ագ** (ԱԼՂ. Խրբ. ՄՂ. Սեբ.), **բակ** (Ոգմ.), **պ'կ** (Մկ. Վն.), **պ'կ'** (Մրգ. ՍԼմ.), **բ'օգ** (Ձթ.), **փա** (Ասլ.) ձևերի²²⁷, ուղղակի որոշ չափով հեռացել է դրանց արտահայտած «տան բակ» նշանակությունից և ստացել «ավերված՝ քարուքանդ եղած տեղ, ավերակ» նշանակությունը: Նախորդ և այդ նշանակությունը, իհարկե, ոչ թե չինական պարսպով բաժանված, այլ սերտորեն կապված են իրար հետ: Ի՛նչ պիտի լիներ լեռնային վայրերում գտնվող, քերծերի մեջ և բարձրաբերձ տեղերում կառուցված տների շուրջը եղած բակը կամ գավիթը. անշուշտ, իբրև այդպիսին կարող էին լինել միայն ավերված ու քանդված կամ ավերակի վերածված տեղերը: Ղարաբաղի **պէկ** ձևի դիմաց Գորիսի բարբառն էլ ունի **պա՛նկ** ձևը, որը «ավերված տեղ, ավերակ» նշանակելուց բացի, երկրորդաբար արտահայտում է նաև «արտաքնոց» իմաստը²²⁸: Բայց տվյալ դեպքում կարևոր է ոչ այնքան այդ, որքան այն, որ երկու մերձակից բարբառներ երևան են հանում հնչյունափոխական ընդհանուր օրինաչափություններ. միավանկ բառերում խլացող ձայնեղին հաջորդող **ա** ձայնավորը Ղարաբաղի բարբառում տալիս է **է**, իսկ Գորիսի բարբառում **ա**, հմմտ. **բան** > **պէն** - **պա՛ն**, **բարձ** > **պէրց** - **պա՛րց**, **բաշ** > **պէշ** - **պա՛շ** և այլն: Գիշտ այդպես էլ ահա նախավոր **բակ** բառից առաջ են եկել Ղարաբաղի և Գորիսի բարբառների **պէկ** և **պա՛նկ** ձևերը: Ուրեմն և՛ **պէկ**-ը ո՛չ թե **բեկանել** բայի **բեկ** արմատի, այլ հենց **բակ** բառի բարբառային արտահայտությունն է և բնականաբար՝ առաջինից պիտի առնվի ու հատկացվի դրան:

7. ԴՈՒՆՉ

Դունչ («Քիթը, բերանը և ծնոտը միասին») բառը բացակայում է վաղ շրջանի գրաբարում. նրա առաջին գրավոր վկայությունները նկատված են Վ. Այգեկցու առակներում և Մաղաքիա Աբեղայի «Պատմութիւն վասն ազգին նետողաց» գրքում. «Եւ նայ ծոտեց ի

²²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 908:

²²⁸ Այդպիսի իմաստ ունի և Ազուլիսի բարբառի **բօկ** բառը, որ Հր. Աճառյանը իրավացիորեն դիտում է իբրև նախավոր **բակ** բառի բարբառային տարբերակ (տես **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան):

դուռնչն յաղուեսին»²²⁹, «Աջքերն նեղ իբրև զձագու, քիթն կարճ իբրև զկատու, **դուռնչն** մռուզ իբրև զշամ»²³⁰: Այնուհետև նույն **դուռնչ** բառը **դնչիկ** ձևի հետ միասին հանդիպում է Ն. Քուչակին վերագրվող տաղերում, ինչպես՝ «Դու ա՛ռ զհոգիս ու զմարմինս, և **դնչեդ** պագիկ մի ծախտ» (էջ 64), «Առնիր ու բերնիդ դնիր, ցանծայի **դուռնչդ** պագունի» (էջ 147), «Դնե **զդնչիկն** ու խմե՛, որ սրտին թաւլուքն անցնի» (էջ 92), «Իջնում ու պագիկ մ'առնում, **Ըզդընչին** ներքեւն ու վերեւ» (էջ 153) և այլն²³¹:

Այդ երկու **դուռնչ** և **դնչիկ** բառերից, սակայն, երկար ժամանակ միայն առաջինն է տեղ գտել բառարաններում. Նոր հայկազյան բառարանը հավելվածում ներկայացնում է իբրև գավառական, իսկ Գր. Փեշտամալճյանի և Առձեռն բառարաններն էլ իբրև գրաբարի համար ընդհանուր բառ: **Դուռնչ** բառը հայերենի տակավին չստուգաբանված բառերից է, որի ծագման մասին էլ, որ ավելի հետաքրքրական է, մի ենթադրություն անգամ չի արվել մինչև այսօր: Արմատական բառարանում Զր. Աճառյանը նշում է միայն այդ անստույգ բառի նշանակությունը, որոշ գրավոր վկայությունները, ինչպես նաև համապատասխան բարբառային ձևերը՝ **դուռնչ** (Տփ.), **դ'ուռնչ** (Ախց., Երև. Ջղ. Սչ. Սշ.), **տուռնչ** (Հմշ. Շմ.), **թուռնչ** (Հճ. Նմխ. Ռ.), **դ'ի՛նչ** (Ակն.), **տիւռնչ** (Ղրբ.), **դ'օնչ** (Ոզմ.), **դ'ընչ** (Ձթ.)²³²: Բարբառային այդպիսի լայն գործածությունները, ինչպես նաև գրավոր ուշ ավանդված լինելու հանգամանքը ցույց են տալիս, որ **դուռնչ** բառը ունի բարբառային ծագում և ամենայն հավանականությամբ առաջ է եկել **ընդ + ուռնչ** կապակցությունից՝ **ընդ** նախդրի առաջին երկու հնչյունների անկումով: Ի՞նչ հիմքեր կան նման ճանապարհով **դուռնչ** բառի առաջացումը հնարավոր ճանաչելու համար, նախ՝ պետք է ասել, որ որոշակի իմաստային կապ և ընդհանրություն են երևան հանում **ուռնչ** և **դուռնչ** բառերը միմյանց նկատմամբ. եթե **դուռնչ**-ը նշանակում է «Քիթ. ցռուկ, կնճիթ. և Կզակ. ծնօտ»²³³, «քիթը, բերանը և ծնոտը միա-

²²⁹ Տե՛ս Ն. Մառ, Ժողովածոյք Առակաց Վարդանայ, մասն Բ, Ս. Պետերբուրգ, 1894, էջ 62:

²³⁰ Տե՛ս «Մաղաքիայ Աբեղայի Պատմութիւն վասն ազգին նետողաց», Ս. Պետերբուրգ, 1870, էջ 6:

²³¹ Օրինակների համար տե՛ս Մ. Աբեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր:

²³² Տե՛ս Զր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան:

²³³ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. 2, էջ 1062:

սին»²³⁴ «1. Անասունների կզակ, ցռուկ, կնճիթ, քիթ-բերան»²³⁵: 2. Սարդկանց երեսի ներքին կեսը, քթից վար, քիթ ու պռունկ, քիթ-բերան», ապա **ունչ**-ն էլ նշանակում է «Ռնզուկը. հոտոտելիք. Քիթ և ստորին կողմն նորին, ուր արանց մազք բուսանին»²³⁶, «Քիթ, քթի ծայրը, քթի և բերանի միջև գտնված մասը, պեխ, բեղ»²³⁷, «1. Հոտառության գործարան, քիթ: 2. Քթի ներքևի բացվածքը, ռունգ, պունչ»²³⁸: Դժվար չէ նկատել, որ **դունչ**-ը **ունչ**-ից տարբերվում է պարզապես իր բառային լայն իմաստով: **Ունչ**-ը ցույց է տալիս քիթը և դրա ստորին կողմը, իսկ **դունճ**-ը՝ դրանց հետ միասին նաև բերանն ու ծնոտը: **Ունչ** բառը իմաստի լայնացմամբ այդպիսի նշանակություն է ձեռք բերել **ընդ** նախդրի շնորհիվ. այլ կերպ՝ **ընդ**-ը դրվելով հայցական հոլովածևի վրա՝ արտահայտել է «միջով», «տարածությանը» գաղափարը²³⁹ և նրա հետ միասին (ընդ + դունչընչով) նշանակել դեմքի այն մասը, որտեղ քիթը, բերանը և ծնոտն են գտնվում:

Եվ այնուհետև. հայտնի է, որ **ընդ** նախդիրը բազմաթիվ բառերի ու բառարմատների հետ բաղադրվելով՝ շատ դեպքերում եթե կորցրել է **դ** հնչյունը, ինչպես՝ **ընդք + ռնել > ընդքռնել > ընքռնել > ըմքռնել, ընդ + կեր > ընկեր, ընդ + կալել > ընկալել, ընդ + թեր > ընթեր, ընդ + տան + ի > ընտանի, ընդ + դիր > ընդիր > ընտիր** և այլն²⁴⁰, ապա բարբառներում ձայնավորով սկսվող այլևայլ բառերից առաջ պահպանել է սոսկ հենց այդ հնչյունը, հմմտ. **ընդ + այս > դայս > դես > տես, ընդ + այն > դայն > դեն > տեն, ընդ + որ > դոր > թորն, թռն, ընդ + իրեար գալ > դիրար գալ/դիրուր գալ > տուրուր կ'ալ > տուրուն կ'ալ** և այլն²⁴¹:

Ահա ճիշտ նույն ձևով **ընդ + ունչ** կապակցության մեջ, որի երբեմնի զոյության մասին է վկայում Ղ. Փարպեցու գործածած **ընդ + ունչս + արկու > ընդունչսարկու** [«1. Քիթուպոչ ընող՝ կախարդա-

²³⁴ **Յր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

²³⁵ **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

²³⁶ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. 2, էջ 551:

²³⁷ **Յր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

²³⁸ **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

²³⁹ Տե՛ս **Ա. Աբրահամյան**, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1958, էջ 267:

²⁴⁰ Դրանց մասին տե՛ս **Յր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

²⁴¹ Տե՛ս նույն տեղում:

կան շարժմունքով: 2. Քթինտակեն մրմռալով (խոսք)»] բառը²⁴², **ընդ**-ը նույնպես կորցրել է սկզբի **ըն** և առաջ բերել **դունչ** ձևը: Ի դեպ («Հողմն իմն տօթագին շնչեաց ի Կալկաթա, և ում եհաս՝ ուռոյց **զունչն ու զդունչն**») նախադասության²⁴³ մեջ **ունչ** և **դունչ** բառերի միատեղ գործածությունը, պատահական չլինելով, նույնպես ազդանշուն է նրանց ծագումնաբանական կապը (հմմտ. նաև՝ եռ ու զեռ, արդ ու զարդ, ապ ու զամպ և այլն): Վերջապես նշենք, որ **դունչ** բառը բարբառներում երևան է հանում այնպիսի հնչյունափոխական ձևափոխություններ, որպիսիք հատուկ են **ընդ** նախդրից և որևէ այլ արմատից նման ճանապարհով ծագած քարացած բարդությունների: Այս ամբողջն էլ հաստատուն հիմք են տալիս պնդելու, որ **դունչ**-ը հայերենի բարբառների բովում ձևավորված բառ է և, իրոք, առաջ է եկել **ընդ + ունչ** կապակցությունից՝ մեկընդմիջտ գրավելով վերջինի տեղը²⁴⁴, որի ծագումը ևս դեռ հայտնի չէ հայագիտությանը:

8. ԱՂԷՐ

Աղեր («տերտեր, քահանա») բառը, որ գործածվում է միայն Գորիսի և Ղարաբաղի բարբառներում²⁴⁵, լեզվաբանները բխեցնում են **ա՛** || **ա՛յ** ձայնարկության և **տէր** բառի կապակցությունից: Այսպես՝ Հր. Աճառյանը խոսելով անմիջական և նմանողական ձայնափոխությունների տեսակներից մեկի՝ համկցման կամ հավելման (agglutination) մասին, վկայաբերում է նաև **ա՛ղէր** «տերտեր, քահանա» (Ղարաբաղ) և **ա՛քիր** «քույր» (Երևան) բառերը, գտնում, որ դրանք առաջ են եկել «**ա** ձայնարկության կցումով»²⁴⁶: Որ «**ա՛յ քույր**» նշանակությամբ **ա՛քիր** (Երևան) **ա՛ք՞ուր** (Գորիս) ձևը իրոք առաջ է եկել հիշյալ եղանակով, անվիճելի է, որովհետև խոսքի մեջ այն բացառապես ու օրինաչափորեն **իբրև կոչական է գործածվում**, օրինակ՝

²⁴² Տե՛ս Ղ. Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1904, էջ 54, իսկ նշանակության համար՝ «Առձեռն բառարան Հայկազեան լեզուի», էջ 310:

²⁴³ Ղա բերվում է ըստ Ս. Ամատունու «Հայոց բառ ու բանի» (էջ 170):

²⁴⁴ Ունենալով բարբառային ծագում, ի տարբերություն մեկնաբանված մյուս բառերի, **դունչ**-ը դուրս է եկել բարբառների ոլորտներից և ձեռք բերել գրական բառի արժեք:

²⁴⁵ Երկու բարբառների որոշ խոսվածքներ, սակայն, չունեն այդ բառը. օրինակ՝ Գորիսի բարբառի Տաթևի խոսվածքում գործածվում է **տտտեր** (< տերտեր), իսկ Ղարաբաղի բարբառի առանձին խոսվածքներում՝ **դէր** (< տէր) ձևը:

²⁴⁶ Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 6, Երևան, 1971, էջ 715:

Ա՛րբուր, էտ պա՛նն ա՛, վէր տո՛ւ ասուն էս (= Ա՛յ քույր, դա բան է, որ դու ասուն ես), **Ա՛քո՛ւր**, մեզանա հի՞նչ էս օգուն (= Այ քույր, մեզանից ի՞նչ էս ուզուն) և այլն²⁴⁷:

Ադէր (որոշ խոսվածքներում՝ **անդէր**) բառը, սակայն, հակառակ դրան, հիշյալ երկու բարբառներում կոչականից բացի (օրինակ՝ «Ա՛դէր, ասըն ըն արթարնէն արքայութիւն ըն քինելու», Ջուռ. Նա. Ա., 79)²⁴⁸ գործածվում է նաև իբրև նախադասության ինքնուրույն անդամ, ունի իր եզակի ու հոգնակի ձևերը (հմմտ. ադէր-ընդէրնէ՛լադէրք), հոդ է առնում, հոլովվում է (հմմտ. ադէրը-ադօրը-ադօրը անավ. ադէրքը-ադօրցը-ադօրցը անավ և այլն): Մի երկու օրինակ ևս. Ադօրը տըղան՝ Սարքիսը, շատ խելունք մարթ ա իլա՛լ (= Տերտերի տղան՝ Սարգիսը շատ խելոք մարդ է եղել), Ադօրըն անա չիմունքն ալ վըխծալ էն (= Տերտերից բուրոն են վախեցել), Ըդըրնէն յէխծան տո՛ւս չէն կյա՛նն (= Տերտերները եկեղեցուց դուրս չեն գալիս), Ադէրը քնից ժան (Տերտերը գնաց եկեղեցի)²⁴⁹ և այլն: Փաստերը ցույց են տալիս, որ ծայնարկության ու գոյականի կցմամբ ձևերը, ինչպես՝ **արա** || **անրա՛** <**ադա** || **անդա՛** < թուրք. ՊժՊ («այ տղա») < պարսկ. ay gՊdā («ո՛վ մուրացիկ, ո՛վ աղքատ»)՝²⁵⁰, **այտա** (Մրդ.) < այ տղա²⁵¹ և այլն, անխտիր գործածվում են իբրև միայն կոչական, ոչ մի փոփոխության չեն ենթարկվում, երբեք կրկնակի ծայնարկություն չեն առնում և չեն էլ կարող առնել (չի կարելի, օրինակ, ասել՝ **ա՛ր արա, ա՛յ անդա՛** և այլն): Դա քանի որ ընդհանուր օրենք է, ապա միանգամայն հասկանալի է, որ **ա՛ր + դէր** կամ **ա՛յ + տէր** բառերից ծագած լինելու դեպքում **ադէր** (|| **անդէր**) բառը ևս պետք է նման պատկեր ունենար և չչեղվեր նշված օրինաչափությունից: Բայց ինչպես տեսանք, շեղումը բացարձակ է, որը և հիմք է տալիս ենթադրելու, որ այն այլ ծա-

²⁴⁷ Այս և մյուս դեպքերում օրինակները գերազանցապես բերվում են Գորիսի բարբառից:

²⁴⁸ Այդ օրինակի համար տե՛ս **Ս. Ամատունի**, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 625:

²⁴⁹ Սույն օրինակը բերվում է ըստ Հայկ. ՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմած բարբառային բառերի քարտադարանի: Այն վերաբերում է Ղարաբաղի բարբառին և վերցված է Ա. Բաբայանի բարբառագիտական անտիպ աշխատությունից:

²⁵⁰ Տե՛ս **Հր. Աճառեան**, Հայերեն գաւառական բառարան: Նույնի՝ Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 5, Երևան, 1965, էջ 406:

²⁵¹ Տե՛ս նշված վերջին աշխատության նույն էջը:

գում ունի: Մեր կարծիքով էլ ահա **ա՛ղէր** (|| անդեր) բառը ծագում է ոչ թե **ա՛ + դէր** կամ **ա՛յ + տէր**, այլ **հայր + տէր** կապակցությունից, որը ժամանակի ընթացքում **հայր տէր > հայր + տէր > հար տէր > հայ տէր > հա տէր > հա դէր > աղէր** (|| անդեր) փոփոխությունները կրելով՝ առաջին բաղադրիչից իր մեջ պահել է միայն **ա** ձայնը: Նշանակում է՝ այդ բառը ունեցել է **հայր + տէր** նախավոր ձևը, որը բաղադրիչներով ու նշանակությամբ համընկնում է շատ սովորական **տէր հայր** բառին, որը Ստ. Մալխասյանցի հաստատմամբ քահանային տրվող «հարգական անուն է»²⁵²: Այստեղից էլ միաժամանակ հետևում է, որ այդ հարգական անունը եթե այլուր՝ **տէր + հայր**, ապա Գորիսի ու Ղարաբաղի բարբառներում արտահայտվել է նույն բառերի հակառակ շարադասությամբ (այսօր էլ Գորիսի բարբառով խոսողները **աղէր** բառը գրական դարձնելու դեպքում գործածում են **հայր տէր** ձևը) և որի մեջ էլ, ինչպես ասացինք, առաջին բաղադրիչից միայն **ա** ձայնն է մնացել: Նման հնչյունական փոփոխության իսկության հավաստի ապացույցը ոչ պատահականորեն տալիս է Գորիսի բարբառը իր **աքէր** (= հորաքույր) բառով, որը, անշուշտ, առաջ է եկել **հորաքույր**-ից և ինչպես իմաստով, այնպես էլ ձևով տարբերվում է **աքո՛ւր** «այ քույր» (Գորիս), **աքիր** «այ քույր» (Երևան) կոչական բառից: Գալով **տ > դ** հնչյունափոխությամբ՝ պետք է ասել, որ դա ևս ոչ մի կասկած չի հարուցում, որովհետև թե՛ Գորիսի և թե՛ Ղարաբաղի բարբառներում կան դեպքեր, երբ հենց նույն **տէր** բառի **տ-ն դ** է դառնում, ինչպես՝ անտէր > **անդէր** (այլև՝ անդէր - ընդէրու), տէր > **դէր** (Հադրութ), այլև տողաշար > **դողաշար** և այլն:

9. ԱՌԻՍ

Առիս («ինձ մոտ, մոտս, ձեռքիս») բառը գործածական է Ղարաբաղի, Գորիսի, Մեղրու, Կարճևանի, Հադրութի բարբառներում: Հայ լեզվաբանական գրականության մեջ այդ բառի ծագման մասին հայտնըվել են երկու տարբեր կարծիքներ: Առավել հիմնավոր թվացող կարծիքը հայտնել է Հր. Աճառյանը, քանիցս այն կապելով գրաբարյան **առ** նախդրի և **ես** դերանվան հայցականի **իս** ձևի հետ (**առ + իս** = առիս): Այսպես՝ **առ** արմատ-նախդրի առիթով նա գրում է. «Ղգ. Ղրբ.

²⁵² Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան:

պահված է **առիս, առիտ, առին** «մոտս, մոտդ, մոտը» (քովս, քովդ, քովը) ձևերի մեջ, **սրանցից առաջինը գրաբարի ԱՌ ԻՍ ձևն է** (ընդգծումը իմն է - Ա. Ս.), որ միացած և մեկ բառ է կազմած, իբր թե ուղղականը լիներ **առի** և **ս** դիմորոշ հոդ. այսպես ըմբռնելուց հետո՝ շինված են մյուս ձևերը՝ **առիտ, առին**, հոգ. **առըներս, առըներտ, առըները** «մեզ մոտ, ձեզ մոտ, նրանց մոտ»²⁵³. Կամ՝ «**Առ** նախդիրը պահված է միայն Ղարաբաղի (նաև Ղազախի) և Մեղրու բարբառներում՝ տարօրինակ ձևերով, այն է. **առիս** «մոտս», **առիտ** «մոտդ», **առին** «մոտը» (քովս, քովդ, քովը): Սրանից առաջինը **առ իս** ձևն է, ուր նախդիր և դերանուն միանալով մի բառ են կազմել, իբրև թե ուղղականը լիներ **առի**՝ վրան ավելացրած **ս** դիմորոշ հոդը: Այսպես ըմբռնելուց հետո կազմվել են մյուս ձևերը՝ **առիտ, առին**, հոգ. **առըներս, առըներտ, առըները** «մեզ մոտ, ձեզ մոտ, նրանց մոտ» (Պլ. քովերնիս, քովերնիդ, քովերնին)»²⁵⁴: Սույն բացատրությունը նույնությամբ փոխանցվել է մի շարք բառագիտական ուսումնասիրությունների մեջ²⁵⁵ և ճանաչվել իբրև հիմնավոր տեսակետ:

Առիս բառի ծագումը, սակայն այլ կերպ է բացատրել Ստ. Մալխասյանցը, այն է. «**+ԱՌ-Ի**, նախդր. Մոտ, քով (գործ է ածվում միայն դիմորոշ հոդերով, առիս, ասին, մեր, ձեր, նրանց առին)»²⁵⁶: Ինչպես դժվար չէ նկատել, Ստ. Մալխասյանցը **առիս** բառը հանում է **առ** և **ի** նախդիրներից, դրանք միասին դիտում իբրև առանձին բառական միություն: Պետք է, սակայն, ասել, որ երկու երախտավոր հայագետ-լեզվաբանների մեկնաբանությունները հավասարապես հանդիչ չեն և չեն հաստատվում հավաստի փաստերով:

Առիս (այլև՝ **առիդ, առիտ, առին**) բառը չի սերում ոչ **առ** նախդրից ու **ես** դերանվան **իս** հայցականից և ոչ էլ **առ + ի** նախդիրների միասնությունն է կազմում, այլ պարզապես **առ** («մոտ, քով») նախդիր-բառի սովորական հոլովածն է, որի մեջ էլ **ի**-ն հոլովիչ է, իսկ **ս**-ն (ինչպես նաև՝ դ > տ, ն > ն)՝ ստացական հոդ: Հայտնի է, որ

²⁵³ **Յր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան: Ավելի վաղ նման կարծիք Յր. Աճառեանը հայտնել է իր «Հայերեն գաւառական բառարանում» (տե՛ս էջ 133):
²⁵⁴ **Յր. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 5, էջ 106:
²⁵⁵ Տես, օրինակ, **եդ. Աղայան**, Մեղրու բարբառը, Երևան, 1954, էջ 240: **Յ. Մուրադյան**, Կարճևանի բարբառը, Երևան, 1960, էջ 162, ուր կարծիքի հեղինակային նախապատվությունը ուրիշին է տրված: **Կ. Դավթյան**, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1961, էջ 206, 316 և այլն:
²⁵⁶ **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

աշխարհաբարուն և մանավանդ բարբառներուն տեղի իմաստ արտահայտող կապերը մեծ մասամբ հոլովվում են ենթարկվելով **ի** հոլովման²⁵⁷, ինչպես՝ մեջը – միջի(ն) - միջից - միջով, տակ(ը) – տակի(ն) - տակից - տակով, վրա – վրայի(ն) - վրայից - վրայով..., այլև՝ հետը - հետի(ն), կողքը - կողքի(ն) և այլն: Հայտնի է նաև, որ դրանք գործածվում են հոգնակի (հիմնականում ստացականության) նշանակությամբ և երկու դեպքերում էլ գերազանցապես ստացական հոդ են առնում, հմմտ. **տակիս - տակիտ - տակին, տըկըրներիս - տըկըրներիտ - տըկըրներին, յիրանիս - յիրանիտ - յիրանին, յիրկներիս - յիրկներիտ - յիրկներին, կըշտես - կըշտեդ - կըշտեն. կըշտըրներիս - կըշտըրներիտ - կըշտըրներին, այլև՝ նըհետիս - նըհետիտ - նըհետին. նըհըտըրներիս - նըհըտըրներիտ - նըհըտըրներին, կեցիս - կեցիտ - կեցին. կըրցըրներիս - կըրցըրներիտ - կըրցըրներին** և այլն²⁵⁸:

Առ («մոտ, քով») նախդիր-կապը ճիշտ և ճիշտ այդ խմբին պատկանող բառերից մեկն է, որը և տարածական հարաբերություն արտահայտելով համապատասխան բարբառներուն նրանց պես հոլովվում է, ստացական հոդ է առնում, ունի իր եզակի ու հոգնակի ձևերը: Բնորոշ է և այն, որ նա գործածվում է ոչ միայն տրական (Առիս մըն պան ալ կա վէչ = Ինձ մոտ ոչ մի բան չկա), այլև սեռական (Ընդրա առին պանը յեր կալ պեր = Նրա ձեռքի բանը վերցրու բեր), բացառական (Առաս խըլալ ա, տուվալ ուրան = Ինձնից խլել է, տվել իրեն) հոլովներով, կարող է գործածվել նաև առանց ստացական հոդի (Տանվկըս հո՞ւր առի յա՛ = Դանակս ո՞ւմ մոտ է), հանդես գալ իբրև փոխանուն սեռական (Առինըտ հի՞նչ ա՛ = Մոտդ եղածը ի՞նչ է): Հոգնակի ձևերն էլ աչքի են ընկնում մի հետաքրքրական հատկությամբ. ի տարբերություն մյուս բառերի՝ **առ** նախդիր-կապը հոգնակիում սովորաբար կորցնում է **-եր > էր** հոգնակիակերտ մասնիկի **ր** հնչյունը (ինչպես՝ **առըներս, ատըներտ, առըները**)՝ դրա **ռ** հնչյունին հաջորդելու պատճառով: Գորիսի բարբառում, սակայն, հավասարապես գործածվում են մեկ և մյուս ձևերը (հմմտ. **ըռըներիս || ըռըրներիս, ըռըներիտ || ըռըրներիտ, ըռըներին || ըռըրներին**), որոնք նշված իրողությունների հետ ցույց են տալիս ու հաստատում,

²⁵⁷ Այդ մասին տես մեր «Արդի հայերենի կապերը», Երևան, 1955, էջ 51-55:

²⁵⁸ Տես նույն տեղում:

որ բարբառային **առի** (տ, ն) բառը ոչ թե **առ + իս**-ի կամ **առ + ի-ի** համադրությունն է, այլ իրոք հանդիսանում է **առ**-ի հոլովական ձևն ու յուրատեսակ արտահայտությունը:

10. ԴՈՖ (<ԴՕՆ)

Բառիս գոյությունը առաջին անգամ նկատել է Յր. Աճառեանը, «Հայերեն գաւառական բառարանում» առանձին գլխաբառի տակ նշելով. «**Դոն** կըսվի միայն **մտքին դոնը ընկնել** Դզ Դրբ. խորասուզվել խոկմանց ու մտածմանց մեջ»²⁵⁹: Բառը ճիշտ այդպես է բացատրված նաև Ստ. Մալխասեանցի «Հայերեն բացատրական բառարանում» և Ա. Պողոսյանի «Հաղորթի բարբառը» աշխատության մեջ: Յմտ. «+ ԴՈՆ, գ. Գործածվում է միայն **մտքի դոնը** ընկնել դարձվածքում, Մտքերի մեջ խորասուզվել»²⁶⁰. «ԴՕՆ գործածական է միայն «նըթկէն դօնը ընգընէլ» «մտքի դոնը ընկնել, այսինքն, մտքի մեջ, մտքերի մեջ խորասուզվել կապակցության մեջ»²⁶¹:

Դոն (< դօն) բառը, հատուկ լինելով ոչ միայն Դարբաղի, Դազախի, այլև Գորիսի, Հաղորթի բարբառներին ու խոսվածքներին, արդարև գործածվում է միայն **մտքի(ն) դոնը ընկնել** դարձվածում և նշանակում է մտքերի մեջ խորասուզվել, մտորել:

Յր. Աճառեանը և Ստ. Մալխասյանցը այդ բառը ներկայացնում են իբրև ծագումով անհայտ բառ: Նույն կարծիքին է նաև Ա. Պողոսյանը՝ տալով հետևյալ հավելյալ բացատրությունը. «**Դօն** բառը, ինչպես կարծվում է, ոչ մի առնչություն չունի **տուն** բառի հետ, քանի որ **տուն** բառը բարբառում դառնում է **տօն**, բայց ոչ **դօն**: Այսպիսով՝ «մտքի դոնը ընկնել»՝ «մտքի տունն ընկնել» ձևով բացատրությունը մնում է չհիմնավորված»²⁶²: Այդ բացատրությունը, սակայն, չհիմնավորված է մնում ոչ թե **դոն** < **դօն** բառի իբրև թե **տուն** բառի հետ

²⁵⁹ Յր. Աճառեան, Հայերեն գաւառական բառարան:

²⁶⁰ Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան:

²⁶¹ Ա. Պողոսյան, Հաղորթի բարբառը, Երևան, 1965, էջ 42:

²⁶² Տե՛ս նույն տեղում, էջ 42-43: Իր աշխատության մեջ բարբառագետ Ա. Պողոսյանը հայտնում է, թե «Ակադ. Ն. Մառը don > դօն բառը մեկնում է հունարեն poseydoon տերմինով...» (էջ 42): Մատնացույց արված «К вопросу об историческом происхождении яфетического термина» աշխատության մեջ (տե՛ս «Избранные работы», т. III, էջ 158), սակայն, Ն. Մառի նշած don բառը ոչ մի կապ չունի քննարկվող **դոն** բառի հետ:

ծագումնաբանորեն չկապվելու, այլ պարզապես գիտականորեն հիմնավորված չլինելու պատճառով: Իրականում, ինչպես փաստերն են ցույց տալիս, միայն մի դարձվածում գործածվող **դոն < դօն** բառը ծագում է **տուն** բառից և հանդիսանում է դրա բարբառային մի արտահայտությունը, որը և **լավագույնս հաստատվում է թե՛ հընչյունաբանորեն և թե՛ իմաստաբանորեն**: Անշուշտ, ճիշտ է, որ **տուն** բառը առանձնակի գործածությամբ իր **տ** սկզբնահնչյունը իրոք անփոփոխ է պահում հիշյալ բարբառներում, որոնք և միայն գիտեն **տօն** (< տուն) ձևը: Բայց տվյալ դեպքում չպետք է մոռանալ, որ նրանցում, իբրև ընդհանուր օրենք, **տ**-ն, հաջորդելով **ն** ձայնորդին, ձայնեղանում-դառնում է **դ**, հմմտ. տէր-անտէր > **անդէր** || **անդար**, ոտն > **վօնդը** || **վէնդը** (> **վօննը** || **վէննը**), մատն > **մանդը** (> **մաննը**)²⁶³, սանտր > **սանդըր** (Ղարաբաղի բարբառում նաև **սանդի՛ր**), ընտրել > **հընդըրէլ** և այլն:

Նույն այդ օրենքով էլ ահա **մտքին տունը** (ընկնել) > **մըտքէն տօնը** || **մըթքէն տօնը** (**ինգ՛ինէլ** || **ինգ՛էլ**, Ղարաբաղի բարբառում՝ **ընգնէլ** || **ընգէլ**) բառակապակցության մեջ **տ**-ն, հաջորդելով ու հարակցվելով **ն** ձայնորդին, տվել է **դ** և առաջ բերել **մըտքէն դօնը** || **մըթքէն դօնը**: Այլ կերպ ասած՝ **տուն** բառը **դօն** է դարձել և ձևավորվել իբրև այդպիսին միայն **մտքին տունը** (> **մըտքէն տօնը** || **մըտկէն տօնը** || **մըթքէն տօնը** > **մըտքէն դօնը** || **մըտկէն դօնը** || **մըթքէն դօնը**) բառաշղթայի մեջ, որով էլ պայմանավորված՝ նա հանդես է գալիս բացառապես համապատասխան՝ **մըտքէն դօնը** || **մըտկէն դօնը** || **մըթքէն դօնը ընգ՛էլ** || **ընգ՛ինէլ** || **ընգնէլ** դարձվածում և չունի որևէ այլ գործածություն: Իմաստային-իմաստաբանական տեսակետից ևս **տուն** և **դօն** (< տուն) բառերը առանձնապես չեն տարբերվում իրարից, և շատ ակնհայտ է համընդհանուր ու սերտ կապը նրանց միջև. **լավագույն** ապացույցը տալիս է գրաբարը, որտեղ **տուն** բառը, գործածվելով խորհուրդ («1. մտածություն, տրամաբանություն, 2. դիտավորություն, միտք, իմաստ, 3. խելք») ²⁶⁴ բառի սեռականի հետ, կազմել է **տուն խորհրդոյ** դարձվածը, որ նշանակել է

²⁶³ **վօննը** || **վէննը** (< **վօնդը** || **վէնդը**) և **մաննը** (< մանդը) ձևերում առաջընթաց լիակատար առնմանմամբ **դ**-ն դարձել է **ն**:

²⁶⁴ Այդ բառի նշանակությունների մասին տես «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. 1, Վենետիկ, 1836, էջ 976: «Առձեռն բառարան Հայկազեան լեզուի», Վենետիկ, 1865, էջ 790, **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

խորհրդարան, այսինքն՝ նաև «Ընդունարան խորհրդոյ մարդոյն, միտք սիրտ», «Մարդուս խորհելու տեղը, միտք, սիրտ», «Մարդու խորհելու՝ մտածելու տեղը, ուղեղ կամ միտք»²⁶⁵ և այլն:

Միանգամայն պարզ է, որ որոշ բարբառներում (Ղարաբաղ, Գորիս, Հադրուֆ, Ղազախ) նույն այդ իմաստը պահպանվելով՝ արտահայտվում է **մտքի տուն** (=տուն մտաց) > մտքին տունը > **մըտքէն դօնը** || **մըտկէն դօնը** || **մըթքէն դօնը** բառակապակցությամբ, որն **ընկնել** (< անկանել) բայի հետ կարող էր նշանակել և իսկապես նշանակում է **մտքերի մեջ խորասուզվել, մտորել**:

11. ԹՕՐ(Ղ) || ԹՕՌ(Ն)

ԹՕՐ(Ը) || ԹՕՌ(Ն) բառը գործածվում է Ղարաբաղի, Գորիսի, Հադրուֆի, Հավարիկի բարբառներում և նշանակում է **ո՞ւր, դեպի ո՞ւր, դեպի ո՞ր կողմը, որտե՞ղ**, ինչպես՝ Ղրբ.՝ Այ մարթ քօրնըս կօրալ («Խաթաբալա», 1910, N 6, էջ 65), Գոր.՝ Թօրըն ալ քի՛նա՛, ա՛լա՛ տօն ա կա՛լու, Հադր.՝ Հո՛ւվ ա հըրըընողը թա թօրնս քիս, Հավար.՝ Դու հո՞վ ըս, հի՞նչ մարդ ըս, թօ՞ր ըս գնալըն (Գ. Տեր-Պողոսյան, Հավարիկի բարբառ, ԲՀԳԻ, Գիրք Ա և Բ, 1921):

Թօր(ը) || թօռ(ն) բառը, որ բառարաններում ներկայացվում է միայն **թռն** ձևով²⁶⁶, Հր. Աճառյանը հանում է գրաբարյան **ընդ + որ** ձևից, գտնելով, որ «**ընդ** նախդիրը կորցնելով իր ռնգային մասը», տվել է «Ջղ.՝ **դոր** «ինչպես» (< ընդ որ), Վն.՝ դո՞ր «ո՞ւր», Սրղ.՝ **դո՞ւիր** «ո՞ւր», Ջղ.՝ **դո՞րն** և նախածայնը **ռ**-ի պատճառով թավանալով՝ Ղրբ. **թօռն** «ուր»²⁶⁷: Ոմանք էլ այն բխեցնում են **դեպի + ուր** բառերից՝ ասելով, թե «**դեպի** բառի **դ**-ն միանալով **ուր** բառի հետ, դարձել է **թ**. **դեպի ուր** > **թուր** > **թօռ**»²⁶⁸: Պետք է, սակայն, ասել, որ երկու մեկնությունները ստույգ չեն բացատրում **թօրը** || **թօռն** բառի ծագումը և թերի են. իրականում այդ բառը ոչ թե **ընդ + որ** կամ **դեպի + ուր**, այլ ծագում է **ընդ + ուր** բառակապակցությունից, որը **ընդ + ուր** > **դ + ուր** > **տ + հօր** > **տհօր** փոփոխությամբ դարձել է **թօր(ը) || թօռ(ն)**:

²⁶⁵ Տե՛ս համապատասխանաբար վերոհիշյալ բառարանները, էջ 979, 392, 294:

²⁶⁶ Տե՛ս, օրինակ, **Հր. Աճառյան**, Հայերեն գաւառական բառարան: Նույնի՝ Հայերեն արմատական բառարան: **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

²⁶⁷ **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

²⁶⁸ **Ա. Պողոսյան**, Հադրուֆի բարբառը, էջ 42:

Առաջին հերթին դա հաստատում է **ընդ** և **ուր** բառերին հատուկ հնչյունափոխական օրենքներով: **Թօր(ը)** || **թօռ(ն)** բառն ունեցող բարբառներում **որ** բառի նախածայնը **օ** չի դառնում, իսկ **ուր** բառին, ընդհակառակը, ամենուր տալիս է **օ**՝ սկզբից ստանալով **հ** հնչյունը, հմմտ. որ > **վեր, վար, վար, վուեր, վօր** և ուր > **հօր**²⁶⁹: Երկրորդ՝ նախավոր **դ**-ն «թավանում», այսինքն՝ **թ** է դառնում ոչ միայն **ռ**-ի, այլև **ր**-ի առկայության դեպքում (հմմտ. **թօրը** և **թօռն**): Ուրեմն և **դ**-ն ոչ թե **ռ**-ի պատճառով թավանում, այլ **տ**-ի վերածվելուց հետո (հմմտ. ընդ + այն > դայն > դէն > տէն, ընդ + այս > դայս > դէս > տէս, ընդ + այդ > դայդ > դէդ > տէտ, ընդ + իրեար > դիրար > դիրուր > տիրոր > տորոր > տորորն և այլն) միանալով ուր**հօր** բառի **հ**-ին (տ + հ)՝ միանգամայն օրինաչափորեն **թ** է տալիս (հմմտ. նաև սեպուհական > սեպիական > սեփական): Այսպիսով՝ **թօր(ը)** || **թօռ(ն)** մի քարացած բարդություն է, որի «երկրորդ» բաղադրիչը եթե **ուր** (> **հօր**)-ն է, ապա առաջինն էլ միայն գրաբարյան **ընդ** նախդիրն է և ոչ թե **դէպի** նախդրություն կապը: Եվ իսկապես. հիշյալ բարբառներում դէպի > **դիբի** || **բիդի** || **դիբա** || **դիբա՛** || **դըբա՛** || **բըդա՛** բառը ձայնավորով սկսվող բառերի հետ բաղադրվելիս (դիբետ < դէպի + ետ, դիբիրգ՛ադէն < դէպի իրիկու < երեկոյ + դէն) երբեք հապավման չի ենթարկվում և իր **դ** նախածայնը անփոփոխ է պահում **բ** ձայնեղի պատճառով: Այստեղից հետևում է, որ տվյալ դեպքում «առաջին բաղադրիչը իրոք չի սերում դէպի(> դիբի || բիդի || դիբա՛ || բիդա՛ || դըբա՛ || բըդա՛) կապից, որը, ի դեպ, այդպիսին կարող է և գործածվել նույն **թօր(ը)** || **թօռ(ն)** բառի հետ, օրինակ՝ Դիբա՛ թօ՞րը քի՛նամն (= Դեպի ո՞ւր գնամ), Բիդա՛ թօ՞ռն էս յէշուն (= Դեպի ո՞ւր ես նայում):»:

Գալով այլ բարբառների՝ Ջղ. **դոր** «ինչպես, Վն. **դո՞ր**, Մրղ.՝ **դո՞ւիր** «ուր», Երև.՝ **դվո՞րը** «դէպի ո՞ւր, ո՞ր կողմը» ձևերին՝ բացառված չենք համարում դրանց ծագումը **ընդ + որ**-ից, որի դիմաց, սակայն, Գորիսի ու վերջինիս մերձակից բարբառները ունեն **ընդօ՞ր** || **ինդօ՞ր**²⁷⁰ («դրա համար, այդ պատճառով»), ինչպես Ինդօ՞ր էս շուշուտ քի՛նումն-կամ (= Դրա համա՞ր ես շուտ-շուտ գնում-գալիս), Ընդօ՞ր ա մեծ-մեծ խօսում (= Այդ պատճառով է մեծ-մեծ խոսում):

²⁶⁹ Տես **Կ. Դավթյան**, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, էջ 447, 451:

²⁷⁰ Ավելի շատ հակամետ ենք կարծելու, որ դա ոչ թե ծագում է **ընդ + որ**-ից, այլ գրաբարյան **ընդէ՞ր** («Ինչո՞ւ, ի՞նչ պատճառով») բառն է:

12. ԽՆՁԱՂԻ || ԽՆՁԱՂԱ

Հատուկ է միայն Գորիսի և Ղարաբաղի բարբառներին, որոնցից առաջինում գործածվում է **խընձաղի** (մի քանի գյուղերում՝ **խընձաղա**), իսկ երկրորդում սոսկ **խընձաղա** ձևով, որը և «ուտելի բույս մ՝ է», կամ «անորոշ տեսակի ուտելի բույս (°)» նշանակությամբ տեղ է գտել որոշ բառարաններում²⁷¹: Այնինչ երկու բարբառներում էլ **խընձաղի** || **խընձաղա**-ն ոչ թե ինչ-որ կամ անորոշ տեսակի ուտելի բույս է, այլ **ձնձաղիկ** անունով հայտնի ծաղիկն է, որ երևում է ծյունը հավվելուն պես և գարնան ավետաբեր է համարվում²⁷²: Ծագումով տակավին անհայտ **խընձաղի** || **խընձաղա** բառը այսպիսով լիովին հանրակնում է **ձնձաղիկ** (< ձիննաձաղիկ) բառին և դրանից տարբերվում է սոսկ իր արտաքին՝ հնչյունական կողմով: Բայց պետք է ասել, որ այդ տարբերությունը բոլորովին էլ արմատական չէ, և նրանց միջև հնչյունական-կառուցվածքային տեսակետից ևս որոշակի կապ ու ընդհանրություն գոյություն ունի: Իսկ դա նույնպես ցույց է տալիս, որ **խընձաղի** և **խընձաղա** ձևերը առաջ են եկել **ժնձաղիկ** բառից, անշուշտ, **ձնձաղիկ** > **ժընձաղիկ** > **ժընձաղիկ** > **ժընձաղի** > **խընձաղի** > **խընձաղի** || **խընձաղա** հնչյունափոխական ճանապարհով և հանդիսանում են հենց նրա բարբառային յուրատեսակ արտահայտությունները:

Ձնձաղիկ բառը ծագումով բարբառային բառ է, բայց գործածվում է, ասենք, ոչ միայն Ախալցխայի, Խարբերդի, Մշո բարբառներում²⁷³, այլև գրական լեզվում: Նույն այդ բառը ամենայն հավանականությամբ այլ բարբառներից (կամ գուցե գրական լեզվից) անցել է Գորիսի ու Ղարաբաղի բարբառներին, կրելով այդտեղ դրանց հատուկ հնչյունական փոփոխություններ. միանգամայն օրինաչափորեն բառասկզբի **ձ**-ն տվել է **ժ** (հմմտ. ձաւար > ծաւաւր, ձէթ > ծէթ, ձին > ժին, ձնեռ > ժընէռնը), բարդության երկրորդ բաղադրիչի **ժ**-ն **Ն** ձայնորդին հաջորդելով՝ տվել է **ձ** (հմմտ. ածուխ > անձուղ), ինչպես նաև բառամիջի **ղ**-ի ազդեցությամբ բառասկզբի **ժ** (< **ձ**)-ն փոխարինվել է **խ**-ով, բառավերջի **կ**-ն հապավվել է (հմմտ. աղջիկ >

²⁷¹ Տե՛ս **Հր. Աճառեան**, Հայերէն գաւառական բառարան: **Ստ. Մալխասեանց**, Հայերէն բացատրական բառարան:

²⁷² Տե՛ս **Ստ. Մալխասեանց**, Հայերէն բացատրական բառարան:

²⁷³ Տե՛ս **Հր. Աճառեան**, Հայերէն գաւառական բառարան:

ախճի) և վերջապես՝ ձայնավորների ներդաշնակության օրենքով բառավերջի **ի**-ն Ղարաբաղի բարբառում ու Գորիսի որոշ գյուղական խոսվածքներում²⁷⁴ դարձել է **ա**: Այսպիսով՝ **ձնծաղիկ** բառը կրել է իրոք մի շարք հնչյունական ձևափոխություններ, որոնցից մեկն էլ Ստ. Մալխասեանցի «Հայերեն բացատրական բառարանում» հենց **ձնծաղիկ** նշանակող **խնծաղի** բառն է²⁷⁵, որը իր հերթին ևս հաստատում է նրանից **խընծաղի** || **խընծաղա** ձևերի ծագումը:

13. ԿՁՆԿԵԼ

Կզնվել («բարկանալ, զայրանալ») բայը սովորական բառ է Ղարաբաղի (կըզնվիլ), Ագուլիսի (կըզնվիլ), Գորիսի (կըզնըվել), Մեղրու (կըզնըվել), Կարճևանի (կընըվիլ) բարբառներում, ինչպես նաև Իջևանի խոսվածքում, որտեղ, սակայն, գործածվում է **կընըզվել** ձևով: Սույն բայի **կզնվ** (կըզնըվ) հիմքով կազմված կան նաև այլ բառեր, հմմտ. **կըզնըվցընել** («բարկացնել, զայրացնել»), **կըզնըվօց** («բարկություն, զայրույթ»), **կըզնըվուկ** («բարկացկոտ, զայրացկոտ») և այլն²⁷⁶: Բայց դրանցից առավել գործածականը, իհարկե, **կզնվել** բայն է, որին անդրադառնալով՝ մեծ հայագետ Հր. Աճառյանը գրում է. «Ղրբ. կան նաև **կզնուիլ** «բարկանալ», որ թվի թե ծագում է հին **գազանիլ** «բարկանալ, կատաղիլ» ձևից... համեմատությունը ուղիղ է թվում, որովհետև հին հյ. **գ** > Ղրբ. **կ**. բայց սրան հակառակ է դուրս գալիս Ագլ. **կզնվիլ**, որ ցույց է տալիս, թե բառիս նախաձայնը հին հայերենի մեջ էլ **կ** էր, ըստ որում Ագուլիսի բարբառում, հյ. **գ**, **կ** մնում են **գ**, **կ**. այս պատճառով ահա ճիշտ չէ **կզնուիլ** < **գազանիլ** համեմատությունը, և պետք է գտնել մի ուրիշ նախաձև՝ **կ** նախաձայնով. իրոք էլ կա Երև. Իգդ. **կծնուիլ** «բարկանալ», ձևացած **կայծ** (իբրև «տաքանալ»), որ տալիս է Ղրբ. և Աֆլ. կանոնավորապես **կզնվիլ**»²⁷⁷:

Հիմնավորապես մերժելով **գազանիլ**-ից **կզնվիլ**-ի ծագած լինելու հնարավորությունը՝ Հր. Աճառյանը այն բաղդատում է Երև. Իգդ

²⁷⁴ Գորիսի բարբառի խոնածախ (խնածախ) գյուղի խոսվածքում, օրինակ, գործածվում է **խընծաղա** ձևը:

²⁷⁵ Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան:

²⁷⁶ Դրանց մասին տե՛ս, օրինակ, Հր. Աճառեան, Հայերեն գալառական բառարան:

²⁷⁷ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան:

կզնուիլ («բարկանալ») ձևի հետև և դիտում իբրև դրա մի տարատեսակը. ըստ որում նա նկատի է առնում **կ** նախածայնի անփոփոխ մնալու օրենքը և համապատասխան բարբառներում լռելյայն նախավոր ձև ճանաչում կայծ > **կայծ + ան + ալ** > **կայծանալ** > **կէծանալ** > **կըծանալ** («տաքանալ») բայի ենթադրյալ կրավորականը, որից էլ իբրև թե ծագել է **կըզնըվել** || **կըզնըվիլ** բայը: Բայց հենց միայն Գորիսի բարբառի ընծեռած համապատասխան փաստերը բացառում են նրանց ծագումնաբանական կապը և ցույց տալիս, որ **կըզնըվել**-ը բոլորովին էլ **կայծանալ** > **կէծանալ** > **կըծանալ** (> **կըծանվել** > **կըծնվել**) բայից չի ծագում. նախ՝ նույն բարբառը ունի **կըծանալ** (< **կէծանալ** < կայծ + ան + ալ) անկախ բայը, որը զործածվում է թե՛ բուն «տաքանալ, շիկանալ» (օրինակ՝ Արկաթը կըրակին յիրան կըծանում ա = Երկաթը կրակի վրա տաքանում է) և թե՛ երկրորդական-փոխաբերական «բարկանալ, ցայրանալ» (օրինակ՝ Մըն պան չէմ ասում, դաստին կըծանում ա = Մի բան չեմ ասում, իսկույն բարկանում է) նշանակությամբ²⁷⁸: Երկրորդ՝ ի տարբերություն «ե» խոնարհման բայերի, որոնց ներգործականներից ազատորեն կրավորականներ են կազմվում (հմմտ. լըսել - լըսվել, կ'իրել - կ'իրվել, ճըխըլխօրել - ճըխըլխօրվել և այլն), Գորիսի, ինչպես նաև դրան մերձակից բարբառներում **ա** խոնարհման բայերից կրավորականներ են կազմվում շատ հազվադեպ, այն էլ՝ ներկայի հիմքով²⁷⁹, օրինակ՝ **պաննալ** (< բանալ) - **պանվալ**, **մուռանալ** (< մոռանալ) - **մուռանվալ**, **հրսկանալ** (< հասկանալ) - **հրսկանվալ**, այլև՝ **քինալ** (< գնալ) - **քինվալ** և այլն: Նույն այդ օրենքով **կըծանալ** (< կէծանալ < կայծանալ) բայի կրավորականը պետք է լիներ **կըծանվալ** և ոչ թե **կըծանվել** || **կըծանվիլ**, որից կարողանար առաջ գալ **կըզնըվել** (< կըծնըվել < կըծանվել) ձևը, ուր, ի դեպ, չհիմնավորված է մնում նաև շեշտակիր **ա**-ի անկումը: Այսպիսով՝ կզնվել (= **կըզնվել** || **կըզնըվիլ**) բայի ծագումը **կայծ** բառից ձևացած կրավորական բայից հանելը հանդիչ չէ և հավաստի տվյալներով չի հաստատվում:

Արդ, ինչի՞ց է ծագում **կըզնըվել** || **կըզնըվիլ** բառը. մեր կարծիքով ու հանդամանք դա ծագում է գրաբարի **կիզանել** բայի **կիզանիլ**

²⁷⁸ Այդ բայի ընդհանուր նշանակությունների մասին տե՛ս **Յր. Ածառեան**, Հայերեն գալառական բառարան:

²⁷⁹ Տե՛ս, օրինակ, **Յր. Ածառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 4, Բ գիրք, էջ 332: **Ա. Պողոսյան**, Հաղորուքի բարբառը, էջ 207:

(«այրվել, բորբոքվել») կրավորական ձևից, որ պահպանվել է մի խումբ՝ իրար սահմանամերձ բարբառներում՝ չկրելով հնչյունական ու իմաստային առանձնապես մեծ փոփոխություններ: Եվ իսկապես. նախ **ե** խոնարհման պատկանող եռավանկ բայերի **ան** ածանցի **ա**-ի սղունը, ինչպես նաև առաջին փակ վանկի **ի** > **ը** հնչյունափոխական երևույթը խորթ չեն **կզնվել** բայը գործածող բարբառներին (հմմտ. մտանել > **մըղնել** || **մըննել**, հասանել > **հըսնել**, դիմանալ > **տիմանալ** || **տըմանալ**, տիրանալ > **տըրանալ**, մեռանիլ > **մեռնել** || **մեռնիլ**, ծիծաղել > **ծիծաղել** || **ծըծաղել** և այլն). երկրորդ՝ հայտնի է, որ հայոց լեզվում ու մի շարք բարբառներում հատկապես «գայրանալ, բարկանալ» նշանակությունը արտահայտվում է «այրվել, վառվել» գործողության գաղափարով: Գրաբարում **այրել** բայի «արմատից **զ** սաստկականով կազմված է **գայրանալ**՝ որ նախապես նշանակում էր «տաքանալ, բորբոքիլ» ... փոխաբերաբար՝ «սաստիկ բարկանալ, կատաղիլ» (իբր կրակ կտրել). 2. «սիրտը մորմոքիլ» Ագր. 3. «գորանալ՝ սաստկանալ (ցաւը)»²⁸⁰: Գորիսի, Ղարաբաղի և այլ բարբառներում «գայրանալ, բարկանալ» նշանակությունը մի շարք դեպքերում ևս արտահայտվում է «տաքանալու, այրվելու, վառվելու» գաղափար ցույց տվող բառերով, հմմտ. **կըծանալ** < կեծանալ < կայծանալ («1. տաքանալ, սկսել շիկանալ. 2. բարկանալ, գայրանալ»), **նի կենալ** («1. վառվել, այրվել, 2. բարկանալ, գայրանալ»), **նի կըցընել** || **նի կըրցընել** («1. վառել, այրել, 2. բարկացնել, գայրացնել»), **տաքանալ** (բուն նշանակությունից բացի նշանակում է նաև «գրգռվել, բարկանալ»), այլև **կրակ դառնալ** (Պլ.) «սաստիկ բարկանալ», **կրակ կտրել** (Ախք. Եր. Պլ.) «սաստիկ բարկանալ», **բորբոք ըլլալ** (Մն.) «գայրանալ, սաստիկ բարկանալ» և այլն²⁸¹:

Կասկած չիմել չի կարող, որ նման բայերի խմբին է պատկանում նաև գրաբարյան **կիզանիլ** բայը, որը, միանգամայն օրինաչափորեն հնչյունական փոփոխություններ (հմմտ. «կիզանիլ > կիզանուիլ > կիզնուիլ > կըզնըվի || կըզնվել») կրելով հիշյալ բառարաններում, պահպանվել է միայն երկրորդական-փոխաբերական՝ «բարկանալ, գայրանալ» նշանակությամբ: Գրաբարում «այրվել, բորբոքվել» բուն

²⁸⁰ Տե՛ս **Յր. Աճառյան**, Գայերեն արմատական բառարան:

²⁸¹ Այդ բառերի գործածության վայրերի ու նշանակությունների մասին տե՛ս **Յր. Աճառեան**, Գայերեն գաւառական բառարան:

հմաստից գատ **կիզանիլ** բայը նշանակել է նաև **մորմորվել** («կիզանելին ցաւակցութեամբ յառ նա խօսելն» այսինքն «մորմորքէին»)՝²⁸², որի հիման վրա հատկապես կարող էր առաջ գալ և իրոք առաջ է եկել «բարկանալ, զայրանալ» իմաստը: Նշենք նաև, որ **կրզնրվել** > **կրզնրվիլ** բայից կրավորական հիմքով կազմվել է **կրզնրվոցնէլ** պատճառականը, որպիսի երևույթը նույնպես խորթ չէ Գորիսի ու դրան մերձակից բարբառներին, հմնտ. մաշվել - **մըշվոցնէլ**, շաղվել **շողվոցնէլ** և այլն: Դետաքրքրական է և այն, որ ծագելով գրաբարյան **կիզանիլ** բայից՝ **կզնվել** (= կրզվելվել || կրզնրվիլ) ձևը Իջևանի խոսվածքում դրափոխության օրենքով դարձել է **կընըզվել**: Անորոշ է մնում երև. Իգդ. բարբառների Զր. Աճառյանի հիշատակած **կծնուիլ** («բարկանալ») ձևը. եթե դա չի սերում **կայծ** բառից ձևացած համապատասխան կրավորական բայից, ապա ամենայն հավանականությամբ ծագումնաբանորեն նույնպես կապվում է նույն գրաբարյան **կիզանիլ** բայի հետ:

14. ԳՈՒԼԻ

Գուլի բառը **հնդկահավի** և **հնդկահավին** կամ **հնդկահավերին** կանչելու (իմա ձայնարկության) նշանակությամբ գործածվում է Գորիսի բարբառի որոշ գյուղական (Խոնաձախ, Վաղատուր, Խոզնավար, Քարաշեն և այլն) խոսվածքներում, ինչպես՝ Մեր հըրվանին գուլին հո՞ւ վա մօրթալ (= Մեր հարևանի հնդկահավը ո՞վ է մորթել), Ընդըրանց գուլէքը մերան շատ էն (= Նրանց հնդկահավերը մերից շատ են), Գուլօցը գուլի-գուլի ըրա, թօղ կան (= Զնդկահավերին գուլի-գուլի արա, թող գան) և այլն:

Հիշյալ երկու նշանակությամբ որոշ խոսվածքներում գործածվող **գուլի** բառը մինչև այսօր որևէ բառարան չի մտել, և հայտնի չէ, թե ինչ ծագում ունի: Բայց գոյականից բացի [հմնտ. գուլի - գուլու(ն)..., գուլէք(ը) - գուլօցը...] իբրև նաև ձայնարկություն գործածվելու հանգամանքը ցույց է տալիս, որ այն առաջ է եկել բնածայնության հիման վրա և այլ բան չէ, քան հենց հնդկահավի հանած ձայնի

²⁸² Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. 2, էջ 1095:

պատկերումը, հմնտ. **բու** > պէվ || պՓվ, **կկու** > կուկու, **յոպոպ** > պուպու || հուպուպ և այլն²⁸³:

Իսկ դա, իհարկե, ինչ-որ արատակարգ կամ անսովոր բան չէ. ինչպես այլ բարբառներում, այնպես էլ Գորիսի բարբառում քիչ չեն այն բառերը, որոնք, բնածայնական ծագում ունենալով, ձայնարկությունից՝ որևէ կենդանու, թռչունի կանչելու ձայնից բացի գոյականի նշանակություն են արտահայտում՝ անվանելով համապատասխան ձայնով հատկանշվող կենդանին կամ թռչունը: Այսպես՝ **բիծի** նշանակում է և՛ հորթ, կով (մանկ.), և՛ հորթին, կովին կանչելու ձայն, **գիդի** նշանակում է և՛ գառ, ոչխար (մանկ.), և՛ գառին, ոչխարին կանչելու ձայն, **փիսի** նշանակում է և՛ կատու (մանկ.), և՛ կատվին կանչելու ձայն և այլն:

Եիշտ այդպես էլ **գուլի** և՛ հնդկահավ թռչունը, և՛ նրան կանչելու ձայնն է նշանակում, որը ևս ոչ պատահականորեն առավելապես կրկնությամբ է գործածվում, հմնտ. **գուլի** և **գուլի - գուլի** և **բիծի - բիծի**, **գիդի** և **գիդի - գիդի**, **փիսի** և **փիսի - փիսի** և այլն:

Այսպիսով՝ միանգամայն ակներև է **գուլի** բառի բնածայնական ծագումը. մնում է միայն ավելացնել, որ համեմատաբար ուշ առաջ եկած բառ է և գալիս է այն ժամանակվանից, երբ հնդկահավը մուտք է գործել Ջանգեզուր, որի խոսվածքների մեծ մասում էլ ոչ թե **գուլի**, այլ ռուսերենից փոխառյալ **հինդուշկա** || **հոնդուշկա** < индюшка բառն է գործածվում²⁸⁴:

15. ԽՈՁՆԸՅԱՏ

Առաջին անգամ արձանագրվել է Ս. Ամատունու «Յայոց բառ ու բանում» իբրև բայական հարադրական բարդության հարադիր. «**խոզնըհատ ըլնել** Գնծկ. Բաբանց. Ժուռ ու մուռ մեռնել: Մարկոսը խոզնըհատ էլավ: Խոզնըհատ ըլես»²⁸⁵: Յմնտ. «**խոզնըհատ լինել**,

²⁸³ Բնածայնական ծագում ունեցող բառերի մասին տես **Յր. Ածառյան**, Յայոց լեզվի պատմություն, 1 մաս, Երևան, 1940, էջ 113-116:

²⁸⁴ Գորիսի բարբառի մի քանի խոսվածքներում, սակայն, երկու ձևերն էլ հավասարապես գործածական են:

²⁸⁵ **Ս. Ամատունի**, Յայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 293:

Շնչասպառ լինել, երիտասարդ հասակում մեռնել, ժուռ ու մուռ մեռնել: **խոզնըհատ ըլնես** (անեծք)»²⁸⁶:

Այդ բառը, որի ծագումն ու կազմությունը մինչև օրս չի բացատրված, Գանձակի (Կիրովաբադի) խոսվածքից բացի լայնորեն գործածվում է նաև բարբառախոս այլ վայրերում: **խոռզնըհատ ինիլ || խըռզնըհատ ինել || խըռզնըհատ ըլնել**, այլև **խըռզնըհատ տաճնալ || տըռնալ** հարադրական բարդությունը իբրև անեծք՝ «ծաղիկ հասակում տանջանքների ենթարկվելով՝ մեռնել, ոչնչանալ, տանջամահ լինել» նշանակությամբ նույնպես շատ գործածական է Ղարաբադի բարբառի Մարտակերտի, Շահունյանի, Խանլարի, Շամխորի, Դաշքեսանի²⁸⁷, ինչպես նաև Շամշադինի և Իջևանի խոսվածքներում: Բայց տվյալ դեպքում շատ կարևոր է այն, որ դրանց մեծ մասում **խոզնըհատ** (= խըռզնըհատ) **անորոշ** բառը ոչ միայն **լինել** (> ինել || ինի || ըրնել) կամ **դառնալ** (> տաճնալ || տաճնալ || տըռնալ), այլև **անել** (< առնել) բայի հետ է հարադրվում, կազմելով **խոզնըհատ անել** ներգործական սեռի բայը, որ և նշանակում է «մեկին տանջահար անելով սպանել՝ մեռցնել, տանջանքների ենթարկելով շնչակտուր անել, տանջահար անել», ինչպես՝ **խըռզնըհատ անեմ քրեզ** (Գանձակ):

Այդ վերջին ձևն իսկ ըստ էության բացում է **խոզնըհատ** (= խըռզնըհատ) բառի ծագման գաղտնիքը. ինչպես արտաքին կառուցվածքն է ցույց տալիս, նրա ոչ թե արմատական, այլ երկու արմատից կազմված բարդ բառ է, որի երկրորդ բաղադրիչը՝ **հատ**-ը, անշուշտ, գրաբարյան **հատանել** («կտրել, կտրտել...») բայի արմատն է²⁸⁸ և, իբրև այդպիսին, արդի լեզվական զգացողությամբ որքան պարզ ու հասկանալի, այնքան առաջին՝ «խըռզնը» բաղադրիչը «նութ» ու առեղծվածային է մեզ համար:

Արդ՝ հարց է ծագում. ի՞նչ կարող է եղած ու նշանակած լինել այդ բառը, որ **հատ**-ի հետ բաղադրվելով՝ տվել է **խոզքըհատ** (= խըռզնըհատ) բարդությունը, որն էլ իր հերթին բացառապես **անել** և **լի-**

²⁸⁶ **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

²⁸⁷ Այդ վայրերում հիշյալ ձևերի գործածության մասին մեզ տեղյակ է պահել Ղարաբադի բարբառի քաջ գիտակ Կ. Ս. Դավթյանը, որին և մեր շնորհակալությունն ենք հայտնում:

²⁸⁸ Գորիսի բարբառը այդ **հատ** արմատով ունի **հատ անել** («ծաղկել՝ բուրդը բարակ ճիպոտով ծեծել-փափկացնել»), օրինակ՝ «Պուրթը հատ անել»:

նել կամ **դառնալ** բայերի հետ գործածվելով՝ համապատասխանաբար «տանջահար անելով սպանել՝ մեռցնել, տանջամահ անել» կամ «տանջահար լինելով մեռնել-ոչնչանալ, տանջամահ լինել» նշանակություններն է արտահայտում:

Պետք է ուղղակի ասել, որ դա պարսկերենից փոխառյալ **խարազան** միջին պրոս. *xarāzan, զնդ. *xarāzana (< xar «էշ» az, «քշել, վարել») բառն է²⁸⁹, որն իր բուն «էշ քշող, էշ քշելու գործիք» իմաստից բացի նշանակել է նաև «մտրակ», որով անցյալում, անշուշտ, ծեծել, գանահարել, տանջել, տանջամահ են արել «հանցավորներին»: Եվ ոչ պատահականորեն հենց հին հայերենում՝ գրաբարում, **խարազանել** (< խարազան + ել) նշանակել է «խարազանաւ հարկանել, ձաղկել» («*թքեալ, ապտակեալ, խարազանեալ. նիս. Ես»), իսկ **խարազանահալած առնել** (= խարազանահալած անել)՝ «խարազանաւ հալածել» («**խարազանահալած** զանբանսն և զվաճառօղսն ի հօրդ տանէն լսե, **արարեալ**. Սկեռ. աղ») ²⁹⁰:

Ուրեմն՝ **խռզնրհատ** (< խըռզնրհատ < խարազանահատ) բարդության մեջ իմաստաբանական տեսակետից **լիապես արդարացվում է** պատժի գործիք նշանակող **խարազան** բառի գործածությունը: Ինչ վերաբերում է արտաքին՝ հնչյունական կողմին, պետք է ասել, որ այդ տեսակետից ևս նա ոչնչով չի հակասում այն բարբառների ու խոսվածքների հնչյունափոխական օրենքներին, որոնք բայական հարադրության մեջ պահում ու գործածում են **խռզնրհատ** (= խըռզնրհատ) < խարազանահատ բառը: Նրանցում, ինչպես հայտնի է, **ա-**ն շեշտակորույս լինելով՝ ազատորեն վերածվում է Ը-ի, իսկ Բ-ն էլ շատ դեպքերում դառնում է Ռ, հմմտ. խարազան > **խըրրզըննէ** || **խըրըզըննի**, մեծահատ (կարկուտ) > **մըծըհա՛տ**, հարցանել > **հըրցընէլ** || **հըրցընիլ**, աղբահար > **ըխպըհար**, պարապուբին > **հըպըրըպՓթն**, արիւնաթաթախ > **ընըթաթախ**, խուրձ(ն) > **խօթնը** || **խօռթնը**, պրծանիլ > **պըրծնէլ** || պըռծընէլ և այլն ²⁹¹:

Այսպիսով՝ **խըզնրհատ** (= խըռզնրհատ) բառի իմաստաբանական ու հնչյունական վերլուծությունը հիմնավորապես ցույց է տա-

²⁸⁹ Տե՛ս **Յր. Ածառյան**, Հայերեն արմատական բառարան:

²⁹⁰ Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. 1, Վենետիկ, 1836, էջ 929:

²⁹¹ Բերված օրինակների մի մասի համար տե՛ս **Կ. Ս. Դավթյան**, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966:

լիս, որ այն, իրոք, սերուն է նախավոր **խարազանահատ** բառից, որը դժբախտաբար գրավոր չի ավանդվել մեզ: Հնագույն ժամանակներից սկսած այդ բառը հարադրավոր բայեր կազմելով **անել** (< առնել) և **լինել** (այլև՝ դառնալ) բայերի հետ՝ խարազանահատ առնել> խարազանահատ անել > **խըռըզընհատ անել**, խարազանահատ լինել > **խըռըզընհատ ըլնել** || **ինել**, դրանցով իսկ արտահայտել է պատժի այն խիստ դաժան գործողությունը, որը իրագործվել է խարազանի՝ մտրակի միջոցով: Գիշտ է, հետագայում վերացել է պատժի այդ ձևը, բայց այն հասկանալի պատճառով շարունակել է պահպանվել անեծքներում. բացառություն է կազմում թերևս Գանձակի (իմա՝ Կիրովաբադի) խոսվածքը, ուր **խըռըզընհատ անել** և **խըռըզընհատ ըլնել** հարադրավոր բայերը գործածվում են նաև «ջարդուբուրդ անել, ջարդ ու փշուր անել» (քամին ծառերը խըռըզընհատ ա ըրալ), «ջարդ ու փշուր լինել, ջարդուբուրդ լինել» ընդհանուր նշանակությամբ:

16. ԿԻՉԵԼ

Իր «Հայերեն գալառական բառարանում» Հր. Աճառյանը ***կիզել** բառը «Ղբ. վախնալ, Հորիցդ կի՛զում ես հա՛» տեղեկանքով ներկայացրել է իբրև առանձին գլխաբառ²⁹² և դասել այն արմատական ձևերի շարքը, որոնք «գրաբարի մեջ գոյություն չունեցող բոլորովին մոր արմատ մը երևան կը հանեն»²⁹³: Դա այդպես է ընկալել նաև ակադեմիկոս Ստ. Մալխասյանցը, Հր. Աճառյանին հետևելով՝ նույն բառը գրեթե նույն բացատրությամբ ու վկայությամբ փոխանցել իր բառարանը՝ «+ ԿիՉԵԼ, եցի, չբ. Վախենալ, երկյուրղ քաշել: Հորիցդ կիզո՞ւմ ես»²⁹⁴:

Երկու վաստակաշատ լեզվաբանների հիշատակած այդ **կիզել** բառը պարզապես գրաբարյան **գոզել** (**գոզ** «մեզ, շեռ, ջրվաթ»+ել) «միզել» բայի²⁹⁵ բարբառային մի արտահայտությունն է, որ գործած-

²⁹² Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն գալառական բառարան:

²⁹³ Տե՛ս նույն տեղում:

²⁹⁴ Տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան:

²⁹⁵ **Գոզ** բառը, որի առաջին գործածության համար վկայաբերվում է «Գիրք վաստակոցը», հայերենի դեռևս չստուգաբանված արմատներից է (տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան):

վում է Ղարաբաղի բարբառի շատ քիչ խոսվածքներում²⁹⁶: Դրան հակառակ՝ Ղարաբաղի բարբառի խոսվածքների մեծ մասում, ինչպես նաև Գորիսի բարբառում **գոզել** բառը հանդես է գալիս կ'հօզել || կ'հօզել || կ'հօզիլ || կ'հօզիլ ձևափոխությամբ, որն իր հիմնական «միզել» իմաստից բացի երկրորդաբար կամ փոխաբերաբար նշանակում է նաև «վախենալ, մի բանից խիստ զարհուրել, խիստ վախ զգալու դեպքում գոզը՝ մեզը պահել չկարողանալ»²⁹⁷, օրինակ՝ Ընդդրա զամման չիմունքըն ալ տըկըրնէրին կ'հօզում են (= Նրա ահից՝ սարսափից բոլորն էլ տակները գոզում են, այսինքն՝ վախենում են), Ըսկըսօրան հարթըն կիզում ա (= Սկեսրոջից հարսը գոզում է, այսինքն՝ վախենում է) և այլն:

17. ՀԱԽԿ

Առաջին անգամ նկատել է Ս. Ամատունին՝ համարելով Լոռու խոսվածքին հատուկ բառ: «**Հախկ. Լոռի.** ընկերակից գութանավորների ամեն մեկի վարելիք հողը: Թորոսի հախկը մնաց վարելու»²⁹⁸: Այդպես է բացատրել նաև Ստ. Մալխասյանցը, ով միաժամանակ ծագման վրա ուշադրություն դարձնելով, գլխաբառից անմիջապես հետո, փակագծերի մեջ կասկածով նշել է «գուցե Հախք, Հախից»²⁹⁹:

Այսպիսով անորոշ է ու հայտնի չէ, թե ստույգ ինչ ծագում ունի **հախկ** բառը, որը շատ սովորական է նաև Գորիսի բարբառում, ինչպես, օրինակ՝ Սըրվեն հախկը վարիլ չեն [= Սարուի (իմա՝ շեկի՝ շեկ մարդու) վարելահողը չեն վարի], Ծեր հախկը էքուց պետի վարեն (=Ձեր վարելախողը էգուց պիտի վարեն) և այլն:

Բայց ինչպես Լոռու խոսվածքին, այնպես էլ Գորիսի բարբառին բնորոշ այն հնչյունափոխական օրենքը, ըստ որի՝ միավանկ բառերի **ղ** վերջնահնչյունը և երբեմնի **ք** հոգնակիակերտ մասնիկը զուգորդվելիս տալիս են **խ + կ** (< ղ + ք), հմնտ. կողք (< կող + ք) > **կօխկ(ը)**,

²⁹⁶ Այդ մասին ևս մեզ տեղեկացրել է բարբառագետ Կ. Ս. Դավթյանը՝ հայտնելով միաժամանակ, որ Հր. Աճառյանի նկատած **կիզել** «վախենալ» բառը իրոք **գոզել**-ի ձևափոխություններից մեկն է:

²⁹⁷ Նույն նշանակություններով հիշյալ բարբառներում գործածվում է նաև **ցեթել** (< ցայտել) բայը:

²⁹⁸ Տե՛ս **Ս. Ամատունի**, Հայոց բառ ու բան, էջ 383:

²⁹⁹ Տե՛ս **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

ճեղք (< ճեղ + ք) > **ճէխկ(ը)**, մեղք (< մեղ + ք) > **մէխկ(ը)**, շողք (< շող + ք) > **շօխկ(ը)**, փողք (< փող + ք) > **փօխկ(ը)**, խաղք (< խաղ + ք) > **խախկ** և այլն, բացում է **հախկ** բառի շղարշը և ցույց տալիս, որ դա ծագում է **հաղ + ք** > **հաղք** ձևից, որտեղ և ս հիանգամայն օրինաչափորեն **ղ + ք** > **խ + կ** հնչյունափոխությունն է տեղի ունեցել:

Ուրեմն՝ մնում է պարզել՝ հնչյունափոխական օրենքով հիմնովին հաստատվող **հաղ + ք** > **հաղք** > **հախկ(ը)** բառը ներքին-բովանդակային կողմով ևս հիմնավոր կարելի է ճանաչել, թե՞ ոչ. եթե այո, ապա այդ դեպքում նախավոր **հաղ** արմատը ի՞նչ է նշանակել և գրաբարյան ո՞ր բառին է հանգում:

Դրա լավագույն պատասխանը տալիս են Նոր հայկազյան և Առձեռն բառարանները, որոնցից վերջինը **հաղ** գլխաբառի իմաստներից մեկն էլ համարում է **հանգանակ**-ը³⁰⁰, որ նշանակում է «Ինչ ի միջի դնի միաբան խորհրդով ի մի վայր եկելոց, մանաւանդ ի պէտս խրարութեան և բաժին արկեալ յանցն իւրոց. վիճակ. գլուխ դրամոյ. գրաւ. դաշն. միաբանութիւն... փայ»³⁰¹. «1. գ. Մէջ դրած բաժին, գլուխ դրամոյ, գրաւ, դաշն, միաբանութիւն:- 2. ա. մասնակից, գործակից»³⁰²: Յմտ. նաև Նոր հայկազյան բառարանի՝ **հաղ** բառի համար բերած հետևյալ՝ «խկ. փիլ. իմաստն. ուր ասի Հանգանակս ի մէջ արկանելով. ի լս. դնի **հաղս**»³⁰³ վկայությունը, որ առանձին արժեք է ներկայացնում հոգնակի հայցականի ձևի՝ **հաղս**-ի մատնանշմամբ:

Այսբանից հետո ամենևին դժվար չէ նկատել բարբառային **հախկ** (< հաղ + ք) և գրաբարյան **հաղ + ք** բառերի միջև եղած որոշակի իմաստային կապն ու ընդհանրությունը: **Հախկ(ը)** բառով ևս արտահայտվել է յուրատեսակ դաշն ու միաբանություն, յուրատեսակ հանգանակություն կամ գործակցություն. ունեցած միջոցների ներդրումով գութանավորներն ընկերակցել կամ դաշն են կնքել իրար հետ, մի օր՝ մեկի, մի օր՝ մի ուրիշի, մի օր՝ մի երրորդի և այլն վարելահողը՝ վարելիք հողաբաժինը վարելու համար: Այդ հիման վրա էլ

³⁰⁰ Տե՛ս «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», Վենետիկ, 1865, էջ 460:

³⁰¹ Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, էջ 36:

³⁰² Տե՛ս «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», էջ 471:

³⁰³ Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, էջ 8:

հենց **հաղ + ք > հաղք > հախկ(ը)** բառը³⁰⁴ ստացել է «ընկերակից գութանավորներից ամեն մեկի վարելիք հողը» նշանակությունը, որը և մի անգամ ևս ցույց է տալիս ու հաստատում, որ այն ամենևին չի առնչվում արևելյան փոխառյալ **հախ** արաբ. hakk («1. արդար, տեղին. 2. վարձ. աշխատավարձ, արդար պահանջ») բառին և հանդիսանում է քիչ բարբառներում ու խոսվածքներում պահպանվող, բայց շատ հին ժամանակներից եկող արժեքավոր բառերից մեկը:

Հարկ է նշել, որ այդ բառը, իր հիմնական նշանակությունից բացի, **հախկ** ու գրաբարյան հոգնակի հայցականի **հախս<հաղս** ձևերով գործածվում է նաև «ընկերակից գութանավորներից յուրաքանչյուրի հողաբաժինը՝ վարելահողը վարելու հերթը» նշանակությամբ, օրինակ՝ Հախկը ասօր ի՞մն աթա՞ քունը (Հաղքը այսօր ի՞մն է, թե՞ քունը), Մյուս օրը հախսը իրանն է, այսինքն՝ իր համար պիտի վարեին (ԴԱ)³⁰⁵: Դա, անշուշտ, ավելի պարզորոշ է բացահայտում **հաղք**-ից **հախկի** և **հաղս**-ից **հախս**-ի առաջացումը:

18. ՍԱՔ

Սովորական է Ղարաբաղի ու Գորիսի բարբառներում և նշանակում է «իրար վրա դարսած՝ շարված»³⁰⁶: Նույն այդ արմատից են կազմված **Սաքել Սաւքել** «իրար վրա կանոնավոր դարսել», **Սաինգ՝(ին)ել || սաւքինգ՝(ին)ել** «մի կողմի վրա կանոնավոր փռվել, պառկել (արտի)», **սաք-սաք || սաւքսաւք** «կոկիկ, կանոնավոր՝ իրար վրա կանոնավոր դարսված», **սիքսաքել || սիքսաւքել** «սաքսաքել՝ իրար վրա կանոնավոր դարսել, դարստտել»: Գ. Ջահուկյանը, զբաղ-

³⁰⁴ **Յր. Աճառյանը Հաղ** (ինխ. pel «զարնել») արմատի ծագումը տալիս չի հիշատակել նրա «հանգանակ» նշանակությունը, որպիսի պատճառով էլ, կարծում ենք, **հաղ** («կից, միասին, յար») առանձին անգործածական արմատը առաջինից առանձնացրել և չստուգաբանված արմատ է համարել (տես **Յր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան):

³⁰⁵ Վերջին օրինակը բերվում է Հայկական ՍՍՀ ԳԱ Յր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հրատարակած «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանից» (հատ. III, Երևան, 1974, էջ 256), ուր, սակայն, **հախկ**-ը և **հախս**-ը ներկայացված են իբրև իրար հետ կապ չունեցող ու միանգամայն անկախ բառեր (տես նույն տեղում):

³⁰⁶ Տես **Յր. Աճառյան**, Հայերեն գաւառական բառարան: **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան: Ի դեպ, **սաք**-ը առանձին չի գործածվում, և հետևաբար դրա բացատրությունն էլ պայմանական բնույթ է կրում:

վելով **սաք** արմատից կազմված **սաքել** բառի ստուգաբանությամբ, «հայերենի ընդհանուր օրինաչափություններից շեղվող և օտար ենթաշերտ կամ հնդեվրոպական լեզվից հին փոխառություն ենթադրող» արմատների շարքում ներկայացրել է դա իբրև «Յ. Ե. Տ. - հայ. ս. շ.» հնչյունափոխությամբ հատկանշվող բառ. «**Սաքել** «իրար վրա դարսել» (Ղրբ.) - հ. հնդկ. *sncata* «ուղեկցում է, հետևում է», *snkha* «ուղեկից, ընկեր», լատ. *sequor* «հետևել» և այլն»³⁰⁷:

Մենք կարծում ենք, որ սոսկ Ղարաբաղի ու Գորիսի բարբառներում պահպանվող և բնավ անկախաբար չգործածվող **սաք**||**սափ** արմատը [հմմտ. **սաք-սաք** || **սափ-սափ**, **սաք** || **սափ ինգ(ին)ել**, **սաքել** սափել, սիքսաքել || սիքսափել], պարզապես հնխ. *k'er* (*K'r* ստորին ձայնադարձով) «կապ, հյուսվածքի թել, հյուսել, կապել» արմատից³⁰⁸ ծագած **սար + ք > սարք** բառի՝ ժամանակի ընթացքում կրած բարբառային ձևափոխությունն է: Իսկ դա լավագույնս հաստատվում է ոչ միայն մի շարք բառերի **ր** ձայնորդի անկման հանրահայտ փաստերով, ինչպես՝ քարշ > **քաշ**, խարշել > **խաշել**, երբ > **հեբ** || **հեփ**, դուրս > տոնս, ի ներքո > **ներս** > **նի** (հմմտ. մաև պահք > **պաք**, պահս > **պասս**, տապք > **տաք**) և այլն, այլև իմաստային այն շատ որոշակի ու ակնհայտ ընդհանրությամբ, որ երևան են հանում սարք-սաք || սափ և համապատասխանաբար դրանցից կազմված բառերն իրար նկատմամբ:

Այսպես՝ Ստ. Մալխասեանցի «Չայերեն բացատրական բառարանի» հավաստմամբ՝ **սարք** նշանակում է «Մի առարկայի մասերի պատշաճ դասավորությունը՝ կցունն իրար հետ այնպես, որ առարկան կանոնավոր կերպով յուր դերը կատարե, սարվածք», իսկ **սաք**՝ «իրար վրա դարսած՝ շարված», **սարքել** նշանակում է «Առարկայի մասերը պատշաճ կերպով դասավորել՝ իրար կցել, որպեսզի աշխատել կարողանա», իսկ **սաքել**՝ «իրար վրա դարսել» և այլն³⁰⁹:

Ջուզադիի ձևերը, ինչպես դժվար չէ նկատել, ըստ էության **միատեսակ**՝ ինչ-որ բաների **կանոնավոր**, **պատշաճ**, **կարգին** դարսվածքի՝ շարվածքի կամ ինչ-որ բաների **կանոնավոր**, **պատշաճ**,

³⁰⁷ Տե՛ս **Գ. Զահուկյան**, Չայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 317, 326:

³⁰⁸ Տե՛ս այդ մասին **Յր. Աճառյան**, Չայերեն արմատական բառարան:

³⁰⁹ Նշված բառերի այդ և այլ նշանակությունների մասին տե՛ս **Ստ. Մալխասեանց**, Չայերեն բացատրական բառարան:

կարգին իրար վրա դարսելու նշանակություն են արտահայտում՝ ակներև դարձնելով այդպիսով իրենց ընդհանուր ծագումը: Այդ հաստատող շատ հիմնավոր մի այլ ապացույցը տալիս են Ղարաբաղում խոսվող բարբառները, որոնց մի մասում՝ բուն Ղարաբաղի, Յադրուֆի և Շաղախ-Խծաբերդի բարբառներում, **Սարք-սարք** կրկնավոր բարդությունը եթե **սաք-սաք** («ծալեծալ, կանոնավոր դարսված»), ապա Չայլվի և Մեհտիշենի բարբառներում՝ **սարք-սարք**, իսկ Մարաղայի բարբառում **սառք-սառք** «անաղարտ» ձևերով է գործածվում³¹⁰: Այստեղից ինքնին հետևում է, որ բուն **սարք** բառը **ր-**ի անկմամբ **սաք** || **սա՛ք** է դարձել կրկնավոր բարդության (սարք-սարք > սարք-սարք || սառք-սառք > սաք-սաք || **սա՛ք** - **սա՛ք**) մեջ ու հենց նրա ընծեմմամբ: Ըստ որում, բնորոշ է և այն, որ եթե Ղարաբաղյան բարբառներում **սարք** > **սաք** փոփոխության դեպքում **ա** ձայնավորը նույնն է մնացել, ապա Գորիսի բարբառում այն քմայնացման է ենթարկվել (հմմտ. **սարք** > **սաք** || **սա՛ք**): Ավելացնենք նաև, որ հիշյալ բարբառները **սարք** և **սաք** || **սաք** ձևերից կազմված համապատասխան բառեր (հմմտ. **սարք**, **սարք-սարք** || **սառք-սառք**, **սըրքօվի**, **սարքիլ**, **սարքէլ**, **սարքվէլ**, այլև՝ **սարէլ** || **սա՛րէլ**-սաք || **սա՛ք** **ինգ՛իհէլ**, **սաք-սաք** || **սա՛ք-սա՛ք**, **սաքէլ** || **սա՛քէլ**, սիքսա՛քէլ) ունենալով՝ իմաստային տարբերակումներ կամ նրբերանգներ են առաջ բերել նրանց միջև՝ «մթագնելով» **սարք**-ից **սաք** || **սա՛ք**-ի ծագումը:

19. ՍՔԱՌԱԾ

Առաջին անգամ տեղ է գտել Յր. Աճառեանի «Հայերեն արմատական բառարանում» հետևյալ բնութագրմամբ. «**ՍՔԱՌԱԾ**. Ղգ. սառած: Կրկնաբար կ'ըսվի սառած-սքառած»³¹¹: Հմմտ. «+ՍՔԱՌԱԾ (իրև հճխ. ձև **սառած՛ի**), ած. **սառած: Սառած-սքառած** ոտներ»³¹²: Տարբեր առիթներով այդ բառին անդրադարձել են նաև պրոֆեսորներ էդ. Աղայանը և Գ. Ջահուկյանը, որոնցից առաջինն այն համարել է

³¹⁰ Այդ մասին տես **Կ. Ս. Դավթյան**, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, էջ 462, որտեղ հեղինակը փաստորեն առաջինն է ճիշտ բացատրել **սաք**-ի առաջացումը:

³¹¹ **Յր. Աճառեան**, Հայերեն գաւառական բառարան:

³¹² **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

սիք || **սիւք + առիլ** < առնուլ (> սըքառիլ «մըսել») բառերից առաջ եկած բարդութուն³¹³, իսկ երկրորդը դասել է ևս «Յ. Ե. Ե. Ե. ս, սս - հայ. ս. շ.» հնչյունափոխությամբ հատկանշվող այն արմատների շարքը, «որոնք շեղվում են հայերենի ընդհանուր օրինաչափություններից և ենթադրում են օտար ենթաշերտ կամ որևէ հնդեվրոպական լեզվից հիմ փոխառություն, որի աղբյուրը չի պահպանվել կամ դեռևս հայտնի չէ»³¹⁴:

Այսպիսով՝ ներկայացվող բառի վերաբերյալ ցուցաբերվել են երեք տարբեր մոտեցումներ, եթե Յր. Աճառյանը և Ստ. Մալխասյանցը չեն բացատրել նրա ծագումը, ապա պրոֆեսորներ Էդ. Աղայանը և Գ. Ջահուկյանը տվել են միանգամայն տարբեր մեկնություններ: Ուշագրավ ու հետաքրքրական է, որ պրոֆ. Գ. Ջահուկյանը մինչև իսկ ընդհանուր զուգահեռ է անցկացրել մի կողմից հայերենի և մյուս կողմից՝ նորվեգերենի, շվեդերենի միջև. «**Սքառած** (24) նորվ. շվեդ. skare «ձյան վրայի սառած պինդ կեղև» և այլն [հ.-ե. (s)ker - «խորշոմել, կնճռոտվել, անհարթ կաշի, կեղև, թեփ, չորացած, միհար»]³¹⁵:

Սակայն հարկ է ամենից առաջ ասել, որ «սքառած»-ը ոչ թե մի ձույլ արմատական բառ է, այլ բայի դերբայական ձև է՝ հարակատար, որ լավագույնս հաստատվում է **սառած-սքառած** հարադրական բարդության առաջին բաղադրիչի (սառչել||սառել-սառած) **նույնպես հարակատար լինելու** հանգամանքով, հմնտ. **անցած-զնացած, բերած-տարած, ծլած-ծաղկած, մեռած-պրծած** և այլն:

Երկրորդ՝ իբրև զուգահրական բայական բարդության բաղադրիչ, **սքառած** դերբայաձևը Ղազախից բացի գործածական է նաև այլ վայրերում՝ Գանձակի (Կիրովաբադի), Շամխորի, Խանլարի խոսվածք-

³¹³ Տե՛ս **Էդ. Աղայան**, Մեղրու բարբառը, Երևան, 1954, էջ 286, 329, ուր ներկայացված անորոշ դերբայաձևի փոխարեն՝ այլ բարբառներում, սակայն, գործածական են սոսկ հարակատար ու վաղակատար դերբայաձևերը:

³¹⁴ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 317: Ի դեպ, ավելորդ չէ նշել, որ այդ աշխատության մեջ «գրաբարյան բաղադրյալ ձևի դիմաց արմատական ձև» ունեցող բառերի շարքում իրար են զուգորդվել նաև «արքայարք» (Թբ. Ղրբ.), «էրք» (Երևան), «իշխանություն» բառերը (տե՛ս էջ 281), որոնցից վերջինի մասին Յր. Աճառյանը, սակայն, ժամանակին գրել է. «Այս բառն իմ գաւառական բառարանում, էջ 156ա, համարել են **արքայ** բառի արմատը: Չարաչար սխալ: Բառս օտար փոխառություն է թուրք-թաթարական լեզուներից» (տե՛ս **Յր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան):

³¹⁵ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 327:

ներում³¹⁶, ինչպես նաև Գորիսի բարբառում, օրինակ՝ «Շատ սառած-սըքառած կըրնէկ ա, Ընդրիէնց մը պան ասէց, վէր մընացի սառած-սքառած, ճաշը սառած-սըքառած ա» և այլն:

Երրորդ՝ Գորիսի բարբառում՝ **սքառած** հարակատար դերբայներից բացի գործածվում է նաև **սըքառալ** (< սքառեալ) վաղակատար դերբայածևը³¹⁷, ինչպես՝ Խօխան սառալ ա սըքառալ, Քէզ հի՞նչ անլանլ, վէր սառալ էս սըքառալ: Վերջինիս համար հավաստի ու գեղեցիկ օրինակ է տալիս աշուղ Ուսուբ օղլին՝ «Ինչո՞ւ եք ինձանից **սառել սգառել**»³¹⁸, ուր «սառել»-ի փոխարեն **սգառել** ձևի գործածությունն իսկ հայտնի է դարձնում քննվող բառի ծագումը և ցույց տալիս, որ այն երկու արմատներից (սուգ առեալ > **սըքառալ**, սուգ առած > **սըքառած**) կազմված բարդություն է, որի իսկությունն էլ հաստատվում է թե՛ իմաստաբանորեն և թե՛ հնչյունաբանորեն: Նախնական **սառեալ-սուգ առեալ** բարդության բաղադրիչները Գորիսի և այլ բարբառներում՝ դրանց հատուկ հնչյունափոխական օրենքներով կարող էին դառնալ և իրոք դարձել են **սառալ-սըքառալ** (վերջինս, անշուշտ, սուգ առեալ > **սուք** || **սօք առալ** > **սըքառալ** ընթացքով):

Նույն հիմունքով է կազմվել նաև հարակատարը՝ **սառած-սըքառած**, որը, ավելի շատ ու հաճախակի գործածվելով, հիմք է ծառայել **սքառած**-ը ինքնուրույն բառային միավոր ճանաչելու համար: Եվ քանի որ սըքառալ (= սքառել) և սըքառած (= սքառած) դերբայները ծագում են **սուգ առեալ**, **սուգ առած** հարադրական ձևերից, նախապես դրանց՝ սուգ առածի՝ սգվորի՝ սգավորի վիճակը, դրությունն արտահայտողի նշանակությամբ էլ գործածվել են **սառալ-սըքառալ**, **սառած-սըքառած** զուգորդական բարդությունների մեջ, բնականորեն արտահայտելով **խիստ սառել** կամ **սառած**, **ընդարմացել** կամ **ընդարմացած**, այլև **խիստ մրսել** կամ **մրսած** իմաստները:

³¹⁶ Դրանց մասին ևս մեզ տեղյակ է պահել Կ. Ս. Դավթյանը:

³¹⁷ Դրա գործածությունը, անշուշտ, չի բացառվում նաև այլ բարբառներում ու խոսվածքներում:

³¹⁸ Տե՛ս **Ուսուբ օղլի** (Սարգիս Գովսեփյան), Էդգարի քնարը, Բաքու, 1894, էջ 92:

20. ԳԼՈՒԽԿՈՆԾԻ || ԳԼՈՒԽԿՈՆԶԻ

Գլուխկոնծի || գլուխկոնծի («Գլխի վրայով թավալվելով ոստյուն») բառը առաջին ձևով առաջին անգամ տեղ է գտել Հր. Աճառեանի «Հայերեն գաւառական բառարանում», ուր և նրա գործածության աղբյուր են դիտված սոսկ Երևանի (Արարատյան) և Ղարաբաղի բարբառները³¹⁹: Բարբառային այդ բառը, որ գերազանցապես գործածվում է **տալ**, երբեմն նաև **գալ**, **անել** բայերի հետ իբրև հարադրական բարդության հարադիր, բարդ բառ է՝ կազմված երկու՝ **գլուխ** և **կոնծի** || **կոնծի** բաղադրիչներից: Դրանցից առաջինը՝ **գլուխ** բառը, որքան պարզ է ու որոշ, այնքան երկրորդը՝ **կոնծի** || **կոնծի**-ն, անստույգ է, և հայտնի չէ, թե ի՞նչ ծագում ունի և ի՞նչ է նշանակում: Հարկ է նշել, որ գրավոր աղբյուրներում **գլուխկոնծի** || **գլուխկոնծի** բառը հանդիպում է նաև **գլխկոնծի** || **գլխկոնծի** (հմմտ. «Հետո **գլխկոնծի արեց** ու կանգնեց փոքր հորեղբորս - կողքին», Հր. Մաթևոսյան, Օգոստոս, էջ 259. «Ապա իրար հետևից **գլխկոնծի եկան** ասորի Բադալը, Բաղլվա Սիսակը և Ալեջնա Ազոն-», Խ. Դաշտենց, Խողեղան, էջ 108. «Նա մերթ փաթաթվում էր Մանուշի ոտքերին, նրա առաջ **գլխկոնծի տալիս**», Ս. Խանգադյան, Հողը, 1-ին գիրք, էջ 307), այլև **գլխակոնծի** (հմմտ. «Իրար հետևից վրա տվին մշտալով, **գլխակոնծի տալով**՝ մաքրազարդեցին այն», Մ. Մանվելյան, Երկեր, էջ 128. «Քույրերն այնքան էին ուրախանում, - որ սկսում են անկողնու վրա **գլխակոնծի տալ**», Աղավնի, Շիրակ) ձևերով և բարբառից գրական լեզվին անցնելով՝ այդտեղ ձեռք է բերել գրական բառի լիակատար իրավունք: Ի դեպ, բանաստեղծ Պ. Սևակը **գլուխկոնծի** բառից կազմել է մինչև իսկ կրկնավոր բարդություն. [Ծաղրածուն] **գլուխկոնծի-գլուխկոնծի** գծուկի պես թավալվում է³²⁰:

Արդ՝ փորձենք պարզել, թե ինչ ծագում ունի **գլուխկոնծի** || **գլուխկոնծի** (գլխկոնծի || գլխկոնծի) բառի այդ երկրորդ՝ **կոնծի** || **կոնծի** բաղադրիչը: Բարդության մեջ, որ ամենևին դժվար չէ նկատել, դա արտահայտում է **գլուխը շուռ բերելու, գլուխը վայրելու**

³¹⁹ Հր. Աճառեան, Հայերեն գաւառական բառարան:

³²⁰ Օրինակը բերվում է Հայկական ՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտի հրատարակած «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանից» (հատ. 1, Երևան, 1969, էջ 419):

նշանակությունը, որն **իսկ և իսկ համընկնում է ԿՈՐԾ** («գլխիվայր շրջվիլ, տապալվիլ») արմատի նշանակությամբ³²¹: Հմմտ. նաև բայական ձևերի նշանակությունները. «Երև. **կօրծել, կօրծ անել** «նյուս կողմը շրջել (ամանը)», **կօրծ լինել** «շրջվիլ, տապալվիլ», Սլմ. **կործել, Վն. կոռծել, Ալշ. Մշ. կօռծել, Պլ. Սեբ. գօրծել, Խրբ. գօրծիլ, Ոգմ. կուրծիլ, Սկ. կուռծիլ** «ամանը գլխիվայր շրջել», Չն. **գօրծիլ** «ցած գլորվիլ, տապալվիլ», Չրս. **գօրգվիլ** «տնկած՝ կանգնեցրած մի բան գլխիվայր շրջվիլ, ցած տապալվիլ»...»³²²:

Գլուխկոնծի (գլխկոնծի) || **գլուխկոնծի** (գլխկոնծի) բարդության **կոնծի** || **կոնծի** բաղադրիչի և հիշյալ **կործ** արմատի իմաստների **ընդհանրությունը** անհերքելիորեն ապացուցվում է նաև **գլխկործ** բառի առկայությամբ, որը հենց արտահայտում է. «1. Գլուխը քաշ ձգած՝ կախած: 2. Ամանը գլխիվայր դրած, բերանը ներքև, ոտքը վեր» նշանակությունները³²³: Նույն այդ բառն էլ, պետք է ասել, հոլովական ձևով գործածվելով իբրև հարադրավոր բայի հարադիր (*գլխկործի տալ, *գլխկործի գալ), համապատասխան բարբառներում հնչյունական փոփոխության է ենթարկվել և առաջ բերել **գլուխկոնծի** (գլխկոնծի) || **գլուխկոնծի** (գլխկոնծի) ձևերը: Այս դեպքում, հասկանալի է, մնում է պարզել նախնական ***կործի** բառի կրած **Ր > Ն** հնչյունափոխության հնարավորությունն ու իսկությունը:

Հայերենի շատ բարբառներում նման հնչյունափոխությունը **Ր** ձայնորդի փոխարինումը **Ն** ձայնորդով, ամենևին բացառված կամ խորթ երևույթ չէ. հմմտ. օրինակ, բարծր > Վն. **պա՛նցըր**, Սլմ. Սկ. պանցըր, Մրդ. պանցի՛ր, Տիգ. **փանցըր**, Չթ. **բօ՛նծ՛րը, բօ՛նծ՛ռը**³²⁴, Երև. **պանցըր, բանցըր**³²⁵, Գոր., Ղրբ. ընդ իրեար գալ > **տո՛ւրո՛ւր - կա՛լ > տո՛ւրո՛ւն կա՛լ**³²⁶ և այլն: Պետք է ասել, որ նման հնչյունափոխական օրենքով **գլուխկոնծի** (գլխկոնծի) || **գլուխկոնծի** (գլխկոնծի) բառի նախավոր ձևում տեղի է ունեցել **Ր > Ն** մասնավոր հնչյունափոխությունը, որը, ի դեպ, հաստատվում է նաև նրանով, որ դրա-

³²¹ Այդ մասին տես **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

³²² Տես նույն տեղում:

³²³ Տես այդ մասին **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

³²⁴ Այդ մասին տես **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

³²⁵ Տես **Ս. Զ. Բաղդասարյան-Թափալցյան**, Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, Երևան, 1973, էջ 310:

³²⁶ Տես մեր «Գորիսի բարբառը», Երևան, 1975, էջ 108:

նից հետո **ն** ձայնորդին հաջորդելու պատճառով **ծ**-ն ձայնեղացել է, և ոչ պատահականորեն այսօր գործածական են ինչպես **գլուխկոնծի** || **գլուխկոնծի**, այնպես էլ **գլխկոնծի** || **գլխկոնծի** ձևերը: Այսպիսով՝ պարզ է դառնում, որ **գլուխկոնծի** (գլխկոնծի) || **գլուխկոնծի** (գլխկոնծի) բարդ բառի **կոնծի** (< կոնծ + ի) || **կոնծի** (< կոնծ + ի < կոնծ + ի) բաղադրիչը սերում է **կործ** արմատից, որը, ինչպես և **գլուխ** բառը, հայերենի տակավին չստուգաբանված արմատներից է³²⁷:

21. ԹԱՐՍԵԼ

Յր. Աճառեանը «Հայերեն արմատական բառարանում» **թարսել** (= թարսել) բառը տալիս է «Ընտրել կրկին կամ զատ». այսպես ունի բառ. երես. էջ 116. Նույն է Ղրբ. **թարսել** «հատեղենները ափսեի մեջ դրած վեր վեր նետելով ու փչելով մաքրել», տեղեկանքով ներկայացրել է իբրև չստուգաբանված արմատ՝ ասելով միաժամանակ. «= **Թվի թե թրք. tars** «**հակառակ, ներհակ**» բառից է բայացյալ (ընդգծումը մերն է - Ա. Մ.)»³²⁸: Նույն միտքը նա հայտնել է նաև «Հայերեն գաւառական բառարանում», «***Թարսել** Ղրբ. ընդհանրապես հրնդրելու, մաքրելու համար ափսեի մը մեջ դրած վեր վեր նետելը, որով տակի հատերը վրան կելլեն. թարսողը կփչէ և ասով պարապ հատիկները, կճեպները ևն դուրս կթռին: = **Թվի թե թրք. ش س ters** (արև. թրք. tars) «**ներհակ, հակառակ**» բառից է բայացյալ (ընդգծումը մերն է - Ա. Մ.)»³²⁹:

Թարսել բառը շատ ավելի որոշ ու ճշտորեն է բացատրել Ստ. Մալխասյանցը. «ԹԱՐՍԵԼ, եցի, նբ. **Թարս կողմը շուռ տալ, տակը վրա անել** (ընդգծումը մերն է - Ա. Մ.). Ընդհանրապես տեփուրով թեթև վեր նետել, այնպես որ տակի ընդհանրապես ելնե, և այս գործողության ժամանակ թեթև փչելով՝ թեթև մասնիկները (կճեպ, դարդակ հատիկները, փոշի ևն) հեռացնել, տեփրել, ծվել: 2. չբ. տ. **Թարսվել**»³³⁰: Իր այս բացատրությամբ, ինչպես դժվար չէ նկատել, Ստ. Մալխասյանցը **թարսել**-ը առանց վարանելու համարել է թուրք

³²⁷ Տե՛ս Յր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան:

³²⁸ Նույն տեղում:

³²⁹ Յր. Աճառեան, Հայերեն գաւառական բառարան:

³³⁰ Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան:

թարս (= թարս) «ներհակ, հակառակ» բառից կազմված բայ՝ մերժելով այսպիսով Յր. Աճառյանի կարծիքի թվացականությունը և, բնականաբար, **թարսել-ի թարս** բառից բայացած լինելը դիտելով իբրև բացահայտ ճշմարտություն: Եվ որ, իրոք, դա այդպես է, հաստատվում է նաև Գորիսի բարբառում **թարսել** բայի գործածությամբ³³¹, որտեղ այն ճիշտ է և նույնպես ցույց է տալիս «ընդդեմը տեփուրով մաքրելու», «ընդդեմը վեր նետելով **դեպի թարս՝ հակառակ կողմը շուռ տալու, տակը վրա անելու**» գործողություն: Միանգամայն հասկանալի է, որ Յր. Աճառյանը, հենվելով մի կողմից Երեմիա Մեղրեցու բառարանի «ընտրել կրկին կամ գատ» անորոշ ու տարտամ³³², մյուս կողմից իր իսկ տված ոչ այնքան հաջող բացատրության վրա, հանդես է բերել **ծայրահեղ զգուշավորություն**՝ թվացական համարելով **թարսել** (= բրբ. թարսել) բայի **թարս** (= բրբ. թարս) բառից բայացյալ լինելը: Եվ այսպիսով, քանի որ **թարսել** (= թարսել) բայի **թարս** (= թարս) բառից ծագած լինելն այլևս ոչ մի կասկած չի հարուցում, ապա մնում է այն դասել հայերենի ստուգաբանված արմատների շարքը և ընդունել, որ տակավին չստուգաբանված 3680 արմատներից մեկը՝ նվազում, և համապատասխանաբար մեկով ավելանում է թուրք-թաթարական փոխառյալ արմատների թիվը (170+1=171):

22. ՍԵՆ (< ՍԵՆ)

ՍԵՆ (< ՍԵՆ) բառը գործածվում է Գորիսի բարբառում՝ սովորաբար ծծկեր երեխայի մոր, այլև սուրբ կենդանիների կրծքի կաթի «անուժ, փուչ, դատարկ» լինելը նշելու համար, օրինակ՝ Կաթնը սեն ա, ըտրա հետի ալ խուխեն ծըծան յետ ա ըրալ [= Կաթը անուժ (= դատարկ, փուչ) է, դրա համար էլ երեխային ծծից կտրել է], Էտ կօվը պըհէլի կօվ չի, կաթնը սեն ա [= Այդ կովը պահելու կով չէ, կաթը անուժ (դատարկ, փուչ) է] և այլն:

³³¹ Այդ մասին տես մեր «Գորիսի բարբառը», էջ 515:

³³² Երեմիա Մեղրեցու բառարանի այլ ձեռագրերում **թարսել** բայը ներկայացված է ավելի հաջող՝ «Ընտրել կրկին, կամ գատել», «կրկնագատել», «ընտրել, կամ որոշել» բացատրություններով (այդ մասին տես «Բառգիրք հայոց», Երևան, էջ 117 և 371):

Ի՞նչ ծագում կարող է ունենալ Գորիսի բարբառին հատուկ այդ բառը, որ ցարդ ոչ մի բառարանում կամ գրավոր աղբյուրում չի արձանագրվել³³³:

Նկատի ունենլով թե՛ արտաքին հնչյունական կառուցվածքը և թե՛ արտահայտած նշանակությունը՝ պետք է ասել, որ այն պարզապես գրաբարյան **սիճ** «ունայն, պարապ, թափուր, մեջը փուլ»³³⁴ բառի բարբառային արտահայտությունն է. **ի > է** հնչյունափոխության համար հմնտ ծին > **ծէճ**, հինգ > **հէճ**, մինջ > **նէճ**, պինդ > **պէճ**, այլև՝ խիճ > **խէճ**, ծիղ > **ծէղ**, կիր > **կէր**, միս > **մէս** և այլն³³⁵:

Հնդեվրոպական հիմք լեզվի *keno* ձևից **սիճ** բառի ծագումը նշելով՝ Հր. Աճառյանը առանձնապես շեշտում է, որ «Հայերենից և հունարենից դուրս այս արմատը ուրիշ որևէ լեզվի մեջ չի պահված»³³⁶: Հետաքրքրական է, որ այն չի պահված հայերենի նաև ոչ մի բարբառում և հետևաբար՝ նշմարվելով միայն Գորիսի բարբառում, ինչպես պատմահամեմատական լեզվաբանության, այնպես էլ հայոց լեզվի պատմության ու հայ բարբառագիտության համար, անշուշտ, որոշակի արժեք է ներկայացնում:

23. ՏԱՆԿ || ՏԱՆԳ

Տանկ || **տանգ** բառը գործածական է Արարատյան (Երևանի), Ղարաբաղի (Արցախի), այլև Գորիսի, Մեղրու, Կարճևանի բարբառներում և նշանակում է «պարկի (չուվալի) բերանը շինված չվանե կանթ, ունկ»³³⁷, «Քրձի (ջվալ) կողմերի երկու օղակները, որոնցից բռնելով ջվալը վեր են բարձրացնում»³³⁸, «Տոպրակի վերի երկու անկյունում օղակների կամ ականջներ, որոնցից բռնում են տոպրակը բարձրացնելու համար. կանթ, ունկ»³³⁹ և այլն:

Հայերենի ոչ շատ բարբառներում գործածվող այդ **տանկ** || **տանգ** բառը, ինչպես վերոբերյալ բացատրություններն են վկայում,

³³³ Ուշ հայտնի դառնալու պատճառով **սէճ** բառը տեղ չի գտել նաև մեր «Գորիսի բարբառը» ուսումնասիրության մեջ:

³³⁴ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան:

³³⁵ Այդ մասին տե՛ս մեր «Գորիսի բարբառը», էջ 49:

³³⁶ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան:

³³⁷ Տե՛ս Հր. Աճառեան, Հայերեն գաւառական բառարան:

³³⁸ Տե՛ս Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 617:

³³⁹ Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան:

Կանթ, ունկ բառերի հոմանիշն է և իմաստաբանորեն դրանցից թերևս տարբերվում է նրանով, որ ոչ թե նաև անոթների, մետաղյա կամ կավե ամանների, այլև **բացառապես** ջվալի (տոպրակի) կողերի երկու օղակների՝ բռնատեղերի նշանակության համար է գործածվում: Պետք է, սակայն, ասել, որ տակավին չստուգաբանված **տանկ** || **տանգ** բառը իմաստաբանական ու գործառական ավելի որոշակի ընդհանրություն է երևան հանքում հատկապես **կանթ** բառի նկատմամբ, որը ազատորեն ու ոչ պատահականորեն կարող է և փոխարինել նրան. օրինակ. «Հին ջվալին նոր կանթ պիտի ԱՌԱԾ. Էմ. Ազգ. Ժող. Ձ. 208»³⁴⁰: Նշենք նաև, որ Ղարաբաղի և Գորիսի բարբառներում ջվալի (տոպրակի) երկու կողերի օղակները, ճիշտ է, ավելի շատ անվանում են **տանկ** || **տանգ** բառով, բայց ոչ սակավ և կամ առանձին խոսվածքներում ընդհանրապես դրա փոխարեն գործածվում է **կանթ** բառը³⁴¹: Վերջինիս նշանակությունների համար հմնտ. «**Կանթ**. գ. Կոթ»³⁴², «Կանթ Երև. Վն. Տ. ամանին կոթը. **խուլփ**: 2. (ծծկ.) Ոզմ. Վն. Կին, կնիկ»³⁴³, «**Կանթ**» կոթ (որևէ ամանի)»³⁴⁴, «**Կանթ** Ար. Ախլցխ. Մշ. Անոթների ունկ, բռնատեղ»³⁴⁵, «**Կանթ** գ. 1. Օղակածև կամ կես բոլորակ կցվածք ամանների և այլ իրերի, որից բռնում են վերցնելու համար. բռնատեղ, ունկ: 2. Փոքրիկ մետաղե օղակ, որ կպցնում են արծաթե կամ ոսկե դրամին, որից թել անցկացնելով՝ կանայք կրում էին այդ դրամներն իբրև զարդ...»³⁴⁶ և այլն:

Արդ՝ հարց է ծագում, **տանկ** || **տանգ** և **կանթ** բառերը սոսկ իմաստապե՞ս են համընկնում, թե՞ հնչյունական կառուցվածքի տեսակետից ևս ընդհանրական կապ գոյություն ունի նրանց միջև: Ուշադիր զննելով զուգադրվող ձևերը՝ չի կարելի չնկատել, որ դրանք իրար համընկնում են նաև **հնչյունաբանորեն**. **Կանթ** և **տանկ** || **տանգ** բառերը կամ դրանցից մեկնումեկը ունեցող բառաբաններում կան դեպքեր, երբ **ն** ձայնորդին հաջորդող **թ**-ն դառնում է **տ**: **Կանթ** բառը հենց, օրինակ, Մշո բարբառում և Սևանի շրջանի

³⁴⁰ Տե՛ս **Ս. Ամատունի**, նշվ. աշխ., էջ 328:

³⁴¹ Նման գործածությունները չեն բացառվում, անշուշտ, նաև այլ բարբառներում:

³⁴² Տե՛ս «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», Վենետիկ, 1865, էջ 420:

³⁴³ Տե՛ս **Հր. Աճառեան**, Հայերեն գաւառական բառարան:

³⁴⁴ Տե՛ս **Հր. Աճառեան**, Հայերեն արմատական բառարան:

³⁴⁵ Տե՛ս **Ս. Ամատունի**, նշվ. աշխ., էջ 328:

³⁴⁶ Տե՛ս **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

Ծովագյուղի խոսվածքում գործածվում է **կանտ** ձևով³⁴⁷: Այստեղից իսկ հետևում է, որ որոշ բարբառներում **թ > տ** հնչյունափոխությամբ **կանթ**-ը իրոք դարձել է **կանտ**, որն էլ իր հերթին ենթարկվել է **տ > կ** դրափոխության կամ շրջման և առաջ բերել **տանկ**, այլև **տանգ** (ն ձայնորդին **կ**-ի հաջորդելու պատճառով) ձևերը. հմմտ. փետուր **թեփուր > թեփուռ**, պուտ > **տոպ** (բայց նաև **պօտ**), կմճիթ > ***կընթիձ > *կընտիձ > *կընտիչ > կընդիչ**³⁴⁸:

Այսպիսով՝ սովորական ու պարզ դրափոխության օրենքով **կանթ** բառից ծագել-առաջ է եկել **տանկ** || **տանգ** բառը, որը իմաստի նեղացմամբ սկսել է գործածվել միայն «ջվալի (տոպրակի) կողերի երկու օղակները» նշանակությամբ³⁴⁹: Անշուշտ, նույն այդ բառն էլ Ղազախում ստացել է ավելի նեղ՝ «Քթին տակը գտնված և երկու ծակերը բաժանող կռճիկը?», «Երկու քթածակերն իրարից բաժանող կռճիկի ներքևի մասը (?)» իմաստը, որ առաջ է եկել նմանողության, այսինքն՝ քթածակերը ջվալի կողերի երկու օղակներին նմանեցնելու հիման վրա³⁵⁰: Այսպիսով՝ եթե հիմնավոր է ճանաչվում **կանթ > կանտ > տանկ** || **տանգ** հնչյունական փոփոխությունը³⁵¹, ապա **տանկ** || **տանգ**-ի նախավոր ու սկզբնական ձևը իրոք **կանթ** բառն է, որը գրավոր ավանդված է ուշ շրջանից (XIII դար) և հայերենի դեռևս չստուգաբանված արմատներից է³⁵²:

³⁴⁷ Առաջինի համար տե՛ս **Յր. Ածառյան**, Հայերեն արմատական բառարան, իսկ երկրորդի համար՝ **Ռ. Բաղդամյան**, Սևանա լճի ավազանի խոսվածքները, Երևան, 1972, էջ 208:

³⁴⁸ Այդ մասին տե՛ս, օրինակ, մեր «Գորիսի բարբառը», էջ 115-116:

³⁴⁹ Մեղրու, Կարճևանի ևն բարբառներում **տանգ** բառը ունի նաև «համետի վրա կարված օղակ» նշանակությունը (տե՛ս, օրինակ, **Յ. Մուրադյան**, Կարճևանի բարբառը, Երևան, 1960, էջ 230):

³⁵⁰ Պրոֆ. Գ. Ջահուկյանը հիշյալ նշանակությամբ գործածվող **տանգ** բառը «հայերենի ընդհանուր օրինաչափություններից» շեղվող և «օտար ենթաշերտ կամ որևէ հնդեվրոպական լեզվից հին փոխառություն» ենթադրող արմատների շարքում ներկայացրել է այսպես. «**տանգ** «քթանցքները բաժանող կռճիկ» (Ղրբ.) – հուն. τέναςος «ծանծաղուտ», լատվ. tingas (*tingas) «խոր տեղ՝ երկու ոչ խոր տեղերի միջև» (հ.-ե. tenagos, tnegos «ջրի հատակ», տե՛ս նրա «Հայ բարբառագիտության ներածություն», Երևան, 1972, էջ 321):

³⁵¹ **Կանթ** բառը կարող էր **տանկ** || **տանգ** դառնալ նաև **կանթ > թանկ > տանկ** || **տանգ** հնչյունափոխական ընթացքով:

³⁵² Իր իմաստային ու հնչյունական կողմերով **կանթ** բառը որոշակիորեն համընկնում է հին ֆրանսերենի cant (հմմտ. լատ. canthus «1. երկաթյա օղակ, железный обод. 2. Անիվ, ակ, “колесо”, տե՛ս “Латинско-русский словарь”, под общей редакцией проф. С. И. Соболевского, М., 1949, էջ 136) բառին, որը և ամենայն հավանակա-

24. ՏՈՊ (< ՏՕՊ)

Գորիսի և Ղարաբաղի բարբառներում **պուտ** «կակաչ, հարսնուկ, ծափկոտրուկ», «արտերի մեջ բուսնող, մեջը գնդաձև կարմիր ծաղիկ ունեցող բույս» և **պուտ** «կաթիլ, փոքր կաթիլ», «փոքր ինչ, մի քիչ» բառերը³⁵³ գործածվում են շրջված **տոպ** (< տուպ < պուտ) ձևով³⁵⁴: Մի երկու օրինակ. Ըրտերունը տօպը ըստարի շատ ա (Արտերուն պուտը այս տարի շատ է), Խօխան մընչանք տօպ ա կերալ, վեր փօրը ցավում ա (=Երեխան այնքան պուտ է կերել, որ փորը ցավում է). Մանդը կըտրալ ա, ամմա մըն տօպ արի չի **կ'ամ** (= Մատը

նությամբ միջին դարերում փոխանցվել է հայերենին: Զր. Աճառյանի հաստատմամբ՝ հին ֆրանսերենից փոխառված 86 բառերից 4-ը առտոնին կյանքին է վերաբերում: «Առտոնին տնտեսության բաժինը,- գրում է նա,- գիտե երեք տեսակ ամանեղենի անուն, որոնք են **հանապ** «բաժակ», **մորթաղ** «սանդ», **պացին** «կոնք». սրանցից դուրս կա **մորտ** «ամանների բերանը զոցելու հատուկ մեխ կամ շաղախ. Խտ»: Ամանեղենի փոխադրությունը երկրից երկիր ծանոթ երևույթ է. նորամուտ առարկայի հետ գալիս է նաև իր անունը» (տես «Հայոց լեզվի պատմություն», 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 306):

Կանթ-ը՝ իբրև ամանի մասի անուն, պատկանում է, անշուշտ, Զր. Աճառյանի հիշատակած բառերի թվին և հայերենին է անցել Եվրոպայից փոխադրված ինչ-որ ամանեղենի կամ զուցե կանթավոր արծաթե, ոսկե դրամի հետ՝ տարածում գտնելով հատկապես այն բարբառներում (Վանի, Մշո, Սալմաստի, Ալաշկերտի, Արարատյան, Ղարաբաղի ևն), որտեղ մուտք են գործել այդ իրերը: Հատկանշական է, որ բոլոր դեպքերում **կանթ**-ը «ամանների և այլ իրերի օղակաձև կամ կես բոլորակ կցվածքի», «փոքրիկ մետաղե օղակի» իմաստներն է արտահայտել, հիմք ծառայելով **կանթանի**, **կանթավոր** (= կանթ ունեցող), **կանթել** (= «1. Պղնձեղեն անոթների կանթ ձգել, դնել»: 2. Դրամներին ունկ, կանթ դնել իբրև զարդ գործածելու համար: 3. Կանթի ձևով ձեռքերը կողքին դնել») բառերի կազմության համար:

Կանթ (< cant) բառը հին ֆրանսերենից, սակայն, ոչ միայն հայերենին, այլև, ինչպես ստուգաբան Մ. Ֆասմերն է գտնում, անցել է գերմաներենին, լեհերենին և վերջինիցս էլ հավանաբար նաև ռուսերենին. “Кант. “шов, отделка, обшивка”. Вероятно, через польск. kant из нем. Kante, которое происходит из см.-франц.” (տես նրա “Этимологический словарь русского языка”, т. II, М., 1967, էջ 181):

Դա այդպես լինելու դեպքում, հասկանալի է, ծագումով նույնանուն են հայերեն **կանթ** և ռուսերեն кант («եզրաքող», «եզրաշրջանակ») բառերը, որոնց իմաստների միջև եղած կապը նույնպես ակնհայտ է:

³⁵³ Դրանց նշանակությունների համար տես «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», էջ 700: **Ս. Ամատունի**, նշվ. աշխ., էջ 566: **Զր. Աճառեան**, Հայերեն գալառական բառարան, էջ 926: **Նույնի**՝ Հայերեն արմատական բառարան: **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան: **Տ. Նավասարդեան**, Բառգիրք Արարատեան բարբառի, Տիգրիս, 1903, էջ 99 և այլն:

³⁵⁴ Այդ մասին տես **Զր. Աճառեան**, Հայերեն գալառական բառարան: **Նույնի**՝ Հայերեն արմատական բառարան, հատ. Ե, էջ 1129-1132, այլ մեր «Գորիսի բարբառը», էջ 485:

կտրել է, բայց մի պուտ արյուն չի գալիս), «Ընընեն մի տօպ թօռ ալ յէկալ չի (= Այս ամռանը մի պուտ անձրև էլ չի եկել)»...

Սկզբնաղբյուր բառարաններում այդ բառերը դիտվում են իբրև իրարից անկախ, համանուն կամ նույնանուն բառեր և ներկայացվում, բնականաբար, առանձին գլխաբառերով: Բայց նախ հենց այն հանգամանքը, որ ինչպես **պուտ I** և **պուտ II** համանունները, այնպես էլ դրանց շրջված ձևերը հիմնականում գործածության նույն վայրերն են ընդգրկում, ըստ էության ազդանշուն է նրանց միջև եղած ծագումնաբանական կապն ու ընդհանրությունը: Եվ իրո՞ք. բնավ պատահական չպետք է համարել, որ նրանք հավասարապես գործածվում են Երևանի (պուտ), Թբիլիսիի (պուտ), Պոլսի (բուդ), Ալաշկերտի (բուդ), Կարնո (պուդ), Վանի (պուտ), Ղարաբաղի (տօպ), Գորիսի (տօպ) և այլ բարբառներում ու խոսվածքներում³⁵⁵, որոնցում էլ նրանցից մեկը եթե իսկապես՝ **պուտ** բույսը, ապա մյուսը «կաթիլ, մի կաթիլ», «փոքր ինչ, մի քիչ» նշանակություններն է արտահայտում:

Արդ՝ դրանցից ո՞րը կարող էր իմաստապես ճյուղավորվել և հիմք դառնալ մի նոր նշանակության ստեղծման համար: Հայտնի է, որ ծաղիկ (կակաչ, ծափկոտրուկ, հարսնուկ) նշանակող **պուտ**-ը մի այնպիսի բույս է, որ քաղելու ժամանակ կտրված մասից **արնանման շիթ կամ կաթիլ է դուրս գալիս**³⁵⁶՝ արյան շիթի՝ կաթիլի նման դրոշմելով, ասենք, քաղողի ձեռք(եր)ին: Միանգամայն տրամաբանական է, որ այդօրինակ նմանողության հիմքի վրա բույս նշանակող **պուտ** բառից կարող էր առաջ գալ և, անշուշտ, առաջ է եկել «կաթիլ, մի կաթիլ» իմաստը, որ բառաձևի ինչպես ուղիղ, այնպես էլ շրջված ձևով առաջին անգամ արձանագրվել է Երեմիա Մեղրեցու բառարանում **շիթ** բառի բացատրության մեջ. «Շիթ – կաթիլ, պուտ, կաթ, կամ տուպ, կամ ցայթ»³⁵⁶: Բայց բույս նշանակող **պուտ** բառից առաջ եկած «կաթիլ, մի կաթիլ» իմաստով նրա նշանակության փո-

³⁵⁵ Դրանց մեծ մասի համար տես **Յր. Աճառեան**, Հայերեն գալառական բառարան: **Նույնի**՝ Հայերեն արմատական բառարան: **Ս. Ամատունի**, Հայոց բառ ու բան, էջ 566:

³⁵⁶ Տես Բառգիրք հայոց, էջ 247 և **Յր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հատ. Ե, ուր հեղինակը գրում է. «ՊՈՒՏ, Կաթիլ». հետին հայերեն բառ, որ գտնում են գործածված Առաք. պտմ., էջ 457. հիշում է նաև Բռ. Երեմ. էջ 246՝ Շիթ բառի բացատրության մեջ: Կենդանի է գավառականներում **պուտ** ձևով, որի շրջվածն էլ կա **տուպ** ձևով. այս ձևն էլ է հիշում Բառ. Երեմ. անդ» (էջ 1131):

փոխությունը կամ զարգացումը ամենևին էլ կանգ չի առել. ինչպես մեծանուն հայագետ-լեզվաբան Ջր. Աճառյանն է պարզ ու գեղեցիկ բացատրել, իբրև փոքրության նշան «կաթիլ» գաղափարից ծնունդ են առել նաև «նիշ պիսակի, մարմնի վրա խալ», «մի քիչ, մի փոքր կտոր» իմաստները, որոնք գործածական ենք տեսնում այլևայլ բարբառներում: Չի կարելի անտեսել նաև այն հանգամանքը, որ թե՛ **բույս** («կակաչ, ծափկոտրուկ, հարսնուկ») և թե՛ մյուս նշանակությունների համար **պուտ** բառը գործածվում է նաև **կրկնությամբ**. հմմտ. **պուտ պուտ** || **տոպ տոպ** («կակաչի կամ խաշխաշի մի տեսակը») և **պուտ պուտ** || **տոպ տոպ** («կաթիլ կաթիլ») ³⁵⁷, **պուպուտուրիկ** («պուտեր ունեցող, խատուտիկ») և **տպտպիկ, տպտպորիկ** («կիտվածավոր՝ կետ-կետ զարդեր ունեցող») և այլն:

Այսպիսով՝ բերված փաստերը եթե մի կողմից բույս նշանակող **պուտ** բառի կրած իմաստափոխությունների ընթացքն են ուրվագծում, ապա մյուս կողմից հաստատում ու ակներև են դարձնում նրանց «կաթիլ, մի կաթիլ», «կետ», «մի քիչ, մի փոքր» իմաստներն արտահայտող **պուտ** (> պօտ > տօպ) բառի ծագումը:

25. ԿՈՆԾԵԼ

Կոնծել («1. Ոգելից խմիչքով լի բաժակը միանգամից դատարկել՝ ըմպել խմել. 2. Խմել-հարբել») բառը ավանդված է XIX դարի առաջին կեսից: Ս. Ամատունու հավաստմամբ՝ այն վաղ շրջանում գործածել են Խ. Աբովյանը («Մեկ թաս արաղ էլ **կոնծեց**»), Մ. Թաղիադյանը («Գրեալ էի... զանցս Փոնձույ ծերունույ Բիւրականցույ՝ որ **կոնծէր** զմեր ամենայն գինի»), «Ազգասեր» լրագիրը [«Յորժամ իցես ի կոչունս ուրեք՝ մին պիրկ **կոնծիր** (արբ)... մի կուշ լաց], Պ. Պռոշյանը («Աշտարակու գինին ու արաղը... **կոնծում** են») ³⁵⁸:

Ինչպես հիշյալ օրինակներն են ցույց տալիս, **կոնծել** || **կոնծել** բառը պատկանում է Արարատյան (Երևանի) բարբառին և, անշուշտ, նախապես ծնունդ է առել ու կազմավորվել հենց այդտեղ: Դա հաստատում է ոչ միայն Ս. Ամատունին, ով **կոնծել** բառը զուտ Արա-

³⁵⁷ Հմմտ. **պուտ** – կաթիլ: **Պուտ պուտ** – կաթիլ կաթիլ: Մնին պուտ պուտ, մնին փուք փուք (**Տ. Նավասարդեան**, Բառգիրք Արարատեան բարբառի, էջ 99):

³⁵⁸ Տե՛ս Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 250:

րատյան (Երևանի) բարբառին է վերագրում³⁵⁹, այլև Զր. Աճառյանը, ով, այն գործածական է տեսնում նաև Ղարաբաղի, Շամախիի, Պոլսի, Վանի և Թբիլիսիի բարբառներում³⁶⁰:

Արդ՝ ի՞նչ ծագում ունի **կոնծել** (կոնծել) բառը, որը, ծնունդ առնելով բարբառի ընդերքում, աստիճանաբար բարձրացել և լիակատար գրական արժեք է ստացել ժամանակակից արևելահայ գրական լեզվում: **Կոնծել** || **կոնծել** բառը սերում է **կործել** < **կործ** + **ել** («Ամանը գլխիվայր դարձնել՝ շրջել. բոլորը դատարկել») բայից³⁶¹ և **այլ բան չէ, քան նրա բարբառային արտահայտությունը**: Այդ պատճառով նրանց միջև գոյություն ունեն իմաստաբանական և հնչյունաբանական ակնհայտ ընդհանրություններ: Եվ իսկապես. **կործել** և **կոնծել** || **կոնծել** բայերը իրենց արտահայտած հիմնական իմաստներով (հմմտ. «Ամանը գլխիվայր դարձնել՝ շրջել. բոլորը դատարկել» և «Ոգելից խմիչքով լի բաժակը միանգամից դատարկել՝ ըմպել՝ խմել») ամենևին հեռու կամ սահմանագատված չեն իրարից: Անցյալում սովորություն է եղել ոգելից խմիչքով բաժակը մեկեն ըմպելուց՝ խմելուց հետո «բերանն ի վայր շրջել»՝ ի նշան ամբողջապես դատարկած լինելու: Այդ հիմքի վրա, բնականաբար, նախնական **կործել** բայի՝ «բերան ի վայր շրջել զամանն, կամ դատարկել»³⁶², «ամանը գլխիվայր դարձնել, բոլորը դարտրկել»³⁶³, «ամանը գլխիվայր շրջել»³⁶⁴, «բերանը դեպի վայր շրջած դնել»³⁶⁵ և կամ «ամանը բերանի վրա շրջել» իմաստից կարող էր ծագել և իրոք ծագել է «ոգելից խմիչքով լի բաժակը միանգամից դատարկել՝ ըմպել՝ խմել» նշանակությունը, որից էլ, իր հերթին, գործառական իմաստափոխությամբ առաջ է եկել «խմել-հարբել» երկրորդական նշանակությունը:

Կործել և **կոնծել** || **կոնծել** բայերը իրարից առանձնապես չեն տարբերվում նաև իրենց արտաքին հնչյունական կազմով. բառային մի նոր նշանակություն ստանալու հետ մեկտեղ **կործել** բայը պարզապես իր **ր** ձայնորդը փոխարինել է մի այլ՝ **ն** ձայնորդով: Նման

³⁵⁹ Նույն տեղում:

³⁶⁰ Տե՛ս Զր. Աճառյան, Գայերեն գաւառական բառարան:

³⁶¹ Տե՛ս Զր. Աճառյան, Գայերեն արմատական բառարան:

³⁶² Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. 1, էջ 1119, 1120:

³⁶³ Տե՛ս «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», էջ 448:

³⁶⁴ Տե՛ս Զր. Աճառյան, Գայերեն արմատական բառարան:

³⁶⁵ Տե՛ս Ստ. Մալխասեանց, Գայերեն բացատրական բառարան:

հնչյունափոխությունը ամենևին (հմմտ. գլուխկործի > գլուխկոնծի || գլուխկոնծի) խորթ չէ հայերենին և ազատորեն կարող էր տեղի ունենալ նաև այս դեպքում: Այս կարգի հնչյունափոխության իսկության մի այլ ապացույցն էլ **կոնծել** բայի **կոնծել** ձևն է, որտեղ խուլ **ծ**-ն ձայնեղ **ծ** է դարծել **ր > ց** հնչյունափոխությունից հետո՝ ձայնորդ **ն**-ի պատճառով:

Կա **կործել**-ից **կոնծել** || **կոնծել** բայի առաջացումը հաստատող մի այլ փաստարկ ևս. **կոնծել** || **կոնծել** բայը գործածող բարբառների մի մասը և հատկապես Արարատյան Երևանի (բարբառը անաղարտորեն պահպանում են նաև նրա նախնական **կործել** ձևը՝ «ամանը գլխիվայր շրջել») նշանակությամբ. իսկ դա էլ հենց ցույց է տալիս, որ **կործել** բայը եթե մի դեպքում անփոփոխ է մնացել ու պահել իր բուն նշանակությունը, ապա մյուս դեպքում, հնչյունափոխության ենթարկվելով, առաջ է բերել բառական մի նոր միավոր՝ հարանուն³⁶⁶, որը և, բնականաբար, այլ նշանակություն է արտահայտում:

26. ՀՈՒՇՏ

Հուշտ || **հո՛ւշտ** բառը հատուկ է Արարատյան (Երևանի), Ղարաբաղի, Գորիսի, Թբիլիսիի, Շամախիի, Վանի բարբառներին և գործածվում է մեծավ մասամբ իբրև հարադիր՝ **անել**, **լինել** բայերի հետ կազմելով **հուշտ անել** («1, խրտնեցնել, **հուշտ** ձայնն արծակելով՝ քշել-հեռացնել: 2. Անակնկալի բերել, վախեցնել»), **հուշտ լինել** («1, խրտնել, հուշտ ձայնը լսելով իսկույն տեղից վեր թռչել: 2. Անակնկալի գալ, վախենալ») հարադրավոր բայերը³⁶⁷. օրինակներ՝ Ջանին կողքին դրած բարակ ճիպոտը ճոճում էր [կաչադակներին ու ծտերին] «հուշտ» անում (Ա. Բակունց, Երկեր, 1955, էջ 436), Գժին մի **հուշտ անելն** էլ բավական է (Ա. Ղանալանյան, Առածանի, 1960, էջ 166), Գողն իրա շվաքիցը **հուշտ կլինի** (ն. տ., էջ 75), Բայց էլի

³⁶⁶ **կործել**-ից ծագած **կոնծել** բայի **կոնծ** արմատով ժամանակի ընթացքում կազմվել են նաև այլ բառեր, ինչպես՝ **կոնծաբանություն**, **կոնծաբան**, **կոնծաբանել**, **կոնծում**, **կոնծոց** և այլն:

³⁶⁷ Դրանց մասին տես **Տ. Նավասարդյան**, Բառգիրք Արարատյան բարբառի, Տփղիս, 1903, էջ 68: **Ա. Ամատունի**, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 405: **Հր. Աճառեան**, Հայերեն գաւառական բառարան: **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան և այլն:

հուշտ էլած ոչխարի պես եղ էին դառնում (Խ. Աբովյան, ԵԼԺ, 3-րդ հատոր, էջ 38), Գեղի միջին ձին **հուշտ էլավ** (Պ. Պռոշյան, «Սոս և Վարդիթեր») և այլն:

Հիշյալ բայերում իբրև հարադիր գործածվող **հուշտ** բառը, ինչպես օրինակներն են ցույց տալիս, ծագում է, անշուշտ, մեկին (կենդանու կամ մարդու) հանկարծակի քշելու-հեռացնելու, խրտնեցնելու նպատակով արտաբերված **հուշտ** || **հո՛ւշտ** ձայնից, որը անկախաբար հենց միջարկության կամ ձայնարկության (իմա՛ խրտնեցնելու բացականության) նշանակություն է արտահայտում³⁶⁸:

Սերելով **հուշտ** || **հո՛ւշտ** ձայնից՝ այդ բառը, սակայն, աստիճանաբար իմաստապես ընդլայնվել է և ոչ միայն **անել**, **լինել** բայերի հետ հարադրվելով՝ լայն նշանակությամբ օժտվել, այլև հիմք է ծառայել **հուշտռիկ** || **հո՛ւշտառիկ** («1. Խրտնող. 2. Թեթևսուլիկ, թեթևամիտ»), **հուշտհուշտիկ** («1. Մի չնչին բանից հուշտ եղող՝ խըրտնող. 2. Թեթևսուլիկ, թեթևամիտ») բառերի համար, որոնց նշանակությունների հիմքում նույնպես ընկած է նրա ընդլայնված իմաստը:

Այսպիսով՝ **հուշտ** || **հո՛ւշտ** ձայնից **հուշտ** (|| **հո՛ւշտ**) բառի և դրանից համապատասխան բաղադրյալ բառերի (**հուշտ անել**, **հուշտ լինել**, **հուշտռիկ**, **հուշտհուշտիկ**, այլև՝ **հուշտ-հուշտ անել**, **հուշտ-հուշտ լինել**) առաջացումը ծագումնաբանական տեսակետից որևէ կասկած չի հարուցում:

Հր. Աճառյանը, Շամախիի բարբառում հիշատակում է **առիթ** իմաստով գործածվող **հուշտ** բառը և համարում դա «գրաբարի մեջ գոյություն չունեցող բոլորովին նոր արմատ»³⁶⁹: Բայց թե՛ Հր. Աճառյանի և թե՛ հետագայում ուրիշները³⁷⁰, Շամախիի բարբառում նման բառի գոյությունը նշելով, չեն բերում, սակայն, որևէ օրինակ նրա իսկությունը հավաստելու համար: Եվ, որ բոլորովին էլ պատահական չէ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Շամախիի բարբառը **առիթ** իմաստով **հուշտ** || **հո՛ւշտ** բառ չի ճանաչում: Ինչպես այլ բարբառներում, այնպես էլ Շամախիի բարբառում **հուշտ** || **հո՛ւշտ** բառը հիմնականում ևս **անել**, **լինել** բայերի հետ իբրև

³⁶⁸ Տե՛ս, օրինակ, **Ս. Գաբամաճյան**, Նոր բառգիրք հայերեն լեզվի, Կ. Պոլիս, 1910, էջ 836:

³⁶⁹ Տե՛ս **Հր. Աճառյան**, Հայերեն գաւառական բառարան, այլև՝ **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

³⁷⁰ Տե՛ս, օրինակ, **Ռ. Բաղրամյան**, Շամախիի բարբառը, Երևան, 1964, էջ 242:

հարադիր է գործածվում (օրինակ՝ Սեդրակը հուշտ ինօղ մարթ ա. Սեյրան դային հուշտ ա ըրալ ուրան հընգերնէրին) և ճիշտ նույն նշանակություններն արտահայտում: Բայց, այնուհանդերձ, եթե անգամ ընդունենք, որ Շամախիի բարբառում **առիթ** իմաստով **հուշտ** || **հճւշտ** բառ կա, որ մոռացվել կամ ուղղակի հայտնի չէ մեզ, ապա պետք է ասել, որ դա կարող է միայն առաջ եկած լինել նույն **հուշտ** || **հճւշտ** բառից՝ մեկին խրտնեցնելու, վախեցնելու, հանկարծակի հեռուն փախցնելու.... համար արտասանված ձայնը ինչ-որ առիթի հետ հարակցելու կամ ինչ-որ առիթ դիտելու հիման վրա:

27. ՊԼՈՒՏ

Պլուտ բառը **պլուդ** ձևով և **աղքատ** իմաստային բացատրությանը (**Պլուդ** - աղքատ) առաջին անգամ տեղ է գտել Ս. Նավասարդյանի կազմած բարբառային բառարանում: Եվ այնուհետև, իբրև գլխաբառ, այն ներկայացվել է Ս. Ամատունու «Հայոց բառ ու բանուն»։ «**Պլուտ** Ար. Շրկ. Շրվջղ (= Շիրվանջուխ՝ գյուղ Շիրակում). Խոյ. Դրամ չունեցող, աղքատ, դատարկածեռն: Պլուտ մարդ ա: Փողերը ծախսեց, պլուտ եկավ տուն: Պլուտ եմ, ձեռքիս բան չկա: ***Պլուդ**. Աղքատ, Նավ. բառ. 98»³⁷¹:

Ակներև է, որ Ս. Ամատունին, տվյալ դեպքում հետևելով Ս. Նավասարդյանին, ոչ թե կրկնել է նրան, այլ **պլուտ** բառի գործածության այլ վայրեր է նշել, ինչպես նաև ընդարձակել է նրա իմաստային բացատրությունները և բերել, այն էլ՝ ժողովրդի բերանից լսած, օրինակներ³⁷²:

Պլուտ բառին անդրադարձել է նաև Զր. Աճառեանը՝ «Հայերեն գալառական բառարանում» դիտելով իբրև «գրաբարի մեջ գոյություն չունեցող բոլորովին նոր արմատ»։ Դրա հետ մեկտեղ Աճառյանը ևս իր հերթին **պլուտ** բառի գործածության նոր վայրեր է նշել և ներկայացրել այն երեք իմաստով. ***Պլուտ** Դվ (= Դավրեժ), Երև. (= Երևան), Նբ. (= Նոր-Բայազետ) Դատարկ, աղքատ, անկուտի, դրամ չունեցող: 2. Դրբ (= Ղարաբաղ) Փճացած վարքի տեր, անբարոյա-

³⁷¹ Տե՛ս Ս. Նավասարդյան, Բառգիրք Արարատյան բարբառի, էջ 98:

³⁷² Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 559:

կան: 3. Պլ. (= Պոլիս) Սաստիկ գինով»³⁷³: Հմմտ. «+ ՊԼՈՒՏ. ած. 1. Աղքատ, անկուտի, դատարկածեռն: Պլուտ եմ, ձեռքիս բան չկա: Փողերը ծախսեց, պլուտ եկավ տուն: 2. Անբարոյական, փչացած վարքի տեր: 3. Սաստիկ հարբած»³⁷⁴:

Այսպիսով ինչպես դժվար չէ նկատել, բառարանները, հավաստելով **պլուտ** բառի գոյությունն ու բարբառային բնույթը, չեն տալիս, սակայն, նրա ծագումը: Այստեղից էլ՝ հարց. ի՞նչ է և որտեղի՞ց է ծագում **պլուտ** բառը, որ բավական ուշ՝ XX դարի սկզբից է գրավոր ավանդվել մեզ: Պետք է ասել, որ թե՛ հենց այս վերջին հանգամանքը, թե՛ բառի արտաքին հնչյունական կազմը և թե՛ արտահայտած իմաստները ցույց են տալիս, որ այն անմիջականորեն առնչվում է ռուսերենի **плум** (“Плум м. плумовка ж. кто плумует, ловкий обманщик, мошенник, бездельник, нечестный человек, особ. в мелочах...”)³⁷⁵ > **плум** [“Плумб (плума устар.) м. 1. Хитрый и изобретательный обманщик, мошенник (преимущ. в мелких делах...). 2. Хитрец, лукавец, коварный человек, прои́доха”]³⁷⁶ բառին, որ փոխ է առնվել ու գործածվել հայերենի այլևայլ բարբառներում³⁷⁷:

Իսկ դա, անշուշտ, տեղի է ունեցել արդյունաբերական կապիտալիզմի զարգացման շրջանում՝ գյուղից քաղաք (Բաքու, Թբիլիսի) մեկնած ու վերստին գյուղ վերադարձած մարդկանց միջոցով, որոնք ռուսերենի **плум** (= պլուտ) բառի գործածությամբ իրենց վերաբերմունքն են արտահայտել քաղաքում խարդախությամբ ու ստորությամբ, խաբեությամբ ու նենգությամբ զբաղվող, ինչպես նաև ցոփ ու շվայտ, փչացած ու անբարոյական կյանք վարող անձանց նկատմամբ: Սրա հիման վրա ռուսերենի **плум** > **պլուտ** բառը, մի խումբ

³⁷³ **Ջր. Ածառեան**, Հայերեն գաւառական բառարան:

³⁷⁴ **Ստ. Մախասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

³⁷⁵ **В. Даль**, Толковый словарь живого великорусского языка, т. III, М., 1935, էջ 132:

³⁷⁶ Толковый словарь русского языка, под редакцией проф. **Д. Н. Ушакова**, т. III, М., 1939, էջ 310:

³⁷⁷ **Պլուտ** բառը **պըլուտ**||**պուլուտ** ձևով գործածական է նաև Գորիսի բարբառում: Այն մեր «Գորիսի բարբառը» ուսումնասիրության մեջ «1. Պլուտ՝ փչացած վարքի տեր, անբարոյական: 2. Աղքատ, դատարկածեռն» նշանակություններով բուն հայերեն, իսկ «խաբեբա, խարդախ, ստոր մարդ» նշանակությամբ ռուսերենից փոխառյալ բառ ենք համարել (տե՛ս նշվ. աշխ., էջ 460, 556):

բարբառների անցնելով, ընդլայնվել է իմաստապես և իր բուն՝ «խաբեբա, աճպարար, խարդախ, սրիկա. նենգ, նենգավոր. նենգամիտ, նենգամիտ անձ»³⁷⁸ իմաստից զատ ստացել նաև «1. Աղքատ, դատարկածեռն. 2. Անբարոյական, փչացած վարքի տեր. 3. Սաստիկ գինով՝ սաստիկ հարբած» նշանակությունները՝ ճանաչում գտնելով բառարաններում: Իսկ սա ցույց է տալիս, որ դրանցում **պլուտ** բառը ներկայացվել է ոչ բոլոր իմաստներով, որ անտեսվել է նրա հիմնական նշանակությունը, և հենց այդ պատճառով մութ է մնացել ծագումը: Յովհ. Թումանյանը՝ Յր. Աճառեանի «Յայերեն գալառական բառարանի» մասին գրած հայտնի գրախոսականում նկատել է. «**Պլուտ** ժողովրդի բերանում **աղքատ** չի նշանակիլ, այլ **դատարկապորտ, խաբեբա, սրիկա**»³⁷⁹: Եվ այդ իմաստներից կարող էին, անշուշտ, առաջ գալ «1. Դատարկածեռն՝ դրամ չունեցող՝ աղքատ», «2. Անբարոյական, փչացած վարքի տեր», «3. Սաստիկ գինով՝ հարբած» երկրորդական նշանակությունները, որոնք, սակայն, տվյալ դեպքում հայտնի չեն եղել նրան:

Պլուտ բառի փոխառյալ լինելը հաստատվում է մի այլ իրողությամբ ևս, եթե ռուսերենում, իբրև փոխատու լեզվում, օրինաչափորեն ուղտ բառարմատով բազմաթիվ բաղադրյալ բառեր կան կազմված, ինչպես՝ ուղтатъ, ուղтuшкa, ուղтuшu, ուղтoвaтocтъ, ուղтoвaтuы, ուղтoвaтъ, ուղтoвкa, ուղтoвcкuն, ուղтoвcтвo... , ապա հայերենի բարբառներում նրանով բաղադրյալ բառեր զրեթե չեն կազմվում: Յր. Աճառյանը հիշատակում է «**պլուտ բառեն**» կազմված միայն **պլտացնել** պատճառական բայը³⁸⁰, որը Ստ. Մալխասյանցն էլ, հանելով ենթադրյալ **պլուտանալ** (= պլուտ դառնալ) անորոշից, «Պլուտ դարձնել, աղքատացնել, դատարկածեռն թողնել» նշանակությամբ զետեղել է իր բառարանում³⁸¹: Այսպիսով պարզ է, որ **պլուտ** բառը իրո՞ք ռուսերենից կատարված փոխառու-

³⁷⁸ Տե՛ս **Ար. Ղարիբյան**, Ռուս-հայերեն բառարան, Երևան, 1968, էջ 778:

³⁷⁹ **Յ. Թումանյան**, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1951, էջ 408:

³⁸⁰ Տե՛ս **Յր. Աճառեան**, Յայերեն գալառական բառարան: Ի դեպ, մերժելով դրա համար Յր. Աճառյանի տված «աղքատացնել» իմաստային բացատրությունը Յովհ. Թումանյանը միաժամանակ նկատում է, որ «**Պլտացնել** կնշանակի նաև խոսքը չպահել, բերնից թոցնել, դուրս թողնել» (տե՛ս նշվ. աշխ., էջ 408): Պետք է, սակայն, ասել, որ այդ նշանակությամբ գործածվող **պլտացնել** բառը **պլտալ** (=պլթալ) բայի պատճառականն է և երբեք ծագումնաբանորեն չի կապվում նախորդի հետ:

³⁸¹ Տե՛ս **Ստ. Մալխասեանց**, Յայերեն բացատրական բառարան:

թյուն է, որը, սակայն, հանգամանքների բերումով սակավ գործածական է դարձել բարբառներում:

28. ՏՈՒՆԴԻ

Տունդի բառը գործածական է Ղարաբաղի ու Գորիսի բարբառներում և նշանակում է «Երաստան, նստատեղի»: Զր. Աճառյանը, ինչպես նաև Ստ. Մալխասյանցը, բառն այդպես էլ ներկայացնելով իրենց բառարաններում³⁸², նրա ծագումը չեն բացատրում: Բայց երկու (հատկապես Գորիսի) բարբառները երևան են հանում լեզվական այնպիսի հավաստի փաստեր, որոնք ցույց են տալիս, որ **տունդի** բառը սերում է գրաբարյան **տուտն** («վերջք. սպառուած, ծայր երկայնեալ ի յետին մասունս իրաց և կենդանեաց: Որպէս ազի, ձետ, վերջ. թև, պոչ», «Մի բանի ծայրը կամ վերջը, ազի, պոչ», «1. Կենդանիների, մանավանդ օձի պոչը: 2. Ջգեստի ծայր՝ վերջ, քղանցք: Կտորի չորս ծայրերից մեկը»)³⁸³ բառից և իբրև վերջինիս բարբառային արտահայտություն՝ թե՛ արտաքին-հնչյունական, թե՛ ներքին-իմաստային կողմերով սերտորեն կապված է մնում նրա հետ: Նախ՝ ինքնին պարզ է, որ նստատեղին ևս մարմնի ծայրամաս է ցույց տալիս, և հետևաբար՝ գրաբարյան **տուտն** և բարբառային **տունդի** բառերն **իմաստով** ըստ էության չեն տարբերվում: Երկրորդ՝ շատ որոշակի է նաև նրանց միջև եղած հնչյունական ընդհանրությունը: Գրաբ. **տուտն** բառը Զր. Աճառյանի հաստատմամբ, Ղարաբաղի բարբառում հնչյունափոխվելով, տալիս է **տօտըն** «ծայր»³⁸⁴, որի դիմաց, սակայն, Գորիսի բարբառը ունի **տօնդը** («1. Ծայր, որևէ բանի դուրս ցցված մասը: 2. Ջգեստի ծայր, քղանցք»)³⁸⁵, որը և, իբրև անցման օրինակ, հստակաբար ուրվագծում է **տուտն**-ից **տունդի**-ի առաջացումը: Գորիսի (նաև Ղարաբաղի) բարբառում **տ**-ն, հաջորդելով **ն** ձայնորդին, սովորաբար ձայնեղանում, դառնում է **դ**, ինչպես՝ սանտր > **սանդըր**, ընտրել > **հնդրել**, անտեր > **անդեր** || **ան-**

³⁸² Տե՛ս Զր. Աճառեան, Զայերեն գաւառական բառարան: Ստ. Մալխասեանց, Զայերեն բացատրական բառարան:

³⁸³ Նշանակությունների համար համապատասխանաբար տե՛ս «Նոր բառգիրք Զայկազեան լեզուի», հատ. 2, էջ 892: Զր. Աճառյան, Զայերեն արմատական բառարան: Ստ. Մալխասեանց, Զայերեն բացատրական բառարան:

³⁸⁴ Տե՛ս Զր. Աճառյան, Զայերեն արմատական բառարան:

³⁸⁵ Տե՛ս մեր «Գորիսի բարբառը», էջ 485:

դար, փալանտուզ > **փալանդուզ** և այլն: Դա հաստատվում է նաև որոշ բառարանների հիշատակած **տունտ** ձևով, որ հենց ուղղակի **տունդի՝ նստատեղի** է նշանակում. հմմտ. «**Տունտ** Ղար. Նխ. Երաստան: Տունտ-նստոյ տեղին, Պլը-Պուղի, 188»³⁸⁶, «ՏՈՒՆՏ, տ. **Տունդի**»³⁸⁷:

Այսպիսով՝ պարզ է, որ միայն Գորիսի ու Ղարաբաղի բարբառներում գործածական **տունդի** բառը առաջ է եկել **տուտն** բառից՝ **տուտն** > **տոտնը** > **տոնդը** (> տունդի) ընթացքով. ըստ որում՝ նրա մեջ եթե մի կողմից բառավերջի **ը-ն**, փոխարինվելով **ի-ով**, ստացել է ածանցի արժեք, ապա մյուս կողմից՝ **օ-ի** վերածված **ու-ն**, ըստ երևույթին բարեհնչյունության պահանջով, վերստին **ու** է դարձել:

Այսքանից հետևում է, որ «Բարբառային բառերի մեկնություններ» խորագրով հոդվածաշարում ներկայացված բառերի մեծ մասը (օրինակ՝ **մրցնել**, **շալք**, **լզնվել**, **հախկ** ևն) եթե պահպանվում է սոսկ բարբառում, ապա մի որոշ մասը (օրինակ՝ **դունչ**, **գլուխկոնծի** || **գլուխկոնծի** ևն) նաև գրական լեզվում է գործածվում:

29. ԹԵՐՄԱՅԲ

Թերմացք («Կերակրի, կերածի կամ խմածի մնացած մասը՝ մնացորդը») > **թրմացք** || **թրմասք** || **թըրմասկ** || **թըռըմասկ** բառի **թեր** սկզբնաբաղադրիչը եթե ակնհայտորեն կապվում է **թերի** կամ **թեր** արմատի հետ և որևէ կասկած չի հարուցում (հմմտ. **թերատ**, **թերություն**, **թերխաշ**, **թերմաշ**, **թերխորով**, **թերեփ**, **թերիմաց** և այլն), ապա նրանց հաջորդող **-մացք** բաղադրիչը ինչ-որ չափով մթագմած է և, բնականաբար, անհրաժեշտ մեկնություն է պահանջում:

Դա նկատի առնելով՝ պետք է ասել, որ հիմնականում ժողովրդախոսակցական լեզվում գործածվող նույն այդ՝ **թերմացք** (օրինակ՝ «Հացի կտորտանքն ու քարթուն կտան, կերակուրի **թերմացքը** կտան...», բան չկա, ծառայի կարգն է դա», Զ. Թումանյան, «Գիքորը») բառի «մթագմած» **-մացք** վերջնաբաղադրիչը այլ բան չէ, քան **մնալ** բայի անցյալ կատարյալի **մնաց** հիմքից **ն-ի** անկումով առաջ եկած **մաց-ի** և գոյականակերտ **-ք** ածանցի միացությունը, հմմտ. գնացի

³⁸⁶ Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 636:

³⁸⁷ Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան:

գնացիր - **գնաց** և **գնաց + ք > գնացք**, լվացի - լվացիր - **լվաց** և **լվաց + ք >լվացք**, ընթացա - ընթացար - ընթացավ և **ընթաց + ք > ընթացք**, սլացա - սլացար - **սլացավ** և **սլաց + ք > սլացք** և այլն:

Այսպիսով՝ պարզ է դառնում և ակնհայտ է, որ **թերմացքը**-ը սովորական անհոդակապ իսկական բարդություն է՝ կազմված **թեր-մ(ն) + աց + ք** բաղադրիչներից:

30. ԼՅԱ

Լհա բառը, որ «Ղրբ. պես, նման, կարծես, թե իբր. **Յանց սև է, լհա ասես արաբ լինի**. 2. երբ որ, հենց որ... **Լհա որ եկավ, կերթանք**. 3. միայն, միայնակ. **Լհա մենակ դո՞ւ ես, ուրիշ մարդ չկա**. 4. այլևս, դարձյալ, մեկ էլ **էլլհա եկավ էս մարդը**» նկարագրությամբ ներկայացրել է Յր. Աճառեանը «Յայերէն գաւառական բառարանում»³⁸⁸, տակավին չստուգաբանված բազմիմաստ եղանակավորող (վերաբերական) բառ է և լայնորեն գործածվում է ոչ միայն Արցախի (Ղարաբաղի), այլև Գորիսի բարբառում՝ **լըհա՛, լիհա՛, ալլա՛հ, ալլա՛, էլլա՛, էլլհա՛** ձևերով, ինչպես, օրինակ՝ «**Լիհա՛** մեզ կըլխէն ա տինում», «**Ալլա՛հ ո՛ւրա՛ն** ասածն ա անում», «**էլլհա՛** խուլխէն թակում ա», «**Ալլա՛** աշկի միջին **ա՛** յէշո՛ւմ» և այլն:

Յիշյալ երկու բարբառներում գործածական այդ **լհա** բառը իր զանազան ձևերով պարզորոշ ցույց է տալիս, որ առաջ է եկել **այլ** («1. ևս, էլ, այլև, մեկ էլ. 2. բայց, սակայն, 3. հապա, նույնիսկ, 4. արդ, արդ ևս») և **ահա** («հրես, ահավասիկ») բառ-բաղադրիչներից³⁸⁹ դրանց փոփոխված ու հապավված ձևերի միացությամբ [այլ ալ || էլ + ահա - ալահա || էլահա - լահա - լիհա - լըհա] արտահայտելով մի քանի իրար մոտ ու տարբեր իմաստներ:

31. ԼՈՒ

Սինչև այսօր էլ հիմնավորապես պարզված չէ, թե **լոխ** «ամբողջ(ը)», «բոլոր(ը)» բառը, որ նույնպես լայնորեն գործածվում է Ար-

³⁸⁸ Յր. Աճառեան, Յայերէն գաւառական բառարան:

³⁸⁹ Այդ երկու բառերի իմաստների մասին տե՛ս հատկապես Յր. Աճառյան, Յայերեն արմատական բառարան:

ցախի և Գորիսի բարբառներում, օրինակ՝ «**Լոխ** էլ շնորհակալ եմ Ջերիքնագ աքոր անա. Լոխին էլ սիրտը օնում ա... խնդիրքը կատարում. **Արագը**. 11,10: Սաղ շհարը **լօխ** կերալ. **Նաւ Դեթթ. Ժ.37**³⁹⁰.» այլն՝ «**Լօխին** ալ **լա՛վ** ճընաչում էմ», «Ըստեղ **լօխան** || **լօխչան** || **լօխճան** մէծը հո՞ւվ ա», «Ընտրանք՝ **լօխունքը** || **լօխչունքը** || **լօխճունքը** || **լուխչէքանը** || **լուխճէքանը** իմ խօխտիքն էմ» և այլն, ինչի՞ց է ծագում կամ՝ ինչի՞ց ինչպե՞ս է առաջ եկել:

Յր. Աճառյանն անգամ որոշակի պատասխան չի տվել դրան և միայն նկատել է, որ «**լօխ** գործածական է Ղարաբաղի բարբառում և **հոլովման ժամանակ ստանում է նաև չ հավելվածը** (ընդգծումը իմն է - Ա. Մ.). օր.՝ ախըրը **լօխչան** յետը «բլորից հետ»»: Հոգնակին լինում է **լօխչունք**, սեռ. **լօխչունց**, բց. **լօխչունցան**: Այս բառը այնքան բնորոշ է Ղարաբաղի համար, որ շրջակա գավառներում **լօխ** բառը ծածկալեզվով նշանակում է ղարաբաղցի. օր.՝ **լօխերը եկան** «ղարաբաղցիք եկան»³⁹¹:

Լոխ բառի ծագումը պարզ չի համարել նաև տողերիս հեղինակը տարիներ առաջ հրապարակած իր «Գորիսի բարբառը» աշխատության մեջ³⁹²:

Արդ, սակայն, նկատի ունենալով այդ բառի **ճ**-ով և **չ**-ով ձևերը՝ **լօխճունք** || **լօխչունք**, **լուխճէքան** || **լուխչէքան**, **լօխճին** || **լօխչունց**, **լուխճքանին** || **լուխչունքանին** և այլն, պետք է ասել, որ այն հաստատապես կապվում է նույն իմաստն արտահայտող **ողջ** բառի հետ և առաջ է եկել դրանից՝ **ողջ > վօխճ > վօխչ > օխճ > օխչ > փօխ > փոխ** հնչյունափոխական ընթացքով³⁹³:

Նման «արտասովոր» կամ ավելի հեռուն գնացող հնչյունական փոփոխությամբ էլ Արցախի և Գորիսի բարբառները տարազատվել, խստորեն հեռացել են հայերենի այն բազմաքանակ բարբառներից, որոնցում պահպանվում է **ողջ** բառը տարբեր ձևերով, ինչպես՝ «Պլ. **օջխ**, Խրբ. Կր. **օխչ**, Ալշ. **ոխչ** Մշ. **ոխջ**°, Ասլ. **էօխչ**, Ջղ. Սլմ. Վն. **վոխչ**, Ախց. Երև. Ննխ. Ռ. Սչ. Տիգ. **վօխչ**, Շմ. **վօխճ**, Տփ. **վուխչ**,

³⁹⁰ Տե՛ս Ս. Ամատունի, Գայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 255:

³⁹¹ Յր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 2, Երևան, 1954, էջ 426:

³⁹² Ալ. Մարգարյան, Գորիսի բարբառը, Երևան, 1975, էջ 168:

³⁹³ Այդ մասին տե՛ս և հմմտ. Արտ. Պողոսյան, Գաղղուփի բարբառը, Երևան, 1965, էջ 127:

Սեբ. վէխչ, իսկ Մրդ. զանազանություն դնելով երկու իմաստների մեջ՝ **վուխն** «ամողջ», **վրիխճ** «բուր»³⁹⁴:

Այսբանից հետևում է, որ հնդեվրոպական հիմք լեզվից սերող³⁹⁵ **ողջ** բառը Արցախի և Գորիսի բարբառներում եթե «ամողջ» իմաստով ջնջվել ու փոխարինվել է թուրք **սաղ** -sag բառով, ապա «ամբողջ, բուր» իմաստով նույնպես պահպանվել է՝ ենթարկվելով նաև մի այլ փոփոխության. այն է՝ երկու բարբառում էլ **ողջ** բառը ոչ միայն **ողջ** > **վօխճ** է դարձել, այլև այդ հիման վրա ա) սկզբահնչյուն **վ** ձայնեղը փոխարինել է մերձակից **լ** ձայնորդով (հմմտ. Ջավահիր - **Ջալահիր**, հոլով - **հուլուլ**) և բ) հնչյունի անկման օրենքով նրա կազմից դուրս է եկել **ճ** > **չ**-ն, և այդպիսով առաջ է եկել **լօխ** - **լոխ** բառը՝ հոլովվելով նաև առանձնաբար թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվով:

Ինքնին հասկանալի է, որ Զր. Աճառյանը **լոխ** բառի հոլովական ձևերում եթե **չ**-ն ոչ թե «հավելված» («հավելում»), այլ անկում դիտեր, անշուշտ, այն ևս **ողջ** բառի բարբառային արտահայտություն կհամարեր և այդպես էլ կներկայացներ մյուս բարբառների ձևերի շարքում:

32. ՃԱՊԿԻ

Ճապկի բառը, որ բառարաններում ներկայացվում է՝ «ՃԱՊԿԻ Ղար. Անտառային ամուր ծառ՝ նման հոնի ծառին, ունի փունջ ծաղիկներ: Ճապկի ծառն ա մնացալ...: Ճապկի ճպոտ թպղլի. **Նաւ Զէքթ. Ժ. 42-43**» (**Ս. Ամատունի**, Զայոց բառ ու բան, էջ 426), «**Ճապկի** Զթ. Ղրբ. լեռնային ծառ մէ» (**Զր. Աճառեան**, Զայերեն գաւառակաւն բառարան, էջ 707), «+ՃԱՊԿԻ, գ. Անորոշ տեսակի անտառային ամուր ծառ, հոնի նման, փուջ փունջ ծաղիկներով: Ըստ Ս. Conus Sanguineus» (**Ստ. Մալխասեանց**, Զայերեն բացատրական բառարան, հ. 3, էջ 200), «ՃԱՊԿԻ, գ. Զոնազգիների ընտանիքին պատկանող թուփ, սպիտակ ծաղիկներով, ձմռանը կարմրող ընձյուղներով» («Ժամ. հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 3, էջ 430), **ՃԱՊԿԻ**, կու, գ. Զոնազգիների ընտանիքին պատկանող ծառ» (**Է. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, էջ 937), իսկ

³⁹⁴ **Զր. Աճառյան**, Զայերեն արմատական բառարան:

³⁹⁵ Նույն տեղում:

մեր «Գորիսի բարբառը» աշխատությունում «**ճապկի**, գ. 1. Լեռնային ամուր և ճկուն ճյուղերով թուփ: 2. ճապկի՝ ճապկյա (մահակի)» (էջ 431) բացատրությամբ, մինչև այսօր չի ստուգաբանված, և որևէ մեկն էլ փորձ չի արել պարզել, թե ինչից է ծագում այն:

Ծառերի, թփերի անունները, ինչպես հայտնի է, արտահայտում են ընդհանրապես նրանց մրգի, պտղի կամ մի այլ բնորոշ հատկանիշով, օրինակ՝ կեռաս – **կեռասի - կեռասենի**, սալոր – **սալորի - սալորենի**, նուշ – **նշի - նշենի**, փշատ – **փշատի - փշատենի**, ուռ – **ուռի - ուռենի**, ցաք – **ցաքի - ցաքենի**, բալ – **բալի - բալենի**, այլև՝ կաղին – **կաղնի**, հոն – **հոնի**, մոշ – **մոշի** և այլն:

Անշուշտ, նման կարգի բառերից է նաև, դարձյալ Արցախի և Գորիսի բարբառներում լայնորեն գործածվող, **ճապկի** բառը, որ անվանվել կամ այդպես է կոչվել դա նշանակող ծառի կամ թփի խիստ առածգական, ճկուն, դյուրաթեք լինելու հատկանիշով և շատ պարզորոշ սերում է **ճապուկ** բառից, որը ոչ միայն «շուտ, ճեպով, արագ», այլև «ծռմնկող՝ մանիճ մանիճ» («Առձեռն բառարան հայկազեան լեզուի», Վենետիկ, 1865, էջ 526), «ծռմնկող, գալարվող մանիճ մանիճ եկող» (**Յր. Աճառեան**, Հայերեն արմատական բառարան, հ. 3, էջ 187), «Դյուրաթեք, դյուրաշարժ, ճկուն» (**Ստ. Մախասեանց**, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, էջ 200) է նշանակում:

Այսպիսով՝ **ճապուկ** բառից **ճապկի** բառի ծագումը ոչ միայն իմաստաբանորեն (ի դեպ, ոչ պատահականորեն դյուրաթեքության, առածգականության համար ճապկի ճյուղը իբրև բուրդ ծեծելու ձող է ծառայում), այլև շատ պարզորոշ նաև հնչյունաբանորեն է հաստատվում. **ճապուկ** բառը բառակազմական **-ի** ձևույթի հետ բաղադրվելով՝ օրինաչափորեն տվել է **ճապկի** բառը. հմնտ. ճապուկ + ի > **ճապկի** և կաղին + ի > **կաղնի**, ընկույզ + ենի > **ընկուզենի**, նուշ + ի > **նշի**, նարինջ + ի > **նարնջի** և այլն:

33. ՇՅԱՏ

Արարատյան, Արցախի (Ղարաբաղի) և Գորիսի բարբառներում գործածվող **շհատ** || **շահադ** || **շհադ** «Ջաղացպանին առած տասնորդը աղունեն՝ աղալուն իբրև վարձ. **շհատդ վերցրու**» (**Յր. Աճառեան**, Հայերեն գաւառական բառարան, էջ 832), «Իբրև ջրաղացի վարձ՝ աղալի ցորենից ստացած ցորենը. տճ. **քեավզայ**: Ջրաղաց-

պանը մի պարկ շիատ բերեց: Ութ կուռիկ շիատ վերցրեց» (**Ս. Ամատունի**, Հայոց բառ ու բան, էջ 516), «Հացահատիկը աղալու վարձ, որ վերցնում են հացահատիկով...» (**Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, էջ 493) բառի ծագման մասին երկու իրարամերժ կարծիք է հայտնվել:

Հր. Աճառյանը նախ դա աստղանիշով իբրև չստուգաբանված, «գրաբարի մեջ գոյություն չունեցող բոլորովին նոր արմատ» է դիտել, հետո՝ «Հայերեն արմատական բառարանում» այն կապել գրաբարյան «**շարիատ**» տոկոս, վաշխ» բառի հետ՝ ասելով, թե «ամեն տեղ այս վարձը կոչվում է **շահադ**, որի ծագումը, ըստ իս, հետևյալ ձևով է: Նախ **շառատ** (շարիատ - Ա. Ս.) բառը հայերենից անցել է թուրքերենի. այստեղ ժողովրդական ստուգաբանությամբ դարձել է *sahad*, իբր թե արաբ. *sahad* «վկայ», որից հետո հետ դառնալով անցել է հայերենին»³⁹⁶: Հր. Աճառյանին հետևելով՝ **շիատ** բառի ծագումը այդպես են բացատրել Ստ. Մալխասյանցը և նաև տողերիս հեղինակը իր «Գորիսի բարբառը» աշխատանքում³⁹⁷: Շիատ բառի ծագումը բոլորովին այլ կերպ է ներկայացրել Ս. Ամատունին. առանց մեկնաբանության նա այն **շահ** բառի հետ է կապել և ըստ էության էլ դրա ածանցյալ ձևը համարել:

Պետք է ասել, որ **շիատ** բառի ծագմանը վերաբերող այդ երկու տեսակետներից ճիշտն ու ընդունելին վերջինն է, որը նույնպես լիովին հիմնավորվում է իմաստաբանորեն և հնչյունաբանորեն:

Հենց իր իսկ Հր. Աճառյանի հավաստմամբ՝ **շահ** բառը հին հայերենում՝ գրաբարում, ոչ միայն «օգուտ, վաստակ», այլև «դրամագլխի և կամ փոխ տված դրամի տոկոսը», որոշ բարբառներում էլ ուղղակի «տոկոս» է նշանակում³⁹⁸: Այդ հիմամբ էլ **շահ**-ը **-ատ** ածանցով (հմմտ. **բացատ**, **խորխորատ**, **ցաքատ**, **փշատ**, **ջոկատ** և այլն) արտահայտել ջրաղացում աղացվող աղունի այն մասը, որ առանձնացվել և իբրև վարձ տրվել է ջրաղացպանին:

Դառնալով **շիատ** բառի կրած՝ **ա > ը**, **տ > դ** հնչյունական փոփոխություններից, պետք է ասել, որ դրանք ևս տեղի են ունեցել օրինաչափորեն և իրենց հերթին ևս հաստատում են **շահ** բառից ու **-ատ**

³⁹⁶ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան:

³⁹⁷ Ալ. Մարգարյան, Գորիսի բարբառը, էջ 450:

³⁹⁸ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան:

ածանցից (շահ + ատ > **շահատ** > **շահադ** > **շրհատ** և նաև **շրհադ**) նրա ծագումը:

Այսբանից հետևում է, որ ջրաղացի հետ գործ ունեցող մարդու առտնին կյանքին վերաբերող այդ բառը ամենևին էլ լեզվից լեզու չի անցել ու հետ դարձել հայերենին, այլ սկզբից ևեթ ստեղծվել ու գործել է այդտեղ:

34. ՉԻՄ

Չիմ «բոլոր(ը)», «ամբողջ(ը)», «ամենք(ը)» բառը, որ իբրև դերանուն գործածվում է Գորիսի³⁹⁹ և, անշուշտ, նաև Արցախի (Ղարաբաղի) բարբառում, **լոխ** բառի հետ հիշատակվում է Ս. Ամատունու «Չայոց բառ ու բան»-ում՝ «ՉԻՄ Ղազ. (ախտեցիք), **Կոթ** (իմա գյուղ Լոռիում - Ա. Մ.) Ամենքը, բոլորը: ... Ես էն չիմ (դիփ) կարդացել եմ. Չիմ էլ նրա միջին գրած ա. Ղ. Աղ. Ար. (իմա «Արություն և Մանվել») Գ. 24, 70, 71» նկարագրությամբ⁴⁰⁰:

Այն գրեթե նույն կերպ է ներկայացվել նաև Ստ. Մալխասեանցի «Չայերեն բացատրական բառարան»-ում. հմնտ. «+ՉԻՄ, ած. գ. Բոլորը, ամենքը, ամեն ինչ: Ես էն գիրքը չիմ կարդացել եմ»⁴⁰¹:

Չիմ-ը, որ զարմանալի կերպով դուրս է մնացել Յր. Աճառյանի տեսադաշտից, ավելի նեղ բարբառային բառ է և ծագմամբ էլ՝ շատ ավելի մութ ու մթագնած:

Եվ, այնուհանդերձ, ակներև է, որ «ամբողջ(ը)», «բոլոր(ը)», «ամենք(ը)», «ամեն ինչ» նշանակություններով այն կապվում է **չափ**, **քանակ** ցույց տվող որևէ բառի հետ և, անշուշտ, սերում է նրանից: Տվյալ դեպքում այդ եմ հաստատում Գորիսի բարբառում լայնորեն գործածվող **հինչքան** || **հիչքան** || **հիչկան** < ինչ + քան, **էնչաք** || **էնչանք** || **էնչամք** || **էնչունք** < էնայն + չափ(ք), **էտչաք** - **էտչանք** - **էտչամք** - **էտչունք** < էտ < այդ + չափ(ք), **մընչքան** - **մընչքան** - **մչքան** - **մինչ** + քան, **մընչանք** - **մըչանք** - **մընչամ** - **մըչամք** - **մըչաք** - **մըչունք** < **մըչամ** - **մինչ** + չափ(ք) բաղադրյալ բառերը՝ կազմված մի դեպքում՝ **քան**, մյուս դեպքում՝ **չափ(ք)**-ից⁴⁰²:

³⁹⁹ Տե՛ս Ալ. Մարգարյան, Գորիսի բարբառը, էջ 457, 167, 168:

⁴⁰⁰ Ս. Ամատունի, Չայոց բառ ու բան, էջ 541 և 255:

⁴⁰¹ Ստ. Մալխասեանց, Չայերեն բացատրական բառարան:

⁴⁰² Այդ մասին տես մեր «Գորիսի բարբառը», էջ 160, 163, 166, 167:

Պետք է ասել, որ հենց այս վերջին **չափ(ք)**-ից էլ առաջ է եկել **չիմ** բառը, որը և ըստ էության մատնանշում է Յր. Աճառյանը, երբ **չափ** բառի բարբառային հնչյունափոխական ձևերը ներկայացնելիս ասում է. «Ունիմք նաև **չամ, չանք, չուք** ձևերը, բայց միայն ածանցումների մեջ. այսպես՝ **անչամ** «այնչափ», Վս. **էնչանք, մչանք, մունչունք**, Ղրբ. **էսչունք, էտչունք, էնչանք**»⁴⁰³:

Նկատի առնելով Յր. Աճառյանի վկայությունն այն մասին, որ տեղ-տեղ տարբերություն է դրվում **չափ** գոյականի և **չափ** մակբայի միջև, այսպես՝ Մրդ. **չափ**, Ազլ. **չօփ**, գործածական են իբր գոյական, իսկ Մրդ. **չամք** և Ազլ. **չունք**՝ իբր մակբայ... -Ոզմ **չանք** «այնչափ»⁴⁰⁴, պետք է նաև ասել, որ Գորիսի և Արցախի բարբառներում **չափ(ք)** բառը ոչ միայն բաղադրությունների («ածանցումների») մեջ է այլազան փոփոխություններ կրել, նաև նրանցից տարազատվելով՝ **չամ** ձևի **ա**-ի հնչյունական փոփոխությամբ **չիմ** է դարձել:

35. ՊԵԼ

Պելպել («գիժ, խենթ, խենթավուն, խելահեղ») բառը Յր. Աճառյանը աստղանիշով «Յայերեն գաւառական բառարանում» գրաբարում գոյություն չունեցող և տակավին չստուգաբանված բառ է համարել⁴⁰⁵:

Այդ բառը, որ նույնպես լայնորեն գործածվում է Արցախի և Գորիսի բարբառներում և հիմք է ծառայել մի շարք բաղադրյալ բառերի կազմության համար, ինչպես, օրինակ՝ պելանալ **պըլանալ** («1. խենթանալ, հիմարանալ: **Ի՞նչ պատահեց, բոլորդ կարծես պելացել եք**: 2. Ապշած՝ զարմացած մնալ: **Երբ այս բոլորը պատմեցի՝ լսողները պելացած մնացին**: 3. Աչքերը շաղվել, աննպատակ նայել, պշնուլ: **Պելացած աչքերով նայում էր, բայց ոչընչ չէր տեսնում**», Ստ. Մալխասյանց, ՅԲԲ, հ. 4, էջ 92-93), պելացնել > **պըլըցնել** (նույնի պատճառականը), պելակատար > **պըլըկատար** («խենթուկի գլխով, գժավուն, հիմար»), պելանուկ > **պըլանուկ** («թունավոր բույս, որ ուտողին խենթացնում է ...»), պելություն -

⁴⁰³ Յր. Աճառյան, Յայերեն արմատական բառարան:

⁴⁰⁴ Նույն տեղում, էջ 626-623:

⁴⁰⁵ Յր. Աճառյան, Յայերեն գաւառական բառարան:

այլլօթուն («խենթություն, գժություն») և այլն⁴⁰⁶, հնագույն ժամանակներից եկող մաքուր բարբառային բառ է, որ, անշուշտ, որևէ հեռավոր ձևից է սերուն:

Ըստ այդմ էլ կարծում ենք, որ այն կապվում է Հայկ և Բելի հանրահայտ առասպելի **Բել** անվան հետ և դրա բարբառային ձևափոխությունն է, որ, իհարկե, հաստատվում է ոչ միայն հնչյունաբանորեն, այլև իմաստաբանորեն: Հիշյալ երկու՝ Արցախի և Գորիսի բարբառներին հատուկ հնչյունափոխական այն օրենքով, որ բառասկզբի **բ**-ն **պ** է տալիս (հմմտ. բերան > **պերան**, բերել > **պիրել**, բան > **պան**, պէն, բոկ > **պօկ**, բուրդ > **պուրթ**..., այլև՝ Բագրատ > **Պակրատ**, Բարսեղ > **Պարսեղ**, Բեգլար > **Պեկլար**, Բեգլարի Բախշին **Պիկլին Բախշին**), **Բել** || **Բէլ** հատուկ անունը ևս նման փոփոխություն է կրել և **Պէլ** > **պէլ** դարձել:

Գալով **պէլ** || **պէլ** բառի մյուս՝ իմաստային կողմին, պետք է ասել, որ նրանով արտահայտվել են Բելի համար բնորոշ համարվող «խելահեղ, ըմբոստ, ստամբակ, անգամ չարաճճի» հատկանիշները և դրանք վերագրվել շարքային մարդկաց: Այդպիսով հատուկ անունը վերածվել է հասարակ անվան, որը, ինչպես հայտնի է, իմաստափոխական սովորական երևույթ է լեզուներում, հմմտ. **Մեկենաս - մեկենաս**, **Տիտան - տիտան**, **Նազար - նազար** և այլն⁴⁰⁷:

⁴⁰⁶ Դրանց մասին տես **Յր. Աճառեան**, Հայերեն գաւառական բառարան:

⁴⁰⁷ Այդ մասին տես, օրինակ, մեր «Ժամանակակից հայոց լեզու» գիրքը, Երևան, 1993, էջ 56, 42:

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ⁴⁰⁸

Ինչպես հայտնի է, հայերենի բոլոր արմատները կամ արմատական բառերը չէ, որ ստուգաբանված են կամ ստույգ մեկնություն են ստացել: Դր. Աճառեանի «Հայերեն արմատական բառարանի» հրապարակումից հետո հայ լեզվաբանական միտքը, ճիշտ է, շարունակել է նոր նվաճումներ ձեռք բերել ստուգաբանության բնագավառում, բայց արդյունքներն ընդհանուր առմամբ այնքան էլ գոհացուցիչ ու բավարար չեն: Նկատելի է, որ նոր ստուգաբանություններ են կատարվում, կամ նման փորձեր են արվում մեծ մասամբ չստուգաբանված շատ արմատներ հնդեվրոպական հիմք լեզվի ինչ-ինչ ձևերից հանելու, նրանցից բխեցնելու կամ նրանց հետ կապվելու ուղղությամբ, և հարկ եղած ուշադրություն չի դարձվում այն բանի վրա, թե հայոց լեզվի բազմադարյան զարգացման ընթացքում ինչ բառեր կամ բառարմատներ են գոյացել, որոնք ստուգաբանության կարիք են զգում: Այս խմբին են պատկանում ահա ներկայացվող բառերը, որոնց ստուգաբանական մեկնությունները տալով՝ ամենևին էլ այն կարծիքին չենք, թե դրանք **անխտիր ճիշտ են ու անառարկելի:**

1. ԳՐՔՈՒՅԿ (< ԳՐՔՈՅԿ)

Գրքույկ («1. Փոքր գիրք: 2. Փոքր գրքի նման տեսորակ կամ մատյան զանազան գրառումների համար») բառը, ինչպես արտաքին կառուցվածքն է ցույց տալիս, առանձնապես բարդ կազմություն չունի: Այսօրվա իր այդ ձևով այն իրոք պարզ ածանցավոր բառ է՝ կազմված **գր-** (< գիր) հիմնական և **ք + ույկ** (<ոյկ) բառաստեղծական ձևությամբ:

Դա այդպես էլ ներկայացրել է Մ. Աբեղյանը՝ նշելով միաժամանակ, որ այս դեպքում **-ույկ** նվազական ածանցի փոխարեն պարզապես **-ույկ** է գործածվել⁴⁰⁹: Լեզվական մի շարք փաստեր, սակայն, ցույց են տալիս, որ ներկայումս ըստ **գր** (< գիր) + **ք + ույկ** բաղա-

⁴⁰⁸ «Բանբեր Երևանի համալսարանի», 1992, N 2, էջ 122-135, 1994, N 3, էջ 124-132:

⁴⁰⁹ Տես Մ. Աբեղյան, Դայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 268: **Գրքույկ** բառի կազմությունը այդպես է ներկայացվել նաև մեր «Ժամանակակից հայոց լեզու» գրքում, Երևան, 1990, էջ 282:

դրիչների տարրալուծվող **գրքույկ** բառը բուլղորվին այլ ծագում ունի:

Այդ մասին են վկայում ամենից առաջ Նոր և Առձեռն Հայկազյան բառարանները: Դրանցից առաջինը գրքույկ բառի համար նշում է **գրքոյք, գրկուք, գրկունք** տարածները՝ այսպիսի բացատրությամբ. «Βιβλαριδιου. LI hellus. Փոխանակ ասելոյ՝ **գրքուկ**, կամ **գրքոյկ**. այսինքն Գիրք փոքր. *Ունէր ի ձեռին իւում **գրկոյք** մի բացեալ: Երթ առ **զգրկոյսն**: Եւ առի **զգրկոյսն**: Յայտ. S.2 -10: Լնք. յայտ. ***Գրկուքս** այս Վրդն. ծն. *Ընծայեցի զփոքր զայս **գրկունք**, որ կոչի քերական: (Ի թուին հյ.) ՉԽԲ. գրեցաւ **գրկունքս**. Երզն. քեր. յիշ»⁴¹⁰:

Երկրորդը՝ Առձեռն հայկազյան բառարանը, դրանց՝ **գրկոյք, գրկունք, գրկուք** ձևերին հավելում է **գրիկ** (զ. գրքոյկ) և **գրքուկ** (տ. գրկոյք) գլխաբառերը⁴¹¹, որոնք և խիստ կարևոր լինելով գրքույկ բառածևի ծագումը բացատրելու համար՝ ցույց են տալիս, որ այն առաջ է եկել ոչ այլ կերպ, քան «գրքույկ՝ փոքր գիրք» նշանակող **գրիկ** բառի հոգնակի թվի **գրկունք** ձևից, հմմտ. **աչ - աչիկ - աչկունք, փոքր - փոքրիկ - փոքրկունք, մանր - մանրիկ - մանրկունք, մասն - մասնիկ - մասնկունք** և այլն:

Այսպիսով, միանգամայն պարզ է, որ **գրքույկ** (< գրկոյկ) բառի բուն կամ նախավոր ձևը **գրկունք** է եղել, որը և ոչ պատահականորեն հանդիպում է հաճախ անցյալի գրավոր աղբյուրներում, ինչպես, օրինակ. «Կատարեցաւ **գրկունքս** այս, որ է լուծումն աստուածիմաստ և հոգեշահ բանիցն Եւագրի մեծ ճգնաւորի և աստուածախօս վարդապետի և իմաստուն հռետորի...» (ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն առաջին, Երևան, 1955, էջ 211), «Ի թուականութեանս Հայոց ՊՂ (1441) եղև զըրաւ գրչութեան սուրբ և տիեզերալոյս և համապիտան **գրկունքս**, որ կոչի Մաշտոց...» (ն. տ., էջ 519), «Արդ, գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց ԹԵՂ (1455) սուրբ և տիրեզերալոյս համապիտան **գրկունքս**, որ կոչի Մաշթոց...» (ն.տ., Մասն Բ, Երևան, 1958, էջ 60) և այլն:

Արդ՝ հարց է ծագում. ինչպե՞ս է **գրիկ** («փոքր գիրք») բառի համար՝ **գրկունք** հոգնակի ձևը դարձել **գրքույկ** (< գրքոյկ): Պետք է ասել, որ դա տեղի է ունեցել երկու կարգի իրողությամբ՝ բաղարկու-

⁴¹⁰ **Գ. Աւետիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգերեան**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 587:

⁴¹¹ «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», տպ. 2-րդ, Վենետիկ, 1865, էջ 229:

թյամբ (контаминация) և հնչյունական փոփոխությամբ: Սկսած այն ժամանակից, երբ **գիր** բառի հոգնակին՝ **գիրք**-ը, եզակի նշանակություն է ստացել, **գրիկ** բառի **գրկ**- ձևույթը նույնացվել է **գրք** (< գիրք)-ին և **-ուկ** նվազական ածանցին միանալով՝ տվել **գրքուկ** ձևը. մի այլ կողմից՝ նախավոր **գրկունք**-ի Ն ձայնորդը վերածվել է Յ-ի՝ առաջ բերելով **գրկոյք** բառը, որ հնչյունների դրափոխությամբ դարձել է **գրքոյկ** (> գրքույկ), որը և, ինչպես հայտնի է, միակ գործածականն է այսօր՝ արդի հայերենում:

2. ՋԱՅՄ

Գորիսի բարբառում գործածվող **զահմ** («Վախ, սարսափ») բառը (հմմտ. նաև **զահմանվ** «ահարկու, ահազդու») մեր «Գորիսի բարբառը» ուսումնասիրության մեջ ներկայացվել է իբրև բուն հայերեն բարբառային բառ⁴¹²:

Իրականում, սակայն, դա ոչ թե բուն հայերեն, այլ պարսիկներից փոխառված **սահմ** (< sahm «երկյուղ») բառն⁴¹³ է, որը Ս. սկզբնահնչյունի ձայնեղացմամբ (հմմտ. սահման գահման «երկու արտի միջև ընկած մասը») **զահմ** է դարձել:

3. ԸՐԱՄԱ(Ն) ԸՆԿՆԵԼ

Իր «Հայերեն գաւառական» և «Հայերեն արմատական» բառարաններում Արցախի (Ղարաբաղի) բարբառի համար Հր. Աճառյանը հիշատակում է **երամակ ընկնել** («մարդու կարգ անցնիլ») || **ըրամակ ըղնել** («մարդու կարգ անցնիլ, կարգի մտնել») հարադրավոր կազմությունը, դրա արտահայտած նշանակությունը բացատրելով ծիերի խմբին՝ երամակին, մի նոր, հավանաբար մատղաշ, ծի միացնելու և երևելի դարձնելու իրողությամբ⁴¹⁴:

⁴¹² Տե՛ս հիշյալ աշխատությունը, Երևան, 1975, էջ 380:

⁴¹³ Այդ մասին տե՛ս, օրինակ, Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, էջ 174:

⁴¹⁴ Հր. Աճառեան, Հայերեն գաւառական բառարան, նույնի՛ Հայերեն արմատական բառարան:

Պետք է, սակայն, ասել, որ այդ հարադրության թե՛ կազմությունը և թե՛ արտահայտած իմաստը որոշելիս մեծանուն հայագետը վրիպել է:

Ջրամա(ն)կ ընկնել հարադրավոր բայը հատուկ է նաև Գորիսի բարբառին և այդտեղ գործածվում է **ըրամակ || ըրամանկ || ըրամագ || ըրամանգ || ըրամաք || ըրամանք ինգ'ել** («մարդու շարք անցնել, հրապարակում երևելի լինել, ինչ-որ բանով նույնպես հայտնի դառնալ») ձևերով, որոնք և շատ պարզորոշ ցույց են տալիս, որ այն ոչ թե **երամակ** («1. Բազմություն, խումբ: 2. Անասունների, հատկապես՝ ձիերի խումբ»), այլ **հրաման** բառի **հրամանք** հոգնակի ձևի հետ է կապվում և սերում ուղղակի **հրամանք ընկնել** հարադրությունից:

Դա, անշուշտ, հիմնավորվում ու պատճառաբանվում է **հրամանք** բառի հրամանագիր իմաստով, այսինքն՝ նրանով, որ ինչ-որ փաստաթղթերով, կարգադրությամբ, հրամանով որևէ բանի կամ անձի վերաբերյալ պաշտոնապես որևէ բան է նշվում կամ ազդարարվում:

Ջրամանք ընկնել-ից **ըրամա(ն)կ ընկնել**-ի առաջացումը միանգամայն արդարացվում է նաև հնչյունաբանորեն. **հրամանք** և **ընկնել** (< անկանել) բառերը Արցախի և Գորիսի բարբառներին հատուկ հնչյունական փոփոխություններ են կրել, դրանց համապատասխան կազմելով **ըրամա(ն)կ || ըրամա(ն)գ || ըրամա(ն)ք ինգ'ել** հարադրավոր բայը, որը իրո՞ք «մարդու կարգ՝ շարք անցնել, ասպարեզում նույնպես երևալ՝ ինչ-որ բանով հայտնի դառնալ» նշանակությունն է արտահայտում:

4. ԿՈՐՆԹԱՐԴ

Կորնթարդ («Կոր ձևով կամար, գմբեթ, կամ արտաքին կողմն գմբեթի, որոյ ներքինն է խորոփիք որպես գոգ կամ ծոց», «Կամար, գմբեթաձև, գմբեթի դրսի կողմը») բառը⁴¹⁵, որ անցյալում ոչ միայն իբրև ածական, այլև գոյական է գործածվել, այսօր իր կազմությամբ բոլորին չէ, որ պարզ է:

⁴¹⁵ Իմաստների համար տե՛ս «Նոր հայկազեան բառարան», հ. 1, էջ 1120, «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», 2-րդ տպ., էջ 448:

Այնինչ պետք է ասել, որ Նոր հայկազյան բառարանը, բերելով երկու վավերական օրինակ («Եթե կամի մատամբն հպիլ ի **կորընթարդն** երկնից, ոչ գոյ կարող. Սահմ. դ.: Լուսինն ի ներքին կիսագնդին գոլով ի կամարն երկնից, որ ներքին **կորնթարդն**, հանդէպ արեգականն. Յկ. դրիմ»), միանգամայն իրավացիորեն այն բարդություն է համարել և նշել, որ կազմված է **կոր**, **ընդ** կամ **ենթ** և **արդ** («ձև») բաղադրիչներից: Ուստի մնում է պարզել միայն, թե **ընդ**-ից և **ենթ**-ից ո՞րն է որ գործածվել ու միաժամանակ հնչյունական փոփոխություն է կրել նրանում:

Կորնթարդ բառի՝ թե՛ Նոր հայկազյան և թե՛ այլ աղբյուրներում **Ը**-ով հանդիպող ձևերը (օրինակ՝ «Եւ արդ գրեցաւ... **ընթ** հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Յակոբ հայրապետիս, և սուրբ վարդապետաց գերեզմանացս առ ոտս նախասացեալ ըբունապետիս, որ փայլէ ի մերունս ժամանակի իբրև զարեգակն ի **կորնթարթս** երկնից», ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 424) ցույց են տալիս, որ ոչ թե **ենթ** նախածանցը, այլ **ընդ** նախդիրն է գործածվել **արդ** («ձև») բառի հետ՝ արտահայտելով **կոր + ձևով** նշանակությունը:

Այսպիսով, պարզից էլ պարզ է, որ **կորնթարդ** բառը նախապես **կորնթարդ** (< **կոր** + **ընդ** + **արդ**) է եղել, որտեղ և մի կողմից եթե **ընդ** նախդրի **դ**-ն տարնամաթյամբ խլացել ու **թ** է դարձել, ապա մյուս կողմից՝ նրա **ը** սկզբնահնչյունը գրավոր խոսքում չի արտահայտվել, և ահա այդպես էլ առաջ է եկել ներկայիս ձևը, որը, ի դեպ, առնմանման ենթարկվելով, հաճախ **կորնթարթ** է արտասանվում:

5. ՀԱՆԳՈՅՑ (> ՀԱՆԳՈՒՅՑ)

Հանգոյց (>հանգույց) բառը, որ մի քանի իմաստներ է արտահայտում և ըստ Նոր և Առձեռն հայկազյան բառարանների՝ նշանակում է՝ «Համագոյց. Ագոյցք՝ ընդ իրեարս, կապ. զօդ. աղխ. պրկումն. կընճիռն»⁴¹⁶, «հանկուց, հանկուրց, կապ», «ձի փոխելու տեղ», «կընճռած, կնճռնտած, քակելը դժվար», «ձայնի խազ մը»⁴¹⁷, Հր. Աճառեանը «Հայերեն արմատական բառարանում» ներկայացնում է իբրև

⁴¹⁶ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, էջ 38:

⁴¹⁷ «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», էջ 471:

չստուգաբանված բառ՝ մերժելով բնականաբար այն մեկնությունները, որ տվել են Նոր հայկազյան բառարանը («ՆՅԲ, **հա՛մ ազոյց**»), Յ. Սեր. Տերվիշյանը (Տերվ. Նախալ. 109 տես **հակ**»), Յ. ք. Յյունք-յարպետենտյանը (Յիւնք. նույն է դնում **հանգչիլ, հանգիստ** բառերի հետ») և Բուզգեն (Bugge, ZAPh 165 + **համգոյց**- հնխ. sam-wi)⁴¹⁸:

Դա չստուգաբանված բառ է դիտել նաև Գ. Ջահուկյանը՝ համարելով վաղ շրջանի բարբառային տարբերակ՝ «**հանգոյց-կնճիռն-կշկուռ** (ուշ)- **կուղթ** (ուշ)» բառաշարքում⁴¹⁹:

Բայց ինչպես արտաքին՝ հնչյունական կառուցվածքն է ցույց տալիս, **հանգոյց**-ը ոչ թե ինչ-որ բարբառային տարբերակ, այլ մաքուր գրաբարյան բառ է և, հենց սկզբից էլ ասենք, այլ բան չէ, քան **հանգչել** («1. Հանգստանալ: 2. Մի տեղ կանգ առնել՝ մնալ, դադար առնել: 3. Դրվել, զետեղվել: 4. դադարել, վերջացնել: 5. *Նման*. Վառվելուց դադարել, մարել, շիջանել: 6. Ույժը պակասել, թուլանալ: 7. Հանգիստ մեռնել» և այլն) բայի⁴²⁰ **հանգուցանել** պատճառականի անցյալ կատարյալի եզակի թվի 3-րդ դեմքի ձևը՝ **հանգոյց** (հմմտ. հանգուցի - հանգուցեր - **հանգոյց**. հանգուցաք - հանգուցեք || հանգուցիք - հանգուցին), որ դեռ շատ վաղ ժամանակներում նշանակության տարբերակմամբ գոյական է դարձել:

Իսկ այստեղ զարմանալի կամ տարօրինակ ոչինչ չկա. ինչպես հայտնի է, նույն այդ եղանակով **ագանել** («հագնել»), **այտնուլ** («ուռչել»), **մատչել** («մոտենալ»), **կառչել** («կպչել»), **սառնուլ** || **սառչել** («սառչել՝ պաղել») ...բայերի **ագուցանել** («հագցնել»), **այտուցանել** («ուռցնել»), **մատուցանել** («մոտեցնել՝ մատուցել»), **կառուցանել** («հաստատ դնել. կպցնել»), **սառուցանել** («սառեցնել») ... պատճառականների անցյալ կատարյալի 3-րդ դեմքի՝ **ագոյց** (> ազույց), **այտոյց** (> այտույց || այտուց), **մատոյց** (> մատույց), **կառոյց** (> կառույց), **սառոյց** (> սառույց) ... ձևերը նույնպես տարազատվել են բայական նշանակությունից և գործածվել իբրև գոյական՝ ենթարկվելով **ի** պարզ կամ **ի-ա** խառն հոլովման:

⁴¹⁸ Տես **Յր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

⁴¹⁹ Տես **Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 401:

⁴²⁰ Այդ բայի իմաստների համար տես հայոց լեզվի ինչպես հին, այնպես էլ նոր բացատրական բառարանները:

Այսպիսով՝ ինչպես կառուցվածքորեն, այնպես էլ հնչյունաբանորեն լիովին հիմնավորվում է **հանգուցանել** բայի անցյալ կատարյալի եզակի թվի 3-րդ դեմքի ձևից համանման **հանգոյց** (> հանգույց) գոյականի ծագումը: Եվ հետևաբար մնում է պարզել, թե իմաստապես արդյոք կապվո՞ւմ է դա նրա հետ, թե՞ ոչ:

Հանգոյց (> հանգույց) գոյականը, ինչպես հայտնի է, այնպիսի իմաստներ է արտահայտում, որոնք կապվում են ինչ-որ բանի դադար առնելու, վերջնակապի, միահյուսման, հանգուցվելու և նման որևէ այլ իրողության հետ: Իսկ սա էլ հենց ցույց է տալիս, որ իմաստապես բոլորովին տարազատված չէ **հանգուցանել** բայի **հանգոյց** ձևից և հեշտորեն կարող էր սերել ու իրականում էլ սերել է դրանից:

Այս հիմամբ **հանգոյց** (> հանգույց) գոյական-բառը, որ գործածվում է նաև բարբառային զանազան ձևերով⁴²¹, ինչպես՝ **հանգիւց** (Ձթ.), **հանգայց** (Սվեդ.), **հոնգուց** (Հնչ), **խանգ'եսոց** (Սլմ.), **հանգուրց**, **հանգուրծ** (Մշ.), **հանկուստ** (Ախց Կր.) և այլն (հմմտ. նաև **հանգուցել**, **հանգուրցել**, **հանգուստել**, **հանգուրստել**, **հանգուղտել** «հանգույց կապել»), հանվում է չստուգաբանված բառերի շարքից և կապվում **հանգչել** բայի հանգ («դադար») տակավին չստուգաբանված արմատի հետ:

6. ՀԱԲԱՅ (>ՀԱՎԱ)

Հր. Աճառյանը առաջինն է նկատել **հաւայ** (> հավա) բառի գոյությունը և ներկայացրել այն նախ 1911 թ.՝ «Արարատ» ամսագրում (էջ 230) ու ապա՝ «Հայերեն արմատական բառարանում»՝ հետևյալ բնութագրմամբ. «ՀԱԲԱՅ «քաջագործություն, հաղթություն». նորագյուտ բառ, որ մեկ անգամ գործածված է Սեբ. 41. «Քանգի տեսանելով **զհաւայս** նորա **չարաչարս**», զարհուրեալ խտորեցան սիրտք իւրեանց ի նմանէ»⁴²²:

Հետևելով Հր. Աճառյանին՝ **հաւայ** (> հավա) բառը կասկածով այդպես է մեկնաբանել նաև Ստ. Մալխասյանցը. «+ 1. ՀԱԲԱՅ (վա) գ. Քաջագործություն, հաղթություն (անստ. մշ.)»⁴²³:

⁴²¹ Դրանց մասին տես՝ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան:

⁴²² Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, այլև՝ «Պատմութիւն Սեբեոսի», Երևան, 1979, էջ 81:

⁴²³ Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան:

Մխիթարյան Ն. Ակինյանը, սակայն, չի ընդունել այդ մեկնությունը և ենթադրություններ է արել, որ **հաւայ**-ն կարող է **զհարուածս, զհաւատս, զհամբաւս** կամ **զհայեացս** բառաձևի այլափոխությունը լինել⁴²⁴:

Այսպիսով՝ փաստորեն մինչև այժմ պարզված չէ, թե առաջին անգամ Սեբեոսի «Պատմության» մեջ գործածված այդ **հաւայ** (>հավա) բառը ստույգ ի՞նչ ծագում ունի և ի՞նչ է նշանակում:

Պետք է, սակայն, ասել, որ **հաւայ** բառի մեկանգամյա գործածությունն իսկ վկայում է, որ այն հայերենի համար անսովոր բառ է և, իբրև այդպիսին, կարող է փոխառված լինել մի այլ լեզվից: Ինչպես հայտնի է, Սեբեոսը **հաւայ** բառը գործածել է պարսիկների՝ թագավորի առաջ Մուշեղ Մամիկոնյանին ամբաստանելը նկարագրելու առիթով, որը և ավելի հավանական է դարձնում այդ բառի պարսկական ծագումը:

Եվ մեր կարծիքով ու համոզմամբ **հաւայ**-ն իսկապես պարսկական փոխառություն է և սերում է պրսկ. *hāva* (հավա) «1. Կիրք, տարփանք: 2. Ցանկություն» բառից⁴²⁵, որն էլ Սեբեոսի Պատմության մեջ գործածվել է հոգնակի թվով և, բնականաբար, «ցանկություններ՝ ձգտումներ՝ նկրտումներ» է նշանակում: Ըստ այդմ էլ, հասկանալի է, «Քանզի տեսանելով **զհաւայս** նորա **չարաչարս...**» արտահայտությունը ոչ թե՝ «Որովհետև տեսնելով նրա շատ վատ քաջագործությունները կամ հաղթությունները», «Որովհետև տեսնելով՝ զգալով՝ իմանալով նրա շատ վատ ցանկությունները՝ ձգտումները՝ նկրտումները...» պետք է թարգմանել:

7. ԶՐԵԼ

Զրել («Սերժել, կամ քռի տալ, կամ ուլանս տալ», «Մղել, քշել», «Չարվածի միջոցով մեկին կամ մի բան իրենից հեռացնել, բոթել,

⁴²⁴ Տե՛ս «Չանդես ամսօրեայ», 1969, էջ 340, այլև Սեբեոսի «Պատմութեան» ծանոթագրությունները, էջ 251:

⁴²⁵ Տե՛ս Персидско-русский словарь, т. II, М., 1970, էջ 732, այլև՝ **Գ. Մ. Նալբանդյան**, Պարսկերեն-հայերեն բառարան, Երևան, 1987, էջ 657: Բառարանների վկայությամբ էլ պարսկերենը այդ բառը փոխ է առել արաբերենից:

մշտել») ⁴²⁶ բառը, որի ծագումը բացատրելու փորձ է արել միայն Յ. քհ. Յյունքյարպեյենտյանը՝ անհիմն կերպով բխեցնելով **խրել** բառից ⁴²⁷, դեռևս չի ստուգաբանված:

Իրապես, սակայն, այդ՝ **հրել** բայը, որ բացակայում է գրաբարում և առաջին անգամ հանդիպում է բժշկապետ Մխ. Յերացու «Ջերմանց մխիթարուիւն» գրքում («Ձի բնութիւն **հրե** շուտով, և վարե ի ստամոքացն», ԼԳ, էջ 94), ստուգաբանական տեսակետից առանձին բարդություն չի ներկայացնում: Պետք է ուղղակի ասել, որ այն սովորական բաղադրյալ բառ է՝ կազմված **հուր** («կրակ») հիմնական ձևույթից ու **-ել** բայակերտ մասնիկից, և որի այդպիսին լինելն էլ հաստատվում է երկու կարևոր՝ հնչյունային և իմաստային կողմերով:

Ինչպես այլ ձևույթների, այնպես էլ **-ել** բայակերտ մասնիկի հետ բաղադրվելիս **հուր** բառը միանգամայն օրինաչափորեն **ու>ը** հընչյունական փոփոխությունն է կրել (հմմտ., օրինակ, **հրկեզ**, **հրծիգ**, **հրեղէն**, **հրավառ**, **հրդեհ**, **հրշեջ** և այլն) և առաջ բերել **հրել** բայը՝ հար և նման այն բայերին (**ջրել**, **սրել**, **մրել**, **կարել**, **մխել**, **քնել**, **լռել**, **խմել**, **սրբել**...), որոնք նույնպես կազմվել են ու ձայնավորով միավանկ բառերից (**ջուր**, **սուր**, **մուր**, **կուպր**, **մուխ**, **քուն**, **լուռ**, **խում**, **սուրբ**...)՝ **-ել** բայակերտ մասնիկի միջոցով:

Այդպես և որոշակի է իմաստային կապը նրանց միջև. կազմվելով **հուր** («կրակ») բառից՝ **-ել** մասնիկով, **հրել** բայը, անշուշտ, նախապես նշանակել է «կրակը արծարծել», «հրի՝ կրակի միջոցով մի բան կամ մեկին մի կողմ մղել՝ քշել» և այնուհետև այդ հիման վրա ստացել ավելի լայն՝ «մի բան կամ մեկին իրենից հեռու վանել՝ հեռացնել», «մեկին մի բանի մղել, գրգռել» իմաստները:

Շատ պարզորոշ այդ է հաստատում հատկապես **հրահուր** հոդակապով կրկնավոր բարդությունից կազմված **հրահրել** («1. Կրակը քամի տալով բորբոքեցնել, արծարծել: 2. Փոխ. Սիրտը տաքացնել, բորբոքել: 3. Ընդհանրապես՝ արծարծել, գրգռել, ույժ տալ») բայը ⁴²⁸, որի վերջին բաղադրիչն էլ լիովին համապատասխանում է առանձ-

⁴²⁶ Համապատասխանաբար նշանակությունների համար տես «Բառգիրք հայոց», Երևան, 1975, էջ 191, «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», էջ 512, **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

⁴²⁷ **Յովհ.** Յյունքյարպեյենտեան, Ստուգաբանական բառարան հայ լեզուի, Պոլիս, 1894, էջ 176, այլև **Յր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

⁴²⁸ Դրա իմաստների համար տես **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

նաբար գործածվող **հրել** բային՝ ինչպես ձևով, այնպես էլ իմաստով⁴²⁹:

Այսպիսով՝ մնում է ընդունել, որ ծագումնաբանորեն **հրել** բայը իրոք կապվում է **հուր-ի** հետ, որը, ինչպես հայտնի է, բուն հայերեն բառ է և սերում է հ. ե. հիմք-լեզվի *puro-ձևից*⁴³⁰:

8. ՄԻԱՅԱՆԷ

Բառս, որ հանդիպում է սուսկ մեկ անգամ՝ Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց» գրքի այն մասում (Վեցերորդ դպրութիւն, Ժ գլուխ), որտեղ խոսվում է հայոց թագավորների մոտ ազահության ձգտող Հովհան Եպիսկոպոսի՝ զանազան խեղկատակություններ անելու մասին («Սոյն Յոհան Եպիսկոպոս՝ որդի Փառինայ յորժամ երթայր առ թագաւորն Հայոց, խաղակատակ լինէր նոցա. որպէս խաղալով զանձն իւր կրթէր յազահութեան, որուն ծարաւեալ պասքեալ փափաքէր, սակայն **միահանէք** այն էին նորա») ⁴³¹, մինչև այսօր էլ անտույգ է համարվում:

Ըստ Նոր հայկազյան բառարանի՝ այն նշանակում է «Որպէս թէ միակ հանակ, այսինքն Խաղ, կատակ, միմոսութիւն կամ կեղծաւորութիւն առ ի հանել և քաղել ինչ մի յայլոց»⁴³², ըստ Առձեռն բառարանի՝ «Հանակ, խաղ, կատակ»⁴³³:

Հր. Աճառյանը, քննելով ձեռագրերում հանդիպող **միահանէք** և **միահանէք** ձևերը, մի կողմից ճիշտը համարում է վերջինը՝ միանգամայն տեղին գտնելով, որ «Բառը անշուշտ հոգնակի է. ինչպես ցույց է տալիս **էին** հոգնակի բայը. եզակին պիտի լինի **միահանէ** կամ **միահանէս**», իսկ մյուս կողմից՝ մերժում է «կատակ» նշանակությունը և նշում, որ «ավելի հարմար է գալիս «փորձանք, վտանգ, փորձություն»: Բուզանդը ուզում է ասել, թէ «Հովհանը ազահության

⁴²⁹ Այդ մասին տե՛ս մեր «Հոդակապով կրկնավորները հայերենում» հոդվածը (ՊԲՀ, 1987, թիվ 2, էջ 167):

⁴³⁰ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան:

⁴³¹ Փ. Բուզանդի «Պատմութեան» գրեթե բոլոր հրատարակությունները **միահանէքի** փոխարեն ունեն **միահանէսք**, որը, անշուշտ, աղավաղված ձև է:

⁴³² «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, էջ 266:

⁴³³ «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», էջ 561:

ծարավի էր. սակայն այդ ազահությունը իր գլխին փորձանք էր բերում»⁴³⁴:

Ստ. Մալխասյանցն էլ յուրատեսակ մոտեցում է հանդես բերել. «Հայերեն բացատրական բառարանում» նա երկու տարբեր մեկնությունները միացրել և «*ՄԻԱՅԱՆԷՔ, հոգն. Փորձանք, վտանգ, կամ կատակ, հանաք (անստ. նշ.)» բացատրությունն է տվել⁴³⁵, իսկ Փ. Բուզանդի «Պատմութեան» աշխարհաբար թարգմանության մեջ մի այլ՝ միջոց իմաստով է ներկայացրել («Խաղալիք դառնալով նա ազահության էր ձգտում, որին անհագաբար ծարավ էր և (այդ խեղկատակությունները) նրան իբրև **միջոց** էին ծառայում»)՝⁴³⁶:

Չընդունելով տրված մեկնություններից ոչ մեկը՝ պրոֆ. Ա. Աբրահամյանը (անշուշտ, սա արժանի է ուշադրության), նկատել է, որ **միահանէք**-ը «թրեւս կարելի պատրվակ թարգմանել»⁴³⁷:

Չովհան եպիսկոպոսի մասին ասվածից էլ երևում է, որ Փ. Բուզանդը ճիշտ հենց «պատրված, սուտ պատճառ, պատճառանք» նշանակությամբ է գործածել **միահանէք** բառը, որը համապատասխանում է պրոսկ. **մահանա < behane** («սուտ պատճառ, պատրվակ») բառին⁴³⁸ և անվիճելիորեն փոխառություն է այդտեղից: Ավելացնենք, որ պարսկերենից փոխառյալ նույն այդ բառը **մահնա** || **մահնէք** ձևով այսօր էլ գործածվում է որոշ բարբառներում:

9. ՆԱՆ(Ի)

Նան («մայր, մայրիկ») բառը, որ իբրև կոչական գործածվում է **ճանա, ճանե, ճանի** ձևերով, Հր. Աճառյանը համարում է «գրաբարի մեջ գոյություն չունեցող բոլորովին նոր արմատներից» մեկը⁴³⁹: չբացատրելով, սակայն, նրա ծագումը: Այնպես որ որոշ բարբառների հատուկ այդ բառը, որ գործածված ենք տեսնում առանձին հեղինակների ստեղծագործություններում, ինչպես՝ «Մեռած չոբանի պառավ **ճան** է նա՝ Ցավից խելագար բառաչում, լալիս», ՀԹ, ԵԼԺ, 1989,

⁴³⁴ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան:

⁴³⁵ Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան:

⁴³⁶ Փ. Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Երևան, 1987, էջ 411:

⁴³⁷ Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 414:

⁴³⁸ Այդ մասին տես, օրինակ, Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան:

⁴³⁹ Հր. Աճառեան, Հայերեն գաւառական բառարան:

h. 2, էջ 103, «Մրմուռից դաղված նրա բերանով Սարոյի **ճանը** պիտի ողբ ասի», ՊՍ, ԵԺ, հ. 4, 1973, էջ 7, «- **Նա՛նի, նա՛նի**, հաց ենք ուզում, Վե՛ր կաց **ճա՛նի**, հաց տուր մեզ», ՀԹ, ԵԼԺ, հ. 1, 1988, էջ 143 և այլն, տակավին ստույգ մեկնություն չի ստացել:

Լեզվաբան Գ. Զահուկյանը, որ քանիցս է անդրադարձել **ճան** (|| **ճանա, ճանե, ճանի**) բառին՝ դրա ծագման մասին նույնպես որոշակի բան չի ասում: Նա մեկ այդ բառը կապում է հ. ե. ենթադրյալ [**nana, *nena*] ***nana** հիմնարմատի հետ⁴⁴⁰, մեկ էլ ուղղակի ասում է, թե «Նան, նանի, նանե, նանա բառերի համար հնարավոր է ենթադրել նաև իրանական ծագում (հմմտ. ն. պրսկ. nana «մայր»), եթե չենթադրենք բնիկ և իրանական փոխառյալ ձևերի խառնուրդ (բարկություն)»⁴⁴¹:

Պետք է ասել, որ **ճան** (|| **ճանա** || **ճանե** || **ճանի**) բառը, իհարկե, միանգամից ծնունդ չի առել և ոչ էլ երկնքից է վայր ընկել. այն իր կենսագրությունը ունի և իրականում էլ հանդիսանում է հ. ե. հիմքլեզվի **an-** («հոր կամ մոր մայր, մամ, տատ») ձևից սերող **հան** («մեծ մայր») բառի⁴⁴² բարբառային շատ պարզ արտահայտությունը: Ասել է թե՛ նույն այդ **հան** բառը ժողովրդախոսակցական լեզվում անփոփոխ չի մնացել և ետընթաց լիակատար առնմանամբ (հ ← ն) դարձել է **ճան** (**զոյժ - ժոյժ - ժույժ, շարժ - շաժ - ժաժ** և այլն)՝ դուրս մղելով նրան գործածությունից:

Եվ իսկապես. **հան** («մեծ մայր») բառը, որ գրաբարում գործածվել է նաև **հանի, հանիկ** ձևերով (հմմտ. «**Ձհանն** և գմայր ած գմըտալ» Ոսկ. բ. տիմ: «Վասն լլկանաց իւրոյ **հանւոյն**» Խոր. բ. 22: «Սպան զ**հանիկն** իւր» Վրդ. պտմ.)⁴⁴³ և հաճախ է հանդիպում նաև միջնադարյան գրավոր աղբյուրներում (ինչպես՝ «...յիշեսցիք ... նաև գերկու **հանն** իւր՝ զթիմայն և զԽելօքն», ԺԴ դ. հայ. ձեռ. հիշ., էջ 400. «...յիշեցէք ... և զ**հանիկն** իմ զՏիրանց» ԺԵ դ. հայ. ձեռ. հիշ., Մասն Ա, էջ 202. «...յիշատակ ... և **հանոյ** իւրոյ տէր ֆարխանդէ» ն. տ., էջ 466. «Յիշեցէք յաղօթս ձեր ... և **հանիկն** զԲէրամշէն», ն. տ., Մասն Բ., էջ 363. «յիշատակ ... և **հանկացն** Ամէն-

⁴⁴⁰ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 140:

⁴⁴¹ Նույն տեղում, էջ 182:

⁴⁴² Այդ մասին տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան:

⁴⁴³ Օրինակների համար տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, էջք 35, 45:

տիկնին և Խաթլու-Մելիքին...», մ. տ., Մասն Գ., էջ 461 և այլն), հետագայում լրիվ անկենսունակ է դառնում և Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում», օրինակ, **Թ** նշանով միանգամայն իրավացիորեն իբրև հին բառ ներկայացվում:

Ինչպես դա, այդպես էլ **հան** || **հանի** || **հանիկ** և **նան** || **նանի** || **նանա** || **նանե**, այլև՝ **նանիկ** բառերի թե՛ իմաստների, թե՛ հնչյունական կազմի ընդհանրությունները ցույց են տալիս ու հաստատում, որ վերջինները սերում են առաջիններից և նրանց անմիջական շարունակությունն են կազմում:

Հարկ է նշել, որ ծագումնաբանորեն **հան**, **հանիկ** բառերին են հանգում նաև **նանիկ** («1. Քուն: 2. Օրոր, օրորոցի երգ: 3. Մանկիկը քնեցնելու խակօրրան, ճոճք»), **նանել** («Նանիկ անել, քնել») մանկական բառերը⁴⁴⁴, որոնց արտահայտած իմաստներն էլ, անշուշտ, կապվում են մոր՝ օրորոցում, ճոճքում երեխային երգելով՝ նանիկ-նանիկ ասելով քնեցնելու իրողության հետ:

10. ՏԵՐՆԴԱՍ || ՏԵՐՆՏԱՍ

Տերնդաս || **տերնտաս** («1. Տյառն ընդառաջի եկեղեցական տունը: 2. Այդ տոնի օրը փողոցներում՝ բակերում խարույկ վառելու և վրայով թռչելու ժողովրդական սովորությունը») բառը ցայսօր էլ հիմնովին պարզ չէ, թե ինչ ծագում ունի կամ ճիշտ ինչ բաղադրիչներից է կազմված:

Որոշ բառարաններ հակասական իրարամերժ բացատրություն են տալիս, այն ծագած համարելով «**Տեառն ընդ առաջ**-ից **Տեր ընդ այս**-ից աղավաղված»⁴⁴⁵: Իրապես, սակայն, դա, որ ամենևին աղավաղված բառ չէ, ոչ թե **Տեառն ընդ առաջ**-ից, այլ **Տեր ընդ այս** (= տերը դեպի այս կողմ) կապակցությունից է առաջ եկել, և որի իսկությունն էլ հաստատում է Հր. Աճառեանը՝ «Հայերեն արմատական բառարանում» նշելով. «Կարևոր ձև է **տերնդաս** (ՀՃ. **դէյէն դէգ**, որ գործածվում է «կաղանդ, նոր տարի» նշանակությամբ), որ է միջ. հյ. **տէրընդայս** «տեառնընդառաջի տոնը». այս երկու հոմանիշների

⁴⁴⁴ Դրանց մասին տե՛ս, օրինակ, Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան:

⁴⁴⁵ Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 4, Երևան, 1980, էջ 495:

վկայության և ստուգաբանության համար հմնտ. Յայսմ. փետր. 14 (Եկին ի տեսանել զԵկեալն ի տաճարն և միմեանց ծայն տուեալ ասէին: **Տէր ընդ առաջ**. այլք պատասխանեալ ասէին. **Տէր ընդ այս**) և Տաթև. ծմ. ժգ (**Տեառնընդառաջ** և **տէրընդայս**, զոր ծեքելով ասենք **տէրընդէս**)»⁴⁴⁶:

Ինչպես դժվար չէ նկատել, **տերնդաս** || **տերնտաս** բառը առաջինը ճշտորեն է ստուգաբանել Գր. Տաթևացին, մատնանշելով, որ այն առաջ է եկել **Տէր ընդ այս**-ից՝ հնչյունական փոփոխությամբ, հմնտ., օրինակ, **ընդ + այս > դայս > դէս > տէս, ընդ + այն > դայն > դէն (> տէն)** || **դան, ընդ + այլ > դայլ > դէլ (> տէլ)** և այլն:

Լայնորեն գործածվելով ժողովրդախոսակցական լեզվում՝ **տեր ընդ այս**-ը պարզապես մի քանի, անշուշտ, ոչ արտասովոր, հնչյունական փոփոխություն է կրել. մի կողմից նրանում **այս** բառի **այ** երկբարբառը օրինաչափորեն վերածվել է է-ի կամ **ա**-ի (հմնտ. **տերնդէս** և **տերնդաս**), **ընդ** բառի **ը** սկզբնածայնավորը մթազնել է (հմնտ. **տէնդէս** և **տէրնդաս**), իսկ մյուս կողմից՝ ամնմանում է տեղի ունեցել, առանձին դեպքերում անգամ **տեր** բառի է-ն է հնչյունափոխվել, և այդպիսով՝ առաջ են եկել **տերնդաս, տերնտաս, տերնդեզ, տերնդես, տրնդեզ, տրնդես** և նման այլ բարբառային ձևեր:

11. ՏԿԼՈՐ

Տկլոր («բոլորովին մերկ, մերկանդամ») բառը, որ հիմք է ծառայել մի շարք կազմությունների համար, ինչպես **տկլորանալ, տկլորացնել, տկլորացվել, տկլորացում, տկլորվել, տկլորություն** և այլն, բացակայում է գրաբարում և, անշուշտ, առաջ է եկել հետագայում՝ ժողովրդախոսակցական լեզվում:

Այդ բառի ծագման մասին, այն էլ՝ երկմտաբար, արտահայտվել է միայն Ստ. Մալխասյանցը՝ ասելով. «Թվում է **տիկ** բառից՝ **լազ, լոզ, լոր** մասնիկով, իբրև տկի նման լերկ, մազերը հանած. հմնտ. **տկլազ, մկլեզ** կամ **մկլոզ, խնջլոզ** (խուռջ-ից), **քփր-լոր-իկ**»⁴⁴⁷:

Տկլոր բառի և՛ ձևաբանական-հնչյունական կազմը, և՛ իմաստը ցույց են տալիս, որ ստուգաբանական մեկնությունը ո՛չ թե թվացա-

⁴⁴⁶ Գր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան:

⁴⁴⁷ Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան:

կան, այլ միանգամայն հիմնավոր է ու ճիշտ: Այն իսկապես կազմված է **տկ + լ + որ** ձևույթ-բաղադրիչներից, որոնցից **տկ**-ը **տիկ** արմատական բառի հնչյունափոխված ձևն է և ինչպես **տկլոր**, այնպես էլ այլ բառերում այնպիսի իմաստներ է արտահայտում, որոնք ուղղակիորեն կապվում են նրա՝ կա՛մ մազից ամբողջապես զրկված՝ մազագուրկ, կա՛մ ուռած պարկի նման լինելու իրողության հետ, հմմտ., օրինակ, **տկել** («1. Պանիր կամ այլ նյութ տկի մեջ ածել ու պահել: 2. **Նման**. Տիկ դարձնել, փորը ուռեցնել: 3. Ազահությանը և մեծ քանակությամբ խնել»), **տկզար** («1. Տիկ՝ պարկապզուկ: 2. Ածելու տիկը, պարկապզուկ»), **տկզել** («Ուռչել, լցվելով ուռչել»), **տկզեցնել** («Ուռեցնել, տկեցնել»), **տկլիկ** («Շատ ուտելուց փորը ուռած, տիկ դարձած, տկռած»), **տկլոզ** («Տկլոր՝ բոլորովին մերկ, մերկանդամ»), **տկճոր** («1. Փոքր պարկ, փոքր տիկ: 2. Պարկապզուկ») և այլն⁴⁴⁸:

Նկատելի է նաև, որ **տկ** (< տիկ) հիմնական ձևությամբ կազմվել են մեծ մասամբ այնպիսի բառեր, որոնք իրենց կազմում սաստկական նշանակություն արտահայտող որևէ (**լ, ռ, զ**) մասնիկ ունեն: Ճիշտ այդպես՝ **տիկ** (> տըկ)+ **լ + որ** բաղադրիչներից էլ ահա կազմվել է **տկլոր** բառը (հմմտ. **տկլիկ** < **տկ + լ + իկ, տկ + լ+ ոզ**, այլև՝ **մոլոր** < **մոլ+ որ, բեկոր** < **բեկ + որ, գլոր** < **գլ+ որ, հատոր** < **հատ + որ...**), որ հարակից մյուս բառերի պես որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև իմաստաբանական տեսակետից:

Տիկ բառը, որ «նախապես նշանակում էր այծ և ծագում է հնիս. dig «այծ» բառից»⁴⁴⁹, եթե գործառույթային (ֆունկցիոնալ) իմաստափոխությամբ ներկայիս նշանակությունն է ստացել, ապա նրանից կազմված մյուս բառերը արտաքին ձևի նմանությամբ այլևայլ իմաստներ են արտահայտում:

12. ՑԱՍ(ՈՒՄՆ)

Ցաս («բարկություն»)՝ միայն բաղադրյալ բառերում (ինչպես՝ **ցասնուլ, ցասումն, ցասչիլ, ցասկոտ, ցասնական, ցասոյց, ցասմնալից, ցասոյթ, ցասուն, ցասուցանել...**, այլև՝ **անցասումն, չարացասումն, յանկարծացասումն** և այլն) գործածվող բառար-

⁴⁴⁸ Բառերի իմաստների համար տե՛ս հիմնականում **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

⁴⁴⁹ Տե՛ս **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

մատի ծագման մասին հայտնվել են մի շարք կարծիքներ, որոնցից ոչ մեկն էլ Հր. Աճառյանը ճիշտ չի համարել և միանգամայն իրավացիորեն այն դեռևս չստուգաբանված արմատ է դիտել⁴⁵⁰:

Նոր ժամանակներում **ցաս** (-նու-մ)-ը ստուգաբանելու փորձ է արել Գ. Ջահուկյանը՝ բխեցնելով հ. ե. ենթադրյալ *k'sāp . s - նախաձևից⁴⁵¹:

Մեր լեզվական զգացողությամբ ու ընկալմամբ՝ դա, սակայն, ոչ թե մի անբողջական արմատ, այլ բաղադրյալ բառ է՝ կազմված **ց** նախդիրից և **ասել** բայի **աս** (< հ. ե. aǵ) արմատից: Իր այդօրինակ կազմությամբ ու իմաստով **ցաս**-ը հար և նման է **այրել** բայի **այր**-արմատից **զ** սաստկականով կազմված **զայրանալ** (նախ՝ «Տաքանալ, բորբոքվել» և ապա՝ «1. Սաստիկ բարկանալ, կատաղել: 2. Սիրտը մորմոքել: 3. Ջորանալ, սաստկանալ») բայի **զայր** (< **զ** + **այր**) մասին, որ, ի դեպ, հանդես է գալիս նույնպես մի շարք բաղադրյալ **զայրացկոտ**, **զայրացունն**, **զայրոյթ**, **զայրութիւն**, **զայրումն** և այլն⁴⁵²:

Բացի այդ, նկատելի է, որ ինչպես այլ նախդիրների, այնպես էլ **զ** նախդիրի պես **ց**-ով ևս հեռավոր անցյալում նոր բառեր են կազմվել, հմնտ., օրինակ. **ցայգ** (< **ց** + **այգ** «գիշեր»), **ցանկ** (< **ց** + **անկ** «1. Պատ, պատնեշ: 2. Ցուցակ: 3. Միշտ»), **ցարդ** (< **ց** + **արդ** «մինչև այժմ»), **ցերեկ** (< **ց** + **երեկոյ** «օր, կեսօր»), այլև՝ **ցմահ**, **ցտեսութիւն**, **ցպահանջ**, **ցգրութիւն**... Պետք է ասել, որ հենց այս կարգին է պատկանում նաև զուտ բաղադրյալ կազմություններում գործածվող **ցաս**- հիմնական ձևությամբ, որը և իր **ց** («մինչև») և **աս**- («ասելը, ասումը») բաղադրիչների նշանակության համապատասխան կարող էր արտահայտել և իրապես էլ արտահայտում է «ներքին զայրոյթ, սաստիկ բարկություն» իմաստը:

⁴⁵⁰ Տե՛ս նույն տեղը:

⁴⁵¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1987, էջ 133, այլև 219, 271, 393:

⁴⁵² Դրանց մասին տե՛ս հատկապես Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան:

13. ՑՆՈՐ

Ցնոր («երևակայություն, աչքին երևեցած բան, երագ, արհա-վիրք») բառը, որի ծագման մասին ևս անընդունելի կարծիքներ են հայտնվել («Յունք. **ներել** բայից: Perdesen Հայ. գր. լեզ. 226 գոթ. skeinan «երևիլ» բայի հետ՝ **-որ** մասնիկով»)՝⁴⁵³, նույնպես դեռ չի ստուգաբանված:

Մենք տվյալ դեպքում, սակայն, հակամետ ենք կարծելու, որ դա ևս ոչ թե մի ամբողջական, այլ բաղադրյալ բառ է կազմված **ցն + որ** բաղադրիչներից, որոնցից վերջինն էլ եթե բառաստեղծական մասնիկ է (հմմտ. **բեկոր < բեկ + որ, բոլոր < բոլ + որ, գլոր < գլ + որ, խմոր < խմ + որ, հատոր < հատ + որ, մոլոր < մոլ + որ, քակոր < քակ + որ...**), ապա **ցն-** հիմնական ձևությամբ էլ այլ բան չէ, քան առանձնաբար չգործածվող և նույնպես դեռևս չստուգաբանված **ցունդ** («սփռվել, տարածվել, ցրվել») արմատի մի տարբերակը, որ առաջ է եկել չավանդված կամ ենթադրյալ ***Ցնդոր (< ցնդ + որ)** նախածնից՝ **դ** հնչյունի անկմամբ (հմմտ. **սանտր || սադր սանր**):

Նման ենթադրությունը հավաստի համարելու հիմք են ծառայում իմաստային այն կապերն ու ընդհանրությունները, որ երևան են հանում նրանցով կազմված բառերը, միմյանց նկատմամբ. հմմտ. **ցնդել** («1. Ցրիվ տալ, սփռել, տարածել: 2. Ցրվել, միտքը այս կամ այն բանի վրա դարձնել, մտքով հածել: 3. Խելքը կորցնել, խելագարվել, ցնորվել, գժվել: 4. Ծերությունից խելքը պակասել») և **ցնորել, ցնորվել** («1. Խելքը կորցնել, խելագարվել, ցնդել: 2. Խոսել՝ գործել առանց գիտակցության: 3. Ուշադրությունը ցրվել, ուշքը վրան չլինել: 4. Ուշաթափվել, ուշքը գնալ: 5. Ցնորքների մեջ ընկնել, երևակայությամբ տարվել, երագել: 6. Շվարել, գլուխը կորցնել...»): **ցնդումն** («Ցնդելը, ցնդեցնելը» - **ցնորումն** «Ցնորվելը»), **ցնդած** («Խելքը թռցրած, ցնորված, ցնդուկ, գժված») - **ցնորված** (նույն նշ.), **ցնդական** («Ցնդելու հատկություն ունեցող, թռչող ու ցրվող») - **ցնորական** («Աչքին թվացող, երևակայական, երևութական») և այլն⁴⁵⁴:

Ցնդ- (< ցունդ)-ի և **ցն-** (< ցունդ)-ի ընդհանուր ծագման շատ ավելի ցայտուն ապացույց են հանդիսանում մանավանդ բարբառ-

⁴⁵³ Տե՛ս **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

⁴⁵⁴ Դրանց մասին տե՛ս **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

ներում գործածական **ցնդել** (Ալշ., Մշ.), **ցնդել** (Երև.), **ցնդիլ** (Ախց., Կր. Տփ.), **ցնդիլ** (Խրբ.), **ցը՛նդալ** (Ձթ), **ցնթել** (Սլմ., Վն.), **ցնթել** (Ննխ.), **ցնթիլ** (Ալմ. Ասլ. Պլ. Սեբ.), **ցնթուշ** (Հմշ.) և **ցնօրիլ** (Ախց. Կր. Պլ. Ռ. Սեբ. Տիգ.), **ցնորվել** (Ջղ.), **ցնօվել** (Ալշ. Մշ.), **ցնօրվիլ** (Շմ., Տփ.), **ցնօրվել** (Երև, Ննխ.) բայերը, որոնք երկու դեպքում հավասարապես «գառառությունից խենթանալ՝ ցնորվել, մտքով ցնդել» են նշանակում⁴⁵⁵:

14. ՓՆԹԻ

Փնթի («1. Կեղտոտ, աղտոտ, անմաքուր: 2. Տգեղ, չար և գեշ: 3. Թափօփված, անփույթ, կարգ ու կանոնի չհետևող») բառը գործածվում է բառապաշարային ժողովրդախոսակցական ոճում և բառարաններում ոչ պատահականորեն իբրև ռամկական⁴⁵⁶ կամ բարբառային⁴⁵⁷ բառ է ներկայացվում:

Ծագումն այդ բառի, որ բացակայում է գրաբարում և առաջին անգամ հանդիպում է միջնադարյան որոշ գործերում («Ջորպեն ոչ գիտեն, **փնթի** է. Մարթին, Սմբ. դատ. 6, 123»), փորձել են պարզել ՆՅԲ-ը, Բուզգեն, Մառը⁴⁵⁸:

Յր. Աճառյանը, սակայն, չի ընդունել ոչ մեկի մեկնությունը և հաստատականորեն այն կարծիքն է հայտնել, թե **փնթի**-ն «կազմված է հյ. **փին** «աղբ» և **թի** բառերից, իբր «աղբի թի». այսպիսի պատկերավոր բացատրություններ սովորական են ժողովրդական լեզվի մեջ»⁴⁵⁹:

Փնթի բառի աճառյանական մեկնությունը, որ, ի դեպ ընդունել է Ստ. Մալխասյանցը⁴⁶⁰, անհամոզիչ է համարել Գ. Ջահուկյանը և չմերժելով նրանում **փին** արմատի առկայությունը՝ նշել, թե «**թ**-ն թերևս աճական է» կամ «ավելի հավանական է **թ**-ի աճական լինելը»⁴⁶¹:

⁴⁵⁵ Տե՛ս **Յր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

⁴⁵⁶ Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, էջ 644, «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», էջ 811:

⁴⁵⁷ **Յր. Աճառյան**, Հայերեն գաղառական բառարան, **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

⁴⁵⁸ Տե՛ս **Յր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

⁴⁵⁹ Նույն տեղում:

⁴⁶⁰ **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

⁴⁶¹ **Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն, էջ 193, 231:

Այսպիսով **փնթի** բառը փաստորեն դեռևս ստույգ մեկնություն չի ստացել: Հր. Աճառյանի մեկնությունը իրոք անհամոզիչ է, որովհետև «պատկերավոր բացատրությամբ», այն էլ՝ հին ժամանակներում, չէր կարող **փի + թի** գոյականներից անմիջականորեն այնպիսի անհոդակապ իսկական բարդություն կազմվել, որ ածական լիներ և, ասենք, «կեղտոտ, անմաքուր» իմաստն արտահայտեր: Ռա այդպես լինելու դեպքում կամ նման պարագայում, հասկանալի է, որևէ հիմք չկա նաև **փնթի** բառը բաղադրիչների (**փին + թի**) բաժանելու և դրանում **թ**-ն ածական (°) համարելու համար:

Հակառակ այս ամենի՝ պետք է ասել, որ **փնթի** բառը, որ բարբառներում գործածվում նաև **փնթի, փնթա, փնթե, փնտի** ձևերով, պարզապես փոխառություն է պարսկերենից և սերում է դրա՝ ձևով ու իմաստով նույնական **пѣту** // փենթի («վատ, անպետք, գեշ, փնթի») բառից⁴⁶²:

15. ՔՆԱՓ

Քնափ («շատ քնող, քնկոտ») բառը, որ ներկայումս էլ կենդանի է և գործածվում է Արարատյան, Արցախի, Գորիսի բարբառներում, առաջին անգամ հանդիպում է միջնադարյան գրավոր աղբյուրներում⁴⁶³, ինչպես, օրինակ՝ «...որպես տանուտերն ատե **զքնափ** ծառայն, այսպես և աստուած՝ զհեղզն» (Գիրք մոլութեանց, Կ. Պոլիս, ՌՃԿԹ-1720, էջ 318), «Իսկ յորժամ մեղաւորն խոստովանի, պարտ է հայիլ քահանային ... թէ կրօնաւոր է՝ հարցանէ ...թէ **քնափ** և թէ կռօղ» (Գր. Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, ՌՃՂԸ-1729, էջ 601), «Վասն այն թէ մինչև ցայժմ **քնաք** և ծուլացեալ ես յեկեղեցի, յայսմ հետէ ժրացիր և արթուն լեր» (Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Կ. Պոլիս, ՌՃԴ-1741, էջ 180), «Այլև յիշել աղաչեմ՝ զիս՝ զեղկելի, զծոյլ, **զքնափ** և զմեղասաւր զծողս զՄկրտիչ սոսկա՛նուն վարդապետ...» (ԺԵ, դ. հայ. ձեռ. հիշ., Մասն Գ, էջ 352 և այլն):

Քնափ բառը, ինչպես դժվար չէ նկատել, կազմված է երկու՝ **քն** (< քուն) և **ափ** բաղադրիչներից, որոնցից վերջինի ծագումը կամ ինչ լինելը ամենևին որոշ չէ: Ելնելով, սակայն, նրա թե՛ արտա-

⁴⁶² Տե՛ս այդ մասին, օրինակ, Персидско-русский словарь, М., 1960, էջ 97, **Գ. Մ. Նալբանդյան**, Պարսկերեն-հայերեն բառարան, էջ 125:

⁴⁶³ Տե՛ս **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

հայտած իմաստից և թե՛ գրավոր ավանդված նաև **քնար** ձևից՝ կարելի է առանց վարանելու ասել, որ այն այլ բան չէ, **արբենալ** (|| **արբել**) բայի **արբ** արմատը, որ **քուն** բառին միանալով՝ մի կողմից եթե «քնով արբած, շատ քնող, քնկոտ» իմաստն է արտահայտել (հմմտ. **գինարբ** || **գինարփ** «գինով արբած»), ապա մյուս կողմից՝ **ր** ձայնորդի անկմամբ (հմմտ. **քարշ** - քաշ, **շարժ** - շաժ - ժաժ, **խորհ** - խոհ...) և **բ**-ի շնչեղ խլացմամբ (բ > փ)՝ **ափ** է դարձել:

Այսպիսով՝ պարզվում է, որ ներկայումս էլ որոշ բարբառներում գործածվող **քնափ** բառը անհոդակապ իսկական բարդություն է և նախապես, իրոք, **քնարբ** ձևն է ունեցել:

16. ՀՁՕՐ, ՀԼՈՒ, ՀՄՈՒՏ, ՀՊԱՐՏ

Պատմահամեմատական լեզվաբանության հաստատմամբ՝ հիշյալ՝ **հզօր** (> հզոր), **հլու**, **հմուտ**, **հպարտ** բառերը ոչ թե պարզ արմատական, այլ բաղադրյալ բառեր են՝ կազմված **հ + զօր**, **հ + լու**, **հ + մուտ**, **հ + պարտ** մասերից⁴⁶⁴: Ընդ որում՝ եթե ապացուցված ու որևէ կասկած չի հարուցում նրանց վերջին բաղադրիչի ծագումը՝ այն, որ **զօր** > **զոր**-ը պարսկերենից փոխառյալ **զօր** («ուժ, զորություն») բառն է, **լու**-ն **լսել** բայի արմատական մի ձևն է (հմմտ. գրբ. անցյալ կատարյալ՝ **լուայ** - **լուար** - **լուալ**, **լուաք** - **լուաք** - **լուայք** - **լուան**), **մուտ**-ը **մտանել** (> մտնել) բայի բուն արմատն է (հմմտ. գրբ. **մտի** - **մտեր** - **մուտ** կամ **եմուտ**), **պարտ**-ը **պարծ** (պարծել, պարծանք)-ի լծորդակիցն է, ապա առաջին՝ **հ** բաղադրիչը անորոշ կերպով է մեկնաբանվել և տակավին իր հիմնավոր լուծումը չի ստացել:

Գերմանացի հայտնի հայագետ Յ. Հյուբշմանը, օրինակ, **հզօր**, **հլու**, **հմուտ** բառերը հանել է ***հուզօր**, ***հուլու**, ***հումուտ** նախաձևերից՝ **հու**-ն համարելով իրանյան փոխառություն: Ա. Մեյեն, սակայն կասկածով է վերաբերվել այդ բացատրությանը՝ ասելով. «Սանսկր. su-ի, իրան. **հու**-ի, հ. իսլ. so-ի «բարիք» դիմաց հայերենը **հ** ունի բնիկ բարդ բառերում՝ **հ-լու**, **հ-մուտ** (մտանեմ-ին կից. կտրլ. **ե-մուտ**) և իրանական ծագումով երկրորդ եզր ունեցող **հ-զոր** բարդ

⁴⁶⁴ Տե՛ս **Յր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, այլև՝ **Մ. Աբեղյան**, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 168, **Ա. Մեյեն**, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978, էջ 117:

բառում: **Սակավ ինչ վարանում ենք հավատալ** (ընդգծումն իմն է - Ա. Մ.), որ այսքան հստակորեն բնիկ բառերում, ինչպիսիք են **հ-լու** և **հ-մուտ**, **հ(ու)** իրանական փոխառություն լինի, առավել ևս, երբ **տ-գետ** և այլ բառերի **տ**-ն հավաստի կերպով բնիկ է: Բայց, անկասկած, իրանականի ազդեցությամբ է **հ**-ն այստեղ պահպանվել կամ ներմուծվել, ինչպես **հին** և **հում** բնիկ բառերում»⁴⁶⁵:

Իրողությունն այդպես է մեկնաբանել նաև Յր. Աճառյանը՝ **հգոր** (> հգոր) բառի վերաբերյալ ուղղակի նշելով, որ այն կազմված **գոր** բառից **հ** մասնիկով, որ գտնում ենք նաև **հլու**, **հմուտ** բառերի մեջ: «Այս մասնիկը կարող է բնիկ հայ լինել (ընդգծումն իմն է - Ա. Մ.), բայց կարող է նաև իրանյանից փոխառյալ լինել. (բավական ճոխ գործածություն ունի իրանյան լեզուների մեջ): Վերջին պարագային հարմարագույն է ենթադրել, որ բառը ամբողջապես փոխառյալ լինի պիլ. *hu-zōr = զնդ. *huzāvar հոմանիշից: Բայց եթե նույնիսկ հայակերտ կառուցվածք էլ լինի, իրանյան ազդեցությունը անհերքելի (տե՛ս Meillet MSL 21, 187): - Յյուբ. 180»⁴⁶⁶:

Ի տարբերություն, սակայն, Յր. Աճառյանի, որ ավելի հակված էր **հ**-ն ոչ միայն նշված, այլև **հսկայ** < **հ + սկայ**⁴⁶⁷, **խրախ** < **խուրախ** < **հուրախ** < **հ + ուրախ**⁴⁶⁸ բառերում սաստկական մասնիկ համարելու, Մ. Աբեղյանը գտնում է, որ **հ**-ն **հու** է եղել և «լավ» նշանակությամբ իբրև բարդության բաղադրիչ է գործածվել: Այսպես՝ նա գրում է. «... գրաբարից ունենք՝ **հլու**, **հմուտ**, **հգոր**, որոնք բարդ բառեր են, կազմված **հը**<**հու** բառից և **լու** (լուր, լու ի լու), **մուտ**, **գոր** բառերից: Այդ «հու» բառը, սակայն, նույնիսկ գրաբարում անկախ գոյություն չունի, և բաղադրությունների մեջ դրա նշանակությունը զգալի չէ. համեմատական քերականության օգնությամբ միայն իմանում ենք, որ «հու» նշանակում է **լավ**, և որ վերևի բառերը բարդ են. **հլու** - լավ լսող, **հգոր** - լավ զորեղ, շատ զորեղ, **հմուտ** - լավ թափանցած մի բանի մեջ, ներհուն, խելամուտ: Դրանք քարացած, մեռած բարդություններ են»⁴⁶⁹:

⁴⁶⁵ Ա. Մեյնե, նշվ. աշխ., էջ 117:

⁴⁶⁶ Յր. Աճառյան, Յայերեն արմատական բառարան:

⁴⁶⁷ Նույն տեղում:

⁴⁶⁸ Նույն տեղում:

⁴⁶⁹ Մ. Աբեղյան, Յայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 168:

Այս ամենը, ինչպես նաև հիշյալ բառերի ծագմանը վերաբերող այլ կարծիքները ցույց են տալիս, որ նրանց համար ներկայացվող նախաձևերը սոսկ ենթադրյալ ձևեր են, և հետևաբար՝ իրոք դեռ հիմնովին պարզ չէ՝ **հ-ն** ի՞նչ՝ բնի՞կ հայերեն, թե՞ իրանյան ծագում ունի:

Թեական այդ հարցին վճռորոշ պատասխան է տվել նաև Գ. Ջահուկյանը՝ գտնելով, որ «Վ.-հ. (վաղնջահայերենի - Ա. Մ.) ***hu** -(հ.-ե. ***su** «լավ») > հ.-հ. (հին հայերեն - Ա. Մ.) **h(ը)** - անկախ բառ է՝ նախամասնիկի արժեք ստացած՝ **հ-լու** (հմմտ. լսեմ, լու, լուր), **հմուտ** (հմմտ. մուտ, մտանեմ) բառերում: Հետագայում խառնվել է իրանական **hu**-ի հետ, որ առկա է **հզար** (հմմտ. գար), **հմայիմ**, **հնար** բառերում»⁴⁷⁰:

Պետք է, սակայն, ասել, որ ո՛չ հ.-ե. հիմք լեզուն, ո՛չ հին հայերենը՝ գրաբարը, և ո՛չ էլ աշխարհաբարը՝ իր բարբառներով, որևէ հիմք չեն տալիս նման հետևության համար: Սակավաթիվ մի քանի բառերում հանդիպող այդ **հը** (< հու) բաղադրիչը հնդեվրոպական հիմք լեզվից սերած լինելու դեպքում եթե ոչ անկախաբար, ապա գոնե նույնությամբ պետք է որ արտահայտվեր ինչ-ինչ բաղադրյալ բառերում. իրանյան լեզուներից փոխառյալ լինելու դեպքում էլ, նման դրսևորումներից բացի, այն պետք է հանդես գար պարսկերենից փոխառյալ բառերում և ոչ թե, ինչպես նրբամտորեն Ա. Մեյեն է նկատել, բնիկ հայերեն, այն էլ՝ բայարմատով կազմված ձևերում:

Սրանք փաստարկներ են, որոնք մերժելի են դարձնում **հզոր** (>հզոր), **հլու**, **հպարտ**, **հմուտ** բառերում **h-** բաղադրիչի իբրև թե **հու**-ի նախաձև լինելը և լռելյայն վկայում, որ այն այլ ծագում ունի:

Այդ համոզումն էլ ունենալով՝ մենք գտնում ենք, որ ընդամենը չորս՝ **հզոր** (> հզոր), **հլու**, **հմուտ**, **հպարտ** բառերում հանդիպող **h-**ն ոչ թե հնդեվրոպական ***su**-ից կամ իրանյան **hu**-ից, կա՛ն էլ՝ դրանց խառնուրդից (°°), այլ սերում է առանձնաբար չգործածվող հայերեն և տակավին չստուգաբանված **հի** արմատից⁴⁷¹, որով մի շարք բառեր են կազմվել դեռ շատ վաղ շրջանում, ինչպես՝ **հիազարհուր**, **հիահրաշ**, **հիահրաշութին**, **հիանալ**, **հիանշմար**, **հիաչ-**

⁴⁷⁰ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 245, այլև՝ 531, 567:

⁴⁷¹ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան:

քնաղ, հիապատում, հիացական, հիացութիւն, հիացուցիչ..., այլև՝ **բազմահիացիկ, կանխահիաց** և այլն:

Ոչ շատ հին, բայց վաղ շրջանից է ավանդված նաև **հիազօր** «հիանալի գորութեամբ, հիացուցիչ»⁴⁷² («Հիազօր բարութիւն, կամ գօրութիւն, կամ անուն աստուծոյ: Հիազօր հանդէս հրեղինաց: Հիազօրս և հրաշապատումս. **Բենիկ:** Հիազօր ի սկզբանն. **Գնծ:** Առ հիազօր և մեծասքանչ եկեղեցւոյն. **Ուռայ**»)⁴⁷³ բառը, որը և, անշուշտ, **հզօր** բառի զուգաձևը լինելով (հմմտ. **զինաւոր-զինուոր, հուժկու-հժկու, միատեղ-բրբ. մտեղ** «միասին» և այլն)՝ **լավագույնն ապացույցն է այն բանի, որ հի** արմատը մի քանի բառերի հետ գործածվել է առանց հոդակապի և **ի > ը** հնչյունափոխութեան ենթարկվելով (***հիզոր > հըզօր, *հիլու > հլու, *հիմուտ > հմուտ, *հիպարտ>հպարտ**) դարձել քարացած բարդութեան մթագնած բաղադրիչ:

Նշված բառերում **հ**-ի այդօրինակ ծագումը, անշուշտ, ոչ միայն հնչյունաբանորեն, այլև իմաստաբանորեն է հիմնավորվում. նրա **հի** նախածն արմատը, ինչպես դրանով կազմված բաղադրյալ բառերն են ցույց տալիս, արտահայտել է **հիանալի, շատ լավ, խիստ սաստիկ...** իմաստները, ըստ որոնց էլ **հզօր** (> հզոր)-ը նշանակել է «**հիանալի, շատ լավ, սաստիկ, խիստ զորեղ՝ զորավոր**», **հլու**-ն՝ «**հիանալի, շատ լավ, սաստիկ, խիստ լսող**» (նաև՝ «խոնարհ», հմմտ. **հլու-հնազանդ**), **հմուտ**-ը՝ «**լավ մտած՝ թափանցած մի բանի մեջ, ներհուն, խելամուտ**», **հպարտ**-ն էլ՝ «**շատ՝ խիստ պարծեցող**», որից և հետագայում այլ իմաստներ («սեգ», «վեհ», «ամբարտավան», «գոռոզ» և այլն) են առաջ եկել:

17. ՃՊԵԼ

Ճպել բայը բարբառային բառ է և նշանակում է՝ «Աչքը թարթել, բանալ, խփել» (Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 447), «Աչքը կամ արտևանուրը թարթել» (Հր. Աճառեան, Հայերէն գաւառական

⁴⁷² Այդ բառի իմաստների մասին տես «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հտ. 2, Վենետիկ, 1837, էջ 96, **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան:

⁴⁷³ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հտ. 2, էջ 96:

բառարան, էջ 733), «+ԵՊԵԼ, եցի, նբ. Աչքերը թարթել, բանալ-խփել: **Տանուտերը աչքերը ճպեց, գգիրը վազեց: Մի աչք ճպելում, Մի ակնթարթում: Զթողի որ աչք ճպէ, Իսկույն, անմիջապես կատարեցի» (Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հտ. 3, էջ 225):**

Հր. Աճառյանը նշված բառարանում այդ բառը աստղանիշով ներկայացրել է իբրև «գրաբարի մեջ գոյություն չունեցող», բոլորովին նոր արմատ:

Պետք է, սակայն, ասել, որ դա այդպիսին չէ և, ինչպես առիթ ենք ունեցել առաջին անգամ նշելու մեր՝ «Գորիսի բարբառը» (Երևան, 1975, էջ 346, 434) ուսումնասիրության մեջ, **ճպել**-ը գրաբարում լայնորեն գործածվող **ճեպել** («Շտապեցնել, փութացնել») բայի հնչյունափոխված մի ձևն է, որ գիտեն միայն Արարատյան, Արցախի (Ղարաբաղի) և Գորիսի բարբառները. օրինակ՝ «Աչք չեմ ճպիլ» (Պ. Պռոշյան, «Հունոն»), «Որ աչքերը չճպեց, արին արտասուքը տափին վեր եկավ» (Հ. Ճուղուրյան, «Մոռացված աշխարհ»), «Մի աչք ճպելում գդավ աման (ամեն) գյառնը յուրան մերը» (Գ. Բարխուդարյանց, «Զոբան ու նշանածը»)՝⁴⁷⁴: Արդ՝ ինչպե՞ս է այդ **ճեպել** սկզբնաձևը դարձել **ճպել** և արտահայտել «Աչքը թարթել, բանալ-խփել» նշանակությունը:

Հնչյունական տեսակետից դա առանձնակի բարդություն չի ներկայացնում, և **ճեպել**-ից **ճպել** ձևը առաջ է եկել պարզապես **ե > ը** հնչյունափոխությամբ, որ նկատելի է հենց հիշյալ բարբառներին հատուկ որոշ բառերում, ինչպես՝ **դեղնել** - տղնել, **լեղի** լղէ / լղի, **ճեղել** - ճղել, **խեճեպ** - խըճեպ // կըճեպ, քըչեպ // քըչեվ և այլն:

Ինչ վերաբերում է իմաստային կողմին, ապա պետք է ասել, որ, ճիշտ է, **ճպել** (< ճըպել)-ը զգալապես հեռացել է իր նախնական **ճեպել** ձևից, բայց ամբողջապես չի խզել իմաստային կապը դրա հետ: **ճպել** բայով ցույց է տրվում աչքի թարթումով՝ ակնթարթորեն, անմիջականորեն, շատ արագ կատարվող գործողություն, որը և ըստ էության աղերսակցվում է **ճեպել** բայի արտահայտած «շտապեցնել, փութացնել, մի բան արագ կատարել տալ» նշանակությամբ: Եվ հետևաբար՝ երկու դեպքում էլ՝ թե՛ **ճեպել**-ը և թե՛ **ճպել**-ը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որի հիմքում ընկած է

⁴⁷⁴ Օրինակները բերվում են ըստ Ս. Ամատունու «Հայոց բառ ու բանի» (էջ 447):

արագ իմաստը, ինչպես դա հաստատում են իրանյան čari և čäpuka > պիլ. **ճապուկ** («ճեպով, շուտ, արագ») բառերը, որոնց հետ էլ ծագումնաբանորեն կապվում է հայերեն **ճեպ** արմատը⁴⁷⁵:

18. ԾԻՊԻ-ԾԻՊԻ ԱՆԵԼ

Ծիպի-ծիպի անել հարադրավոր բայը նույնպես բարբառային բառ է և առաջին անգամ տեղ է գտել Զր. Աճառեանի «Հայերեն գաւառական բառարանում» հետևյալ նկարագրությամբ. «**Ծիպի ծիպի անել** Ղրբ. Աչքերը թարթել՝ արագ արագ բանալ, գոցել (մեկը բան մը ընկնելու, քունը գալու կամ մեկուն ապտակին սպասելու ժամանակ)»⁴⁷⁶:

Զր. Աճառեանին հետևելով՝ այդ բառը նույն կերպ է բացատրել նաև Ստ. Մալխասյանցը. «+ԾԻՊԻ-ԾԻՊԻ ԱՆԵԼ, Աչքերը արագ-արագ թարթել (ինչպես՝ աչքը մի բան ընկնելիս, քունը տանելիս և այլն): **Աչքը չոփ էր ընկել, ծիպի-ծիպի է անում**»⁴⁷⁷:

Այդ **ծիպի-ծիպի անել** հարադրավոր բայը, որ գործածական է նաև Գորիսի բարբառում և իրոք նույն իմաստն է արտահայտում, Զր. Աճառեանը, աստղանշով ներկայացնելով, համարել է նույնպես «գրաբարում գոյություն չունեցող» և, միաժամանակ, դեռևս չստուգաբանված բառ:

Բայց նախորդ **ճպել** (ճեպել) բառի վերոբերյալ ստուգաբանությունն ակներևաբար ցույց է տալիս, որ **ծիպի-ծիպի անել** հարադրավոր բայի հարադիրը ևս ուղղակիորեն կապվում է **ճեպ** արմատից կազմված **ճեպել** բայի հետ և սերում է նրա խոնարհված՝ ըղծ. եղանակի ապառնի ժամանակի երրորդ դեմքի **ճեպլե** (հմմտ. **ճեպեն - ճեպես - ճեպլե**) ձևից, որը, ծայնավորների ներդաշնակության (**ճեպլե - ճեպի - ճիպի**) օրենքով դառնալով **ծիպի**, կրկնությամբ **անել** բայի հետ կազմել է **ծիպի-ծիպի անել** հարադրավոր բայը՝ արտահայտելով բազմապատկական (աչքերը շատ անգամ արագ-արագ - թարթել) գործողություն. հմմտ. **խառնի - խառնի անել, խլե - խլե - անել, տաշի - տաշի անել** և այլն⁴⁷⁸:

⁴⁷⁵ Տե՛ս Զր. Աճառեան, Հայերեն արմատական բառարան:

⁴⁷⁶ Զր. Աճառեան, Հայերեն գաւառական բառարան:

⁴⁷⁷ Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան:

⁴⁷⁸ Այդ մասին տես մեր «Հայերենի հարադիր բայերը», Երևան, 1966, էջ 166:

19. ՄԱՇՈՒՄ

Հայտնի է, որ բժշկապետ Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» (Վենետիկ, 1832) աշխատության մեջ գործածված «Ապա թէ հիւանդին թպտիրն **մաշում** լինի, կերակուր չոր չէ պատեհ, նա ընծային այլ ցեղ...» (էջ 61) նախադասության **մաշում** բառը ակամավոր լեզվաբան Ա. Այտընյանը համարել է հայերեն **մաշել** բայի **-ում**-ով անկատարի առաջին գրավոր վկայությունը⁴⁷⁹ (12-րդ դ.), որը ընդունել և անվերապահորեն ճիշտ են համարել Հր. Աճառյանը⁴⁸⁰, Աշոտ Աբրահամյանը⁴⁸¹ և ուրիշներ:

Հարկ է, սակայն, նշել, որ տարիներ առաջ տողերիս հեղինակին հաջողվել է պարզել, որ այդ **մաշում** բառը ոչ թե **մաշել** («հյուծել») բայի **-ում**-ով դերբայածան է, այլ փոխառություն է արաբերենից, և միաժամանակ նաև՝ այն ոչ թե «մաշում՝ նիհարեցնում, հյուծում», այլ «չարաղետ, վատթար, չարաբաստիկ» է նշանակում, ըստ որի էլ պարզ է դառնում «Ապա թէ հիւանդին թպտիրն մաշում լինի...» նախադասության միտքը, որ է՝ «Ապա թէ հիվանդի համար թպտիրը (իմա՝ հիվանդության դարմանումը, բուժման միջոցը՝ եղանակը) մաշում (իմա՝ չարաղետ, վատ, վատթար) լինի»⁴⁸²:

Նույն այդ նշանակությամբ **մաշում**-ը գործածվում է նաև պարսկերենում՝ *maš'um*⁴⁸³ և թուրքերենում՝ *mešum*⁴⁸⁴ ձևերով, որոնցով, ինչպես առաջին անգամ, մի այլ օրինակ վկայաբերելով, նշել է լեզվաբան Ս. Անթոսյանը⁴⁸⁵, ևս հաստատվում է, որ Մ. Հերացու գործածած **մաշում** բառը իրոք արաբական փոխառություն է, և որով էլ,

⁴⁷⁹ Ա. Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, էջ Բ, 104:

⁴⁸⁰ Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, Բ, Երևան, 1961, էջ 174:

⁴⁸¹ Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 81:

⁴⁸² Տե՛ս մեր «Հայերենի հարադիր բայերը», էջ 470-472:

⁴⁸³ Տե՛ս, օրինակ, Персидско-русский словарь, Составил проф. Б. В. Мюллер, М., 1960, էջ 500. Персидско-русский словарь, т. 2, М., 1970, էջ 518.

⁴⁸⁴ Պետրոս Զեքի Կարապետյան, Մեծ բառարան օսմաներեն հայերեն, Պոլիս, 1912, էջ 808, այլև՝ Գ. Մ. Նալբանդյան, Պարսկերեն-հայերեն բառարան, Երևան, 1987, էջ 548, Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, հտ. Բ, էջ 110, 131:

⁴⁸⁵ Տե՛ս «Բայը և նրա խոնարհման համակարգը» («Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, Երևան, 1972, էջ 304):

բնականաբար, ավելանում է արաբերենից հայերենին անցած բառերի թիվը:

20. ՄԻԼ

Ընդհանուր առմամբ հայերենը միլ ձևով ունի 6 համանուն բառ, որոնք Ստ. Մալխասեանցի «Չայերեն բացատրական բառարանում» (հտ. 3, էջ 329) ներկայացված են հետևյալ կերպ.

«1. + ՄԻԼ, գ. ճահճուտ՝ ճախճախուտ տեղ, ճախին:

+ 2.ՄԻԼ, գ. Տաշած հարթ քառանկյունի գերան՝ սենյակի մեջ դնելու համար:

+ 3. ՄԻԼ (արաբ. mil տաճ.-ի, սլաք, ասեղ), գ. Գուլպա գործելու ճաղ:

4. ՄԻԼ (հուն. mýlos), գ. Երկանաքար:

5. ՄԻԼ, Տ. ճԵՐԹ [= + ճԵՐԹ, գ. Երկայնության չափ, հավասար բութ մատի և ցուցամատի լայն բացվածքին, քիլ», ն.տ., էջ 208]:

6. ՄԻԼ, ՄԻԼՏՈՆ, Տ. Մղոն [= ՄՂՈՆ, ի(աց) (հուն. mil'ion, լատ. mille'ից, որ նշ. 1000), գ. Թ 1. Ճանապարհի երկայնության չափ՝ հավասար 1000 երկրաչափական կամ 2000 հասարակ քայլի: 2. Ներկայումս՝ ճանապարհի երկայնության չափ..., ն.տ., էջ 346»]:

Ինչպես սույն նկարագրից էլ է երևում, այդ 6 համանուն բառերից եթե 3-ի՝ 3-րդի, 4-րդի և 6-րդի ծագումը պարզ է և որևէ կասկած չի հարուցում, ապա մնացած երեքինը՝ 1-ինինը, 2-րդինը և 5-րդինը, տակավին մութ է մնում, և հայտնի չէ, թե նրանք ինչ ծագում ունեն կամ ինչից են ծագում:

Բառարաններում այդ բառերը բնութագրվում են իբրև զուտ բարբառային բառեր, որոնցից էլ ժամանակին Չր. Աճառյանը միայն առաջին երկուսն է ներկայացրել իր «Չայերեն գալառական բառարանում» («Միլ ՉՐՍ. ճահճուտ, ճախճախուտ տեղ: Միլ Ղրբ. քառանկյունի՝ հարթ և տաշած գերան՝ սենյակի մեջ դնելու համար», էջ 779) և աստղանիշով նույնպես համարել գրաբարում գոյություն չունեցող և դեռևս չստուգաբանված բառեր:

Եվ միայն վերջերս Գ. Ջահուկյանը Չր. Աճառյանի տված բացատրության հիման վրա փորձել է ստուգաբանել դրանցից երկրորդը, «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի 1993 թ. երկրորդ հա-

մարում հրապարակած իր «Ստուգաբանություններ» հոդվածում հայտնելով այն կարծիքը, թե «եթե հիմնական իմաստը կապենք տաշելու հետ, ապա այն կարելի է համարել հուն. σμιλη «դանակ, դուր, կտրիչ» բառի հետ, որ ծագում է հ. ե. *smēi- արմատից -*I ածանցով. հայերեն **միլ**-ը հանգում է *smi-lo կամ *smitā նախածնին»⁴⁸⁶:

Պետք է, սակայն, ասել, որ իրականում հիշյալ **միլ** բառը, որ գործածվում է նաև Գորիսի բարբառում⁴⁸⁷ և ոչ թե **անպայման** «քառանկյունի՝ հարթ և տաշած» կամ սոսկ սենյակի մեջ դրվող, այլ առավելապես «առաստաղի գերան» է նշանակում, բնավ էլ չի կապվում հ.-ե. հիմք լեզվից սերող հուն. σμιλη «դանակ, դուր, կտրիչ» բառի հետ»:

Այն, ինչպես մի շարք սկզբնաղբյուր բառարաններ են հաստատում, փոխառյալ բարբառային բառ է և սերում պարսկ. mil (միլ)-ից, որ նշանակում է՝ «Зонд (զոնդ՝ զննածող), 2) вязальная игла (գործելու ասեղ՝ ճաղ, միլ), 3) палочка, посредством которой вводят в глаз коллириум (ձողիկ, որով...), 4) раскаленный железный стержень для ослепления (շիկացած երկաթյա ձող՝ երկաթածող կուրացնելու՝ կուրացման համար), 5) межевой столб (սահմանագծի՝ բաժնեհատման սյուն՝ գերան), 6) коническая палица (կոնուսածև գավազան՝ մահակ՝ կոպալ)».⁴⁸⁸ Mil [мил] I 1) Металлический прут, стержень; зонд; вал; ... (մետաղածող, սղնի, զննածող. լիսեռ, սղնակ), 2) дорожный улу межевой столб (ճանապարհի կամ սահմանագծի սյուն՝ գերան), 3) (...) вязальная игла, спица (գործելու ասեղ, ճաղ), 4) палочка для подведения глаз сурьмой (ձողիկ՝ ծարիրով աչքը ծարիրելու՝ ներկելու համար), 5) уст. раскаленный железный стержень для ослепления (շիկացած երկաթածող կուրացնելու՝ կուրացման համար), 6) (...) деревянный брус конической формы, употребляемый в иранском классическом спорте (կոնածև փայտածող կամ ձողափայտ, որ օգտագործվում է իրանական դասական սպորտում)»⁴⁸⁹. «mil [**միլ**] ձող»⁴⁹⁰ և

⁴⁸⁶ Տե՛ս նշված տեղը, էջ 26:

⁴⁸⁷ Տե՛ս մեր «Գորիսի բարբառը», էջ 443:

⁴⁸⁸ Персидско-русский словарь, М., 1960, с. 549.

⁴⁸⁹ Персидско-русский словарь, т. 2, М., 1970, с. 590.

այլն: Այսբանից էլ, անշուշտ, շատ պարզ երևում է, որ **միլ**-ը, իբրև բազմիմաստ բառ, պարսկերենում արտահայտում է մի շարք նշանակություններ, որոնք կապվում են **ծող** առարկայի հետ և նրա տարբեր գործառույթներն են ցույց տալիս. **միլ**-ը **ծողը** գործածվում է թե՛ իբրև «զննածող», թե՛ իբրև «ճանապարհի կամ սահմանի սյուն», թե՛ իբրև «գործելու ասեղ, ճաղ», թե՛ իբրև «ծողափայտ կամ փայտածող» և այլն:

Պարսկերենից էլ ահա այդ բազմիմաստ **միլ** բառը անցնելով սոսկ մի քանի հայ բարբառների՝ գործածվում է երկու՝ «առաստաղի գերան. շինության սյուն՝ ծող» և «գուլպա գործելու ճաղ» նշանակությամբ, որ և միանգամայն անհիմն ու անտեղի հայերենի բառաբաններում երկու տարբեր բառերի են վերագրվում: Այսպիսով մնում է ընդունել, որ երկու դեպքում էլ մենք գործ ունենք միևնույն պարսկերենից փոխառած **միլ** (<mil) բառի հետ, որն իր հերթին, անշուշտ, արաբերենից է անցել նրան:

21. ՄՂԱԿ

Մղակ բառը, որ գործածվում է ոչ միայն Արցախի (Ղարաբաղի), այլև Գորիսի բարբառում, առաջին անգամ բառարանագրել է Ս. Ամատունին («ՄՂԱԿ գնձկ. Բանաց. Ղար. Դռան ներքին կողմը: Որ եաղը կոխեց էս մղակ, Ինչի՞ չառար դագանակ, որ չըկոխեն քու մղակ. Ազգ. հանդ. Զ 260, 261», Հայոց բառ ու բան, էջ 483) և այնուհետև՝ Հր. Աճառյանը («**Մղակ** Ղրբ. դուռ. **մղակը փակի, մղակը ինչի՞ ես բաց թողել**», ՀԳԲ, էջ 786)՝ համարելով նույնպես գրաբարում գոյություն չունեցող ու դեռևս չստուգաբանված հայերեն պարզ արմատական բառ (տե՛ս նաև նույն տեղում՝ էջ 4):

Մենք, սակայն, հակված ենք կարծելու, որ այն ոչ թե պարզ արմատական, այլ ածանցավոր բառ է՝ կազմված **մղել** («քշել, վարել, առաջ տանել, հրել») բայի **մուղ** արմատից և **-ակ** վերջածանցից, հմնտ. **մուղ + օն > մղօն > մղոն, մուղ + ումն > մղումն > մղում, մուղ + անք > մղանք** («մղում, մղելը, մղոն»), **մուղ + ան > մղան** (սրանից էլ՝ **մղանել, մղանածակ**), **մուղ + իչ > մղիչ** և այլն:

⁴⁹⁰ Գ. Մ. Նալբանդյան, Պարսկերեն-հայերեն բառարան, էջ 590:

Այսպիսով՝ **մուղ** արմատից **-ակ** ածանցով **մղակ** (մուղ + ակ) բառի առաջացումը հնչյունաբանորեն լիովին արդարացվում է, և հետևաբար՝ մնում է պարզել, թե այն մնան կազմությամբ կարող էր արդյոք արտահայտել նշված՝ «դուռ», «դռան ներքին կողմը», «դուրսը, շենի մուտքը» իմաստները, թե՞ ոչ:

-Ակ վերջածանցը, իբրև բազմիմաստ ածանց, այլևայլ արմատների կամ ձևույթների հետ, ինչպես հայտնի է, զանազան բնույթի, ըստ որում նաև գործողության արդյունքի և տեղի իմաստ արտահայտող գոյականներ է կազմում, որոնց թվին էլ պատկանում է և՛ **մղակ** բառը, հմմտ. **աւեր + ակ > աւերակ > ավերակ, փոււծ > փոււչ + ակ > փչակ, հարթ + ակ > հարթակ, ծոր + ակ > ծորակ** և այլն:

Այսպիսով՝ կարծում ենք, որ իմաստաբանորեն ևս հաստատվում է, որ կազմվելով **մուտ** բայարմատից և **-ակ** ածանցից՝ **մղակ** բառը դրանց միջոցով արտահայտել է շինության ներսից դուրս գալու, դուրս ելնելու, դուրս մղվելու կամ սովորաբար՝ տան դռանը դրսից անմիջապես հարող տեղի իմաստը, որին էլ համապատասխան է գալիս հիշյալ բարբառներում գործածվող՝ «Խաշիլը մինչև մղակը, շփոթը (շատ ավելի ուժալի սննդարար կերակուր - Ա. Մ.) մինչև ծնակը» դարձվածքը:

22. ՇՆՅՈՒՆ

Շնթել բայը, որ գործածվում է նաև **շնթել, շնթկել, շնթոտել** ձևերով, նույնպես բարբառային բառ է: Բառարանագիրների հաստատմաբ՝ այն հանդիպում է շատ (Արարատյան, Արցախի, Գորիսի, Մշո, Պոլսի, Վանի, Թիֆլիսի, Նոր Նախիջևանի, Խարբերդի և այլն) բարբառներում և նշանակում է «Շների քնելը. նմանությամբ և մարդոց (անարգաբար)»⁴⁹¹, «1. Պառկիլ (անրգ.): 2. Պառկիլ կամ նստել: 3. Շատ նստելու ձևով նստել»⁴⁹², «1. Պառկել (շների մասին): 2. (Մարդկանց մասին՝ անարգական մտքով) Պառկել, պառկել քնելու: 3. Նստել, շան պես նստել (մարդկանց մասին, անարգական)»⁴⁹³:

Բարբառային սովորական այդ՝ **շնթել** (// **շնթել** // **շնթկել** // **շնթոտել**) բառը նույն այդ իմաստներով գրավոր ավանդված է վա-

⁴⁹¹ Ա. Ամատունի, Գայոց բառ ու բան, էջ 518:

⁴⁹² Զր. Աճառեան, Գայերեն գալառական բառարան:

⁴⁹³ Ստ. Մալխասեանց, Գայերեն բացատրական բառարան:

ղուց և գործածվել է մի շարք գրողների երկերում, ինչպես՝ Փափուկ դոշակի միջում **շնթռիլն**... դրախտը ըսկի չեն տանիլ (Խ. Աբովյան), Իրարից հեռու **շնթռել են** (Ղ. Աղայան), Որտեղ հասան, վեր թափվեցան ու **շնթռկեցին** (Պ. Պռոշյան), Մեծ գամփռ **շնթռկեր**, պոչն ու ականջը ... կը շարժե (Թորոս Աղբար), Խոհանոցի մը դրան առջև ... Փոլքան ու Պարպիկ [շներ] **շընթըռկեր** էին (Գաբ. եպս. Այվազյան)⁴⁹⁴, **Շնթռկել** է, որպես մի շուն, ու խավարն է հսկում հիմի, **Շնթռկել** է թանձր մուժում, որպես անտես մի թշնամի (Ե. Չարենց, ԵԺ, 2, էջ 88) և այլն:

Շնթռել (// **շնթռել** // **շնթռկել** // **շնթռտել**) բայի ինչպես իմաստները, այնպես էլ դրանց համար բերված վավերական օրինակները շատ պարզ ցույց են տալիս, որ իր ընդհանուր նշանակությամբ այն անմիջականորեն կապում է **շուն** բառի հետ և դրա հնչյունափոխված **շն** (< շըն < շուն) արմատով կազմված բաղադրյալ բառ է:

Ինքնին հասկանալի է, որ այս դեպքում մնում է պարզել **շըն**-սկզբնաբաղադրիչին հաջորդող **թռ** (շն + թռ + ել) բաղադրիչի ծագումը, որ որևէ մեկը փորձ չի արել բացատրել:

Պետք չէ, սակայն, ունենալ լեզվական մեծ զգացողություն՝ տեսնելու համար, այդ **թռ** (< թըռ)-բաղադրիչն էլ պարզապես սերում է **թառել** («1. Թառ լինել՝ թառի վրա տեղավորվել՝ նստել [թռչունների մասին]: 2. Նստել բարձրադիր տեղում: 3. Տեղավորվել, տեղ բռնել: 4. Իջնել, փռվել, տարածվել...») բայի **թառ** արմատից, որ բարբառների՞ն հատուկ **ա > ը** (թառ > թըռ) հնչյունափոխությամբ **շն** (շըն < շուն) ձևույթի հետ միանալով՝ կազմել է **շնթռել** (<* շանթառել) բայը՝ արտահայտելով ոչ միայն շան, այլ անարգաբար մարդկանց՝ շան պես մի տեղ երկար նստել մնալու, պառկել քնելու, փռվելու և վեր չկենալու և այլ իմաստներ:

Նմանապես դժվար չէ նկատել, որ նույն այդ **շնթռել** սկզբնաձևից էլ ածանցներով (մեծ մասամբ՝ սաստկական նշանակությամբ) կազմվել են մյուս՝ **շնթռնել**, **շնթռկել**, **շնթռտել**, այլև **շնթռացնել**, **շնթռկեցնել**, **շնթռվել** բայերը, որոնք նույնպես բարբառային բառեր են և գերազանցապես գործածվում են առօրյա - խոսակցական լեզվում:

⁴⁹⁴ Այս օրինակները ևս բերվում են ըստ **Ս. Ամատունու** «Հայոց բառ ու բանի» (էջ 518):

23. ՉՎԱԾԵՂ⁴⁹⁵

Վերջերս տպագիր խոսքով այն կարծիքն է տարածվում, թե իբր **ծվածեղ** բառը կազմված է **ծված + եղ** (< յուղ) բաղադրիչներից և առաջ է եկել ուղղակիորեն դրանց միացմամբ: Դա, սակայն, ժողովրդական կեղծ ստուգաբանություն է, որ ընդհանուր ոչինչ չունի գիտության հետ: Նախ՝ հայերենը (ներառյալ նաև բարբառները) **ծվել** (<ծու-ել) բայածն ընդհանրապես չի ճանաչում, որի **հարակատարից** հնարավոր լիներ (թեև դա ևս բացառվում է) բարդություն կազմել, և ապա՝ **ծվածեղ** բառի նախավոր՝ սկզբնական ձևը ոչ թե այդ, այլ **ծուազեղ** (> ձվազեղ)-ն է:

Մխիթար Աբբայի (Սեբաստացու) «Բառգիրք Հայկազեան Լեզուի» աշխատության երկրորդ հատորի (Վենետիկ, 1769թ.), «Բառգիրք ի գրաբառէ յաշխարհաբառն» բաժնում առաջին անգամ արձանագրվելով՝ **ծուազեղ** բառը դիտվում է իբրև գրաբարյան բառ, իսկ դրա դիմաց՝ «**ծուազեղ**, կամ **ծուածեղ**-ը՝ աշխարհաբարուն գործածվող ձևեր, (տե՛ս էջ 241): **Չուազեղ** բառը **ծվածեղ**-ի նախավոր ձև է դիտված նաև Նոր հայկազյան (տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան Լեզուի», հատոր 2-րդ, Վենետիկ, 1837, էջ 1064), Առձեռն (տե՛ս «Առձեռն բառարան հայկազեան Լեզվի», 2-րդ տպ., Վենետիկ, 1865, էջ 521), Ալ. Խուդաբաշյանցի հայ-ռուսերեն (տե՛ս «Բառարան ի հայկազեան Լեզուէ ի ռուսաց բարբառ», մասն 2-րդ, ի Մոսկով, 1838, էջ 98), Ն. Բյուզանդացու ֆրանսերեն-հայերեն (տե՛ս «Բառգիրք ի գաղիերեն Լեզուէ ի հայերեն» Կ. Պոլիս, 1884, էջ 872) և այլ բառարաններում:

Այսպիսով՝ հեղինակավոր աղբյուրների վկայությամբ ու հաստատմամբ ձվից ու յուղից պատրաստված հայտնի կերակուրը նշանակող **ծվածեղ** բառը (հմմտ. яичница, омлет, omelette, omelet) սկզբնապես **ծուազեղ** (> ձվազեղ) ձևն է ունեցել, որն էլ (իսկ դա նույնպես դժվար չէ նկատել) իսկական բարդություն է՝ կազմված **ծու + ա + զեղ** բաղադրիչներից. ըստ որում՝ դրանցից առաջինը եթե իրոք **ծու** բառն է, ապա վերջինն էլ պարզապես գրաբարյան **զեղուլ** || **զեղանել** («Թափվելու չափ լցնել. լիքը լցվելուց դուրս թափել, ծավալել, սփռել») բայի **զեղ** (< զ + հեղ) արմատն է, որ նրա հետ

⁴⁹⁵ «Սովետական մանկավարժ», Երևան, 1982, N 11, էջ 79-86:

միանալով ու իսկական բարդություն կազմելով՝ եռացած յուղի մեջ հարած՝ կոկած ձվի ծավալվելու ու լեփ-լեցուն դառնալու կամ ուղղակի՝ ձվով լի իմաստն է արտահայտել:

Իսկ դա նշանակում է, որ **ծվածեղ** (< ձվազեղ < ձուազեղ) բառը նախապես ածական է եղել (հմմտ. **արյունազեղ, կարոտազեղ, սիրազեղ, սրտազեղ**) և հետո է, որ փոխանվանական գործածության հիման վրա գոյական է դարձել: Բացի այդ՝ **ծվազեղ** (< ձուազեղ) բառը նաև հնչյունաբանական տեսակետից է փոփոխության ենթարկվել. որոշ բարբառներում, օրինակ, եթե **զեղ** բաղադրիչը նույնն է մնացել, հմմտ. ՅՃ. **ծվազեղ**, Սլմ. Վն. **ծվազեղ**, ապա շատ բարբառներում թերի առնմանամբ՝ **ծեղ** (> ծեղ), իսկ լիակատար առնմանամբ **ծեղ** (> ձեղ, ձյեղ, ձիղ) է դարձել, հմմտ. Մշ. **ծ'վածեղ**, Պլ. **ծվածեղ**, Ասլ. **ծվածե'ղ**, Գնխ. **ծվածյեղ**, Երև. Սեբ. **ծ'վածեղ**, Ախց. **ծ'վածեղ**, Մրդ. **ծիվածեղ**, Սշ. **ցեվածեղ**, Տփ. **ծվածիղ** (դրանց մասին տե՛ս **Յր. Աճառեան**, Հայերեն արմատական բառարան, Գ հատոր, Երևան, 1977, էջ 159): Ի դեպ, բարբառային այս ձևերը իրենց հերթին մի այլ հավաստի ապացույց են տալիս. նրանց վերջին համապատասխան հնչյունամասը (-եղ, -եղ, -իղ) գրեթե ամբողջապես չի համընկնում հիշյալ բարբառներում **իւղ** (> յուղ) բառի կրած ձևափոխություններին, և դա էլ հենց ցույց է տալիս, որ նրանց միջև իրոք ոչ մի ծագումնաբանական կապ գոյություն չունի: Նախորդների հետ հմմտ. Պլ. Երև. Սեբ. Ախց. Մրդ. Ննխ. **յեղ**, Ասլ. **յե'ղ**, Սփ. **յիղ**, Սլմ. Վն. **յեղ**, Սշ. **յեխ**, այլև՝ Մշ. **եղ** (տե՛ս **Յր. Աճառեան**, Հայերեն արմատական բառարան, Բ հատոր, Երևան, 1973, էջ 252):

Այսպիսով՝ միանգամայն պարզ է, որ **ծվածեղ** բառն առաջ է եկել իրո՞ք **ծու + ա + զեղ**-ից, և միաժամանակ նրա **ծուազեղ** նախնական ձևն է, որ թերի (**ծուազեղ > ձվազեղ > ձվածեղ**) և լիակատար (**ծուազեղ > ձվազեղ > ձվածեղ**) առնմանամբ առաջ է բերել և՛ **ծվածեղ** և՛ **ծվածեղ** ձևերը: Ուստի պատահական չէ, որ թե՛ բարբառներում (ի դեպ, միայն Ղարաբաղի և Գորիսի բարբառներում է, որ **ծվածեղ**-ի փոխարեն մի այլ **յղղըծու < յուղուծու < իւղ + ու + ձու** բառն է գործածվում) և թե՛ գրավոր աղբյուրներում այն հանդիպում է երեք՝ **ծվազեղ** (օրինակ՝ «**Չվազեղի** խաթրու թավի կոթը կպաչեն» Հ. Դադբաշյան, Լիակատար բառարան հայերեն-ռուսերեն, Թիֆլիս, 1911, էջ 463), **ծվածեղ** (օրինակ՝ «...**ծվածեղը** ձեռաց պատրաստեցի և բերի» Պ. Պռոշյան, ԵԺ, հատոր 7-րդ, Երևան,

1964, էջ 138) և **ծվածեղ** (օրինակ՝ «Ուզեց զոքանջի ծվածե՞ղ ուտել», Յ. Թումանյան, ԵԺ, հատոր 2-րդ, Երևան, 1940, էջ 12) ձևով, որոնցից էլ միայն մեկը՝ **ծվածեղ**-ն է, որ ժամանակակից հայոց լեզվում ընդհանրացել ու գրական արժեք է ստացել:

24. ՀՈՐՈՎԵԼ

Բոլորը չէ, որ գիտեն՝ ինչ ծագում ու կազմություն ունի շատ սովորական, բայց այնքան էլ ոչ մեծ կենսագրություն ունեցող **հորովել** («գութաներգ, վար անելու ժամանակ երգվող երգ») բառը:

Հր. Աճառյանը դա համարել է գրաբարի **առավել < առ + աւել** («ավելի») բառի բարբառային ձևերից մեկը՝ նկատելով, որ հնում մաս «արտի ծայրի անվար մնացած մասը» իմաստն է արտահայտել:

Միանգամայն իրավացիորեն **հորովել** բառը կապելով **առավել** (< առաւել) բառի հետ և նշելով ժողովրդախոսակցական լեզվում նրա ձեռք երած՝ «1. Արտին երկու ծայրերը անվար մնացած հավելված փոքր հողամասը. 2. Գութանով վարելու ժամանակ՝ արտին մինչև ծայրը երթալով՝ եզները դարձնելու շրջանը. 3. Գութանի երգ. գութանը վարելու ժամանակ եզան վրա երգված գովքը» իմաստները (տես «Հայերեն գաւառական բառարան»), մեծամուն հայագետ լեզվաբանը պարզորոշ չի բացատրել, թե ի վերջո, ինչպես կամ ինչ ընթացքով է **առավել** (<առաւել) բառից առաջ եկել **հորովել** բառը:

Բայց այն, ինչ չի արել Հր. Աճառյանը, պետք է ասել, արել է նրա մտերիմ ու հարազատ ընկերը՝ աշխարհահռչակ երաժշտագետ ու երգահան, հայ երաժշտության մեծ տեսաբան ու գիտնական Կոմիտասը՝ 1914 թվականին Կ. Պոլսում հրատարակած իր «Լոռու գութաներգը Վարդաբլուր գյուղի ոճով» ուսումնասիրության մեջ: Այդտեղ նա ոչ միայն «Լոռու գութաներգի» երաժշտական ու տաղաչափական խոր ու համակողմանի վերլուծությունն է կատարել, հանճարեղաբար քննել ու լուսաբանել նրա բաղկացուցիչ մասերը, կառուցվածքային առանձնահատկությունները, արտահայտչական ձևերն ու միջոցները, ոճն ու ոգին..., այլև լեզվի հիասքանչ բնութագիրն է տվել և միաժամանակ շատ որոշակիորեն ներկայացրել **առավել** բառից **հորովել** բառի առաջացումը:

Բացահայտելով, իր իսկ բառերով ասած, «գութաներգի՝ շինակա-
նի նուրբ ու սուրբ, խոր ու լայն, պարզ ու վեհ, ազատ ու արձակ,
ստեղծագործ ուժը»՝ Կոմիտասը նույն այդ երգի ողջ հյուսվածքն ու
կառուցվածքն է պատկերել սկզբնավորումից մինչև ավարտը...

Բուն գութաներգը, այսինքն՝ **ձայնով առավել տալը**, սկսվում է
մաճկալի ու ավագ հոտաղի օրհնանքից հետո և, քանի գնում,
աճում է ու զորանում, դառնում գեղջուկի՝ հողը վարելու կամ հերկե-
լու աշխատանքի յուրատեսակ ներբողումն ու փառաբանումը, ար-
տացույցում նրա ներաշխարհը, հուզաթաթավ ապրումները, խռովա-
հույզ հոգին, լավի, բարու նկատմամբ ունեցած խոր հավատը, աշ-
խատանքի միջոցով բարիքներ ստեղծելու մեծ ու կենարար ուժը...

Գութաներգի նման խոր ու համակողմանի վերլուծության հիման -
վրա էլ ահա Կոմիտասը նախ ցույց է տվել, թե ժողովրդի կենդանի
խոսակցական լեզվում ինչ ձևափոխություններ է կրել **առավել** բա-
ռը. «**Առավել** են ասում,- գրում է նա, - երկու արտի միջոցում ան-
մշակ մնալիք հողին: Այդ բառը գեղջուկի բերանում այլևայլ, կամ
նույնիսկ միևնույն վայրում, հնչյունափոխության օրենքով, զանա-
զան «ձևեր է առել»: բառասկզբի **ա**-ի անկումով **առավել**-ը դարձել է
ռավել (ռաւել), **ռավել**-ի **ավ** (աւ)-ը «փոփոխվել ու եղել է **ռռել**,
ռռել-ի «**ե**-ն կրճատվել ու առաջ է եկել **ռոլ** և **ռոլ**-ի **ւ**-ն **ընկել ու**
դարձել է ռո»:

Այս և, անշուշտ, միանգամայն ճիշտ հնչյունափոխական ձևերով,
սակայն, Կոմիտասը **հորովել** բառի առաջացման միայն մի, թերևս
հայտնի, կողմն է մատնանշել:

Մյուս՝ առավել կարևոր ու արժեքավոր կողմն այն է, որ նա նաև
նկատել ու բացահայտել է, որ **հորովել** (< հռովել)-ը ոչ թե սոսկ **ա-**
ռավել-ից է սերում, այլ առաջ է եկել դրա ու **հո** կանչի (ձայնարկու-
թյան) միացմամբ և նրանց միասնությունն է կազմում:

Իսկ սա, ինչ խոսք, նոր ու գնահատելի մեկնությունն է, որով և՛ **հո**
գանչի ու **ռովել** բառի միացման իսկությունն է հաստատվում, և՛ գու-
թաներգի բովանդակության վերլուծության հետ շաղկապված, **հռո-**
վել բառի ձևավորման ու կազմավորման ընթացքն է պատկերվում:
«Բուն գութաներգը,- շարունակում է գրել Կոմիտասը,- սկսում է
կրկին մաճկալը և երբեմն ավագ հոտաղը..., բայց այս անգամ նախ
լծկան անասուններին է ձայնում, **հո** բացազանչելով, ապա կցում
բուն աղոթքը...»:

Խորապես ըմռնելով ու լուսաբանելով այն մեծ դերը, որ խաղում են գանչերը՝ ձայնարկություններն ու մանածայնությունները՝ մասնավորապես ժողովրդական երգերում, Կոմիտասը ցույց է տալիս, որ գութաներգում **հո** գանչը (ձայնարկությունը) անմիջականորեն և ամենից շատ **առավել** բառի հետ է գործածվել, ինչպես՝

Յո՛յ ա՛վել ա, հո՛-ա՛,

Յո՛յ ա՛վել ա, հո՛-ա՛,

Յո՛յ ա՛վել ա, հո՛-ա՛,

Եվ այսպես՝ առաջ տանելով գութաներգի վերլուծությունը և ուղղակիորեն, օրինակ, ասելով, թե «... Մաճկալները, եզնարածները, - հոտաղները կարողանում են ինքնուրույնություն ու թարմություն մտցնել գութաներգի, **հո-ռոպելի** մեջ...», Կոմիտասը ցույց է տալիս ու հաստատում, որ, իրոք, իրար հետ լայն ու հաճախակի գործածվելու շնորհիվ է, որ **հո** (**հոյ**) և **առավել** բառերը միացել ու առաջ են բերել **հորոպել** բառը: Ծագելով երկու տարբեր բառերից՝ դա գութաներգում նաև իբրև մի ամբողջական ու ավարտուն բառ է գործածվել, ինչպես՝

Էտակը լծենք,

Յռոպել տվեք,

Միջակը լծենք...

Այսքանից պարզ երևում է, որ **հորոպել**-ը նախ **հռոպել** է եղել, որը, ինչպես **առավել** բառն առանձին վերցրած, ժողովրդի բերանում այլազան փոփոխություններ է կրել, դառնալով՝ **հռովուլ**, **հլովոր**, **հառալո**, **հռռուլո**, **հելել** և այլն:

Դրանցից էլ, սակայն, գրական արժեք ու քաղաքացիության իրավունք է ստացել **հորոպել** ձևը՝ լայնորեն գործածվելով ինչպես նախախորհրդային շրջանի շատ գրողների ու բանաստեղծների լեզվում, այնպես էլ այժմ:

Այսպիսով, Կոմիտասը, որ իր ստեղծագործություններում հայոց լեզվի վերաբերյալ նաև շատ այլ արժեքավոր մտքեր ու տեսակետներ է հայտնել, և, որոնք, դժբախտաբար, մինչև այսօր ըստ ամենայնի չեն գնահատված, միանգամայն ճիշտ է ստուգաբանել **հորոպել** բառը և շատ գեղեցիկ ներկայացրել նրա ծագումն ու կազմությունը:

ԱՇԱՆ

Ակադեմիկոս Գ. Ջահուկյանի՝ «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի 1993թ. 2-րդ համարում հրապարակած ստուգաբանությունների իսկության հավաստումը թողնելով ուրիշներին՝ մենք չհիմնավորված ու անընդունելի ենք համարում նրանցից մեկի՝ **աշան** բառին վերաբերող մեկնությունը:

Միանգամայն իրավացիորեն նշելով, որ մինչև այսօր այդ բառի «Ստուգաբանության որևէ փորձ չի եղել» (էջ 22), Գ. Ջահուկյանն ուղղակի ասում է, թե «Սովորական քննության դեպքում էլ երևում է, որ այն նման է **աշուն** բառին և հավանաբար կապվում է նրա հետ» (ն. տ.): Ըստ այդմ էլ նա մատնացույց է անում, թե հայերեն **աշուն** բառը սովորաբար ի՞նչ լեզուների (ռուսերեն, պարսկերեն, գոթերեն) ի՞նչ բառերի հետ է համեմատվում և **աշան** (|| **հաշան**)-ի համար վերականգնում է ***oskhon** ենթադրյալ ձևը՝ իմաստային անխզելի կապ տեսնելով այդ՝ բարբառային **աշան** || **հաշան** և գոթ. **asans** «հունձ» բառերի միջև: Մեր կարծիքով այս դեպքում հարգելի ակադեմիկոսը ճիշտ նպատակի չի ծառայեցնում իր բազմալեզվախմացությունը, թերևս այդ պատճառով էլ ամենից առաջ ըստ էության ճիշտ չի ներկայացնում **աշան** || **հաշան** և դրանից կազմված (**հ**)**աշան անել**, **հաշանել**, **աշնել** բառերի արտահայտած իմաստները:

Հայերենի որոշ բարբառներում (Արցախի, Գորիսի, Արարատյան) գործածվող **աշան** || **հաշան** գոյականը և (**հ**)**աշան անել**, **հաշանել**, **աշնել** բայերը ոչ թե «կալսելու ցորեն» և «ցորենը կալը լցնել կալսելու համար» են նշանակում, ինչպես Հր. Աճառյանը և նրան հետևելով՝ Գ. Ջահուկյանն են նշում, այլ «Կալի մեջ խրձերի ցրվածքը» և «խրձերը կալի մեջ սփռել՝ ցրել» են նշանակում, ինչպես միանգամայն ճշտորեն Ս. Ամատունին է ներկայացնում⁴⁹⁷:

Հիշյալ բառերը այդպես է բացատրել նաև Ստ. Մալխասյանցը, հմմտ. «+ՀԱՇԱՆ, գ. Կալսելու՝ ծեծելու որա: Հաշանը կալը բերեց որ

⁴⁹⁶ «Բանբեր Երևանի համալսարանի», 1994, N 2, էջ 72-74:

⁴⁹⁷ Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 386:

կալսե...: **Յաշան անել**, Խուրձերը բանալ, կալի մեջ փռել՝ կալսելու համար...:

+ՅԱՇԱՆԵԼ, եցի, նք. Յաշանը կալի մեջ փռել կամ քառեշտով կալսածի վրա գցել կալսելու համար, հաշան անել, աշնել»⁴⁹⁸:

Այսպիսով՝ ակներև է, որ երկու դեպքում էլ այդ բառերով այնպիսի իրողություններ են ցույց տրվում, որոնք կապվում են կա(լ)սելու, ասել է թե՛ նաև տարվա **մառան** (ամառվա) եղանակի հետ, և, բնականաբար, **աշուն** բառի հետ **աշան** || **հաշան** բառը որևէ կերպ չի կապվում և չի էլ կարող կապվել:

Յիմք ընդունելով բառերի հնչյունական և իմաստային կապն ու հարաբերությունը, որ ամենակարևոր պայմանն է ստուգաբանության համար, պետք է ասել, որ որոշ փաստեր շատ պարզորոշ ցույց են տալիս, որ **(հ)աշան բառը** սովորական ածանցավոր բառ է՝ կազմված **հաշ-** արմատից և **-ան** ածանցից: Այդ են հաստատում ամենից առաջ հայերենի նշանավոր բառարանները, ըստ որոնց էլ **հաշ-**ը գրաբայան **հաշել** («հալումաշ անել, մաշել, հյուծել, տկարացնել») բայի արմատն է, որ գալով շատ վաղ ժամանակներից՝ գործածվել է անգամ անկախաբար և նշանակել է՝ «հաշեալ, հիւծեալ, նիհար»⁴⁹⁹, «հաշած, աշած, նիհար»⁵⁰⁰, «մաշած, նիհար, տկար»⁵⁰¹, «մաշված, նիհար, տկար»⁵⁰²:

Նույն այդ **հաշ** արմատին միանգամայն օրինաչափորեն ավելանալով **-ան** վերջածանցը (հմմտ. **խար - խարել - խարան - խարանել, խոտ - խոտել - խոտան - խոտանել, պատ - պատել - պատան - պատանել, խից - խցել - խցան - խցանել, կարկատ - կարկատել - կարկատան** և **հաշ - հաշել - հաշան - հաշանել**)՝ կազմել է **հաշան** բառը՝ արտահայտելով «կալի մեջ խրձերի ցրվածքը» նշանակությունը:

Այսպիսով՝ հնչյունական տեսակետից կամ հնչյունաբանորեն **հաշ** արմատից և **-ան** ածանցից **հաշան** բառի առաջացումը լիովին ար-

⁴⁹⁸ **Ստ. Մալխասեանց**, Յայերեն բացատրական բառարան, հ. 3, Երևան, 1944, էջ 52: Այդ բառերի ու նրանց իմաստների մասին տես նաև մեր «Գորիսի բարբառը» (Երևան, 1975, էջ 424), որտեղ մասամբ տուրք է տրված Յ. Աճառյանի բացատրությանը:

⁴⁹⁹ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, էջ 47:

⁵⁰⁰ «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», 2-րդ տպ., Վենետիկ, 1865, էջ 475:

⁵⁰¹ **Յր. Աճառյան**, Յայերեն արմատական բառարան:

⁵⁰² **Ստ. Մալխասեանց**, Յայերեն բացատրական բառարան:

դարացվում է և որևէ կասկած չի հարուցում. այդ է հավաստում նաև նույն **հաշ** արմատից մի այլ՝ **-անք** (< ան + ք) վերջածանցով կազմված **հաշանք** («Չաշունն, հիւծութիւն, տկարութիւն, նուազումն») բառը, որ ավանդված ենք տեսնում դեռևս 7-րդ դարում գրաբարում, օրինակ՝ «Քաղցեալքն և ծարաւիքն ընդ **հաշանօք** անկեալ տըժգուի՛ն: Քաղցեաւ և ծարաւեցաւ անընկալ **ի հաշանաց**. Թեոդոր. մայրագ»⁵⁰³:

Այսբանից հետո, հասկանալի է, ծանրությունն ընկնում է իմաստային կողմի վրա, և հետևաբար՝ մնում է տեսնել, թե **հաշանաշան**, **հաշան անել**, **հաշանել**, **աշանել** բառերն իրենց արտահայտած իմաստներով կապվում-աղերսակցվո՞ւմ են արդյոք **հաշել** բայի **հաշ** արմատի հետ, թե՞ ոչ:

Եթե **հաշան**-ը «կալի մեջ խրձերի ցրվածքն է», որ առաջ է բերվում նրանց տարաբաժանմամբ ու ցրումով, ապա նշանակում է՝ ամբողջի մասնատում և կոպիտ ձևով ասած՝ նաև **հաշում**, **մաշում**, **հյուծում**, **նիհարում** է տեղի ունենում. իսկ սա էլ, անշուշտ, ցույց է տալիս, որ **հաշ** արմատը **-ան** վերջածանցով կազմելով **հաշան** բառը՝ տվյալ դեպքում ո՛չ թե բարոյական, այլ ֆիզիկական նշանակություն է արտահայտում:

Նկատելի է, որ **հաշել** բայի **հաշ** արմատը այդպիսի նշանակությամբ ոչ միայն **հաշանաշան** և նրանից կազմված (**հ**)**աշան անել**, **հաշանել**, **աշանել** բառերում, այլև Նոր հայկազյան բառարանի հավաստմամբ նույնպես նրանից ծագած **հաշմ** («Չաշեալ մաշեալ մասամբ իւրիք մարմնոյն. գօսացեալ կամ լուծեալ անդամօք. խեղ. կաղ. փեցի. ըստ յն. նաև կոյր», Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, էջ 47, «խեղ, կոտրած անդամով, պակասաւոր», Հր. Աճառյան, Հայ. արմ. բառ., հ. 3, էջ 43, «1. Որի որևէ անդամը պակաս է կամ արատավոր, խեղ, կաղ, անդամլույծ, կույր և այլ: ... 2. Ստավոր պակասություն ունեցող, մտքով կույր, ապուշ», Ստ. Մալխ., ՀԲԲ, հ. 3, էջ 53) բառում է գործածվում:

Կապվելով **հաշել** բայի **հաշ** արմատի հետ և սերելով նրանից՝ **հաշմ** բառը, որ հանդես է գալիս մեծ մասամբ բաղադրություններում (ինչպես՝ **հաշմություն**, **հաշմանդամ**, **հաշմական**, **հաշմել**), ակնե-

⁵⁰³ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, էջ 47:

րևաբար մեկն է հայերենի այն բառերից, որոնք կազմված են **-մ** ածականով, հմմտ. **թարմ, հողմ, մեղմ, յարմ-ար, տիղմ** և այլն⁵⁰⁴:

Եզրակացություն. բերված փաստերը ցույց են տալիս ու հաստատում, որ **հաշան** բառը, որ հատկապես Արարատյան բարբառում **հ** սկզբնահնչյունի անկումով **աշան** է դարձել (հմմտ. **հաճար - աճար, հաճարենի - աճարենի** և այլն) ո՛չ թե կապվում է **աշուն** բառի հետ, այլ սերում է **հաշել** բայի **հաշ** արմատից, որի ծագումը, սակայն, դեռևս պարզ չէ⁵⁰⁵:

⁵⁰⁴ Այդ մասին տես **Ջր. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Երևան, 1957, էջ 63:

⁵⁰⁵ Տես **Ջր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան:

ՏԵՂԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ⁵⁰⁶

ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Տեղանունների պատմաշխարհագրական բառարաններից բացի մեծ կարևորություն են ներկայացնում նաև լեզվաբանական-ստուգաբանական բնույթի բառարանները, որոնց ստեղծման ուղղությամբ, սակայն, մեզանում դեռևս բավարար աշխատանք չի կատարված: Դա բացատրվում է, անշուշտ, օբյեկտիվ ու սուբյեկտիվ դժվարություններով ու բարդություններով:

Տեղանունների լեզվաբանական-ստուգաբանական լիարժեք բառարան, հասկանալի է, կարող է ստեղծել միայն անպիսի մեծ կարողությունների տեր ստուգաբան-լեզվաբանը, ինչպիսին, ասենք, Հր. Աճառյանն էր: Այստեղ էլ նշենք, որ ինքը՝ Աճառյանը կյանքի վերջին տարիներին ձեռնամուխ էր եղել հենց նման բառարան ստեղծելու գործին, բայց մահը թույլ չտվեց իրագործելու այդ նվիրական ծրագիրը, և այդպիսով՝ շատ ու շատ բաներ մեզ համար մութ ու անհայտ մնացին...

Բայց սա էլ, իհարկե, ավելի առաջնահերթ է դարձնում խնդիրը և պահանջ առաջադրում, թերևս հանրական ու միասնական ուժերով, զբաղվելու հայոց տեղանունների ստուգաբանությամբ և ըստ կարելիության բացատրելու նրանց ծագումը, որ, անշուշտ, ոչ միայն գիտական-լեզվաբանական, այլև պատմական, աշխարհագրական, ազգագրական և այլ արժեք ու կարևորություն է ներկայացնում: Այդ նկատառումով սույն հոդվածում փորձ ենք անում պարզաբանել մի քանի տեղանունների ծագումը, որոնք Հայկական ԽՍՄ Գորիսի շրջանին են վերաբերում:

1. ԳՈՐԻՍ

Գորիս տեղանվան, որով ներկայումս կոչվում են Հայկական ԽՍՄ Գորիսի շրջանը, դրա կենտրոնը՝ Գորիս քաղաքը, հին Գորիս գյուղը և Որոտան գետի վտակներից մեկը (իմա՝ Վարարակը), ծագման մասին այլատեսակ կարծիքներ են հայտնվել:

⁵⁰⁶ «Պատմա-բանասիրական հանդես», 1988, N 4, էջ 123-130:

«Հայկական սովետական հանրագիտարանի» հավաստմամբ՝ «Գորիսը որոշ ուսումնասիրողներ կապում են Ստեփանոս Օրբեյանի (XIII դար) հիշատակած **Գորու** կամ **Գորայք** գյուղերի անունների, ոմանք էլ՝ այժմյան Գորիսից 2 կմ. արմ. գտնվող **Կյուփեր** կոչված վայրի հետ»⁵⁰⁷: Դա այդպես են ներկայացնում նաև աշխարհագրագետներ Յ. Ղ. Գրգեարյանը և Ն. Մ. Հարությունյանը՝ նշելով միաժամանակ, որ **Գորիս** քաղաքը իր «անվանումը ստացել է [Վարարակ] գետի ձախ ափին գտնվող Գորիս (Հին Գորիս, Կյորես) գյուղից»⁵⁰⁸:

«Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» հեղինակակից Ստ. Մելիք-Բախշյանն էլ գտնում է, որ «**Գորիս** անունը չի ստուգաբանված: Ժողովուրդն (°) այն երբեմն (sic) բխեցնում է ռուսերեն “Гора” (լեռ) բառից, որ սխալ է»⁵⁰⁹: Գորիս տեղանվան մասին նաև այն կարծիքն է հայտնվել, որ առաջ է եկել «**Գորայք** նախավոր ձևի՝ **Գորայս** հայցականից՝ **Գորես** > **Կօրես** (=Գորիս) միանգամայն օրինաչափական հնչյունափոխական ընթացքով»⁵¹⁰:

Այսպիսով՝ Գորիս տեղանվան ծագման մասին հայտնվել են մեծ մասամբ ժողովրդական ստուգաբանության բնույթ կրող կարծիքներ:

Արդ՝ ինչի՞ց է առաջ եկել **Գորիս** տեղանունը, և ո՞րն է եղել նրա նախավոր ձևը: Փաստերը ցույց են տալիս, որ **Գորիս** տեղանունը կապվում է իսկապես XIII դարի նշանավոր պատմիչ Ստեփանոս Օրբեյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» (= «Սյունիքի պատմություն») գրքում հիշատակված **Գորայք** գյուղի անվան հետ և այլ բան չէ, քան հենց դրա **Գորայս** հայցականի հնչյունափոխական արտահայտությունը:

Դա հաստատվում է նախ պատմական իրողությամբ: Ստեփանոս Օրբեյանը Սյունիքի 12 գավառների եկեղեցու հարկացուցակում **Գորայք**-ը ներկայացնում է իբրև ներկայիս Գորիսի շրջանին համընկնող Հաբանդ գավառի 59 գյուղերից մեկը, որը և Տաթևի վանքին 10 քեռ հարկ է վճարել⁵¹¹:

⁵⁰⁷ «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 3, Երևան, 1977, էջ 166:

⁵⁰⁸ Յ. Ղ. Գրգեարյան, Ն. Մ. Հարությունյան, Աշխարհագրական անունների բառարան, Ա-Կ, Երևան, 1987, էջ 111:

⁵⁰⁹ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 1, Ա-Դ, Երևան, 1986, էջ 953:

⁵¹⁰ Ալ. Մարգարյան, Գորիսի բարբառը, Երևան, 1975, էջ 4:

⁵¹¹ Տե՛ս Ստ. Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 517:

Այսպիսով՝ պարզ է, որ Հաբանդ գավառը (ներկայիս Գորիսի շրջանը) XIII դարում ունեցել է **Գորայք** անունով գյուղ, որը ոչ թե ոչնչացել է հետագայում, այլ գնալով աճել է ու մեծացել: **Գորայք** տեղանվան **Գորայս** ձևից **Գորիս** անվանման ծագումը հաստատվում է նաև լեզվաբանորեն. Գորիսի բարբառին հատուկ հնչյունափոխական օրենքով, ըստ որի՝ բառասկզբի Գ ձայնեղը խլանում է և Կ-ի կամ Կ՛-ի, իսկ բառամիջում **այ** երկբարբառը է-ի (հմմտ. **գալ** > **կա՛լ** || **Կ՛ա՛լ**, **գարի** > **կա՛րի** || **Կյա՛րի**, **գաւաթ** > **կա՛վա՛թ** || **կ՛ա՛վա՛թ**, **գող** > **կՓղ** || **կ՛Փղ**, **գոմ** > **կուււմ** || **կ՛ոււււ...,** **հայր** > **հէր**, **հայս** > **հես**, **եղբայր** > **ախպէր**, **տղաք** > **տղէք** || **տղէրք...**) է վերածվում, **Գորայս** հայցականից առաջ է եկել **Կորէս** (< **ԿՓրէս** || **Կ՛Փրէս**) ձևը, որը և հանդիպում է դեռևս XVII դարում՝ «Ավետարանի մը հիշատակարանի մեջ», ուր գրված է «Ի յերկիրս Ձագածոր, ի գետոս որ կոչի **Կորէս**, կը յիշուին Ս. Գրիգոր և Ս. Աստուածածին եկեղեցիներ. 1667»⁵¹²:

Այնուհետև **Գորայք** տեղանվան **Գորայս** հայցականից առաջ եկած նույն այդ **Կորէս** (> **ԿՓրէս** || **Կ՛Փրէս**) ձևն ընդհանուր տարածում է գտնում և ժողովրդի բերանում կիրառվում մինչև այսօր: Այսքանով, սակայն, ամեն ինչ չի ավարտվում. **Կորէս** (> **ԿՓրէս** || **Կ՛Փրէս**) ժողովրդաբարբառային ձևը, ուշ ժամանակներում (XIX դարում) բառասկզբի խուլ **կ-ն** ձայնեղ **գ-ով**, իսկ է-ն էլ **ի-ով** փոխարինվելով, առաջ է բերում **Գորիս** անվանումը, որ գործածվում է գրական խոսքում, ինչպես որ դա մատնանշել է Ակսել Բակունցը «Կյորես» հիասքանչ ստեղծագործության մեջ:

Այսպիսով, որ **Գորիս** (< Գորէս < Կորէս) տեղանունն առաջ է եկել **Գորայք** տեղանվան հայցականի ձևից, ոչ մի կասկած չի հարուցում: Հայերենում քիչ չեն այն դեպքերը, երբ ոչ միայն հասարակ, այլև հատուկ անունների հոգնակի հայցականը ինքնուրույն բառային-բառույթային արժեք է ստանում և գործածվում իբրև բառի ուղիղ ձև. հմմտ., օրինակ, **չորք** - **չորս**, **դուրք** - **դուրս**, **հոգք** - **հոգս...** **Բնունիք** - **Բնունիս**, **Մասիք** - **Մասիս**, **Հարժիք** - **Հարժիս**, **Վարդենիք** - **Վարդենիս** և այլն:

⁵¹² Ս. Էփիկյան, Պատկերագարոյ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, 1905, էջ 554:

Այսբանից հետո մնում է պատասխանել մի այլ հարցի. ինչի՞ց է առաջ եկել **Գորիս** անվան համար հիմք ծառայած նախավոր՝ **Գորայք** տեղանունը: Պետք է ենթադրել, որ դա, ածանցավոր (Գորայք) բառ է, մի ամբողջական տոհմի (գորաների) անվանում է եղել և ժամանակի ընթացքում վերագրվել է այն տեղին, որտեղ նրան պատկանող մարդիկ են բնակվել: Սա էլ, ի դեպ, ցույց է տալիս, որ պատմական փաստերին դեմ են գնացել և սխալ են վարվել այն մարմինները, որոնք Սիսիանի շրջանի բարձրադիր գյուղերից մեկը (նախկին Բազարչայր) **Գորայք** են անվանել:

2. ԶԱՆԳԵՁՈՒՐ

Զանգեզուր անվամբ, ինչպես հայտնի է, կոչվում է Հայաստանի այն բնաշխարհը, որը «իր մեջ ընդգրկում է ՀԽՍՀ Գորիսի, Ղափանի, Մեղրու և Սիսիանի վարչական շրջանները»⁵¹³: Աշխարհագրական մեծ տարածքի վերաբերող այդ տեղանվան ծագումը ստույգ պարզ չէ, և նրա մասին նույնպես տարբեր կարծիքներ են հայտնվել: «**Զանգեզուր** տեղանունն,- տեղեկացնում է «Հայկական սովետական հանրագիտարանը»,- ավանդաբար ստուգաբանել են կապելով հայկական **Ձագիկ** նահապետի տիրույթ Ձագեծորի կամ Ձագկածորի («Ձագերի ձոր») անվան ձևափոխումների կամ հինավուրց մի վանքի վիթխարի զանգի ուժեղ ձայնի ստեղծած տպավորության հետ: **Զանգեզուրը** համարվել է նաև մ. թ. ա. VII դ. այստեղ ներխուժած սկյութացիների (սակերի) անվան փոփոխված ձև (**սակ-ձագ-Ձագեծոր-Զանգեզուր**)»⁵¹⁴:

Զանգեզուր տեղանվան, որ հանդիպում է մի շարք՝ **Զանկեագոր**, **Զանկեազուր**, **Զանկիզուր**, **Ձենգեզուր** և այլն ձևերով, ծագմանն անդրադարձել են որոշ հետազոտողներ ու բառարանագիրներ:

Զանգեզուր տեղանվան ծագման հարցով առաջինը զբաղվել է Ղևոնդ Ալիշանը՝ իր «Սիսական» պատկառագրու աշխատության մեջ հայտնելով այն կարծիքը, որ **Զանգեզուր** տեղանունը այլ բան չէ, քան Սյունյաց Ձագ(իկ) նահապետի անվամբ կազմված **Ձագածոր**, **Ձագեծոր** տեղանվան աղավաղված ձևը, որը և առաջ է եկել ուշ

⁵¹³ «Հայկական սովետական հանրագիտարան», Երևան, 1977, հ. 3, էջ 655:

⁵¹⁴ Նույն տեղում:

ժամանակներում: Այսպես՝ նա գրում է. «**Ձանկեագոր** կամ **Ձանկի-գուր** աւան, յորոյ անուն գաւառս, յայտ առնէ զՁագեծորն հին...»⁵¹⁵, և՝ «Երբ և յունէ կարգեցաւ սա ի գլխաւորս ի շէնս կողմանցս և էառ գկոչունն **Ձանկեագոր**, յաւուրս իշխանութեան Պարսից և Թաթարաց, ոչ ունիմ ասել»⁵¹⁶:

Ալիշանի կարծիքը հավանական է համարել նախ ազգագրագետ Երվանդ Լալայանը: Նշելով, որ «**Ձանգեգուր**» անունն, ըստ Յայր Ալիշանի, ծագել է **Ձագեծոր** անվան աղավաղումից, իսկ սա՝ Ձագ նահապետի անունից», նա, սակայն, կարծում է, թե «**Ձագեծոր** խոսքն էլ հառաջացել է ոչ թե **Ձագ** նահապետի, այլ «ծակերի ձոր» անունից, որովհետև այժմս էլ, Գորիսից քիչ բարձր գտնվող ձորը, ուր եղել է ամենահին բնակությունը, կոչվում է «ծակերի-ձոր», այդտեղ գտնվող բազմաթիվ «ծակեր»- արհեստական քարայրի պատճառով»⁵¹⁷:

Բառարանագիր Սուքիաս Եփրիկյանը, հիշատակելով այս կարծիքը, ավելի հիմնավոր է ճանաչում Ղ. Ալիշանի երկկողմանի մեկնությունը⁵¹⁸:

Այսպիսով՝ **Ձանգեգուր** անվանումը բխեցվել է **Ձագեծոր**-ից կամ **ծակերի ձորից**: **Ձանգեգուր** տեղանվան ծագումը այդպես է բացատրել նաև Ստ. Լիսիցյանը՝ գրելով. «**Ձանգեգուր** անունը համեմատաբար նոր ծագում ունի: Անշուշտ դա հայկական անվան աղբյուրներից անհավանական ձևն է, որի երկրորդ բաղադրիչ վանկը համապատասխանում է հայերենի **ձոր** բառին և կրկնվում է օրինակ **Աստազուր**՝ այժմ Վանի ձոր, **Այնազուր**՝ այժմ **Աղավնաձոր** և այլ անունների մեջ»⁵¹⁹:

Եվ այնուհետև, չժխտելով ենթադրյալ **Ծակեծոր** ձևից **Ձանգեգուր** տեղանվան առաջացման հնարավորությունը, նա նախապատվությունը տալիս է **Ձագեծոր-Ձանգեգուր** զուգադրությանը և գտնում, որ «ավելի գերադասելի կլինի **Ձանգեգուր** անունը, համարել **Ձագեծոր** անվան աղավաղված ձևը»⁵²⁰:

⁵¹⁵ Ղ. Ալիշան, Սիսական, Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 260:

⁵¹⁶ Նույն տեղում, էջ 262:

⁵¹⁷ Ե. Լալայան, Ձանգեգուրի գավառ, հ. Բ, Թիֆլիս, 1899, էջ 8:

⁵¹⁸ Տե՛ս Ս. Եփրիկյան, Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, էջ 700:

⁵¹⁹ Ստ. Լիսիցյան, Ձանգեգուրի հայերը, Երևան, 1969, էջ 19:

⁵²⁰ Նույն տեղում, էջ 20:

Այսպիսով Ստ. Լիսիցյանը հակադրվում ու մերժում է նաև **սակ** (> ձագ-ձագեծոր)-ից **Ձանգեզուր** անվան ծագած լինելու վարկածը, որ առաջադրել է Արարատ Ղարիբյանը⁵²¹:

Այսքանից երևում է, որ **Ձանգեզուր** տեղանունը տակավին լիարժեք ստուգաբանական մեկնություն չի ստացել և հիմնավորապես պարզ չէ, թե իրոք ինչից, ինչպես է առաջ եկել: Եվ, այնուհանդերձ, չի կարելի և չնկատել, որ Ղ. Ալիշանը և ուրիշները գտել են ըստ էության **Ձանգեզուր** տեղանվան առաջացման ճիշտ երակը, նրա նախավոր ձևը համարելով **Ձագեծոր** || **Ձագածոր** տեղանունը, որը այդպես է կոչվել իսկապես Սյունյաց **Ձագ(իկ)** նահապետի անունով⁵²²:

Ինչպես պատմական փաստերն են ցույց տալիս, **Ձագիկ** նահապետի անունով ոչ միայն Հաբանդ գավառում առանձին գյուղ է եղել, որ 12 չափ տուրք է վճարել Տաթևի վանքին, այլև **Ձագեծոր** || **Ձագածոր** է կոչվել Սյունիքի մի հսկայական տարածքը: Եվ դա այնքան ժամանակ, մինչև որ թուրքերի՝ Ձագեծոր ներխուժելու պատմական տխուր իրողությամբ պայմանավորված՝ այդ բուն հայերեն անվանումը, նրանց լեզվի հնչյունական օրենքներին ենթարկվելով, այլափոխվել է **Ձանգեզուր**:

Այսպիսով՝ միանգամայն պարզ է, որ **Ձանգեզուրը** իրոք **Ձագեծոր** || **Ձագածոր**-ի այլափոխված ձևն է, որ առաջ է եկել նախ **ձ** հնչյունի, որից, ինչպես հայտնի է, զուրկ է թուրքերենը, **զ**-ի փոխարկմամբ և ապա **Ձագեծոր Ձագեզոր**-ում **Գ** ձայնեղից առաջ **ն** ձայնորդի հավելմամբ ու **օ** /< n/ > **ու** հնչյունական փոփոխությամբ: Արդյունքը եղել է այն, որ ուշ ժամանակներում առաջ եկած այդ **Ձանգեզուր** ձևը չճանաչվելու չափ հեռացել է իր բուն **Ձագեծոր** || **Ձագածոր** նախավոր ձևից և հիմք դարձել ժողովրդական կեղծ ստուգաբանության համար, որ իբր **Ձանգեզուր** տեղանունը իր ծագմամբ կապվում է **զանգ** (զանգակ) բառի հետ և նշանակել է կամ «Ձանգը-զոռ», այսինքն զանգը զորավոր է⁵²³, կամ «Ձանգն է զուր»:

⁵²¹ Տե՛ս նույն տեղում:

⁵²² Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, էջ 261-262, այլև՝ Զր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 3, էջ 111:

⁵²³ Տե՛ս Ե. Լալայան, Ձանգեզուրի գավառ, հ. Բ, էջ 8-9:

3. ԽՆԱԾԱԽ || ԽԱՆԱԾԱԽ

«Հայկական ՍՍՀ աշխարհագրական անունների համառոտ բառարանում» Գորիսի շրջանի գյուղերից մեկը ներկայացված է **ԽՆԱԾԱԽ, ԽԱՆԱԾԱԽ, ՔԵՀԻՉՔԵՆՂ** անվանումներով⁵²⁴:

Մի կողմ թողնելով **ՔԵՀԻՉՔԵՆՂ** օտար անվանումը, որով գյուղը կոչում են ադրբեջանցիները, պետք է ասել, որ առաջին երկուսը այսօր էլ հարգի են և գործածվում են ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոսքում:

Չնայած դրան՝ ընդունելի ու պաշտոնական է ճանաչվում միայն **ԽՆԱԾԱԽ** ձևը և այդպես ներկայացվում թե՛ հիշյալ բառարանում, թե՛ «Հայկական սովետական հանրագիտարանում», թե՛ մամուլում և թե՛ զանազան պաշտոնական գրություններում ու փաստաթղթերում:

Գյուղը այդ ձևով կոչելը, սակայն, ամենևին էլ տեղին ու ճիշտ չէ: Փաստերը ցույց են տալիս, որ **ԽՆԱԾԱԽՂ** կամ **ԽԱՆԱԾԱԽՂ** Հայաստանի հնագույն գյուղերից մեկն է և ունի բազմադարյան պատմություն: Այդ մասին ամենից առաջ վկայում է Ստ. Օրբելյանը իր «Պատմութիւն նահանգին Սիսական» հայտնի գրքում՝ Տաթևի վանքին տրվող հարկի ցուցակում Հաբանդ գավառի համար հիշատակված 59 գյուղերի շարքում նշելով նաև հիշյալ գյուղը, այն էլ միայն մեկ **ԽԱՆԱԾԱԽ** ձևով:

Եվ իրոք. Օրբելյանի Պատմության հին (Մաշտոցի անվան Մատենադարանի N 6271, N 5501) ձեռագրերը գիտեն միայն **ԽԱՆԱԾԱԽ**⁵²⁵, որ ուշ շրջանի առանձին ձեռագրերում և տպագրություններում ներկայացվում է **ԽՈՆԱԾԱԽ** ձևով կամ տարընթերցվածքով: Պետք է ասել, որ դա էլ նախաձև է ճանաչել Ղ. Ալիշանը, գրելով. «Յետին գիւղ Հաբանդայ իր հիւսիսակողմն՝ ի խաղս վտակաց Ագօղլան գետոյ, չորիւք մղոնօք ի Հս. Մ. Տեղոյ, ի գեղեցիկ ձորակի՝ է **հինն Խոնաժախ**, այժմս **Խնաժախ** ձայնեալ, որ հարկեր Աթոռոյն 20 բեռն, յորմէ գուշակի մեծ լինել. ունի և եկեղեցի, այլ որպէսն ոչ է ինձ յայտ. բնակիչքն տունք 180, եկրագործք, հովիւք, այլև վաճառականք և արուեստագէտք են բարեկեցիկք»⁵²⁶:

⁵²⁴ Ա. Ա. Ասլանյան, Հ. Ղ. Գրգեարյան, Հայկական ՍՍՀ աշխարհագրական անունների համառոտ բառարան, Երևան, 1981, էջ 89:

⁵²⁵ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. N 6271, էջ 335, N 5501, էջ 342:

⁵²⁶ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 264:

Նշենք, որ դրանցից բացի, Ղ. Ալիշանը երբեմն գործ է ածում նաև **խանածախ** անվանածները, որը և մյուս՝ **խոնածախ** և **խնածախ** ձևերի համեմատությամբ նախնական են ճանաչել բառարանագիրները թե՛ Ս. Եփրիկյանը⁵²⁷ և թե՛ Յանք. Առաքելյանը: Վերջինս, օրինակ, այն ներկայացնում է այսպես՝ «ԽԱՆԱԾԱԽ - 1) կամ խնածախ, գյուղ Սյունյաց Յաբանդ գավառի (Ձանգեգուրի) մեջ, որի եկեղեցուն է գտնվում Մելիք-Յայկազնի գերեզմանը. ունի 188 տուն հայ (1245 հոգի) և 50 տուն քյուրդ բնակիչ. 2) Յայաբնակ գյուղ Արցախի խաչեն գավառի մեջ (Շուշու գ.), որի բնակիչները 1686-ին վերոհիշյալ **խանածախ** գյուղից են գաղթել այստեղ. այժմ ունի 563 բնակիչ կամ 85 տուն»⁵²⁸:

Այսպիսով՝ իրական փաստերով հաստատվում է, որ գյուղի բուն ու նախնական անվանումը եղել է **խանածախ**, որ բարբառին հատուկ **ա > ը** սովորական հնչյունափոխությամբ (հմմտ. **Յատկաչեն – Յըտաչեն, Քարահունջ – Քըրահունջ, մարդամեռ – մըրթամեռ, քարասիրտ – քըրասիրտ, հացատուն – հըցատուն** և այլն) **խնածախ** (< **խանածախ**) է դարձել, որը և խիստ բարբառային բնույթ է կրում:

Սա թելադրում ու պահանջում է գյուղը **խնածախի** փոխարեն կոչել իր բուն կամ նախնական գրական **խանածախ** անունով, որ ինչպես արտաքին կառուցվածքից կարելի է ենթադրել, այլ բան չէ, բան **ա** հոդակապով (խան + ա+ ծախ) իսկական բարդություն, որի վերջին բաղադրիչն էլ եթե **ծախել** բայի **ծախ** արմատն է հիշեցնում, ապա առաջին՝ **խան** բաղադրիչը ամենևին էլ պարզ չէ, թե ինչից է ծագում կամ ինչ է նշանակում:

4. ԿՈՈՆԻՉՈՐ

Այդպես է կոչվում Գորիսի շրջանի գյուղերից մեկը, որը գտնվում է շրջկենտրոնից 27 կմ արևելք: Ինչպես Ղ. Ալիշանն է վկայում, դա «ոչ ի պատմութեան յիշի և ոչ հին ցուցակի (իմա Տաթևի վանքին տրվող հարկի հին ցուցակում - Ա. Մ.), այլ ի նորումն, հարկելով Տաթևու 4000 շահի»⁵²⁹:

⁵²⁷ Ս. Եփրիկյան, նշվ. աշխ., էջ 130, 131, 181, 193:

⁵²⁸ Յ. Առաքելյան, Յանրագիտական բառարան, Թիֆլիս, հ. 1, 1915, էջ 1035:

⁵²⁹ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 263:

Արանից բացի Ղ. Ալիշանը գյուղի տեղանքի միանգամայն ճշմարիտ նկարագիրն է տալիս. «Առ ստորոտն,- գրում է նա,- որ է ի ձախողումն ձորոյն և մերձագոյն ի Յագարի՝ իբրու փարսախաւ կամ ևս նուազ, վտակ մի փոքրիկ անկանի ի գետակն, յորոյ ձորեզերն կայ **Կուռնի ձոր** կամ **Կոռնի ձոր** գիւղ մեծ, 250 տամբք, բարեբեր սահմանօք (որոյ անուամբ անշուշտ և վտակն), և որպէս թուի մեծ է, և ունի եկեղեցի...»⁵³⁰:

Այստեղ էլ գյուղը ներկայացնելով երկու **Կուռնի ձոր** և **Կոռնի ձոր** անվանաձևերով՝ Ղ. Ալիշանը փաստորեն մատնանշում է տեղանվան ճիշտ ծագումը: Գյուղը, ինչպես դժվար չէ նկատել, անվանվել է բառակապակցությամբ, որի երկրորդ բաղադրիչը եթե **ձոր** բառն է (հմտո. **Խաչի ձոր**, **Նեղ ձոր**, **Պիծի ձոր** և այլն), որով գյուղի՝ իսկապես ձորեզրին գտնվելն է նշվում, ապա առաջինն էլ, պետք է ասել, այլ բան չէ, քան **կուռն** > **կոռնը** (> **կօռնը**) «բազուկ, ձեռք, թև, ուսից մինչև դաստակը կամ արմունկից մինչև դաստակը» բառի սեռականը (հմտո. կուռն-կուռնի||կոռնը-կոռնի), որով ձորեզրի՝ **կուռնի** (= բազկի՝ ձեռքի՝ թևի) նման լինելն է արտահայտվում:

Եվ իրո՞ք. այն ձորեզրը, որտեղ գյուղն է հիմնվել, իրապես կուռնի>կոռնի (= բազկի՝ ձեռքի՝ թևի) ձև կամ տեսք ունի, որի համապատասխան էլ ստեղծվել է **Կուռնի ձոր** տեղանունը: Սա էլ ժամանակի ընթացքում բարբառին հատուկ **ու** > **ո** > **օ** հնչյունական փոփոխությամբ (հմտո. **մուկն** > **մօկնը**, **նուռն** > **նօռնը**, **փուռն** > **փօռնը** և այլն)⁵³¹ դարձել է նախ **Կոռնի ձոր** և ապա՝ բաղադրիչների միացմամբ՝ **Կոռնիձոր** (բրբ. **Կօռնիժօր**), որը և ներկայումս իբրև գյուղի մի ամբողջական անվանում է գործածվում:

5. ՄՇՆԱՅԱՆԴ

Գորիսի շրջանի Քարաշեն գյուղի հանդամասերից մեկի անվանումն է: Ինչպես արտաքին կառուցվածքից է երևում, դա **ա** հողակապով իսկական բարդ բառ է, որտեղ եթե վերջին **հանդ** բաղադրիչը անփոփոխ է մնացել ու հասկանալի է բոլորին, ապա առաջինը, ենթարկվելով հնչյունափոխության, մթագնել է իր և՛ բուն ձևը, և՛

⁵³⁰ Նույն տեղում:

⁵³¹ Տե՛ս մեր «Գորիսի բարբառը», էջ 59:

ինմաստը: Գաղտնիքը բացահայտում է միայն **Մշնահանդի** աշխարհագրական դիրքը. այն, որ սկսում է Գորիսից Քարաշեն տանող կենտրոնական խճուղուց և դեպի հյուսիս ձգվելով՝ հասնում բլրակների, ընկած է երկու ձորակների միջև և ներկայացնում է դրանց **միջանկյալ տարածքը**: Ըստ այդմ էլ ահա **միջին** և **հանդ** բառերից **ա** հոդակապով կազմվել է **Միջնահանդ** (< միջին + ա + հանդ) անվանումը, որը և բարբառին հատուկ **ջ > չ, ջ > չ > շ** հնչյունափոխական օրենքով (հմմտ. **առաջք > առաշկ, մէջք > մէշկ, քաջք > քաշկ, միջնակ > միչնակ || միչհամլ > միշնակ || միշնամլ** և այլն)⁵³² դարձել է **Մշնահանդ**, որի փոխարեն, ի դեպ, Ակսել Բակունցը **Միջնահանդ** է գործածել. «... այդ մարդիկ կազմում էին մի առանձին խավ, մի քարացած շերտ, որ գալիս էր հին Կյորեսից, ինչպես Դին ճանապարհը Կյորեսի հին ճանապարհին էր դեպի **Միջնահանդ**, դեպի Սպիտակ քարերը...»⁵³³:

6. ՋԱԼԱՀԻՐ

Ջալահիր է կոչվում Գորիսի շրջանի Քարաշեն գյուղի հանդամասերից մեկը, որը իր տեսքով ու դիրքով, բնական գեղեցկությամբ խստորեն տարբերվում է այլ վայրերից և հատկապես մարգագետիններից՝ այսպես կաշված չիմաններից: Գարնան և ամռան ամիսներին մանավանդ այն նմանվում է իսկական դրախտի, փայլվիլում բազմերանգ ծաղիկներով, լցվում անուշ բույր ու բուրմունքով, մեղմ զեփյուռի սոսափյունով, ծղրիղների, ճպուռների երգ ու ճռվողյունով...

Ըստ այդմ էլ ահա հիշյալ հանդամասը համեմատվել է գոհարի՝ ադամանդի, շողակնի հետ և արաբերենից սերող փոխառյալ բառով կոչվել **ջավահիր** (հիշենք Սայաթ-Նովայի՝ «Յիս քու դիմաթըն չիմ գիդի՝ **ջավահիր** քարի նման իս», 23, «Ո՛վ **ջավահիր**, անգին ալմաս, յա՛ր, քու ա՛րիվն կու սիրիս», 71, տողերը), որը և գյուղի խոսվածքում **վ > լ** «անսովոր» հնչյունափոխությամբ պարզապես **Ջալահիր** է դարձել:

⁵³² Նույն տեղում, էջ 80-81:

⁵³³ **Ակսել Բակունց**, Երկեր, հ. 2, Երևան, 1964, էջ 64-65:

7. ՔԱՐԱՅՈՒՆՁ

Քարահունջ հանրահայտ գյուղը, որ գտնվում է Գորիս քաղաքից 5 կմ հարավ-արևելք, Վարարակ և Քարահունջ գետերի միախառնման տեղում⁵³⁴, անցյալի գրավոր աղբյուրներում հանդիպում է երկու՝ **Քարահունջ** և **Քարունջ** անվանաձևով:

Ղ. Ալիշանն, օրինակ, գյուղը նկարագրելով, գրում է. «Ընդ մէջ Կորեսայ ի հարաւոյ կուսէ, և մեծի գետոյն Բարկուշատայ ի Յս. հաւասար փարսախաչափ հեռաւորութեամբ յերկոցուն ևս, **կայ Քարահունջ** կամ **Քարունջ** (ընդգծումը իմն է - Ա. Մ.) գիւղ, Ս. Յռիփսիմէ եկեղեցաւ...»⁵³⁵:

Ղ. Ալիշանից շատ ավելի առաջ Աբրահամ Կրետացին գյուղը ևս վկայակոչում է **Քարահունջ** ձևով՝ ասելով. «Տեսաք աւեր գիւղ մի, զոր բանադրեալ էին առաջնորդք Տաթևու, **Քարահունջ** անուն...»⁵³⁶:

Արդ՝ երկու՝ **Քարահունջ** և **Քարունջ** ձևերից ո՞րն է ամենահինը՝ նախնականը, որը և հենց մեծ կարևորություն է ներկայացնում տեղանվան ճիշտ ստուգաբանության կամ ծագման բացատրության համար: Դրանցից ամենահինն ու նախնականը, պետք է ասել, **Քարունջ** անվանաձևն է, որ այդպես էլ հենց գործածված ենք տեսնում դեռևս XIII դարում՝ Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» գրքում, որտեղ այն հիշատակվում է իբրև Եվայլախ գավառի գյուղերից մեկը, որը Տաթևի վանքին 10 չափ տուրք է վճարել⁵³⁷:

Այսպիսով՝ **Քարահունջ** գյուղի նախնական անունը իրոք **Քարունջ** է եղել, որը և այլ բան չէ, քան երկու՝ **քար** և **ունջ** բառ-բաղադրիչներից կազմված անհոդակապ իսկական բարդություն: Հարց. ինչո՞ւ է գյուղը այդպես կոչվել, և որ բաղադրիչը ի՞նչ է նշանակել: Առաջինը բաղադրիչը, պարզ է, եթե **քար**, ապա երկրորդն էլ, անշուշտ, գրաբարում լայն գործածություն ունեցող **ունջ** բառն է, որ

⁵³⁴ Տե՛ս Ա. Ա. Ասլանյան, Հ. Ղ. Գրգեարյան, Հայկական ՍՍՀ աշխարհագրական անունների համառոտ բառարան, էջ 200:

⁵³⁵ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 262:

⁵³⁶ Աբրահամ կաթողիկոս Կրետացի, Պատմագրութիւն անցիցն իւրոցն և Նատիր-Շահին, Վաղարշապատ, 1870, էջ 75:

⁵³⁷ Տե՛ս Ստ. Օրբելեան, նշվ. աշխ., էջ 511, այլև՝ դրա աշխարհաբար թարգմանությունը Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 395:

«Ծայր. ծագ. մանաւանդ Ստորին կողմն. ստորոտ. յատակ. արմատ. քունջ, ծարը, տակը, տիպ, պիւն» է նշանակել⁵³⁸:

Իբրև այդ երկու բառ-բաղադրիչներից կազմված բարդ բառ՝ **Քարունջ** տեղանունը այդպիսով նշանակել է **քարի տակ, քարի ստորին կողմը**, որը և, որքան էլ զարմանալի թվա, աշխարհագրորեն միանգամայն ճիշտ է և համապատասխանում է անգամ գյուղի այսօրվա դիրքին: **Քարահունջ** գյուղի գլխավերևը առ այսօր էլ կանգուն կա մի վիթխարի-հսկայական քարազանգված, որը և լավագույն վկան ու ապացույցն է այն բանի, որ այն իսկապես ստեղծվել է նրա ստորին՝ ցածրադիր մասում:

Կազմվելով այդօրինակ աշխարհագրական դիրքի համապատասխան **Քարունջ** տեղանունը, սակայն, նույնը չի մնացել. ժամանակի ընթացքում ժողովրդի բերանում նրա երկրորդ՝ ձայնավորով սկսվող բաղադրիչը հավելվելով **հ** հնչյունով (հմմտ. **ընկեր – հինգեր, ընտրել – հրնդրել, ուլունք – հո՛ւլո՛ւնք || հո՛ւլո՛ւնք, ուշ հո՛ւշ ուռի հոռի** և այլն) պատճառ է դարձել, որ անհոդակապ իսկական բարդությունը վերածվի հոդակապով իսկական բարդության կամ՝ ավելի պարզ ասած՝ **Քարունջ**-ը փոխարինվի **Քարահունջ**-ով, որը և իբրև գյուղի ընդհանուր անվանում է գործածվում:

⁵³⁸ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 2, Վենետիկ, 1837, էջ 552:

1. ԱՐՎՎՈՒՄ

Ինչպես տարբեր անձինք կարող են կրել նույն անունը, այնպես էլ տարբեր տեղանուններ կան, որոնք միանման են: Այսպիսի տեղանուններից է և ԱՐՎՎՈՒՄ-ը, որպիսի անվամբ գյուղ է գոյություն ունեցել կամ այսօր գոյություն ունի Հայաստանի Հանրապետության Սիսիանի, Գորիսի շրջաններում, ինչպես նաև Արցախում⁵⁴⁰: Դա, անշուշտ, բոլոր դեպքերում նույն անունն է, որի ծագումը, սակայն, դեռևս հայտնի չէ:

Գորիսի շրջանի Տեղ գյուղից 2 կմ հյուսիս-արևմուտք գտնվող **Արավուս** գյուղի⁵⁴¹ անունը պատմաբան Մորուս Հասարթյանը հանում է Սյունյաց աշխարհի Աղահեճ գավառի **Արահուծ**⁵⁴² գյուղի անունից՝ առանց հիմնավորելու դրանից նման ձևի առաջացման հնարավորությունը⁵⁴³: Այնպես որ, առանց սխալվելու կարելի է ասել, որ դեռևս մութ է մնում **Արավուս** տեղանվան ծագումը, որը և բնականաբար ու ամենից առաջ պահանջում է պարզել, թե այն նախապես ինչպե՞ս է գործածվել անցյալի գրավոր աղբյուրներում, որոնք առհասարակ մեծ արժեք ու կարևորություն են ներկայացնում ստուգաբանությունների համար:

Առաջնորդվելով այդ պահանջով՝ տեսնում ենք, որ **Արավուս** գյուղանունը առաջին անգամ հանդիպում է հայերեն ձեռագրերի՝ 1471 և 1487 թթ. գրված հիշատակարաններում՝ **Արևիս** ու **Արելիս** ձևերով: Իմնտ. ա) «Փառք ամենասուրբ երրորդութեանն, որ ետ կարողութիւն մատնդէտ և իփչուն (°) գրչի Գրիգորի, որ աւարտեցաք զառատաբուխ շնորիս ողորմութեան՝ սուրբ Աւետարանս փրկչական: Թվարկութեանս Հայոց ԹՃԻ (1471), երկիրս **Սիւնեաց**, գեղս որ կոչի -

⁵³⁹ «Պատմա-բանասիրական հանդես», N 1, 1992, էջ 133-139:

⁵⁴⁰ Այս մասին տես, օրինակ, **Թ. Հակոբյան** և ուրիշ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 393-394:

⁵⁴¹ Տես **Ա. Ասլանյան, Զ. Գրգեարյան**, Հայկական ՍՍՀ աշխարհագրական անունների համառոտ բառարան, Երևան, 1981, էջ 29:

⁵⁴² **Ստ. Օրբելեան**, Պատմութիւն մահանգին Սիսական, Փարիզ, 1859, էջ 260:

⁵⁴³ **Մ. Հասարթյան**, Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1985, էջ 156:

Արևյիս, ընդ հովանեաւ սուրբ Գրիգորիս»⁵⁴⁴ և բ) «Գրեցաւ սուրբ Աւետարանս ի գաւառիս **Սիւնեաց**, ի գեաւղս որ կոչի **Արեւիս**, առ ոտս սուրբ Գրիգորիս, առաջնորդութեամբ **Յովնաթան** վարդապետի, ձեռամբ ոգնամեղ գրչի»⁵⁴⁵:

Այստեղ, անշուշտ, նկատի է առնվում ոչ թե Գորիսի, այլ Սիսիանի շրջանի **Արավուս** գյուղը, որի՝ իրարից գրեթե չտարբերվող **Արևյիս** և **Արեւիս** անվանաձևերը աղերսակցվում են Տաթևի վանքին տրվող հարկի հին ցուցակում Ծղուկ գավառի համար հիշատակվող **Արևես** (< Արևիս) գյուղանվանը⁵⁴⁶ և հաստատում, որ դա եղել է բուն նախաձևը:

Գալով Գորիսի շրջանի **Արավուս** գյուղանվանը՝ պետք է ասել, որ դա էլ առաջին անգամ հիշատակվում է Տաթևի վանքին տրվող հարկի նոր ցուցակում՝ Զանգեզուր գավառի համար նշված գյուղերի (Կորէսն, Յուսնիտարայ, Քարահունջն, Ալիղուլուշէն, Խնձորէքսն, Գորու, Քարաշէն, Տեղ, Շընուհեր, Խոտ, Յալիձոր) շարքում՝ **Արաւիս** ձևով⁵⁴⁷: Ի դեպ, այդ գյուղը այդ ձևով են հիշատակում նաև Ղ. Ալիշանը⁵⁴⁸ և Ս. Էփրիկյանը⁵⁴⁹:

Անկախ, սակայն, այն բանից, թե որ գյուղերն են **Արավուս** անունը կրում, պետք է ասել, որ հնուց ավանդված **Արևիս** (> Արևես) - **Արևյիս** - **Արավիս** ձևերը շատ պարզորոշ ուրվագծում են նրա առաջացման ընթացքը և ցույց տալիս, որ իսկապես նախահիմք է հանդիսացել **Արևիս**-ը, որն էլ իր հերթին այլ բան չէ, քան ժամանակին լայնորեն գործածված **Արևիք** տեղանվան (հիշենք, որ Սյունիքի գավառներից մեկն այդպես էլ կոչվել է) հայցական հոլովաձևը, հմմտ. օրինակ, Մասիք - **Մասիս**, Ագուլիք - **Ագուլիս**, Բնունիք - **Բնունիս**, Գորայք - **Գորայս** - **Գորիս**, Վարդենիք - **Վարդենիս**, Տոլորք - **Տոլորս**, Յարժիք - **Յարժիս**, Եղեգիք - **Եղեգիս** և այլն:

⁵⁴⁴ «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, Երևան, 1958, էջ 316:

⁵⁴⁵ Նույն տեղում, մասն Գ, Երևան, 1967, էջ 97:

⁵⁴⁶ **Ստ. Օրբելեան**, Պատմութիւն նահանգին Սիսական, Փարիզ, 1859, էջ 260, և Թիֆլիս, 1910, էջ 510:

⁵⁴⁷ «Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելեանի», Երևան, 1942, էջ 42 (այդտեղ նման ձևով է նշված նաև Սիսիանի գավառի մեջ մտնող **Արաւիս** գյուղը):

⁵⁴⁸ **Ղ. Ալիշան**, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 264:

⁵⁴⁹ **Ս. Էփրիկեան**, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, հ. 1, 1902, էջ 280:

Սերելով **Արևիք** (Արև + իք) տեղանվան հայցականից՝ **Արևիս** նախաձևը, ինչպես դժվար չէ նկատել, անփոփոխ չի մնացել, և ժողովրդի բերանում ձայնավորների ներդաշնակության օրենքով դարձել է **Արավուս**: Իսկ սա միաժամանակ ցույց է տալիս, որ մի շարք տեղերի (գավառների, լեռների, գյուղերի և այլն) անունների պես այդ գյուղանունը ևս կապվում է երկնային լուսատու **Արևի** հետ (հմտ. Արևեք < **Արև + եք**, Արևիկ < **Արև + իկ**, այլն՝ **Արեգին, Արեգնի, Արեգունի, Արևաշատ...**) և իբրև ածանցավոր (**Արև + իք** → **Արև + իս**) բառ՝ իր կազմության համապատասխան արևոտ տեղ իմաստն է արտահայտել: Ավելացնենք, որ Գորիսի շրջանի **Արավուս** գյուղը իր դիրքով ու տեղանքով ճիշտ այդ նույնն է հաստատում:

2. ԽՆՁՈՐԵՍԿ

Հայաստանի Հանրապետության Գորիսի շրջանի **ԽՆՁՈՐԵՍԿ** գյուղը, որ նախկին տեղից՝ խոր ձորերից տեղափոխվել է դրանից վեր՝ ծախ կողմում ընկած սարահարթը⁵⁵⁰, Սյունաց աշխարհի Հաբանդ գավառի հնագույն գյուղերից մեկն է եղել և անվիճելիորեն շատ երկար դարերի պատմություն ունի:

Այն առաջին անգամ հիշատակվում է XIII դարի նշանավոր պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» գրքի՝ Տաթևի վանքին տրվող հարկի հին ցուցակում Հաբանդ գավառի համար նշված 59 գյուղերի շարքում՝ 10 միավոր հարկաչափով:

Տվյալ դեպքում, սակայն, մեզ ոչ թե դա, այլ հնադարյան գյուղի անվան ծագումն է հետաքրքրում. ինչի՞ց, ինչպե՞ս է առաջ եկել **ԽՆՁՈՐԵՍԿ** գյուղանունը և ի՞նչ է նշանակում:

Մենք, ինչպես հայտնի է, **տակավին հայոց տեղանունների լեզվաբանական-ստուգաբանական, նրանց գործածությունները վավերական-բնագրային օրինակներով ցուցադրող բառարան չունենք**, և առաջին հերթին հենց այդ պատճառով շատ ու շատ տեղանունների ծագումն ու կազմությունը դժբախտաբար մութ, չբացահայտված են մնում:

⁵⁵⁰ Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 5, Երևան, 1979, էջ 62:

Այսպիսի տեղանուններից է նաև **ԽՆՃՈՐԵՍԿ** գյուղանվանումը, որի ծագման մասին էլ այն կարծիքն է հայտնվել, թե «ըստ ժողովրդական ստուգաբանության, **ԽՆՃՈՐԵՍԿ** անվան արմատը «խնձոր» բառն է: Մեկ այլ ստուգաբանությամբ՝ **ԽՆՃՈՐԵՍԿԸ** նախապես անվանվել է **ԽՈՐԾՈՐ** կամ **ԽՈՐԾՈՐԵՍԿ**, որը, հետագայում որոշ հնչյունափոխության ենթարկվելով, ընդունել է ներկայիս ձևը⁵⁵¹:

Թվում է, թե **ԽՆՃՈՐԵՍԿ** գյուղանունը իր ավելի հիմնավոր ստուգաբանական մեկնությունը պետք է գտներ «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում»⁵⁵², բայց իրականում այդտեղ նման չնչին փորձ չի արվել, և վերևում ասվածն էլ պարզապես ներկայացվել է այսպես. «**ԽՆՃՈՐԵՍԿ** անունը ստուգաբանվում է որպես «խնձոր», «ես» (°): Ըստ ավանդության՝ խոր ձորերի մեջ կառուցված լինելու պատճառով, նախապես անվանվել է **ԽՈՐ ԾՈՐ** կամ **ԽՈՐԾՈՐՍԿ** և հետագա ձևափոխությամբ դառել է (=դարձել է Ա. Մ.) **ԽՆՃՈՐԵՍԿ**»⁵⁵³:

Այսպիսով՝ **ԽՆՃՈՐԵՍԿ** գյուղանունը դեռևս ճշտորեն չի ստուգաբանվել, և հայտնի չէ, թե իրապես ինչից է ծագում: Իսկ դա բոլորովին էլ պատահական չպետք է համարել, որովհետև գյուղանվան ծագման հարցը երբեք հատուկ քննության չի արժանացել, և որևէ մեկը իր առջև խնդիր չի դրել պարզելու, թե **ԽՆՃՈՐԵՍԿ** գյուղանունը գրավոր աղբյուրներում նախապես և հետագայում ինչպիսի ձևերով է գործածվել, թե նրա նախավոր ձևը ժամանակի ընթացքում ինչպիսի ձևափոխություններ է կրել, և վերջապես՝ ինչպես է առաջ եկել այսօրվա **ԽՆՃՈՐԵՍԿ** ձևը:

«Տեղանունները,- իրավացիորեն նշում է մեծանուն Հր. Աճառյանը,- ավելի հարատև և տևական բնույթ ունեն, քան անձնանունները: Որևէ լեռ, լիճ, ծով ու գետ մշտնջենական կյանք ունի. **հետևաբար և նրանց անունը ընդհանրապես մնայուն է և տևական** (ընդգծումն իմն է - Ա. Մ.)»⁵⁵⁴:

ԽՆՃՈՐԵՍԿ գյուղանվան՝ հին գրավոր աղբյուրներում ավանդված ձևերը, հավաստելով ասվածի ճշտությունը, ցույց են տալիս, որ

⁵⁵¹ Նույն տեղում:

⁵⁵² Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 748:

⁵⁵³ Նույն տեղում:

⁵⁵⁴ Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 5, Երևան, 1962, էջ 344:

«ընդհանրապես մնայուն և տևական» մնալով՝ այն միաժամանակ կրել է և որոշ ձևափոխություններ:

Խնձորեսկ գյուղանունը հին ձեռագիր աղբյուրներում հանդիպում է բացառապես **Խնձորեսկ** ձևով: Ղա այդպես է ներկայացված Ստ. Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» գրքի՝ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող գրեթե բոլոր՝ N 6271(XIV դար, էջ 335ա), N 2869 (1846թ., էջ 325), N 2868 (1854թ., էջ 269), N - 2924 (1864թ., էջ 151), N 5501 (1684թ., էջ 342) ձեռագրերում, և միայն մեկ՝ N 1488 ձեռագիրը (1781թ., էջ 211) **Խնձորեսկ** ձևի փոխարեն ունի **Խնձորեա** ձևը, որը գրիչը այդպես՝ առանց **կ**-ի է գրել վրիպմամբ:

Այսպիսով՝ անժխտելի է, որ **Խնձորեսկ** գյուղանունը իրոք նախապես միայն **Խնձորեսկ** ձևն է ունեցել, որը և բոլոր դեպքերում ու պարտադրաբար պետք է հիմք ընդունել նրա ծագումը պարզելու համար: Առաջնորդվելով այդ ուղենշով՝ տեսնում ենք, որ **Խնձորեսկ** գյուղանվան նախավոր ձևը այնուհետև հանդիպում է համեմատաբար նույնպես ավելի վաղ շրջանի մի քանի գրավոր աղբյուրներում՝ երեք՝ **Խնձորեկ**, **Խնձորէքս** և **Խնձորէսք** ձևերով:

1654 թ. գրված մի հիշատակարանում և Աբրահամ Կրետացու «Պատմագրութիւն անցիցն իւրոց և Նատր-Շահին Պարսից» գրքում այն ներկայացվում է առաջին **Խնձորեկ** տեսքով, ինչպես՝ «Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ **Մրտիրոս** Կղերիկոսի, որ էր նա յերկրէն **Ծագածորոյ**, ի գեղջէն **Խնձորեկոյ**»⁵⁵⁵, «... Նախ կային Եճ (500) տուն ի **Խնձորեկ** գեղն, բայց այժմ սակաւացեալք էին զի բազումք սպանեալք էին ի թուրքաց»⁵⁵⁶, «Վասն որոյ աճապարեցի և եկի ի Գիւղն ի Ձորգեղն և անտի ի Պնածոր գիւղ, անտի ի Ղօռչիպէկի **օպայն**, որ էր փիսիանացի. և անտի ի **Խնձորեկ**, որ է ի մէջ քարածեռ լերաց մեծամեծաց, և ունի անբաւ բարձրութիւն...»⁵⁵⁷:

Խնձորեսկ գյուղի նախնական **Խնձորեսկ** անվանումը, ի տարբերություն դրա, երկրորդ՝ **Խնձորէքսն** ձևով ներկայացվում է Տա-

⁵⁵⁵ «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դար», հ. Գ, Երևան, 1984, էջ 601:

⁵⁵⁶ Աբրահամ կաթողիկոսի Կրետացույ Պատմագրութիւն անցիցն իւրոց և Նադրշահին Պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 74-75:

⁵⁵⁷ Նույն տեղում, էջ 74:

թևի վանքին տրվող հարկի նոր ցուցակում⁵⁵⁸ (գրված 1730 թ.), իսկ **ԽՆՃՈՐԷՍ** ձևով՝ Ստ. Շահումյանի «Ընտիր պատմութիւն Դաւիթ Բեգին» գրքում, ինչպես՝ «Եւ զաւար բազում յոյժ առեալ ի նոցանէ զհարիւր վաթսուն բեռնիս ուղտուց, և անտի չուեալ երթայր ժամանակ ինչ ի մեծ բերդն **ԽՆՃՈՐԷՍ** բնակէր»⁵⁵⁹, «զի նա յօրէ յորմէ հետէ ի **ԽՆՃՈՐԷՍ** բնակէր...»⁵⁶⁰:

Նույն այդ երեք ձևերն էլ ակներև դարձնելով նախնական **ԽՆՃՈՐԷՍ** ձևի իսկությունը՝ պարզորոշ ուրվագծում են նաև նրա հետագա փոփոխության ընթացքը, որ լիովին հիմնավորվում ու հաստատվում է հնչյունաբանորեն. հայերենին հատուկ օրենքներով երբեմնի **եա** երկբարբառը հնչյունափոխվելով տվել է **ե**, ինչպես, ասենք, համանման կազմություն ունեցող **այգեկ** (< այգեակ< այգի + ակ), **գօտեկ** (< գօտեակ< գօտի + ակ), **հմայեկ** (< հմայեակ), բառերում⁵⁶¹: Յմտ. նաև՝ **աղաւնի** – աղաւնեակ - աղավնյակ, **կղզի** – կղզեակ - կղզյակ, **որսի** – որդեակ - որդյակ, **լուսին** – լուսնեակ - լուսնյակ, **տասն** – տասնեակ - տասնյակ և այլն:

Այսպիսով՝ միանգամայն պարզ է, որ նախնական **ԽՆՃՈՐԷՍ** անվանաձևին անմիջապես հաջորդող անվանաձևը **ԽՆՃՈՐԷԿ**-ն է, որում **եա > ե** հնչյունափոխությունից բացի նաև ձայնեղ հնչյունի (**ձ > ծ**) խլացում է տեղի ունեցել:

Հետագայում դրան ավելացել է նույնպես լեզվաբանորեն արդարացվող երկու նոր փոփոխություն. **ԽՆՃՈՐԷԿ**-ը նախ արտասանվել-դարձել է **ԽՆՃՈՐԷՍ**, ապա՝ **ք, ս** հնչյունների դրափոխությամբ՝ **ԽՆՃՈՐԷՍ**, որի հիման վրա էլ, անշուշտ, ուշ ժամանակներում առաջ է եկել ներկայիս **ԽՆՃՈՐԷՍԿ** անվանաձևը, որ Ստ. Օրբելյանի Պատմության առանձին ձեռագրերում գործածվել է նախնական **ԽՆՃՈՐԷՍԿ** անվան փոխարեն և այդպես էլ արտացոլվել նրա փարիզյան (1859, էջ 267) և փիլիսոփայան (1910, էջ 516) հրատարակություններում:

⁵⁵⁸ «Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելեանի», Երևան, 1942, էջ 42, այլև՝ ՄՄ, ձեռ. N 6271, էջ 339ա:

⁵⁵⁹ Ստ. Շահումեան, Ընտիր պատմութիւն Դաւիթ Բեգին, Վաղարշապատ, 1871, էջ 71:

⁵⁶⁰ Նույն տեղում:

⁵⁶¹ Այդ մասին տես Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:

Պատկերը, սակայն, այլ է Ստ. Օրբելյանի Պատմության մոսկովյան հրատարակությունում⁵⁶²։ այդտեղ, որ, իհարկե, կարևոր է, գյուղանունը գործածվել է իր նախնական **ԽՆՃՈՐԵՍԿ** և ընթերցվածաշին **ԽՆՃՈՐԵՍԿ** ձևով, որը և մի անգամ ևս ու իր հերթին առաջինի նախավորությունը և երկրորդի նորագոյացությունն է հաստատում։

Շատ ավելի պարզորոշ այդ նույնն են հաստատում նաև **ԽՆՃՈՐԵՍԿ** գյուղանվան բարբառային ձևերը։ Գորիսի բարբառում **ԽՆՃՈՐԵՍԿ** գյուղանունը մեծ մասամբ գործածվում է նախնական **ԽՆՃՈՐԵՍԿ** (> խնձորյակ)-ից սերող ձևերով, ինչպես, օրինակ՝ **ԽՈՒՆՃՈՐԿԵՑԻ** («Շօն թակօղ խոնձորկեցի»)– **ԽՈՒՆՃՈՐԿԵՑԻՔ** («խոնձորկեցիք խելունք մարթիք էն»), **ԽՈՒՆՃՈՐԵԿՈՒ** («խոնձորեկու ժողովուրթը սըտախօս ա»), **ԽՈՒՆՃՈՐԵԿԱՆ** («խոնձորեկան մեր շենը հեռու չի»), **ԽՈՒՆՃՈՐԵԿՈՒՄ** («խոնձորեկում **լավ** իխպիրէք կան»)– «խնձորեսկում **լավ** աղբյուրներ կան») և այլն։

Այս և բերված մյուս բոլոր փաստերը պարզորոշ ցույց են տալիս, որ ներկայումս գործածվող **ԽՆՃՈՐԵՍԿ** գյուղանունը ծագում է իրոք **ԽՆՃՈՐԵՍԿ** (> խնձորյակ) նախաձևից, որն էլ պարզապես ածանցավոր բառ է՝ կազմված **ԽՆՃՈՐԻ** (< խնձոր+ի) ծառանունից և **ակ** փոքրացուցիչ-փաղաքշական նշանակություն արտահայտող ածանցից։

Գյուղի այդ անվանումը և դրա այդպիսի կազմությունը լիովին պատճառաբանվում ու հաստատվում են ինչպես իմաստաբանորեն ու արմատաբանորեն, այնպես էլ լեզվաբանորեն ու հնչյունաբանորեն։ Հակառակ դրան՝ ոչնչով չի հիմնավորվում և հետևաբար՝ մերժելի է այն ստուգաբանությունը, որով **ԽՆՃՈՐԵՍԿ**-ը կապվում է **ԽՈՐ ԾՈՐ(ԵՐ)Ի** հետ և դրա հնչյունական ձևափոխությունն է համարվում։ Գորիսի բարբառում եթե **ԽՈՐ** բառը ուղիղ ձևերում չի փոխվում և աճելու դեպքում **ԽՈՐ** է դառնում, ապա **ԾՈՐ** բառը զգալի փոփոխություն է կրում և **ԾՕՐ** կամ **ԾՈՒՐ** է հնչվում, հմմտ., օրինակ՝ «խօր խուրանաս տո՛ւ» - «խոր խորանաս դու», **ԾՕՐ** (< ձոր) – **ԾՕՐԷՐ** (< ձորեր), **ԾՕՐԱՎԼՐ** (< ձորովը), **ԾՈՒՐԷՐՈՒՆՐ** (< ձորերունը), **ՐՈՂՋԱԾՕՐ** (< արջածոր) և այլն⁵⁶³։

⁵⁶² «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», Մոսկվա, 1861, էջ 375։

⁵⁶³ **Խ**-ի, **Ձ**-ի և **ԽՈՐ ԾՈՐ** բառերի հնչյունական փոփոխությունների մասին տես մեր «Գորիսի բարբառը» (Երևան, 1975, էջ 100, 79-80, 333, 345)։

ԽՆՃՈՐԵՍԿ գյուղանունը **ծոր** բաղադրիչ ունենալու դեպքում պետք է արտաբերվեր դրան համապատասխան, մինչդեռ գործածվում է այնպիսի ձևերով, որոնք բացառապես **խնծոր**, **խնծորի** բառերին են հատուկ, հմմտ., օրինակ՝ **խնծոր-խընձօր** || **խինձօր** || **խունձօր**. **խնծորի-խինձօրի** || **խընձօրի** || **խունձօրի**. **խնծորներ-խինձողներ** || **խունձողներ**. **խնծորեք-խինձօրեք** || **խունձօրեք** և **խնծորկեցի-խինձողկեցի** || **խունձողկեցի**. **խնծորկեցիք-խինձողկեցիք** || **խունձող-կեցիք** և այլն:

Սրանք փաստեր են, որոնք վկայում են այն մասին, որ անցյալում մի շարք գյուղեր կոչվել են ծառերի, բույսերի, պտուղների և կամ դրանց հետ կապվող, դրանց վերաբերող անուններով, ինչպես, օրինակ՝ **Սորենի**, **Ցողունի**, **Եղեգնածոր**, **Փշատիք**, **Վարդենիք**, **Խնծորուտ**, **Կեչուտ**, **Ուռիք**, **Տանձուտ**, **Քեղածոր**, **Մշենի**, **Մարգք**, **Տանձյակ**, **Խոտ**, **Մարգածոր**, **Տանձավայր**, **Ճապկուտ**, **Տեղյակ** և այլն⁵⁶⁴:

Պետք է ասել, որ գյուղանվանումների այս խմբին է պատկանում նաև **ԽՆՃՈՐԵՍԿ** (> Խնծորեկ > Խնծորեսկ) գյուղանունը, որը կազմվելով **ԽՆՃՈՐԻ** (= **խնծորենի**) ծառանունից և **-ակ** վերջածանցից՝ փոքրացուցիչ-փաղաքշական իմաստի հետ մեկտեղ, անշուշտ, նաև խնծորի ծառերի՝ խնծորենիների տեղ է նշանակել:

Ըստ էության այդ է հաստատում նաև Ղ. Ալիշանը, երբ ասում է, թե «Ձարդիկս (իմա՝ **այժմ**, **ներկայումս** - Ա. Մ.)՝ **ԽՆՃՈՐԵՍԿ** կոչի և **ԽՆՃՈՐԻՍՏԱՆ** (իմա՝ խնծորի ծառի տեղ - Ա. Մ.), և ունի 610 երդս Չայոց»⁵⁶⁵:

Առաջ գնալով նշենք, որ Տաթևի վանքին տրվող հարկի հին ցուցակում Ստ. Օրբեյանի հիշատակած 667 գյուղանուններից նույն եղանակով ու նշանակությամբ են կազմված նաև **Տանձյակ** (Տանձեակ < տանձի + ակ), **Թեղյակ** (Թեղեակ < թեղի + ակ), **Մայրյակ** (Մայրեակ < մայրի + ակ), **Սնծոնյակ** (Սնծոնեակ < սնծնի < սնձնի + ակ)⁵⁶⁶ գյուղանունները: Հմմտ. նաև **Հայեյակ** Հայեյեակ, որը, սա-

⁵⁶⁴ Այդ գյուղանունները բերվում են Սյունիքի տասներկու գավառների եկեղեցու այն հարկացուցակից, որը ներկայացրել է Ստ. Օրբեյանը իր Պատմության մեջ:

⁵⁶⁵ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 263:

⁵⁶⁶ Այդ գյուղանունը Ստ. Օրբեյանի Պատմության և նրա գրեթե բոլոր ձեռագրերում (N 6271, N 2869, N 2868, N 2924 ...) ներկայացված է **Սնծոնեակ**, իսկ մի ձեռագրում (N 1488) սխալ գրչությամբ՝ **Անծոնեակ** ձևով, որ տեղ է գտել նաև արժանահիշատակ լեզվաբան Աշոտ Աբրահամյանի կատարած թարգմանության մեջ (տե՛ս **Ստեփանոս Օրբեյան**, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 401):

կայն, կազմված է ոչ թե ծառանունից, այլ **հայելի բառից՝ -ակ** վերջածանցով, և, անշուշտ, հայելու՝ նայելու տեղ է նշանակել:

Սրանք իրենց հերթին ևս եթե մի կողմից **ԽՆՃՈՐԵԱԿ** || **ԽՆՃՈՐ-ԵԱԿ** նախավոր ձևի, ապա մյուս կողմից՝ դրանից հենց **ԽՆՃՈՐԵՍԿ** գյուղանվան ծագումն են ապացուցում, լիակատար իրավունք տալով մեզ՝ այն դասելու ստուգաբանված տեղանունների շարքը:

3. ԽՈՋՆԱՎԱՐ

Սյունյաց աշխարհի Քաշաթաղ գավառի և ներկայիս՝ Հայաստանի Հանրապետության Գորիսի շրջանի **Խոզնավար** գյուղը հայոց հնագույն գյուղերից է և ունի նույնպես դարավոր պատմություն: Նրա մասին առաջին գրավոր տեղեկությունը մենք տեսնում ենք երկու հիշատակարանում՝ գրված մեկը 1488, իսկ մյուսը՝ 1490 թ.:

Երկու հիշատակարանի հեղինակը նույն անձն է՝ Շապանի որդի գրիչ Եղիան, որը և գյուղանունը գործածել է նախ՝ **Խոզանաւար** և ապա՝ **Խոզանավար** ձևով. հմմտ. ա) «Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի թվարկութեանս հայկազան տունարի ՋԼԷ (1488), ի հայրապետութեան տեառն **Սարգսի**, ի յաթոռակալութեան **Սիւնեաց Ռդանան** վարդապետի, եւ աշխարհականութեանն (իմա «յաշխարհակալութեանն») Եաղուպի՝ յարիւնարբու բռնաւորի, որ տիրեաց բազում յաշխարհի և գաւառի բռնութեամբ և իւրովի կամաւք մինչև **Խորասան** տիրեալ:

Եւ գրեցաւ ի գաւառիս **Քաշատաղուց**, ի գեղս որ կոչի **խոզանաւար**, ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսի Նախավկայիս և այլ բազմահաւաք սրբոց, որ աստ կան հաւաքեալ»⁵⁶⁷ և բ) «Արդ, գրեցաւ սուրբ յԱւետարանս ի թվականիս (1490), ի գաւառիս **Քաշաթաղուց**, ի գեղոյս որ կոչի **խոզանավար**, ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսի Նախավկայիս և այլ բազմահաւաք սրբոցս, որ աստ կան հաւաքեալ...»⁵⁶⁸: Այսպիսով, գյուղանվան երկու ձևերն իրարից տարբերվում են աննշան՝ սոսկ **ւ**-ի և **վ**-ի գրությամբ, որոնցից ճիշտն էլ, անշուշտ, վերջինն է:

⁵⁶⁷ «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Գ, էջ 116:

⁵⁶⁸ Նույն տեղում, էջ 191:

Ինչպես հայտնի է, **Լ** և **Վ** հնչյունների գրությունները ժամանակի ընթացքում խախտվել են և հաճախ, մասնավորապես միջին դարերում, գործածվել մեկը մյուսի փոխարեն: Ակներև է, որ նման գրախախտում է տեղի ունեցել նաև այս դեպքում, և որն էլ իր հերթին ցույց է տալիս, որ գյուղի նախնական կամ նախավոր ձևը **Խոզանավար** է եղել: Միանգամայն հասկանալի ու տրամաբանական է, որ այստեղ էլ դա՛ պետք է հիմնական ծառայի գյուղանվան ստուգաբանության համար:

Դժբախտաբար, սակայն, ոչ ոք փորձ չի արել նույն այդ հիմքի վրա քննելու և պարզելու **Խողնավար** անվան ծագումը:

Պատմաբան Մ. Հասրաթյանը բավարարվել է՝ մատնանշելով գյուղանվան նախնական **Խոզանավար** ձևը⁵⁶⁹, իսկ ուրիշները սոսկ ենթադրություններ են արել և հավանաբար համարել, օրինակ՝ «խոզան» ու «վար» բառերից նրա ծագումը⁵⁷⁰:

Այսպիսով, մինչև այսօր էլ հիմնավորապես ապացուցված չէ, թե **Խոզանավար** գյուղանունը ստույգ ինչից է ծագում և իսկապես ինչ է նշանակում: Մինչդեռ պետք է ասել, որ ոչ պակաս կարևորություն ունեցող այդ խնդրի վրա որոշակի լույս են սփռում գյուղանվան՝ նույնպես վաղ շրջանի այլ գրավոր աղբյուրներում հանդիպող ձևերը:

Այսպես՝ առաջինը. Մելիք Հայկազի երեք որդիների կողմից ավանդված մի ընդարձակ արձանագրության երեսի կողմին **խազնավար** գյուղը հիշատակվում է **ԽՁՆՎՐ** համառոտագրությամբ:

Երկրորդ. XVII դարի մի հիշատարականում ուղղակի ասվում է. «...յանձն առի և բազում աշխատութեամբ և տառապանօք գծագրեցի զսա մեղսամած մատամբ իմով, ի յաստուածաբանակ և յանառիկ դղեակս **Քաշթաղ**, ի գ(ե)օղն **Խզնավար**, ընդ հովանեաւ Սրբոյն Ստեփանոսի Նախավկային, ի հայրապետութեան, տեառն Փիլիպպոսի հայոց վերադիտողի, ի թվարկութեանս Հայոց ՌՅԱ (1652)»⁵⁷¹:

Երրորդ. Տաթևի վանքի նոր հարկացուցակում **Խոզնավար**-ը Քաշաթաղուց զավառի գյուղերի շարքում ներկայացվում է մի այլ՝ **Խազնավար** ձևով:

⁵⁶⁹ Մ. Հասրաթյան, նշվ. աշխ., էջ 156:

⁵⁷⁰ Այդ մասին տես, օրինակ **Թ. Հակոբյան** և ուրիշ., Հայստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 761:

⁵⁷¹ «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատարականներ», մասն Գ, էջ 506:

Նշենք նաև, որ Ղ. Ալիշանն էլ գյուղանունը գործածել է **Խզնավար, Խազնավար, Խոզնավար** ձևերով, ասելով, օրինակ՝ «... բայց վերագոյն և արևմտագոյն և մերձագոյն ի Ծիծեռնավանս է **Խոզնավար** կամ **Խազնավար ըստ այժմունս** (այս ընդգծումն իմն է - Ա. Մ.), գիւղ, որ թեպէտ ոչ է յիշեալ ի հին Յուցակին, այլ ի յետինսն նշանակի իբր վիճակեալ Խոժոռաբերդի»⁵⁷²:

Այսպիսով, **Խոզնավար** գյուղանունը վաղ շրջանի գրավոր աղբյուրներում ներկայացվում է **Խոզանավար, Խոզանավար, Խզնավար, Խազնավար** ձևերով, որոնք մի կողմից եթե հաստատում են, որ այն նախապես իրոք **Խոզանավար** է եղել, ապա մյուս կողմից էլ ցույց են տալիս, որ դա պարզապես Գորիսի բարբառին հատուկ հնչյունական փոփոխություններ է կրել (հմմտ. **մահակ** – մահակաթակ - մըհկաթակ, **խաղալ** – խաղալացավ - խըղլացավ II հըղլացավ, **խոտորու** – խըտուրու և այլն) և դարձել ի վերջո **Խոզնավար**:

Լիովին արդարացվելով հնչյունաբանորեն՝ **Խոզանավար** նախաձևը ինքնին վկայում է, որ դա իրոք «խոզան» («Անմշակ թողած կամ հասկերի ցողուններով պատած արտ») + «վար» («Վարած տեղ») բառ-բաղադրիչներից կազմված իսկական բարդություն է, ըստ որի էլ գյուղանունը նախապես «Անմշակ արտի վարատեղ կամ վերալատեղ» է նշանակել:

ՇԻՆՈՒՀԱՅՐ⁵⁷³

Շինուհայր գյուղը, որ Գորիսի բարբառով ՇՆՅԵՐ (ՇԸՆԸՅԵՐ) է անվանվում, ստեղծվել է շաղ վաղ անցյալում և շատ երկար դարերի պատմություն ունի: Պատմական փաստերը վկայում են, որ այն Սյունիքի Յաբանդ գավառի 59 գյուղերի մեջ ամենամեծն է եղել և ամենամեծ չափով էլ 24 բեռ ցորենի հարկ է վճարել Տաթևի վանքին:

Այդ և առհասարակ Շինուհայր գյուղի մասին մեզ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում 13-րդ դարի նշանավոր պատմիչ Ստեփանոս Օրբելյանը (ծն. թ. անհտ. - 1305)՝ իր «Պատմութիւն նահանգին Սիսական» գրքում: Այդտեղ մենք անգամ այնպիսի տեղեկություն ենք գտնում, որը վերաբերում է ավելի վաղ շրջանի՝ 10-րդ

⁵⁷² Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 268:

⁵⁷³ «ԶԱՆԳԵԶՈՒՐ», 1991, 21 ՄԱՐՏԻ:

դարին, և որով էլ հաստատվում է, որ Շինուհայրը, իբրև գյուղ, գոյություն է ունեցել այդ ժամանակ և նաև, անշուշտ, դրանից էլ առաջ...

Իր աշխատության ԼԶ (36-րդ) գլխում Ստ. Օրբեյանը վկայաբերում է մի «հնացած նամակ», որ իր իսկ ձեռքով գրել է Աղվանքի Վարազ Տրդատ իշխանի (9-րդ դ.) գեղեցիկ դուստր Շահանդուխտը՝ սահմանափակելով այն հետևյալ տողերով. «Նա և զտեղիքս զայս աւանդեցի սուրբ եկեղեցւոյն ամենայն ձորովս, որ **ի Շնհերոյ** (այս և հաջորդ բոլոր ընդգծումներն իմն են - Ա. Մ.) սահմանէն ի վեր մինչ ի Գինեկան գետն»⁵⁷⁴:

Սա Շինուհայր գյուղի՝ պատմական աղբյուրներում հանդիպող ամենահին հիշատակությունն է, որտեղ էլ այն, ինչպես դժվար չէ նկատել, ներկայացված է ՇՆՅԷՐ անվանաձևով: Եվ պետք է ասել, որ գյուղանունը հիմնականում հենց այդպես է ներկայացված նաև այլ հիշատակություններում ու արձանագրություններում, ինչպես օրինակ. «Եւ չկայ Նորեցեաց կամ Խոտանանեաց կամ Շնհերայ եւ Զալեցեաց յայդ ջրոյդ հաշիւ ոչ շատ եւ ոչ սակաւ...»⁵⁷⁵, «Եւ ապա էր մեծ Վասակայ որդի մի Փիլիպպէ անուն, որ ուներ զՇնհեր եւ զՅամբանդ»⁵⁷⁶, «... եւ տվի զիմ հոգւոյ մասն ի յիմ սեփական ուխտս ի սուրբ եկեղեցիս գիւղս վեց, զոր լուեալ էաք ի հին ժամանակաց ժառանգութիւն լեալ սմին՝ զՇնհեր, զխոտն աւան սահմանօք իւրովք, լերամբ եւ դաշտիւ...»⁵⁷⁷, «Շնհերու աստուածածին անապատն կուսանաց»⁵⁷⁸ և այլն:

Բայց դա, իհարկե, գործածված միակ անվանաձևը չէ: **Շինուհայր** գյուղանունը պատմական աղբյուրներում հանդիպում է նաև երկու այլ՝ **ՇՆՈՅ ԶԵՐՔ** և **ՇՆՅԵՐ** ձևերով, առաջինը՝ Ստ. Օրբեյանի ներկայացրած հարկացուցակում⁵⁷⁹, իսկ երկրորդը՝ վիճագրություններում, ինչպես՝ «... եւ տվեալ յիրեմաց հայրենեացն զերմիս գեղ եւ զշամբին հողն իւրեանց սահմանով եւ/ **ի/Շնհեր** զԱղուշանց հող եւ

⁵⁷⁴ Տե՛ս «Պատմութիւն նահանգին Սիսական», արարեալ Ստեփաննոսի արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 165-166:

⁵⁷⁵ Տե՛ս **Ստ. Օրբեյան**, նշվ. աշխ., էջ 256:

⁵⁷⁶ Նույն տեղում, էջ 298:

⁵⁷⁷ Նույն տեղում, էջ 417:

⁵⁷⁸ Նույն տեղում, էջ 500:

⁵⁷⁹ Տե՛ս «Պատմութիւն նախահին Սիսական», էջ 517, այլև դրա՝ Մաշտոցյան Մատենադարանում պահվող ձեռ. N 6271, էջ 335բ, ձեռ. N 1488, էջ 211ա:

զջուր եւ զայգին ամէն սահմանաւն...»⁵⁸⁰, «... տուաք ի պէտս սպասաւորաց Սունակայ տափին հողն, նահատակին հողն, եւ ներքի ծաղկոցն **ի Շնհեր**, ի Տաթեւայ լուսագին...»⁵⁸¹ և այլն:

Այսպիսով **Շինուհայր** գյուղանունը հնուց մեզ ավանդվել է ՇՆՅԵՐ, ՇՆՈՅ ՅԵՐՔ և ՇՆՅԵՐ ձևերով, որոնք ոչ թե իրար հակասում կամ բացասում են, այլ պարզորոշ ցույց են տալիս, որ նրանք իրապես այլ բան չեն, քան մի ընդհանուր նախնական ձևի տարբեր արտահայտությունները:

Արդ՝ ո՞րն է եղել այդ նախնական ձևը: Պետք է ասել, որ առաջին անգամ դրան ուշադրություն է դարձրել անվանի պատմավիպասան Րաֆֆին և «Դավիթ-Քեկ» վեպում (1880-1881թթ.) գյուղանունը գործածելով ՇՆՅԵՐ ձևով՝ ուղղակիորեն նշել, որ «**Շընհերը** կոչւում է **Շինուհայր**, այսինքն շեների կամ աւանների հայր»⁵⁸²:

Սա անվիճելիորեն տեղին ու ճիշտ բացատրություն է, որով Րաֆֆին գյուղանվան նախնական ձևը համարել է **շինուհայրը** և դրանով հաստատել նաև, որ այն կապվում է **շեն** (-**շեն**) և **հայր** բառերի հետ և կամ՝ առաջ է եկել դրանց իսկ բաղադրությամբ:

Գյուղանվան ծագումն ըստ էության այդպես է բացատրել նաև Ղևոնդ Ալիշանը: Նա գրում է. «Երկրորդ գիւղ ձորագետոյս և մեծագոյն ոչ միայն քան զՅալիս և զԽոտ, այլ և քան զամենայն գիւղս գաւառին եղեալ է ի հնումն և ի նորումն ՇՆՅԵՐ, և թերևս յայս սակս (իմա այս պատճառով - Ա. Մ.) ոմանց իմաստասիրեա **Շինուհայր** գրեն կամ **Շինուհայր**, և ոմն անդրադարձօրէն Յայրաշէն»⁵⁸³:

Դա գրեթե այդպես է ներկայացրել նաև ազգագրագետ Երվանդ Լալայանը, ասելով. «Յալիձորից հագիվ երկու վերստ հեռավորությամբ, դեպի հյուսիս, Բարկուշատի ձախ ափին տարածվում է ՇՆՅԵՐ գյուղը, բռնելով ձորի վերին լանջը: Այս գյուղը սույն ձորի գյուղերից ամենամեծը լինելով՝ գուցե հենց այս պատճառով էլ կոչվել է **Շինուհայր** կամ **Շինուհայր**, որ ոմանք էլ բառերի տեղափոխությամբ Յայրաշէն են գրել»⁵⁸⁴:

⁵⁸⁰ **Ս. Բարխուդարյան**, Դիվան հայ վիճագրության, պրակ 2-րդ, Երևան, 1960, էջ 100-101:

⁵⁸¹ Սույն տեղում, էջ 114:

⁵⁸² Տե՛ս «Դավիթ-Քեկ», 3-րդ գիրք, գլուխ Ե:

⁵⁸³ Տե՛ս **Ղ. Ալիշան**, Սիսական, Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վեներտիկ, 1893, էջ 258:

⁵⁸⁴ Տե՛ս **Ե. Լալայան**, Զանգեզուրի գավառ, հատ. Բ, Թիֆլիս, էջ 41-42:

Գիշտ որոշելով **Շինուհայր** գյուղանվան և՛ բաղադրիչները, և՛ ընդհանուր կազմությունը, և՛ արտահայտած նշանակությունը՝ հիշյալ հեղինակները, սակայն, ավելի հայեցողական մոտեցում են հանդես բերել և բնավ էլ չեն խոսել նրա ինչպես ստեղծված և ժամանակի ընթացքում հնչյունական ինչպիսի փոփոխություններ կրած լինելու մասին, որպիսի պատճառով էլ շատերի համար իսկապես մութ ու անորոշ է մնացել **Շինուհայր** տեղանվան ստույգ ծագումը:

Այս հանգամանքը բնականաբար լրացուցիչ բացատրություն է պահանջում, հարկադրում պարզելու, թե ինչ հիմքի վրա և ինչպես է **շեն** (-շեն) ու **հայր** բառերից առաջ եկել **Շինուհայր** տեղանունը, թե ժամանակի ընթացքում դա իրոք հնչյունական ինչպիսի փոփոխություններ է կրել, և որքանով են պատճառաբանված ու հիմնավոր այն տարբեր ձևերը՝ ՇՆՅԵՐ, ՇՆՈՅ ՅԵՐՔ, ՇՆՅԵՐ, որոնցով գյուղն է կոչվել:

Համեմատությունը ցույց է տալիս, որ դրանք բոլորն էլ ծագում են իրոք **շեն** (-շեն) ու **հայր** բառերից և առաջ են եկել ոչ թե **ա** հոդակապի միջոցով իսկական բարդությամբ, այլ **շեն** բառի սեռական հոլովածևի և **հայր** բառի ուղիղ ձևի կապակցությամբ, որը և Գորիսի բարբառի հնչյունական օրենքներով փոփոխություններ է կրել և դեռ վաղ անցյալում դարձել ՇՆՅԵՐ //ՇՆՅԵՐ (Շնըիեր), գործածվելով այդպես նաև այսօր:

Շեն (-շեն) բառը, որ մեր հին լեզվում՝ գրաբարում, ոչ միայն Ի և Ի-Ա, հոլովմամբ է հոլովվել, հայր բառի հետ պատկանելության նշանակությամբ գործածվել է **շինոյ** ձևով, որը և, ինչպես Տաթևի վանքի հարկացուցակում նշված **Շնոյ հերք**-ն է հաստատում, Գորիսի բարբառային հատուկ **ի-ը** հնչյունափոխությամբ դարձել է **Շնոյ**: Մյուս կողմից, սակայն, անփոփոխ չի մնացել նաև **հայր** բառը, որ ոչ միայն՝ «հայրե շնող», այլ փոխաբերաբար «ցեղի կան ազգի նախահայր, վերակացու, տնօրեն», «գլուխ, տեր, առաջնորդ» է նշանակել: Պետք է ասել, որ հենց այս վերջին նշանակությամբ էլ գործածվելով **շեն** (-շեն) բառի սեռականի (շեն-շինոյ) հետ՝ **հայր** բառը ևս Գորիսի բարբառին հատուկ **այ-է** (հմմտ. մայր-մէր, եղբայր-ախպէր, այս- էս, այրել - էրել, ցայթել – գէթէլ և այլն) հնչյունափոխությամբ դարձել է **հէր**, որ հանդիպում է նաև **Շնհէր**-ից կազմված **Շնհէրացի** բառում, ինչպես՝ «Եւ չկայ յայս ջրոյս հաշիւ ոչ Նորեցեաց, ոչ Խոտանանեաց,

ոչ **Շնհերացեաց** կամ **Հալեցեաց**, ոչ այլ **մարդոյ»**⁵⁸⁵, «եւ մի ոք իշխեսցէ այսմ հակառակել մի **Բաղացիք**, և մի **Որոտնեցիք** և մի **Վաղանացիք**, մի **Շնհերացիք** և մի **Նորեցիք»**⁵⁸⁶ և այլն:

Այդպէս և հնչյունաբանորեն լիովին արդարացնում է **հայր** բառի **Է**-ի փոխարեն **Ե**-ով գործածությունը, որովհետև, ինչպէս հայտնի է, դեռ այդ շրջանում վերացել է նրանց միջև եղած հնչյունական տարբերությունը և կամ ուղղակիորեն ասած՝ «Ժ-ԺԴ դարերի վիմական բնագրերում և միջին հայերենի գրական հուշարձաններում **Ե, Է հնչյունների և գրերի նույնացումը** (ընդգծումն իմն է- Ա. Մ.) համատարած է դառնում և տարածվում բոլոր բառերի վրա»⁵⁸⁷:

Այսքանով, սակայն, **Շինոյ հայր – Հնոյ հէր // Շնոյ հեր(ք)** գյուղանվան նախածնի կրած հնչյունական փոփոխությունը չի ավարտվում: **Շեն (-շէն)** բառի շինոյ սեռական հոլովածնի ոչ միայն **ի**-ն, այլ **ոյ** վերջավորությունն է հնչյունափոխվել՝ դառնալով նախ **ու** (հմմտ. մարդ - մարդոյ - մարդու, ամուսին - ամուսնոյ - ամուսնու, թշնամի - թշնամոյ - թշնամու և այլն) և ապա՝ **ը**, որը և, հասկանալի պատճառով, գրավոր խոսքում չի արտահայտվում:

Այսպիսով՝ կարծում ենք, լիովին պարզ է, որ՝ ա) պատմական հնագույն աղբյուրներում հանդիպող և ներկայումս էլ գործածվող **ՇՆՅԵՐ** (-Շընըհէր) տեղանունը ծագում է իրոք **Շինոյ հայր** նախավոր ձևից. բ) այդ նախավոր ձևը մի կողմից եթե հնչյունափոխությամբ բարբառային տեսք է ստացել, ապա մյուս կողմից պահպանում է գրական ուղիղ՝ **ՇԻՆՈՒՅԱՅՐ** ձևով, որով և ավելի որոշակիորեն է արտահայտվում գյուղանվան սկզբնապես ունեցած շենի կամ շենե-րի հայր՝ վերակացու, տնօրեն նշանակությունը:

Պատմական փաստերը վկայում են, որ **Շինուհայրը** իբրև շատ հնագույն ու շատ մեծ գյուղ, յուրատեսակ կենտրոն է հանդիսացել Սյունիքի Հաբանդ գավառում և իր անվամբ էլ համապատասխանել է այն դերին, որ խաղացել է նրա հասարակական-տնտեսական կյանքում:

⁵⁸⁵ Տե՛ս **Ստ. Օրբելյան**, նշվ. աշխ., էջ 255:

⁵⁸⁶ Նույն տեղում, էջ 232-233:

⁵⁸⁷ Տե՛ս **Ս. Ավագյան**, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, Երևան, 1973, էջ 99:

ՄՏՈՒԳԱԲԱՆՎԱԾ ԲԱՌԵՐԻ ՑԱՆԿ

<p>ԱԴԷՐ 88 ԱՅՌՈՒՋԱՐ 44 ԱՂԻ(Ք) 57 ԱՇԱՆ 175 ԱՊՈՒՊԱՊ 46 ԱՌԻՍ 90 ԱՌՈՒ 77 ԱՏՈՒՏԱՏ 48 ԱՐՇԱ ԸՆԿՆԵԼ 34 ԳԼՈՒԽԿՈՆՁԻ ॥ ԳԼՈՒԽ- ԿՈՆԾԻ 113 ԳՐՔՈՒՅԿ (ՈՅԿ) 139 ԳՈՒԼԻ 101 ԴԱՌԵԱԼ (ՏԱՌԱԼ, ՏԱՌԱԾ) 38 ԴՈՖ (< ԴՕՆ) 93 ԴՈՒՆՉ 85 ԶԱՅՄ 141 ԶԱՄԲ 22 ԸՆԿԻՃԵԱԼ 16 ԸՐԱՄԱ(Ն) ԸՆԿՆԵԼ 141 ԹԱՐՍԵԼ 115 ԹԵՐՄԱՑՔ 130 ԹՕՐ(Ը) ԹՕՌ(Ն) 95 ԼԱՎ 60 ԼՅԱ 131 ԼՈՒՆ 131 ԽՆՁԱԴԻ ॥ ԽՆՁԱՂԱ 97 ԽՈՒՆԱ ॥ ԽՕԻՆԱ 75 ԽՌՁՆԸՅԱՏ 102 ԾԱԾԱՌ 48 ԿԱԹ(ԻԼ) 18 ԿՁՆՎԵԼ 98 ԿԻՁԵԼ 105</p>	<p>ԿՈՆԾԵԼ 122 ԿՈՐՆԹԱՐԴ 142 ԿՈՒՉ 13 ՀԱԽԿ 106 ՀԱՆԳՈՅՑ (< ՈՒՅՑ) 143 ՀԱԽԱՅ (>ՀԱՎԱ) 145 ՀԱՎՈՒՐ 32 ՀԵՆՑ 61 ՀԶՕՐ ॥ ՀԼՈՒ ॥ ՀՄՈՒՏ ॥ ՀՊԱՐՏ 158 ՀՈՐՈՎԵԼ 172 ՀՐԵԼ 146 ՀՐՈՇՏ 124 ՉՎԱԾԵՂ 170 ՃՈՒԱՐԱՆ ॥ ՃՈՒՎԱՐԱՆ ॥ ՃԸՎԱՐԱՆ 36 ՃԱՊԿԻ 133 ՃԻՊԻ-ՃԻՊԻ ԱՆԵԼ 163 ՃԿԵԼ 17 ՃՈՇ ॥ ՃՈՇՔ ՃՕՇԿ ॥ (ՃՕԺԿ) 80 ՃՊԵԼ 161 ՄԱՇՈՒՄ 164 ՄԻԱՀԱՆԷՔ 148 ՄԻԼ 165 ՄՂԱԿ 167 ՄՇՈՒՇ 49 ՄՐՑՆԵԼ, ՄՐՑՐԱՆ 73 ՆԱՆ(Ի) 149 ՇԱԼՔ 82 ՇԱՂԱԽ 52 ՇԿԱԿԵԼ 26</p>
--	---

ՇՐԱՏ 134
ՇՆԹՈՒՆ 168
ՉԻՄ 136
ՉՈՒՆ 24
ՊԱՊԱՐ 55
ՊԵՆ 137
ՊԷԿ (<ԲԱԿ) 84
ՊԼՊԼԱԼ, ՊՍՊՂԱԼ 27
ՊԼՈՒՏ 126
ՊՈՊՈՋ 64
ՍԱՔ 108
ՍԵՆ (<ՍԷՆ) 116
ՍԸԼՊԱՐՅՈՒՆՍ||ՍԻԼՊՈՒՆՅՈՒՆՍ
||ՍԻԼՊՈՒՆՅՈՒՆՍ||ՍԸԼՊՈՒՆՅՈՒՆՍ 42
ՍՍՔԵԼ 11
ՍՔԱՌԱԾ 110

ՍՆԴՈՒ 66
ՏԱՆԿ II ՏԱՆԳ 117
ՏԱՐԱԿՈՒՅՍ (< ՈՅՍ) 68
ՏԵՂԵԱԿ 20
ՏԵՐՆԴԱՍ ՏԵՐՆՏԱՍ 151
ՏԿԼՈՐ 152
ՏՈՊ (ՏՕՊ) 120
ՏՐՈՓԵԼ 23
ՏՈՒՆԴԻ 129
ՑԱՍ(ՈՒՄՆ) 153
ՑՆՈՐ 155
ՌԻԴԵՐՁ 70
ՓՆԹԻ 156
ՔՆԱՓ 157
ՔՈԼՈԼ 55

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

ԱՐԱԿՈՒՄ 191
ԳՈՐԻՍ 179
ԶԱՆԳԵԶՈՒՐ 182
ԽՆԱԾԱԽ II ԽԱՆԱԾԱԽ 185
ԽՆՉՈՐԵՍԿ 193
ԽՈՋՆԱԿԱՐ 199

ԿՈՌՆԻՉՈՐ 186
ՄՇՆԱՐԱՆԴ 187
ՇԻՆՈՒՅԱՅՐ 201
ՋԱԼԱՐԻՐ 188
ՔԱՐԱՐՈՒՆՋ 189

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրի կողմից	3
Ծանուցում	9
Բառաքննական դիտողություններ	10
Բարբառային մի քանի բառերի ծագման մասին	31
Բառաքննություն	43
Ստուգաբանական հետախուզումներ	57
Բարբառային բառերի մեկնություններ	72
Ստուգաբանական մեկնություններ	139
Այլ ստուգաբանություն	175
Տեղանվանական ստուգաբանություններ	179
Տեղանվանական մեկնություններ	191
Ստուգաբանված բառերի ցանկ	206

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ալեքսանդր Մարգարյան

Ստուգաբանություններ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Տեխ. խմբագիր՝ Գ. Գրիգորյան

Տպագրված է «Վարդան Մկրտչյան» ԱԶ տպագրատանը:
Երվանդ Քոչար 7-62

Չափսը՝ 60x84 $\frac{1}{16}$: Տպ. մանուկը՝ 13.125:
Տպաքանակը՝ 150:

ԵՊՀ հրատարակչություն,
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1